Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ԴԱՆԻԵԼ ԴԵՖՈ

ՌՈԲԻՆԶՈՆ ԿՐՈՒԶՈ

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

3ՁՄ
Դ-44

ԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

Դ-44

ՊԱՏԱՆԵԿԱԿԱՆ ՍԵՐԻԱ

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԿԼԱՍԻԿՆԵՐ

ԴԱՆԻԵԼ ԴԵՖՈ

БИБЛИОТЕКА ИНСТИТУТА ВОСТОКОВЕДЕНИЯ Академии Наук СССР

ՌՈԲԻՆԶՈՆ ԿՐՈՒԶՈ

ԹԱՐԳՄ. ԽՆԿՈ-ԱՊԵՐ

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ 1932

02 MAR 2015
396
60527-67

ԱՌԱՋԱԲԱՆ

«Ռոբինզոնի» հեղինակ Դանիել Դեֆոն ծնվել է 1660 կամ 1661 թվին (ճիշտ ժամանակը հայտնի չէ) Լոնդոնում: Նրա հայրը մի հարուստ մսավաճառ էր: Ուզում էր, որ իր որդին մի որևէ ինտելիգենտ զբաղմունք ունենա՝ իրավաբան, դատավոր կամ թեկուզ քահանա լինի: Մանր առևտրական-խանութպանների շրջքերից դուրս գալու և հասարակության մեջ բարձր դիրք գրավելու համար անհրաժեշտ էր կրթություն ստանալ և այդ պատճառով Դանիելի հայրը լարեց իր բոլոր ուժերը, որ որդին մտներ այն ժամանակվա հայտնի Նյուինգտոն Գրինյան դպրոցը, իսկ հետո՝ համալսարան: Դանիել Դեֆոն ուներ մեծ և բազմազան ընդունակություններ և գուցե նա ծառայության սանդուխքով հասներ բարձր աստիճանների, յեթե միայն յերկու հանգամանք չխանգարեյին նրա հառաջադիմությանը: Նախ, որ նա Դիսսենտեր էր, այսինքն չէր պատկանում Անգլիայում տիրող յեպիսկոպոսական յեկեղեցուն, այլ անդամ էր այդ յեկեղեցու կողմից հալածված պուրիտանական կուսակցության:

Դեֆոն շատ անգամ բացարձակ կերպով պաշտպանել է իր խմբի կարծիքները և շատ անգամ դաժանորեն հալածվել է և՛ կառավարության, և՛ վրեժխնդիր յեպիսկոպոսական հոգևորականության կողմից: Յերկրորդ—Դանիել Դեֆոյի իսկական դժբախտությունը նրա մարտական տեմպերամենտն էր, նրա հաստատամտությունը, անդրդվելիությունն իր համոզմունքների պաշտպանության գործում:

«Ռոբինզոնի» հեղինակը ապրում էր անգլիական պատ-

մության այն փոթորկալից ժամանակները, երբ իշխողները շուտ-շուտ փոխվում էին, երբ անողորմ դատավորությունը ազգաբնակչության իշխող խմբակների կույր կամակատարն էր, հոգևորականությունը խավա-կրոնամոլ էր, ուրեմն այդպիսի հանգամանքներում Դեֆոն չէր կարող խուսափել պետության հալածանքներից:

Դեֆոյի նշանավոր գրվածքը—«Դիսսենտերներից ընդմիշտ անջատվելու ամենահեշտ միջոցը»՝ առիթ տվեց նրա դատապարտությանը:

«Ռոբինզոն Կրուզոյին» ծանոթացող ընթերցողը գիտի Դեֆոյի գրական ձիրքի միայն մի կողմը, այն է՝ որ Դեֆոն շատ պարզ, անկեղծ և գրավիչ պատմում է մի մարդու կյանքը, որը վայրենի, անբնակ կղզում չկորչելու, իր գոյությունը պահպանելու համար պիտի աշխատեր, աշխատեր, աշխատեր:

Հեղինակն ինքը, կարծես թե, չի երևում «Ռոբինզոնում»: Պատմվածքը տարվում է մի անհնազանդ որդու անունից, որը ծնողների կամքին հակառակ, ճանապարհորդելու գնաց անսահման և անծանոթ աշխարհը և կարծես խոսք չլսելու համար, իբրև պատիժ, կատաղի ծովը դուրս շպրտեց նրան անմարդաբնակ կղզին:

Հանգիստ, հետևողական, երբեմն էլ միամտորեն հոսում է անկողմնապահ պատմվածքը. դեպի շրջապատողները ոչ մի հեգնանք, ոչ մի բողոք խստասիրտ աշխարհականների դեմ: Այդ հեգնանքը, այդ բողոքն այստեղ իսկի պետք էլ չեն, «Ռոբինզոնի» հեղինակն իր առաջ դնում է այլ խնդիր, որի մասին հետո կխոսենք: Բայց Դեֆոն խիստ ծաղրել էլ գիտեր աշխարհի հզորներին, որոնք ներել չէին ուզում այդ խելացի, տաղանդավոր հեղինակին: Իր «Ամենահեշտ միջոցը» հեղինակության համար Դեֆոն 1703 թվին դատապարտվեց 3200 մարկ տուգանք վճարելու, երեք անգամ անարգանքի սյունի տակ կանգնելու և բանտ նստելու, այնքան ժամանակ, որքան թագուհու կամքն ուզենար»:

Հուլիսի 29, 30, 31-ին Դեֆոյին հրապարակ դուրս բերին և կանգնացրին անարգանքի սյունի տակ՝ Լոնդոնի

երեք զանազան մասերում: Դեֆոն բանտում գրեց «Հիմն անարգանքի սյունին» մի շատ ուժեղ ստեղծագործություն, լի արհամարանքով, ատելությամբ դեպի դատավորները՝ մտքի և ազատ խոսքի հալածողները, միևնույն ժամանակ լի հավատով դեպի ճշմարտությունը, որ երբեք չի վախեցել և չի վախում դահիճներից «իր բոցավառ խոսքն ասելու»:

Այդ հիմնը լույս տեսավ հենց նույն օրը, երբ Դեֆոն առաջին անգամ պիտի կանգներ անարգանքի սյունի տակ:

Անարգանքի սյունը բաղկացած էր երկու իրար խաչաձև հագցրած ձողից: Ուղղահայաց ձողում մի անցք էր բացած՝ մեղապարտի գլուխն այնտեղ անցկացնելու համար, իսկ հորիզոնական ձողում երկու անցք՝ նրա շղթայած ձեռքերի համար: Սյունի մոտ պիտի տեղավորված լիներ դատական պաշտոնյան և բարձրաձայն կարդար հավաքված հասարակության առաջ թագուհու օրենքներով դատապարտվածի սև գործերի մասին:

Բայց Դեֆոն ուներ բարեկամ-ընթերցողների մի մեծ շրջան, իր հայացքների կողմնակից: Այդ բարեկամները նրա անցած ճանապարհը, սկսած բանտից մինչև պատժարանը, թարմ ծաղիկներ սփռեցին. իսկ հասարակությունը վարդահույս պսակ դրեց Դեֆոյի գլխին՝ անարգանքի սյունի մեջ անցկացրած ժամանակ:

Մենք այստեղ չենք խոսի Դեֆոյի, իբրև քաղաքական գործչի հետագա վիճակի մասին: Ժամանակ եղավ, որ Դեֆոն շատ պատասխանատու տեղեր գրավեց, ժամանակ էլ եղավ, ավելի երկար ժամանակ, երբ նա բոլորովին արտաքսվեց հասարակության միջից:

Դեֆոն մեռավ 1731 թվին ծայրահեղ աղքատության մեջ: Նա այստեղ մեզ հետաքրքրում է գլխավորապես ինչպես գրող: Նա գրեց մի քանի տասնյակ գիրք, որոնցից մի քանիսը դեռ իր կենդանության օրով բավական հաջողություն ունեցան, բայց Դեֆոյի ամենանշանավոր գրվածքի անունն է «Ռոբինզոն Կրուզո».

Այդ շատ հայտնի գիրքը լույս տեսավ 1719 թվի ապրիլի մեջ, Լոնդոնում, այսինքն՝ սրանից ճիշտ երկու հարյուր տասներկու տարի առաջ և այն ժամանա-

կից հետզհետե թարգմանվելով՝ առանց բացառության բոլոր կուլտուրական ազգերի կողմից, միլիոնավոր հատորներով տարածվեց աշխարհի բոլոր կողմերը։ Յեվ, գուցե, չլինի ամբողջ աշխարհում մի այնպիսի հայտնի, տարածված գիրք, ինչպիսին «Ռոբինզոնն» է։

Բացի հարազատ թարգմանություններից, կան անթիվ համառոտած, փոխադրած, վերամշակված «Ռոբինզոններ», այսինքն՝ «Շվեյցարական Ռոբինզոն», «Անտառի Ռոբինզոն», «Ռոբինզոնը սարերում», «Աղջիկ Ռոբինզոն», և այլն։ Անգլիայում «Ռոբինզոնը» լույս տեսնելուց հետո նրա հաջողությանը, ի հարկե, քիչ չնպաստեց այն կարևոր հանգամանքը, վոր ամբողջ յերկիրը նոր հողեր, կղզիներ, ծովեր գտնելու տենդային ծարավով եր բռնված։ Անգլիացիները շատ եյին ցանկանում նոր շուկաներ գտնել իրենց՝ վոչ օրեցօր, այլ ժամ առ ժամ զարգացող արդյունաբերության համար, նոր ուղիներ բանալ իրենց առևտրական նավատորմի առաջ։

Դեպի Ամերիկա սկսած գաղութացման հեղեղը, հեռավոր ովկիանոսներում «յեդեմական դրախտի» նման ծաղկած կղզիների մասին յեղած առաջին լուրերը բոլորի ուշադրությունը բևեռեցին անհայտ կղզում տեղի ունեցած զարմանալի արկածների վրա։

Մի քանի պատմաբաններ խոսելով «Ռոբինզոնի» աղբյուրների մասին՝ թե Դեֆոն վորտեղից կարող եր քաղել այդքան հմտությամբ գրված իր պատմվածքը՝ նրանք նկատի յեն առնում հեղինակի կյանքը։ Նրանք ասում են. Ո՞վ է այն անմարդաբնակ կղզին դուրս շպրտված ճանապարհորդը՝ մատնված անողորմ մարդակերների հարևանությանը, արդյոք հեղինակն, ինքը Դեֆոն չի՞, վոր հալածված եր թշնամիների կողմից, իր հայրենի Անգլիայում ապրում եր մեն-մենակ։

Ի հարկե, Դեֆոյի ապրումներից վորոշ բան ներթափանցած կլիներ այդ վեպի մեջ, բայց միայն վորոշ բան։ Ավելի շատ հեղինակի վառ յերևակայությունն եր ստեղծել այն ժամանակ շատ տարածված պատմություններ ծովային արկածների մասին։

Այսպիսի մի պատմվածք ել տվել եր ծովագնաց

Ալեքսանդր Սելկիրկը։ Ալեքսանդր Սելկիրկը, այդ Շոտլանդական նավաստին (ծնվել եր 1676 թվին) կռվելով իր նավի վարչության հետ և բաժանվելով ընկերներից, թողնվեց, յերբ իրենց նավը կանգ առավ նավահանգստում՝ Խուան Ֆերնանդես կղզու մոտ։ Նա թողնվեց խիտ անտառում և չարձագանգեց նավից լսվող կանչին։ Յերբ նավը հեռացավ, Սելկիրկը մնաց կղզում և միայն չորս ու կես տարուց հետո նա կղզուց յետ գնաց հրվանդանն այցելած նավով։ Անգլիա վերադառնալուց հետո նավաստին նկարագրեց կղզու վրա, մենության մեջ իր անցկացրած կյանքը և այդ վիպակը տպագրեց մի անգլիական ժուռնալում 1712 թվին։ Գուց է այդ պատմվածքը Դեֆոյի մեջ միտք ծագեցրեց՝ գրել անմարդաբնակ կղզին ընկած ծովային ճանապարհորդի կյանքը. բայց Սելկիրկի վիպակի բովանդակությունը վոչ մի ազդեցություն չթողեց Դեֆոյի վեպի վրա։

Այսպիսով «Ռոբինզոն Կրուզոն» լույս տեսավ 1719 թվին և նույն 1719 թվին՝ մի տարում՝ տասը հրատարակություն ունեցավ։ Այդ գրվածքը հեղինակների վրա ազդեց գլխավորապես իր ձևով և ֆաբուլայով։ Դեֆոյին հետևող յեղան վորոշ չափով և՛ Սվիֆտը, և՛ Վալտեր Սկոտը, և՛ Ժյուլ Վերնը և՛ Մայն-Րիդը, և՛ Կուպերը, և՛ Բուսենարը, և՛ Մարկ-Տվենը, և՛ Ուելսը։

Լեզվաբանները (այսինքն՝ մասնագետ ուսումնականները, վորոնք զբաղվում են լեզվի ուսումնասիրության խնդիրներով) հիմք են ընդունում «Ռոբինզոնը», յերբ խոսում են օտար լեզվի ուսումնասիրության յեղանակների մասին, օրինակ բերելով վայրենի Ուրբաթին տրված դասերը։ Լեզվաբանները հաստատում են, վոր լեզուն մի արվեստ է, լեզուն կարելի յե սովորել, կարելի յե և մոռանալ։ Իրենց տեսակետը հիմնավորելու համար նրանք բերում են հետևյալ հետաքրքրական փաստը՝ դարձյալ «Ռոբինզոնի» կյանքից։ Ռոբինզոնը մոտ քսան ութ տարի ապրելով անմարդաբնակ կղզում, մենության մեջ, համարյա թե մոռացավ իր մայրենի բարբառը։

«Ռոբինզոնին» բարձր գնահատեցին մանկավարժները։ Տասնութերորդ դարում Ֆրանսիական կրթական

դործի խոշոր ներկայացուցիչ Ժան-Ժակ Ռուսոն ասում է.—«Քանի որ Էմիլի ճաշակը կմնա հասարակ և բնական, այնքան ժամանակ էլ, գիտեմ «Ռոբինզոնի» ընթերցումը միշտ էլ նոր բավականություն կպատճառի նրան»:

Քաղաքատնտեսագետները բերում էին և բերում են մի շարք օրինակներ իրենց գիտության այս կամ այն օրենքը բացատրելու համար: Օրինակ՝ սպառողական և փոխանակային արժեքների մեջ յեղած տարբերությունը շատ պարզ բղխում է Ռոբինզոնի դեպի նավում գտնված իրերն ունեցած փոխհարաբերությունից (մի քանի զույգ գուլպայի համար նա «սիրով կտար իր մոտ յեղած բոլոր վոսկին)»:

«Ռոբինզոնն» ազդեցություն թողեց և իրավաբանական մտքի վրա: Հանցավորներին դեպի Անգլիայի, Ֆրանսիայի, Հոլլանդիայի հեռավոր վայրերն աքսորելու կողմնակիցներն այն միտքն էին պաշտպանում, վոր լավ և նպատակահարմար կազմակերպված աշխատանքները բարերար կերպով կազդեն մարդու բնավորության վրա և դրան իբրև ապացույց քաղվածքներ էին բերում «Ռոբինզոնից»:

Բայց «Ռոբինզոնը», իբրև մի դրական ամբողջություն, հետաքրքրում է ընթերցողներին այլ կողմերով:

Ամենից առաջ դա մի գեղարվեստական ստեղծագործություն է, այսինքն մի ստեղծագործություն, վոր ներգործում է ընթերցողի վրա իր վառ գույներով և կենդանի պատկերներով: Նա այնպես դուր է գալիս, այնպես հրապուրում, վոր հետո յենք մեզ հաշիվ տալիս, թե ինչու այդ գիրքը մեզ այդքան գրավեց, ինչի՞ց է, վոր մենք հիշում ենք Ռոբինզոնի կյանքի բոլոր մանրամասնությունները:

Ի՞նչ է անում հեղինակը Ռոբինզոնին մեզ մոտիկ մարդ դարձնելու համար:

Նախ և առաջ տաղանդավոր հեղինակը հետաքրքրություն է զարթեցնում մի շարք հուզիչ տեսարաններով: Օրինակ՝ Նավաբեկությունը: Ռոբինզոնի բոլոր ուղեկիցները մինչև վերջին մարդը խեղդվում են ծովում: Միայն ինքն է ազատվում, ծովի կատաղած ալիքները նրան ափն են նետում, բայց այդ ի՞նչ ափ է:

Կ՞ղզի, ցամա՞ք: Այնտեղ մարդ կա՞, յեթե կան, ի՞նչ մարդիկ են, վայրենի մարդակերնե՞ր, ծովային ավազակնե՞ր, վորոնք իրենց ցանցն ընկածին գերու տեղ վաճառում էին, կամ խաղաղ ձկնորսնե՞ր, ծովային ճանապարհորդնե՞ր, թե՞ յերկրագործներ: Արդյոք այդ տեղը բնակված չի գիշատիչ գազաններով, թունավոր զազրելի սողուններով: Արդյոք կա՞ խմելու ջուր, ուտելու պտուղներ: Մենք վոչինչ չգիտեյինք այդ մասին և Ռոբինզոնի հետ միասին հետազոտում ենք այդ անծանոթ կղզին, ականջ ենք դնում շրջապատող կյանքի ամեն մի հնչյունին: Այդ ամենը վեպի խիստ հուզիչ սկիզբն է: Զարմանալի գեղարվեստական կառուցվածք ունեն նաև մյուս տեսարանները:

Սակայն Դեֆոյի վեպը համաշխարհային գրականության մեջ բացառիկ նշանակություն վաստակեց վոչ այդ հատկանիշներով: Ճանաչեցեք այդ գրքի հիմնական բովանդակությունը և բնավորությունն այն գլխավոր անձի, վորի հետ կապված է այս պատմվածքը:

Ո՞վ է Ռոբինզոնը: Մի շատ սովորական, շատ միջակ մարդ: Նա վեպերի սիրելի հերոս չի, վոր հարյուրների, հազարների միջից ջոկվի իր գեղեցկությամբ, բացառիկ խելքով, լայն կրթությամբ, հաստատուն բնավորությամբ և ազնիվ արարմունքով: Կրկնում ենք, դա միջակ մարդ է ինչպես բոլորը, նույն շրջանից, նույն հասարակությունից: Նա հետաքրքրական է դառնում հենց նրանով, վոր իր առաջ մի շարք աշխատանքային խնդիրներ է դնում, վորոնց կլանողը հետևյալ գլխավոր և հիմնական խնդիրն է.—ինչպե՞ս ազատվել սովից, տենդից, վայրենի գազաններից, մի խոսքով՝ ինչպես պահպանել իր կյանքը:

Ռոբինզոնը մի մեծ ուսուցիչ ունի՝—կարիքը: Այդ կարիքն ստիպում է Ռոբինզոնին լինել հնարագետ և լավագույն համառ իրագործող [illegible] գրների: Բոլոր արգելքները Ռոբինզոնը հաղթահարում է ուղեղով և ձեռներով, և ընթերցողն էլ խիստ ուրախանում է նրա տարած ամեն մի հաղթանակի համար, վորովհետև այդ հաղթանակը մարդու տարած հաղթանակն է բնության այն ուժերի վրա, վորոնք թշնամի յեն

նյան, և հպատակեցնելն ու նպատակահարմար օգտագործումը մյուս օգտակար ուժերի։ Ռոբինզոնի պատմությունը համառոտ խտացած ձևով ամբողջ մարդկության կուլտուրայի պատմությունն է։ Ռոբինզոնը լուծում է մարդկանց համար այսպիսի խնդիրներ. Օրինակ՝ ինչպես տուն շինել՝ անձրևից և շոգից պաշտպանվելու համար, ինչպես սարքավորել տունը կահկարասիքով, վորը հնարավորություն ստեղծեր քիչ աշխատանքով շատ գործ կատարել և ամենամեծ հարմարություններով իր հանգիստն (սեղան, աթոռ, մահճակալ) ապահովել ինչպես հագնվել, վոր նպատակահարմար լինի (հագուստին քիչ կտոր գնա, հեշտ և հարմար լինի) ինչպես մշակել հողը վարուցանքի համար և ինչպես ընտելացնել վայրենի կենդանիներին, հացով, կաթնամթերքով, մսով և կաշվով ապահովելու իրեն։ Ընթերցողի առաջ այնքան ցայտուն կերպով է կատարվում ուսանելի անցումը վորսորդությունից դեպի անասնապահություն ու յերկրագործությունը։ Տեղից-տեղ մթերք տեղափոխելու և պահելու համար Ռոբինզոնը պիտի հնարի կամբյուղ, մեծ ու փոքր կողովներ, հաց և կերակուր պատրաստելու համար ամանեղեն և վառարան. Ջրով ճանապարհորդելու համար պիտի կառուցի նավակ։ Խելքի և ձեռքերի այդ հերոսական գործերը, կրկնում ենք, վոչ թե ստեղծագործական յերևակայության ազատ խաղի հետևանք է, վոչ թե մի ինչ վոր մտախաբություն, ցնորքի արդասիք է, միշտ և ամեն տեղ այդ բոլորը Դեֆոյի գրքում թելադրվում է սուր կարիքից, պահանջկոտ անհրաժեշտությունից. տուն չես շինի՝ կկորչես տրոպիկական անձրևներից, չես ստեղծի վայրի այծերից ձեռնասուն, ընտանի հոտ, վարուցանք չես անի՝ կմեռնես քաղցից։

Գուցե վոչ մի տեղ համաշխարհային գրականության մեջ այնքան վորոշ, ակներև, դիտելի, այնքան համոզիչ ներկայացված չի այն անհրաժեշտության թագավորությունը, վորը տանում է մեզ դեպի աշխատանքային հերոսական գործերը, ինչպիսին ներկայացված է Դեֆոյի գրքում։ Յեվ հենց դրա մեջ է պարունակվում վեպի կրթական ահագին նշանակությունը։ Դեֆոյի այդ

զարմանալի արտադրության մեջ չկա վոչ մի նենգություն, խարդախություն, վոչ մի սիրային արկած, վորն այնքան սովորական բան է բոլոր դարերի և ազգերի վեպերի համար, այնտեղ հեքիաթական վոչինչ չկա։ Չնայած այդ հանգամանքին, դարձյալ գիրքը կարդացվում է հափշտակող հետաքրքրությամբ, սկսած առաջին տողից մինչև վերջին տողը՝ թե յերեխաների և թե մեծերի կողմից։ Յեվ իսկապես, ինչպես կարող ես չհետաքրքրվել այն մարդու վիճակով, վորը կյանքի մեջ չկորչելու, այլ ապրելու համար ստիպված է ամեն օր, ամեն ժամ, ամեն րոպե ձեռնարկել, հնարել, ստեղծագործել նոր ու նոր բաներ։

Գեղեցիկ եր այն կղզին, վորտեղ համարյա յերեսուն տարի ապրեց Ռոբինզոնը։ Նրա հողը բարեբեր, առուները վճիտ և սառնորակ, ծառերը հսկա և շքեղ, թռչունները բազմատեսակ և բազմաթիվ, այծերը նազելի, քարայրերը—յուրատեսակ և խոր։ Այդ կղզին գեղեցիկ եր իր ովկիանոսով, վորը մի ճակատագրական անապատի նման ընկած եր Ռոբինզոնի և մարդկային հասարակության միջև իբրև մի անջրպետ։ Այդպես եր այն կղզին հազարավոր տարիների ընթացքում, մինչև փոթորկից տարված մարդու հայտնվելը նրա ափին։ Այդ մարդու հայտնվելով կղզու դաշտերը մշակվեցին, խաղողի տեսակները շատացան և ազնվացան, վայրենի այծերն ընտելացան, վայրենի Ուրբաթը թողեց իր մարդակերությունը, այն գեղեցիկ վայրենի կղզին կուլտուրական կյանքի վայր դարձավ։ Յեվ մարդը հարազատ է, այնքան մոտ է, այնքան թանկ է ընթերցողին։

Գրողի մեծ վարպետությունն այն է, վոր ստիպում է մեզ լարված ուշադրությամբ հետևել թե Ռոբինզոնը կկարողա՞նա սեղան շինել, թե չի կարողանա, ինչ հնարքով աման կթրծի, առանց թթխմորի հաց կթխի, կհաջողեցնի՞ իր փորած նավակը սարից ջուրն իջեցնել. կվորոնի՞ և կգտնի՞ այնպիսի մի միջոց, վորով քարը պտույտ գա, դանակ ու կացին սրի և այլն. այսինքն՝ հետևել առարկաներ ստեղծելու, շինելու պրոցեսին։

Ռոբինզոնը պատահմամբ չի գտնում կյանքի կողմից առաջադրած ստեղծագործական խնդիրների լուծումը,

այլ անխուսափելիորեն միջոցներ է ձեռք առնում, դիմում է իր մտքին, իր գլխին, նեղն ընկած տեղը հնարագետ է դառնում: Դեֆոյի գիրքը մեզ պատմում է, որ ձեռներեցությունը, հնարագիտությունը կյանքի համար անհրաժեշտություն է, դանց առնել անկարելի է:

Մի տեղ այդ միտքն ինքը Ռոբինզոնն է ընդգծում: «Ցես գտա,—հայտնում է նա,—այն բոլորն, ինչ որ հարկավոր էր ինձ գտնել, որպեսզի չմեռնեմ կղզում: Այդպես է «Ռոբինզոնի» փիլիսոփայությունը:

Դեֆոն խոսում է ուժեղ և համոզիչ ոչ միայն աշխատանքի նշանակության մասին, այլ հաղորդում է մեզ աշխատանքի անմիջական ուրախությունը. ահա թե ինչու «Ռոբինզոնը» շատ բան կարող է տալ նաև ժամանակակից ընթերցողին:

Կ. ԲԱՐԽԻՆ

ՌՈԲԻՆԶՈՆ ԿՐՈՒԶՈ

ՌՈԲԻՆԶՈՆ

Հայրս—Կրեյցները բուն Գերմանական Բրեմեն քաղաքից էր: Գալով Անգլիա, նա նախ ապրում է Հուլլում, վորտեղ առևտուր անելով, մեծ կարողություն է ձեռք բերում: Հետո նա բնակության տեղ ընտրում է Իորկ քաղաքը: Այստեղ նա ամուսնանում է մորս՝ Ռոբինզոն կոչված մի հայտնի ընտանիքի աղջկա հետ: Ցես ծնվել եմ հենց այդ Իորկում 1632 թվին: Մեր կրկնակի ազգանունն եր Ռոբինզոն Կրեյցներ: Բայց վորովհետև Անգլիացիները հատուկ անուններն անխղճորեն աղավաղելու սովորություն ունեն, այդ պատճառով ել վոչ միայն ուրիշներն եյին մեզ Կրուզո կանչում, այլև մենք, յուրացնելով այդ ազգանունը, այդպես ել գրվում եյինք: Ցես յերկու յեղբայր ունեյի: Մի յեղբայրս ծառայում եր Ֆլանդրիայում, անգլիական հետևակ զորքի մեջ: Նա սպանվեց իսպանացիների հետ ունեցած պատերազմում, Դյունկիրխենի մոտ: Թե ինչ յեղավ մյուս յեղբայրս, յես այդ չգիտեմ: Խոր գաղտնիք մնաց ծնողներիս համար և իմ վիճակին այն որից հետո, յերբ՝ յես թողի մեր տունը և հեռացա:

Ցես ծնողներիս յերրորդ վորդին եյի, ավելի շատ յերես առած, քան թե մյուս յեղբայրներս: Իմ գլխում շատ վաղ զարթնեցին անհանգիստ մտքեր: Սովորում եյի տանը, հետո յել ձրի դպրոց եյի հաճախում: Հայրս ինձ իրավաբան եր պատրաստում, իսկ յես յերազում եյի ծովագնաց դառնալ, ծովային ճանապարհորդություններ կատարել դեպի հեռավոր յերկրներ: Ճանապարհորդություններ կատարելու ձգտումն այնքան ուժեղ եր, վոր ինձ ստիպում եր հակառակվել հորս և մորս, ար—

ՌՈԲԻՆԶՈՆ

Հայրս—Կրեյցները բուն Գերմանական Բրեմեն քաղաքից եր: Գալով Անգլիա, նա նախ ապրում է Հուլլում, վորտեղ առևտուր անելով, մեծ կարողություն է ձեռք բերում: Հետո նա բնակության տեղ ընտրում է Իորկ քաղաքը: Այստեղ նա ամուսնանում է մորս՝ Ռոբինզոն կոչված մի հայտնի ընտանիքի աղջկա հետ: Յես ծնվել եմ հենց այդ Իորկում 1632 թվին: Մեր կրկնակի ազգանունն եր Ռոբինզոն Կրեյցներ: Բայց վորովհետև Անգլիացիները հատուկ անուններն անխղճորեն աղավաղելու սովորություն ունեն, այդ պատճառով ել վոչ միայն ուրիշներն եյին մեզ Կրուզո կանչում, այլև մենք, յուրացնելով այդ ազգանունը, այդպես ել գրվում եյինք: Յես յերկու յեղբայր ունեյի: Մի յեղբայրս ծառայում եր Ֆլանդրիայում, անգլիական հետևակ զորքի մեջ: Նա սպանվեց իսպանացիների հետ ունեցած պատերազմում, Դյունկիրխենի մոտ: Թե ինչ յեղավ մյուս յեղբայրս, յես այդ չգիտեմ: Խոր գաղտնիք մնաց ծնողներիս համար և իմ վիճակն այն օրից հետո, յերբ՝ յես թողի մեր տունը և հեռացա:

Յես ծնողներիս յերրորդ վորդին եյի, ավելի շատ յերես առած, քան թե մյուս յեղբայրներս: Իմ գլխում շատ վաղ զարթնեցին անհանգիստ մտքեր: Սովորում եյի տանը, հետո յել ձրի դպրոց եյի հաճախում: Հայրս ինձ իրավաբան եր պատրաստում, իսկ յես յերազում եյի ծովագնաց դառնալ, ծովային ճանապարհորդություններ կատարել դեպի հեռավոր յերկրներ: Ճանապարհորդություններ կատարելու ձգտումն այնքան ուժեղ եր, վոր ինձ ստիպում եր հակառակվել հորս և մորս, ար—

համարել նրանց նախազգուշացումները, սպառնալիքները, աղերսանքները: Յես խուլ եյի նրանց փաստարկումների և խորհուրդների հանդեպ:

Մի առավոտ հայրս ինձ կանչեց իր առանձնասենյակը, վորտեղ նրան բանտարկել եր դաժան վոտացավը և յերկար ու տաք–տաք բացատրեց, թե ինչքան կործանարար ե և ճակատագրական տեղից–տեղ թափառելը:

— Չե վոր,—ասում ե նա,—միայն անհանգիստ վոգին և արկածախնդրությունը կարող են քեզ ստիպել, վոր դու թողնես քո հայրական տունը, և հայրենի յերկիրը, վորտեղ դու, յեթե ցանկանաս, կարող ես քեզ համար ապահով դրություն ձեռք բերել և հանգիստ ապրել մինչև կյանքիդ վերջին որերը: Քո դասակարգի մարդիկ վոչ փառքի և վոչ ել սխրագործությունների կարիքը չեն զգում. Նրանք ապրում են խաղաղ աշխատանքների և անդորր կյանքի համար: Նրանք մեռնում են այնպես հանգիստ և խաղաղ, ինչպես ապրել են:

Այդ վոգով հայրս յերկար խոսում եր և վերջապես իր ճառն ավարտեց այսպիսի պատկերավոր խոսքերով.

—Քեզ ինքնակամ մի դցիր դժբախտությունների և տանջանքների հորձանուտը, վորից դու պաշտպանված ես քո ծագումով և ծնողներիդ ապահով նյութական բարեկեցությամբ: Քեզ համար անհրաժեշտություն չի մի պատառ առորյա հացի համար աշխարհ ման գալ, արկածներով վորոնել: Յես քեզ բարիք եմ ցանկանում և կանեմ քեզ համար ամեն բան, ինչ վոր ինձանից կախված ե: Այդ նրա համար, վոր դու կարողանաս բախտավոր ապրել այստեղ, քո հարազատների և փորձած բարեկամների շրջանում: Հիշիր քո մեծ յեղբորը: Միթե յես նրան քիչ համոզեցի, վոր տանը մնա: Բայց նա ինձ չլսեց, հետևեց իր յերիտասարդական յերևակայությանը, վորը նրան քշեց տարավ Ֆլանդրիա, պատերազմի դաշտ: Նա այնտեղ այնքա՛ն աղետալի վերջ տվեց իր դեռահաս կյանքին, թողնելով իր ծնողների սրտերում մի դառնություն, վորը վոչնչով չի կարելի լցնել: Միթե դու ուզում ես նրա տխուր որինակին հետևել:

Հայրս ել չկարողացավ շարունակել, միայն ձեռքը

60527-69

շարժեց և յերեսը դարձրեց: Մի քիչ անց, նա խեղդված ձայնով արտասանեց.

— Յես սաստիկ հուզված եմ, այլևս շարունակելու ուժ չունեմ: Ինչպես գիտես, այնպես արա...

Հորս վիշտը սիրտս շարժեց: Յես նույն րոպեյին պատրաստ եյի հետևել նրա խորհուրդներին, հրաժարվել հեռավոր յերկրներ գնալու մտադրությունից, ամբողջ կյանքս անցկացնել ծնողներիս մոտ:

Բայց մի քանի որից հետո նորից իմ մեջ խոսեց ինձ հեռուն կանչող ձայնը: Հորս հետ ունեցած խոսակցությունից հետո, մի շաբաթ ել չանցած, յես վճռեցի ծա-

Библиотека Института Востоковедения Академии Наук СССР

Հայրս յերկար խոսում եր այդ վոգով...

ծուկ հեռանալ տանից, վոր խուսափած լինեմ հորս նոր հորդորներից: Յես զգում եյի, վոր չպետք ե կարողանամ այն կոկ և հարթ ճանապարհով գնալ, վորը հայրս եր առաջարկում ինձ:

Միառժամանակ անց, յես ուղևորվեցի Հուլլ, ինքս ել չիմանալով, թե այնտեղ ինչ եմ անելու: Յես չունեյի

Պետ. կան գրադարան Гос Библиотека ՀՍՍՌ-Арм ССР

վոչ վորոշ ծրագիր, վոչ նպատակ և միայն մտածում էյի, թե ինչ հրաշալի բան կլինի, վոր մի դիպվածքով ընկնեմ վորևե նավի վրա, դեպի հեռուն, հեռուն նավարկող մի նավի… Ցեվ այդ դեպքն ինքն իրեն յեկավ:

Թափառելով քաղաքում, նավահանգստի մոտ պատահեցի իմ դպրոցական ընկերներից մեկին՝ մի նավապետի վորդու: Իմանալով, վոր յես ճանապարհորդելու բուռն ցանկություն ունեմ, նա առաջարկեց ինձ մտնել իր հոր նավը, վորը յերկու որից հետո պետք է մեկնի դեպի Գվինիայի ափերը:

Այդ առաջարկը յես ուրախությամբ ընդունեցի: Իմ վառվառուն ցնորքներն արդեն իրական եյին դառնում: Ուրախությամբ յես նավ մտա և անհամբեր սպասում էյի այն րոպեյին, յերբ նավը կհեռանա ծովափից: Ցես այն ժամանակ բոլորովին չէյի նախատեսնում, վոր այդ ափից բաժանվում եմ տասնյակ տարիներով:

Մեր նավում կային 6 թնդանոթ, 14 նավաստի, ծովապետը, նրա ծառան և յես:

ՆԱՎԱԲԵԿՈՒԹՅՈՒՆ

Նավարկության սկզբում յեղանակը շատ գեղեցիկ եր: Ծովապետի բարության շնորհիվ յես ծանոթանում էյի ծովային գործին, զանազան չափող գործիքների գործածման ձեւին, ծանոթանում էյի, թե ինչպես են կազմում ուղեգիրը: Ջանասեր կերպով ուսումնասիրում էյի աշխարհագրական քարտեզը: Հետո անտանելի շոգն ընկավ, վորից յես սաստիկ տանջվում էյի. վերջապես մի սաստիկ քամի բարձրացավ և փոթորիկի փոխվեց: Անկարելի յեր նավը կառավարել և մենք տասներկու որ շարունակ ընկած փրփրած ծովի յերեսը, ավելի ու ավելի եյինք հեռանում յեվրոպական նավերի այցելած տեղերից: Տասներկու որվա մեջ ամեն մի րոպե՝ գիշեր թե ցերեկ՝ յես սպասում էյի, վոր կկործեմ կատաղի ալիքներում. և նավում վոչ վոք հույս չուներ, թե իր կյանքը կազատի: Տասներկուերորդ որը մեր մարդկանցից մեկը գոչեց. «յերկիր»: Մենք հենց նոր եյինք կայուտից դուրս թռել՝ իմանալու, թե այդ ինչ յերկիր է

մեր առաջ, մեկ էլ մեր նավը կպավ մի ավազոտ ծանծաղուտի:

Նավը միանգամից կանգ առավ և ծովն էլ այնպիսի արագությամբ խփեց նրան, վոր մենք բոլորս շուտափույթ մահվան եյինք սպասում:

Ով չի ընկել նման դրության մեջ, նա դժվար կպատկերացնի, թե ինչ տեսակ դրության մեջ եր ընկած մեր նավակազմն այդ րոպեյին: Մենք չէյինք իմանում, թե ո՞ւր եյինք ընկել—կղզի՞, թե՞ մայր ցամաք,—մարդաբնա՞կ յերկիր, թե՞ անմարդաբնակ: Քանի վոր փոթորիկը դեռ շատ ուժեղ եր, մենք ամեն մի րոպե սպասում եյինք, վոր մեր նավը կտոր-կտոր կփշրվի, յեթե միայն քամին իր ուղղությունը չփոխի վորևե հրաշքով, կամ միանգամից չդադարի: Բայց հակառակ մեր սպասածին, նավն անվնաս մնաց, իսկ հետո էլ ծովապետը մխիթարում եր մեզ, հայտնելով, վոր քամին սկսում է հանդարտվել: Բայց և այնպես մենք մի սարսափելի դրության մեջ եյինք, վորովհետև նավը չափազանց բեռնավորված եր և առանց կողմնակի ոգնության չեր կարող տեղից շարժվել: Ճիշտ է, նավի վրա մի նավակ կար, բայց այն էլ ալեկոծման ժամանակ կպավ ղեկին և մանր տաշեղ դարձավ: Այդ նավակից զատ մենք ունեյինք մի մակույկ, բայց դժվար եր մակույկը ջուրը գցել, թե շատ անհրաժեշտ եր այդ անել, վորովհետև մենք բոլորս համոզված եյինք, վոր ուր վոր է, նավը խորտակվելու յե…

Նավի ղեկավարը և մի քանի նավաստի քանդեցին մակույկն իր կապած տեղից և նավի կողքից գցեցին ջուրը: Բարեբախտաբար մակույկը մեր յենթադրածից ավելի լավ մնաց ջրի յերեսին: Մենք բոլորս էլ նստեցինք այդ մակույկը, հանձնելով մեզ տարերքի քմահաճույքին: Քամին, թվում եր, թե քիչ բարակել եր, բայց ծովը դարձյալ սաստիկ ալեկոծվում եր, միանգամայն արժանի «վայրենի» կոչմանը, վոր տվել եյին նրան հոլանդացիները փոթորիկների ժամանակ:

Նայելով հրեշավոր ալեկոծությանը, մենք՝ ի հարկե, հույս չունեյինք, վոր ապահով, անվտանգ կհասնենք

ափը: Մենք առագաստ չունեյինք: Թեկուզ ունենայինք էլ, միևնույն է, չպետք է կարողանայինք կատաղի քամու ժամանակ գործադրել: Կոտրված սրտով, մահվան դատապարտվածների նման, մենք սկսեցինք թիավարել ափի ուղղությամբ: Մեզանից ամեն մեկը լավ գիտեր, վոր մակույկը ցամաքին կպչելիս հենց առաջին հարվածից փշուր-փշուր կլինի: Բայց և այնպես մենք ամբողջ ուժով թիավարում եյինք դեպի ցամաք, ուր քշում եր մեզ կատաղի քամին: Հսկա ալիքները, սարերի պես բարձրացած, թույլ չեյին տալիս վորոշելու, թե յերևացողն ի՞նչ ափ է. քարքարո՞տ է, թե՞ ավազոտ, թեք է, թե՞ դիք: Մեզ մնացել եր միայն մի աղոտ հույս, վոր գուցե ընկնենք մի վորևե ծոց կամ գետաբերան, վորտեղ կը կարողանայինք քամուց և ալիքներից պաշտպանվել: Սակայն նման բան չպատահեց և քանի մենք մոտենում եյինք ցամաքին, այնքան նա սարսափելի յեր թվում մեզ, քան ծովը:

Յերբ մենք մեր հաշվով, մղոն ու կես ճանապարհ եյինք անցել, հանկարծ յետևից մեզ վրա յեկավ մի ալիք, վորի բարձրությունը հասնում եր մինչև ամպերը: Մենք սրտատրոփ սպասում եյինք, վոր նա մեզ վերջին վճռական հարվածը կհասցնի: Յեվ իսկապես, ահռելի ալիքը շուռ տվեց, տակն ու վրա արավ մեր մակույկը և մեզ շպրտեց զանազան կողմ: Մենք միայն կարողացանք ճչալ -«անեծք» և զգացինք, վոր խորասուզվում ենք դեպի ցուրտ անդունդը:

Անկարելի յե նկարագրել, թե ինչ եյի զգում յես, յերբ ընկա աղմկահույզ ծովը: Յես շատ լավ եյի լողում, բայց այնքան ուժ չունեյի, վոր վեր բարձրանայի ջրի յերեսը՝ ազատ շունչ քաշելու: Ինձ բռնող ալիքը տարավ հասցրեց ինձ համարյա մինչև ափը, բայց իմ բերանը աղի ջուր լցվեց, այնպես վոր յես չկարողացա լողալ: Սակայն ափը շատ մոտ թվաց, ընդամենը մի քանի վտանաչափ հեռավորության վրա, և այնպես թեք եր, վոր յես հավաքեցի ուժերիս վերջին մնացորդը և վոտի կանգնեցի: Շտապեցի վոտքի յելնել ավելի վաղ, քան նոր ալիքի գալը, վոր կարող եր ինձ նորից ծովը գցել: Յես հույս ունեյի, վոր ափ դուրս կգամ: Բայց այդ բանն ինձ

չհաջողվեց: Իմ մեջքի հետևից բուսավ մի ջրային սար, պատրաստ ինձ վրա փուլ գալու: Իմ ուժերից վեր եր այդպիսի թշնամուն հաղթելը: Ինձ մնում եր մի բան.—նորից պառկել մեջքիս վրա, շունչս ինձ քաշել և ամեն ջանք գործ դնել՝ ջրի յերեսին մնալու համար:

Նորից վերահաս ալիքը ծածկեց ինձ ամբողջովին և մի սարսափելի արագությամբ քշեց դեպի ափը: Շունչս պահած, յես ուզում եյի դուրս գալ ջրի յերեսը, բայց չկարողացա. հանկարծ զգացի, վոր գլուխս և ձեռներս ջրի վրա յեն: Յես այդ դրության մեջ մնացի յերկու վայրկյանից վոչ ավելի. բայց կարողացա շունչ քաշել և արիություն ստանալ: Հետո նորից սուզվեցի



Հետևից հանկարծ խփեց ալիքը...

ջրի մեջ բայց ինձ ավելի տևուդ զգացի, իսկ մի քանի րոպեյից հետո ալիքի թափը նվազեց: Ելի մի քանի հուսահատական ջանքեր, և յես ինձ գցեցի մի փոքրիկ ավազե բարձրության վրա: Շունչս քաշելուց հետո յես ամբողջ ուժով վեր վազեցի դեպի ափը: Բայց իմ կռիվը

ծովի հետ սրանով չվերջացավ։ Դարձյալ յերկու անգամ ալիքները հասան ինձ և հետները տարան։ Յերկրորդ անգամ յես այնպես սաստիկ զարկվեցի ժայռին, վոր կորցրի զգայողությունս և ընկա կատաղի ծովի իշխանության տակ։ Իմ բախտից, գիտակցությունս շուտ վերադարձավ։ Սաստիկ հարվածից ցավում եյին կուրծքս և գլուխս։ Տեսնելով, վոր նոր ալիք է գալիս, յես կպա ժայռին և վճռեցի շունչս ինձ պահել, մինչև վոր ալիքը նորից յետ կգնա։ Վերջապես ինձ հաջողվեց մագլցել ժայռի դուրս ցցված մասը։ Թեպետ այնտեղ էլ յերկու, թե յերեք անգամ ալիքները խփեցին ինձ, բայց արդեն այնքան էլ ուժեղ չեյին և յես կարողացա նրանց հետ կռվել։ Յերկար ճիգ ու ջանքից հետո, յես այնպես վերև բարձրացա, վոր կատարյալ ապահով եյի զգում ինձ և թեթևվացած շունչ քաշեցի։ Իջնելով ժայռի մի մասը ծածկող կանաչի վրա, յես ուրախացա, վոր ահռելի վտանգից ազատվեցի։

Յես մտածում եյի իմ ուղեկիցների մասին, վորոնք հավանորեն կորած եյին։ Նրանցից վոչ մեկը ջրի յերեսին չեր յերևում։ Ալիքների վրա լողում եյին յերեք գլխարկ, մի գդակ և յերկու իրարից բաժան-բաժան կոշիկ։ Յես սկսեցի աչքերով վորոնել նավը, բայց չկարողացա տեղը վորոշել, վորովհետև նա շատ հեռու յեր ափից, իսկ ջրային լեռները բարձրացնում եյին իմ հանդեպ իրենց գագաթները։ Յերբ առաջին ուրախությունս անցավ, յես շուրջս դիտեցի, վոր հասկանամ, թե բախտըս ինձ ո՞ւր է գցել և յես ի՞նչ եմ անելու։ Այդտեղ ինձ ընդգրկեց մենության և լքման դառն զգացմունքը։ Արդյո՞ք յես իսկապես ազատված եյի։ Յես չեյի կարող փոխել մինչև ոսկոր թրջված շորերս, ընկած ուժերս ամրապնդելու համար ուտելիք չկար, ապաստան չունեյի։ Յես մտածում եյի, վոր կարող եմ հեշտությամբ մահացու կերպով մրսել, սովամահ լինել կամ վայրի գազաններին վորս դառնալ։

Յեթե յես զենք ունենայի, իմ վախն այնքան մեծ չեր լինի։ Անհրաժեշտության դեպքում, յես ինձ կպաշտպանեյի և վորս անելով ուտելիք կճարեյի։ Բայց գրպաններումս վոչինչ չճարվեց, բացի դանակից, ծխամոր-

ճից և փոքրիկ արկղով մի քիչ ծխախոտից։ Յես հասկացա, վոր դրությունս սարսափելի յե։ Յես մեծ հուսահատության մեջ ընկա և խելագարի նման ծովափով յետ ու առաջ եյի վազում։

Մութն ընկնելու հետ ինձ այնպես եր թվում, թե այս է, կգան վայրի գազանները և ինձ կտոր-կտոր կանեն։ Յես գիտեյի, վոր գիշատիչները սովորություն ունեն վորսի դուրս գալու արևը մայր մտնելուց հետո։

Աչք ածելով չորս կողմս, յես նկատեցի մի մեծ ճյուղավոր ծառ, շատ նման մեր յեղևնուն։ Յես վճռեցի հենց այդ ծառի վրա գիշերը լուսացնել, վորպեսզի միժամանակ յետաձգեմ իմ վախճանը, վոր ինձ համար կասկածից դուրս եր։ Բայց ծառը բարձրանալուց առաջ յես գնացի խմելու ջուր գտնելու։ Ուրախությունս վորչափը մեծ եր,—քառորդ մղոն հեռավորության վրա հոսում եր մի առու։ Յես կուշտ ջուր խմեցի, մի քիչ էլ ծխախոտ գցեցի բերանս, վոր կանխեմ իմ քաղցածությունը։ Հետո վերադարձա ծառի մոտ, մագլցելով բարձրացա նրա վրա, շատ հարմար տեղավորվեցի այնտեղ և նախազգուշության միջոցներ ձեռք առա, վոր գիշերը քնածս տեղից գետին չընկնեմ։ Ծառի վրա նստած տեղս յես մի ամուր մահակ կտրեցի և դրի կողքիս։

Ծայր աստիճան հոգնած, յես շատ շուտով խոր քնի մեջ ընկա, մի յերկար քուն, վորին սպասելն իմ այս դրությամբ շատ դժվար եր։ Քունը թարմացրեց ինձ, վրաս աշխուժություն բերեց։ Առավոտը յես ինձ չափազանց լավ զգացի, քան թե նախընթաց օրն եր։ Յերբ յես զարթնեցի, արեգակն արդեն բարձր կանգնած եր կապույտ անամպ յերկնքում։ Քամին բոլորովին կտրվել եր և ծովն էլ համարյա թե հանդարտվել։ Մեծ զարմանքով յես տեսա, վոր մեր նավը, վորին յես խորտակված եյի համարում, շարժվել եր ծանծաղուտից․ ալիքները տարել, հասցրել եյին նավը մինչև այն ժայռի մոտ, վորի տակ քիչ եր մնացել գլուխս ջարդեյի։ Նավը ծովափից ընդամենը մի մղոն հեռու յեր կանգնած։ Իմ մեջ միտք ծագեց, վոր փորձեմ, լողամ մինչև նավը, բարձրանամ նավի վրա և ինձ համար անհրաժեշտ պաշար ձեռք բերեմ։

ԼԱՍՏԸ

Իջնելով ծառից, վորն ինձ համար ննջարանի տեղ եր ծառայում, յես նկատեցի նավակը: Ալիքները նրան ափ եյին դուրս բերել ինձանից մի յերկու մղոն հեռու: Ուրախացած, ուղևորվեցի դեպի նավակը, բայց շուտով իմ ճանապարհը կտրեց մի նեղ, մոտ կես մղոն լայնությամբ ջրի շերտ, վորը բաժանում եր ինձ նավակից:

Յես վորոշեցի, վոր ավելի լավ ե լող տամ ուղիղ դեպի նավը, ու յես դարձա:

Կորած ընկերներիս պատճառած վիշտն ինձ հանգիստ չեր տալիս, ընկերներիս, վորոնք կարող եյին ազատվել, յեթե նավը թողած չլինեյին:

Շատ շոգ եր: Յես հանվեցի, շորերս ափին թողի ու ընկա ջուրը: Մինչև նավը յես լող տվի հեշտ ու արագ: Մնում եր միայն մտածել, թե ինչպես բարձրանամ նավի վրա: Իսկ դա այնքան էլ հեշտ բան չեր: Նավը ուղիղ բարձրանում եր ջրի վրայից, բռնելու տեղ չկար, վոր յես մագլցեյի նավի տախտակամածը: Մի անգամ, յերկու անգամ լողացի նավի շուրջը և հանկարծ աչքովս ընկավ պարանը, վոր առաջ չգիտեմ ինչպես եր յեղել, չեյի նկատել: Պարանով վեր բարձրացա տախտակամածը և լավ դիտեցի նավը:

Նավի ստորին մասը—ամբողջ տրյումը—ջրով լիքն եր: Պարզ ե, վոր տրյումը խոր ճեղք եր տվել և նավն էլ մնացել եր ջրի վրա հենց այն պատճառով, վոր նա պինդ խրվել եր ավազուտի մեջ: Նավի յետևի մասը շատ վեր եր բարձրացել, իսկ քիթը ցածրացել: Դրա շնորհիվ էլ նավի յետին մասը բոլորովին չոր եր մնացել: Հետո յես պարզեցի, վոր ամբողջ ուտելիքը հրաշալի պահպանված ե, ծովաջուրը բոլորովին չի վնասել նրան: Այստեղ յես սաստիկ քաղց զգացի և հարձակվեցի պաքսիմաթի վրա: Նախաճաշի ժամանակ յես շարունակում եյի դիտել նավը: Ժամանակն ինձ համար թանգ եր: Կայուտում յես ռոմ գտա և մի քանի կում արի, վորպեսզի աշխատելու ուժ ստանամ: Միայն նավակն եր պակաս, վորով ինձ պետքական բոլոր բաները կրեյի իմ կղզին:

Յես չեյի կարող ձեռքերս ծալած նստել գանգատվել, թե այս չկա, այն չկա: Իմ մեջ աշխատելու յեռանդ զարթնեց, իսկույն անցա աշխատանքի: Նավի վրա կային մի քանի առագաստակալ փայտեր, մի յերկու ձող, մի քանի հատ էլ գերան: Յես այդ փայտեղենը թոկերով կապեցի ու զգուշությամբ ջուրն իջեցրի, բայց վորպեսզի գերանները ջուրը չտանի, ամեն մի գերան կապում եյի նավի կողքից. հետո ինքս էլ իջա և գերաններից լաստի նման մի բան շինեցի: Վերջացնելով այդ աշխատանքը և լաստը դիտելով, յես համոզվեցի, վոր լավ պետք ե լողա, բայց մեծ բեռ չպետք ե կարողանա վերցնել, վորովհետև գերանները շատ թեթև եյին: Այն ժամանակ յես յերկու հատ կայմակալ փայտ սղոցեցի յերեք հավասար մասի և կպցրի լաստին:

Լաստն այնքան լավ սարքվեց, այնքան ամուր եր, վոր կարող եր բավական մեծ բեռ վերցնել: Մնում եր միայն ջոկել ինձ համար ամենապիտանի իրերը և մտածել, թե ինչպես պահպանեմ իմ գտածներն ալեկոծության ժամանակ: Նախ՝ լաստի վրա դարսեցի նավում յեղած բոլոր տախտակները. հետո սկսեցի ընտրել ինձ անհրաժեշտ իրերը: Լաստի վրա իջեցրի նավաստիների սնդուկները, յերեքն էլ դատարկ: Մեկի մեջ դրի հաց, բրինձ, յերեք գլուխ հոլանդական պանիր, հինգ կտոր այծի չորացրած միս, վորը նավաստիների սովորական կերակուրն ե կազմում, և մի տոպրակ ցորեն, վորպես կուտ հավերի համար: Գտա փոքր ինչ հաճար՝ ցորենի հետ խառը, բայց ափսոս, վոր մկները փչացրել եյին, էլ բանի պետք չեր: Նավում գտա նաև մի քանի արկղ՝ շիշերով լիքը: Շիշերում կային զանազան կազդուրիչ խմիչքներ, բայց դրանց համար տեղ չկար սնդուկում, ուստի մի կողմի վրա շարեցի, վոր մյուս անգամ տանեմ: Այդ ժամանակ սկսվել եր ծովային մակընթացությունը: Ուտելեղենի յետևից ընկած, յես ցավելով տեսա, թե ինչպես ալիքները տանում են իմ շորերը: Հագիս մնացել եր միայն քաթանե կարճ անդրավարտիկս և գուլպաներս: Այդ բանն առիթ տվեց ինձ նավի վրա հագուստ փնտրելու: Իսկապես մեծ քանակությամբ հագուստ գտա նավում և ընտրեցի այն, ինչ վոր ինձ անհրաժեշտ եր: Գլխավոր ուշադրությունս դարձրի իմ աշխատանքի

զանազան գործիքների վրա և շատ ուրախացա, յերբ վերջապես գտա նավում հյուսնի գործիքներով լիքը մի արկըղ: Այդ արկղն էլ մեծ զգուշությամբ վայր իջեցրի լաստի վրա: Լավ կլիներ, վոր յես զենք էլ ձեռք բերեյի՝ թե ինքնապաշտպանության և թե վորսի համար: Կայուտում հայտնաբերեցի յերկու գեղեցիկ հրացան և մի զույգ ատրճանակ: Յես այդ զենքերը վերցրի, հետն էլ մի քանի հատ վառոդաման և մի քսակ մանրագնդակ: Յես գիտեյի, վոր նավում յերեք կիսատակառ վառոդ կա, բայց չեյի իմանում, թե վորտեղ եր նրանց թաքցրել թնդանոթաձիգ նավաստին: Յերկար վորոնելուց հետո գտա: Տակառներից մեկը թրջված եր, իսկ յերկուսը չոր եյին: Խոսք չկա, վոր յերեք տակառն էլ իջեցրի լաստի վրա: Չեր կարելի լաստը շատ ծանրաբեռնել, յեթե վոչ ծովի հատակը կգնար: Հիմա բանն այն ե, թե լաստն ինչպես առաջ տանեմ դեպի ափը. այդ հեշտ բան չեր, քանի վոր վոչ առագաստ կար, վոչ թիակ, վոչ ղեկ և ամենաթեթև քամին անգամ կարող եր շուռ տալ լաստը: Բայց յեղանակը նպաստավոր եր ինձ համար: Հանդիստ ծովը լայն փռվել եր: Մակընթացությունը գնում եր դեպի ափը: Քամին թեթև եր և բարեհաջող: Մեկ էլ վոր՝ յես գտա յերկու կոտըրված թիակ, մի սղոց, կացին և մուրճ: Այդ գործիքներն էլ հետս առած լաստ նստեցի: Զգուշությամբ հեռացա նավից և առաջ գնացի ափի ուղղությամբ: Ծանծաղուտի մոտ լաստը շատ հանդարտ եր առաջ գնում: Բայց շուտով նկատեցի, վոր փոքր ինչ շեղվում ե իր ուղղությունից, իմ գիշերելու տեղից: Սրանից յեզրակացրի, թե այստեղ մի ինչ վոր հոսանք կա, դեպի ծովածոցը գնացող: Այդ ծովածոցում կարելի կլիներ լաստը կանգնեցնել և բեռը դատարկել:

Յես սխալված չեյի: Շուտով իմ լաստը մոտավ մի ծովախորշ: Յես էլ, վորքան հնարավոր եր, լաստն ուղղում եյի հոսանքի մեջտեղով: Բայց հազիվ ազատվեցի յերկրորդ նավաբեկությունից, վորն ինձ համար ավելի վատ կլիներ, քան թե առաջինը: Հանկարծ լաստը մի կողմով խրվեց ավազուտը, մյուս կողմը մնաց ջրի վրա և այնպես թեքվեց, վոր իմ թանգարժեք բեռը քիչ մնաց

ջուրը թափվեր: Բանն այն եր, վոր յես կանգնած լաստի մեկ ծայրին, փայտով հրում եյի ավազի վրա: Այդ պատճառով էլ լաստի հակառակ ծայրը շարունակ տատանվում եր, և յեթե մի թեթև դիպչեր ավազին, լաստը կխրվեր ավազուտի մեջ ամբողջ բեռը կթափվեր ջուրը: Հանկարծ լաստը հատակին կպավ: Յես պառկեցի արկղների վրա, լարելով իմ ամբողջ ուժը, վոր բեռը վայր չթափվի, բայց այլևս լաստն առաջ տանել չեյի կարողանում: Ինձ մնում եր, վոր մակընթացության



Այժմ մնում եր լաստն ափին մոտեցնել:

ոգնությանն սպասեմ: Անշարժ դրությամբ, մեջքով արկղին հենված, մոտ կես ժամ մնացի, մինչև վոր մակընթացությունից ուռչող ջուրը լաստը բարձրացրեց ավազուտից, յես էլ թիերի ոգնությամբ նորից կարողացա լաստն առաջ շարժել հոսանքի ուղղությամբ: Շուտով հասա մի փոքրիկ արգահոս գետաբերան: Դիտելով ափերը, յես տեսա, վոր գետը շրջապատված ե կանաչ դաշտերով: Յես տեղ եյի վորոնում, վորը հարմար լիներ

ափ դուրս գալու: Յես չեյի կամենում ափից շատ հեռու գնալ, վորովհետև հույս ունեյի յերբևիցե մի նավ տեսնել ծովում:

Գետի աջ ափի մոտ մի խորշ նկատեցի: Մեծ դժվարությամբ դեպի այդ խորշն ուղղեցի իմ լաստը: Յես այնքան շատ մոտեցա ափին, վոր յեթե թին դեմ տայի հատակին, կարող եյի միանգամից մտնել այդ խորշը: Բայց չեյի կամենում ամբողջ գույքս վտանգի յենթարկել: Ափը զառիվայր եր: Յես կարող եյի մոտենալ միայն լաստի մի կողմը խիստ վեր բարձրացնելով, իսկ մյուս կողմն իջեցնելով. յեթե վոչ, բոլոր սնդուկները կթրջվեյին: Թին գետի հատակին դեմ տալով, իբրև խարիսխ՝ լաստի հավասարակշռությունը պահպանեցի, վոր լաստը շուռ չգա: Այս դրության մեջ սպասում եյի, մինչև վոր մակընթացությունն իր ամենամեծ բարձրությանը հասնի: Հաշվիս մեջ չսխալվեցի: Յերբ տեսա, վոր ջուրը լաստի տակ շատացել ե, լաստը հրեցի ափի հարթ ու ցածր տեղը: Հետո յերկու թի խրեցի գետնի մեջ, մեկը լաստի մի կողմից, մեկը մյուս կողմից: Այդպիսով լաստի տեղն ամրացրի և սպասեցի, մինչև վոր տեղատվությունն սկսվեց: Լաստը մնաց բոլորովին ցամաք ափի վրա: Յերբ արդեն համոզվեցի, վոր լաստին և նրա վրայի թանգագին բեռան վտանգ չի սպառնում, այդ ժամանակ յես ափ դուրս յեկա:

Հիմա իմ գլխավոր հոգսն այն եր, վոր շրջակայքը հետազոտեմ և ինձ համար ապաստան գտնեմ: Ինձ դեռ հայտնի չեր, թե իսկապես յես վորտեղ եմ գտնվում.— մայր ցամաքի՞ վրա, թե՞ մի կղզում: Մարդաբնա՞կ ե այդ յերկիրը, թե՞ անապատ: Վայրի գազաններ կա՞ն, թե՞ վոչ: Այդ հարցերին անհրաժեշտ եր պատասխանել:

Մոտ մի մղոն ինձանից հեռու յերևում եր մի շատ բարձր սար, վորն իշխում եր դեպի հյուսիս ձգվող լեռնաշղթայի բոլոր գագաթների վրա: Յես վերցրի մի վորսորդական հրացան, մի ատրճանակ, վառոդ, մի քսակ մանրագնդակ և այդպես զինված, ուղևորվեցի դեպի ինձ հետաքրքրող սարը:

Շատ մեծ դժվարությամբ յես հասա այդ սարի գագաթը և հասնելով այնտեղ, դառն կերպով համոզ-

վեցի, վոր յես ովկիանոսում գտնվող մի կղզու վրա յեմ. մի անապատ, անմարդաբնակ կղզու, վորի հարևաններն են արևմուտքից յերկու ժայռոտ կղզի՝ այս կղզուց չափազանց փոքր:

Յես պարզեցի նույնպես, վոր իմ կղզին դեռևս իր նախնական դրության մեջ եր գտնվում և յեթե բնակիչներ էլ ուներ, այդ էլ գազաններ կարող եյին լինել: Ճիշտըն ասած, յես վոչ մի գազան չտեսա, դուցե նրանք կղզու խորքերն եյին քաշվել: Մինչդեռ փոխարենը տեսա զանազան ցեղի բազմաթիվ թռչուններ: Ինձ ծանոթ չեյին այդ թռչունները և յես չգիտեյի, թե արդյոք նրանց միսն ուտելու համար պիտանի՞ յե, թե՞ վոչ: Սարից վերադառնալիս կրակեցի մի մեծ թռչնի վրա, վորը նստած եր ահագին անտառի ծայրում գտնվող բարձր ծառին: Յես կարծում եմ, վոր այդ առաջին հրացանն եր, վոր պայթում եր այստեղ, այդ կղզու վրա: Հենց վոր հրացանը պայթեց, անտառի բոլոր կողմերից աղմկելով ու ղժվժալով իրար անցան բազմաթիվ ու բազմատեսակ թռչուններ: Սպանված թռչունը բազեյի յեր նման, բայց վոչ ճանկեր ուներ, և վոչ ճիրաններ: Մսից վատ հոտ եր գալիս, ուտել չեր կարելի:

Յես վերադարձա լաստիս մոտ և սկսեցի բեռը դատարկել: Այդ աշխատանքն ինձանից շատ ժամանակ խլեց. գիշերը մոտ եր արդեն: Յես չգիտեյի, թե ինչ անեմ, վորտեղ քնեմ: Ծառի վրա գիշերել չեյի կամենում: Գետնի վրա պառկելուց վախենում եյի.— չլինի թե վայրի գազանները գիշատեն ինձ: Յերկար մտածելուց հետո վորոշեցի գետնի վրա պառկել: Սնդուկ, արկղ կողք-կողքի շարեցի և մի բարիկադ կազմեցի, իսկ տախտակներով խրճիթի նման մի բան սարքեցի: Աշխատելիս յես մտաբերեցի, վոր նավի վրա տեսել եյի ուրիշ շատ գնահատելի իրեր: Որինակ՝ առագաստներ, թոկերի կապոցներ, վորոնց կարելի յեր ափ բերել և յես վճռեցի գոնե մի անգամ էլ մտնել նավը:

Լավ իմանալով, վոր նավը յերկար չի կարող մնալ քարի վրա, այլ կսուզվի ջրի մեջ, յես ինձ խոսք տվի, վոր հաջորդ որն անպայման նավին այցելության գնամ:

Գիշերը շատ լավ քնեցի: Արևածագին զարթնեցի և

իսկույն ուղևորվեցի դեպի նավը վոչ թե լաստով, վորովհետև նա քանդված եր, այլ առաջվա պես լող տալով՝ հագած մի զոլավոր շապիկ, քաթանե անդրավարտիկ և թեթև, անկրունկ վոտնամաններ: Բարձրանալով նավի վրա, յես նախ մի նոր լաստ շինեցի, առաջինից շատ թեթև և քիչ ել բեռ վերցրի:

Յես նավից դուրս բերի շատ ոգտավետ իրեր: Որինակ՝ յերկու տոպրակ մեխ, մեծ շաղափ, յերկու դյուժին կացին, մի հեսան: Բացի դրանից՝ յերկու տակառ գնդակ, յոթը մուշկետ (կարճափող հրացան), մի վորսորդական հրացան, վառոդ, մի մեծ տոպրակ մանրագնդակ: Յես ուզում եյի հետս վերցնել մի ահագին կտոր արճիճ, բայց նա այնքան ծանր եր, վոր յես վոչ մի կերպ չկարողացա տեղից բարձրացնել, ուստի այդ գյուտը ժամանակավորապես թողի նավում: Վերցրի նաև ձեռքս ընկած բոլոր հագուստեղենը, առագաստները, մի մահճակալ, և անկողին:

Այդ բոլորը տեղավորեցի լաստի վրա և հաջողությամբ տեղ հասցրի:

ՆԱՎԱՊԵՏԻ ՍԵՆՅԱԿԸ

Յես շատ եյի վախում, վոր բացակայությանս ժամանակ վայրի գազանները ուտեստի պաշարը փչացրած լինեն, բայց վերադարձիս ամբողջ պաշարն անվնաս գտա: Անկոչ հյուրերի հետքեր չկային: Միայն արկղիկների մեկի վրա նստած եր մի ինչ վոր փոքրիկ վայրենի կատվի նման կենդանի: Ինձ նկատելիս նա մի փոքր հեռացավ և ելի կանգ առավ: Հանգիստ նստելով գետնին, սկսեց ինձ նայել, կարծես թե կամենում եր ինձ հետ ծանոթություն հաստատել: Յես նրան ցույց տվի հրացանը, բայց փոքրիկ գազանը չհասկանալով, թե ինչ բան ե դա, մինչև անգամ տեղից ել չշարժվեց: Հետո յես նրա առաջ մի պաքսիմատ գցեցի, շատ փոքրիկ կտոր, վորովհետև իմ պաշարը քիչ եր: Կենդանին մոտեցավ պաքսիմատին, հոտոտեց ու ագահությամբ կերավ: Հետո սկսեց պոչը շարժել ու ելի ուզել: Բայց յես նրան ել վո-

չինչ չտվի: Գազանը մի քիչ սպասելուց հետո թողեց ու գնաց:

Յերկրորդ լաստը դատարկելիս ինձ շատ չարչարեցին վառոդի տակառները: Դրանք այնքան ծանր եյին, վոր չեյի կարողանում տեղից բարձրացնել (զարմանում եմ, թե ինչպես եյի կարողացել բառնալ այդ բեռը լաստի վրա): Յես ստիպված յեղա բանալ տակառների բերանը և վառոդը մաս-մաս դուրս հանել: Այդ աշխատանքը շատ ժամանակ խլեց. լաստը դատարկելուց հետո յես մի փոքրիկ վրան շինեցի առագաստի կտորներից, ցցերից ու ծառի ճյուղերից: Վրանի տակ ժողովեցի այն բոլոր բաները, վորոնք կարող եյին արևից ու անձրևից փչանալ: Դատարկ սնդուկները, արկղներն ու տակառներն իրար վրա դարսելով, վրանի շուրջը մի պատնեշ քաշեցի:

Դրսի գործը վերջացնելուց հետո, վրանի մուտքը տախտակներով փակեցի ու քնելու տեղ պատրաստեցի, փռելով անկողինս, լցրած հրացանը կողքիս, ատրճանակները գլխավերևս դնելով, յես մտա անկողին և որվա աշխատանքից հոգնած՝ մեռածի պես քնեցի:

Յես կարևոր եյի համարում, քանի դեռ նավը վերջնականապես չեր խորասուզվել, վերցնել վրայից բոլոր ինձ հարկավոր իրերը: Դրա համար ամեն որ, տեղատվության ժամանակ, այցելում եյի նավը, և հետո բերում այն, ինչ վոր կարողանում եյի:

Յերրորդ անգամ բերի հնարավորություն չափ նավային պիտույքներից—թոկեր, հաստ պարաններ, առանց բացառության բոլոր առագաստները, թեև այնքան մեծ եյին, վոր յես ստիպված յեղա նրանց մաս-մաս անել: Հետո մինչև անգամ վերցրի պաշարի համար պահած քաթանը: Նրանով կարող եյի առագաստները կարկատել և թրջված մի տակառ վառոդը փռել վրան և չորացնել: Այդ բոլորը պետք եր այն պայմաններում, վորոնց մեջ յես ընկել եյի:

Հատուկ բավականություն պատճառեցին ինձ մի քանի իրեր, վորոնք ինձ համար անսպասելի գյուտեր եյին: Վեց թե յոթն անգամ նավը մտնելուց հետո, յես կարծում եյի, թե բոլոր արժեքավոր իրերը կրել եմ

ափ: Ուրախությունս վորքան մեծ յեղավ, յերբ բոլորովին պատահաբար նավում գտա մի մեծ տակառ պաքսիմաթ, յերեք կիսատակառ ռոմ ու կազդուրիչ խմիչքներ, մի տակառ շաքար և մի տակառ լավ տեսակի մանր աղացած ալյուր: Ուրախացած, այդ բոլոր իրերը հաջողությամբ դուրս բերի իմ կղզին:

Հետևյալ որը նավի առագաստակալ փայտերից ու կայմերից մի ահագին նոր լաստ սարքեցի՝ առաջին յերկու լաստից էլ մեծ: Լաստի վրա դարսեցի նավում գտնված բոլոր ամենահաստ պարանները, յերկաթը՝ ինչ վոր կարողացա պոկել: Բայց այս անգամ բախտս դավաճանեց ինձ: Լաստն այնքան շատ եր ծանրաբեռնված, վոր ծովախորշը մտնելիս կպավ ափին ու շուռ յեկավ: Ամբողջ բեռն էլ, յես էլ ընկանք ջուրը: Յես բոլորովին չվնասվեցի, բայց ափսոս իմ թանգարժեք ապրանքը: Նամանավանդ յերկաթի կորուստն ինձ մեծ ցավ պատճառեց, վորովհետև նա ինձ շատ պետք եր: Այնուամենայնիվ ջուրը քաշվելուց հետո ինձ հաջողվեց կորած իրերիս համարյա կեսը հանել ջրից: Դրանից հետո հաջորդ որերն էլ յես նավ եյի գնում և ամեն անգամ հետս շատ բան եյի բերում:

Տասներեք որ եր, վոր յես իմ կղզումն եյի: Այդ տասներեք որվա մեջ յես տասնմեկ անգամ դեպի նավը գնացի և դուրս բերի այն բոլոր բաները, ինչ վոր կարելի յեր բերել: Յեթե յեղանակը լավ գնար, յես համոզված եմ, վոր ամբողջ նավի կմախքն անգամ մաս-մաս կանեյի և ափ կհանեյի: Բայց տասնչորսերորդ որը հանկարծ բավական ուժեղ քամի բարձրացավ: Յես ուշադրություն չդարձրի: Տեղատվությունն սկսվելիս, ընկա ջուրը և լողալով հասա նավին: Յես մի քանի անգամ յեղել եյի նավապետի սենյակում և համոզված եյի, վոր այնտեղ էլ պետքական բան չեմ թողել, բոլորը կրել եմ, բայց այդպես դուրս չեկավ: Այս անգամ քանդելով պահարանի մի արկղը, գտա այնտեղ մի քանի ածելի, մի զույգ մեծ մկրատ, մոտ մի դյուժին դանակ ու պատառաքաղ: Մի ուրիշ արկղում կար յերեսունվեց ֆունտ ստեռլինգ-վոսկե և արծաթե դրամներ:

Այդ փողերը տեսնելիս, յես ակամա ժպտացի և

բարձրաձայն ասացի. «Ո՛, փայլուն անպետք բան, հիմա դու ինձ հարկավոր չես»:

Փողերը փաթաթեցի թղթով և ուրիշ իրերի հետ միասին դրի այն կապոցի մեջ, վորը պատրաստել եյի հին, մաշված առագաստից: Արդեն ուզում եյի մի նոր լաստ շինել, բայց տեսա, վոր յերկինքն ամպերով է

Փողերը տեսնելիս յես ակամա ժպտացի...

ծածկվում և քամին էլ սաստկանում է: Յես հասկացա, վոր լաստի մասին մտածելը զուր բան է, այլ պետք է վորքան կարելի յե շուտ, լողալով ափ դուրս գալ: Կապոցը միջքիս ամրացրի ու ինձ գցեցի ջուրը:

Քաջաբար լողում եյի դեպի ափը: Ճիշտ է, ցամաք դուրս յեկա, բայց մեծ դժվարությամբ: Ինձ խանգարողը մեջքիս բեռն եր, մեկ էլ րոպե առ րոպե սաստկացող հուզմունքը:

Յես ժամանակին կարողացա մտնել վրանս: Կատա

ղի փոթորիկ եր սկսվել։ Ամբողջ գիշերը ծովն ալեկոծության մեջ եր։ Ալիքները շառաչում եյին։ Կայծակը փայլատակում եր։ Առավոտը դուրս յեկա վրանից և սկսեցի աչքերով վորոնել նավը, տեսա, վոր նա այլևս չեր։ Նավն անհայտացել եր ընդմիշտ։

Հիմա յես մտորմունքի մեջ եյի, թե ինչպես ապահովեմ ինձ վայրենիների և գիշատիչ գազանների հարձակումներից։ Յես յերկար մտածում եյի բնակարանի մասին։ Մի այր բանայի գետնի մե՞ջ, թե՞ մի խրճիթ կառուցեյի գետնի վրա։ Վերջապես վորոշեցի յերկուսն ել ունենալ՝ թե գետնափոր այրը և թե փայտե խրճիթը։

ԱՅԾՆ ՈՒ ԻՐ ՈՒԼԻԿԸ

Ինձ ապաստան ծառայող տեղը յերկարատև բնակության համար անհարմար գտա։ Այդ տեղը ծովին մոտ եր, ցածր ու ճահճային, հետևապես և վատառողջ։ Բացի այդ, մոտակայքում խմելու ջուր չկար։ Այդ պատճառով յես վորոշել եյի մի ուրիշ ավելի հարմար տեղ գտնել։

Նոր բնակության տեղից յես պահանջում եյի, վոր ունենար առողջ ոդ, խմելու մաքուր ջուր, լիներ արևից պաշտպանված, յերկոտանի և չորքոտանի կենդանիների հարձակումից ապահովված և, վերջապես այնտեղից ծովը տեսնվեր, վոր նավ յերևալիս իմ բնակարանից նկատեյի։ Յես դեռ հույս ունեյի, վոր ազատարար նավ կգա մեր յետևից։ Յես այդ մտքից դեռ չեյի հրաժարվում։

Յես մի այդպիսի տեղ եյի վորոնում։ Բարձր ժայռի ստորոտում մի փոքրիկ դաշտավայր եր տարածվում։ Այդ ժայռի առջևի մասը պատի նման ուղղահայաց վեր եր բարձրանում, իսկ ներքևի մասը մի հրաշալի կանաչազարդ մարգագետին եր, վոր չնչտակի իջնում եր դեպի ծովափ։ Նա գտնվում եր սարի հյուսիս-արևմտյան կողմը և այդ պատճառով ել համարյա ամբողջ որը արևից պաշտպանված եր։ Յես վորոշեցի բնակվել այդտեղ։ Ամեն բանից առաջ յես այդ դաշտավայրի վրա մի կիսաշրջան քաշեցի, վորի շառավիղը ժայռից սկսած

տասն արշին եր, իսկ տրամագիծը, այսինքն՝ կիսաշրջանի մի ծայրից մյուս ծայրը, քսան արշին։ Հետո տնկեցի յերկու շարք հաստ ձողեր, վորոնց ծայրերը գետնից հինգ արշին բարձր եյին։ Ձողաշարքերի արանքը վեց դույմից ավելի չեր։ Այդ արանքը կտրատած թոկերով լիքը լցրի։ Ցանկապատի սյուներին ներսի կողմից նեցուկներ տվի մոտ յերկուս ու կես վոտնաչափ բարձրությամբ։ Այդ ցանկապատը այնքան բարձր ու ամուր եր, վոր վոչ մարդ, վոչ գազան չեյին կարող անցնել նրանից և վոչ ել քանդել։ Ճիշտ ե, նրա կառուցման վրա շատ աշխատանք և ժամանակ գործ դրի։

Ցանկապատը մտնելու համար դուռ չթողի, այլ շինեցի մի փոքրիկ շարժական սանդուղք, վորի ոգնությամբ մտնում եյի այդ ամրոցը։ Ներս մտնելուց հետո վերցնում եյի սանդուղքն ու մի կողմ դնում։ Հիմա յես բավականին ապահովված եյի համարվում դրսի աշխարհից։ Այժմ գոնե հանգիստ քնում եյի ինչպես մի ապահով բերդում։ Հետագայում գլխի ընկա, վոր յես բոլորովին իզուր եմ չարչարվել յերևակայական թշնամիներից պաշտպանվելու համար։ Ճիշտն այն ե, վոր կղզում այդպիսի թշնամիներ չկային։

Յես մեծ դժվարությամբ հետզհետե տեղավորեցի այդ ամրոցանման խրճիթում ամբողջ հարստությունս,— իրերը, մթերքը, սպառազինման պիտույքները, զենքերը, մի խոսքով, ինչ վոր ունեյի ձեռքի տակ։ Յես խփեցի մի մեծ վրան, բաժանելով յերկու մասի՝ պաշտպանվելու այդ յերկրում պարբերաբար տեղացող անձրևներից, վորոնց մասին յես իմացել եյի գրքերից և ծովագնացների պատմածից։ Մի վրան ել սարքեցի միջակ մեծության, իսկ կողքին մի ուրիշ մեծը, ծածկելով այն նավից բերածս կպրած քաթանով։

Մինչև անձրևների գալը յես քնում եյի վոչ թե անկողնում, այլ այն ճոճում, վորը պատկանում եր նավապետին։ Բոլոր իրերը, վորոնք կարող եյին անձրևից փչանալ, հավաքեցի խրճիթի մեջ, իսկ մնացածները թողի ցցապատի ներսում։ Վերջապես ժամանակավոր մուտքն ել փակեցի, այնպես վոր սանդուղքի ոգնությամբ եյի ներս ու դուրս անում։

Այդ բոլորից հետո այն սարում, որին հարում էր իմ վրանի յետի կողմը, մի այր փորեցի, որը նկուղի տեղ պետք է ծառայեր: Փորած հողն ու հանած քարերն ածում էյի վրանի մնացած յերեք կողմը: Այդպիսով ստացվեց մեկ ու կես ֆուտ բարձրություն ունեցող մի պարապատ:

Պարզ է, որ այս բոլորը դժվարին գործ էր, և դա գլուխ բերելը, ցանկալի վերջավորության հասցնելն այնքան էլ հեշտ բան չէր: Յերբեմն յես ծանր րոպեներ էյի ապրում: Մի անգամ, յերբ յես հատակագիծ էյի կազմում՝ վրան, նկուղ և ցանկապատ կառուցելու համար, մի մեծ փոթորիկ բարձրացավ: Մի ահագին մթին ու խիտ ամպ ծածկեց յերկինքը և սաստիկ հորդ անձրև թափեց: Շողշողաց շլացուցիչ կայծակը, լսվեց որոտի զարհուրելի ճայթյունը: Ինձ վախեցնողը ոչ թե կայծակն էր, այլ ակնթարթապես գլխումս ծագած միտքը, թե արդյոք իմ վառոդին վտանգ չ՞ի սպառնում: Սիրտս սաստիկ թրթռաց, յերբ մտածեցի, թե կայծակը կարող է պայթեցնել ամբողջ պաշարը: Չէ որ վառոդն էր իմ միակ պաշտպանը, ապրուստ ճարելու միակ միջոցը: Այն մասին, թե կայծակը վայրկենապես կարող է ինձ սպանել, յես չէյի մտածում, թեև, յեթե պայթյունն իրոք տեղի ունենար, յես դեռ աչքս չթարթած՝ հոգս կցնդեյի:

Տեսնելով վառոդին սպառնացող վտանգը, փոթորիկը վերջանալուց հետո իմ բոլոր մյուս աշխատանքներն իսկույն ընդհատեցի և սկսեցի վառոդը տոպրակների, տուփերի և արկղների մեջ ածել և ջոկ-ջոկ տեղ թաքցնել, որ կրակը մեկից մյուսը չանցնի ու միանգամից չզրկի ինձ ամբողջ վառոդից: Ուղիղ յերկու շաբաթ աշխատեցի այդ գործի վրա: Յերկու հարյուր քառասուն գրվանքա վառոդ բաժանեցի հարյուր մասի: Չէյի վախենում, թե թրջված վառոդը կայրվի: Մի կիսատակառ թրջված վառոդը թողի դուրսը, որ չորանա: Մնացած վառոդը սարի մեջ շատ խորը թաղեցի, այնպես որ անձրևը չէր կարող փչացնել: Յերբ իմ քարայրը, որին «նկուղ» էյի անվանում, արդեն պատրաստ էր, յես այնտեղ գլորեցի թրջված վառոդով լեք կիսատակառը:

Յես ամեն որ մի քանի ժամով աշխատանքներս ընդհատում էյի: Հրացանս առած գնում էյի անտառ՝ հանգստանալու և ուտելու համար որս ճարելու: Բացի այդ, յես ուզում էյի ճանաչել, թե ինչ բնություն և ինչ տեղագրություն ունի իմ կղզին: Այդ պատճառով յես շատ հեռուն էյի գնում:

Շուտով յես հայտնաբերեցի, որ իմ կղզում վայրի այծեր են ապրում: Այդ բանն ինձ շատ ուրախացրեց:



Յես վեր բարձրացա և կրակեցի այծերի վրա...

Սակայն ուրախությունս շուտով թուլացավ: Ինչո՞ւ: Յես նկատեցի, որ այդ վայրի այծերը շատ կասկածոտ էյին, զգայուն, խորամանկ և արագավազ: Նրանց մո—

տենալ չեր լինում: Բայց յես զանազան խորամանկ ձևերով կարողացա մի քանի այծ գնդակահարել: Ուսումնասիրեցի այծերի սովորությունները, հասկացա, թե ինչ տեսակ միջոց գործադրեմ, վոր կարողանամ նրանց մոտենալ: Սովորաբար այծերը ժայռի վրա եյին լինում, իսկ յես տակը: Նրանք ինձ նկատելիս արտասովոր արագությամբ փախչում եյին: Բայց մի անգամ այնպես պատահեց, վոր այծերը ժայռի տակն եյին, իսկ յես ժայռի գլխին: Նրանք ինձ վրա ուշադրություն չեյին դարձնում, մինչև անգամ տեղներից ել չեյին շարժվում, թեև նայում եյին ինձ: Այդ փաստից յես յեզրակացրի, վոր այծերի աչքերը դեպի վեր նայելիս լավ չեն տեսնում, իսկ վերևից ներքև աչքերից վոչինչ չի փախչում: Այն ժամանակ յես սպասում եյի, վոր այծերը սարից իջնեն հովիտ: Յես սարն եյի բարձրանում և այնտեղից գնդակ արձակում այծերի վրա:

Իմ առաջին գնդակով յես մի այծ սպանեցի, յերբ նա իր ուլին ծիծ եր տալիս:

Այդ ինձ շատ վշտացրեց: Յերբ մայրը մեռած գետնին ընկավ, ուլիկը չփախավ մոր մոտից: Իսկ յերբ յես ուսիս առա մորը, ուլիկը հետևից ընկած յեկավ մինչև իմ տան ցանկապատը: Հասնելով իմ ամրոցը, այծի դիակը ցանկապատից ներս նետեցի և ուլիկին էլ գրկած ներս տարա: Յես ուզում եյի ընտելացնել նրան: Բայց նա վոչինչ չեր ուտում, այնպես վոր ստիպված յեղա մորթել նրան և ուտել: Այդ յերկու կենդանու միսը յերկար ժամանակ ինձ կերակրեց: Յես խնայողությամբ եյի գործածում հացամթերքը, նամանավանդ պաքսիմաթը, վորին հատուկ նշանակություն եյի տալիս: Ով գիտե, ինչ կարող եր պատահել:

ՅԵՍ ՄՏԱԾՈՒՄ ԵՄ ԻՄ ԴՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Եյականում իմ դրությունը շատ բանով լավ եր: Ի՞նչ կլիներ իմ վիճակը, յեթե նավը չ'հեռանար այն ծանծաղուտից, վորի վրա առաջին անգամ նստել եր, ու ափին մոտիկ նոր ծանծաղուտի վրա այնքան յերկար ժամանակ կանգ չառներ և յեթե յես չկարողանայի այն-

քան թանգագին և ինձ համար այնքան անհրաժեշտ իրերը ափ դուրս բերել: Չե՞ վոր յես զրկված կլինեյի գոյությունս պահպանելու ամեն տեսակ միջոցներից:

Յես ինձ հարց եյի տալիս.

— Ի՞նչ կանեյի, յեթե չունենայի հրացան, գործիքներ՝ ապահով բնակարան կառուցելու համար, հագուստ, անկողին, ուտելեղենի պաշար: Յես այդ բոլորն ունեյի, այն ել առատությամբ: Յես ել հնարավորություն ունեյի ինձ համար ուտելիք ճարելու մինչև անգամ և այն դեպքում, յերբ սպառվեր վառոդի ամբողջ պաշարը և յես չկարողանայի ոգտագործել հրացանը: Առհասարակ, ինձ այնպես եր թվում, վոր յես մինչև կյանքիս վերջը ապահովված եյի ամենաանհրաժեշտ բաներով:

Անցնելով իմ տխուր կյանքի նկարագրին, մի այնպիսի կյանքի, վորի մասին գուցե դեռ վոչվոք յերբեք ել բան չի լսել, յես մանրամասն կշարունակեմ իմ պատմությունը:

Իմ հաշվով յես կղզին եյի ընկել սեպտեմբերի 30-ին: Կղզում 10–12 որ մնալուց հետո իմ մտքովն անցավ, վոր յես կարող եմ որերի և ամիսների հաշիվը կորցնել: Կարող եմ լի որերը խառնել կիրակիների հետ: Այդ բանի առաջն առնելու նպատակով ափի այն կետում, վորտեղ բերել եյին ինձ քամին ու ալիքները, մի սյուն տնկեցի հետևյալ մակագրությամբ. «Յես ընկա այս կղզին 1659 թվի սեպտեմբերի 30-ին:

Այդ մակագրության տակ ամեն որ դանակով գիծ եյի անում: Ամեն մի յոթերորդ գծանշանը յերկու անգամ յերկար եր մնացածներից և նշանակում եր կիրակի. իսկ յուրաքանչյուր ամսի առաջին որվա գծանշանը յերկու անգամ յերկար եր կիրակիների գծանշաններից: Այդ կերպով յես պահում եյի որերի, շաբաթների, ամիսների և տարիների հաշիվը: Այդ կերպով յես կազմեցի իմ որացույցը: Ավելորդ չեմ համարում ասել, վոր նավից դուրս բերածս իրերի մեջ կային և այնպիսի բաներ, վորոնք ինքնըստինքյան արժեք չունեյին, բայց վերջն ինձ շատ պետք յեկան: Որինակ՝ գրիչ, գրչակոթ, թուղթ, թանաք և ուրիշ շատ գրենական պիտույքներ: Յերկու

թե յերեք կողմնացույց, մաթեմատիկական գործիքներ, ավազի ժամացույցներ, աշխարհագրական և ծովային քարտեզներ ու գրքեր, վորոնց առանց ջոկելու հավաքել, բերել եյի:

Յես մոռացա հիշել, վոր նավում կային յերկու կատու և մի շուն, վորոնց, առաջին անգամ նավին այցելության գնալիս, բերել եյի ինձ հետ: Կատուներին գրկած բերի լաստի վրա և դրի առաջուց պատրաստած զամբյուղի մեջ, իսկ շունը—ինքը ցած թռավ նավից և

Յես գծեցի մի կիսաշրջան և այդ կիսաշրջանում խփեցի յերկու շարք մեծ ցցեր...

իմ յետևից լողալով, ինձ հետ ել ափ դուրս յեկավ: Յերկար տարիներ այդ շունն իմ հավատարիմ ընկերն եր, անձնվեր, խելացի ընկեր, վորն ինձանից շատ քիչ բան եր պահանջում, բայց ինձ մեծ ուրախություն և մխի-

թարություն եր պատճառում: Յես ափսոսում եյի, վոր նա չի կարողանում ինձ հետ խոսել:

Թուղթը, թանաքը և գրիչները յես մեծ խնամքով եյի պահում: Քանի դեռ թանաք կար, արձանագրում եյի այն բոլորն, ինչ վոր ապրել եյի և զգացել, այն ամենն, ինչ վոր պատահել եր: Բայց յերբ թանաքը վերջացավ, այլևս հնարավորություն չեղավ օրագիրս շարունակելու, վորովհետև նոր թանաք պատրաստելու փորձերս կատարյալ անհաջողության հանդիպեցին: Բացի թանաքից, դեռ ինձ շատ կարևոր բաներ եյին պակաս. օրինակ՝ չունեյի բահ, փետար՝ հողային աշխատանքներ կատարելու, հողը փորելու, դուրս տալու և կրելու համար: Չունեյի թել ու ասեղ, գնդասեղ, չկար նաև քաթան՝ սպիտակեղենի համար: Բայց սովորեցի առանց սպիտակեղենի յոլա գնալ:

Գործիքների պակասությունից իմ հողային աշխատանքները շատ դանդաղ և մեծ դժվարությամբ եյին առաջ գնում: Իմ փոքրիկ ամրոցի կառուցման վրա չափազանց յերկար ժամանակ և անչափ աշխատանք գործադրեցի: Մի տարվա ընթացքում հազիվ վերջացրի փոքրիկ պատնեշը կամ ցանկապատը: Այդ ցանկապատի ցցերն այնքան ծանր եյին, վոր յես հազիվ եյի կարողանում նրանց տեղից բարձրացնել: Այնպես եր պատահում, վոր յես մի ցից կտրելու, տաշելու, շալկելու և տեղ հասցնելու վրա յերկու օր եյի կորցնում: Մի ամբողջ օր ել կորցնում եյի մի ցիցը գետնի մեջ տնկելու վրա: Ցցերն սկզբում թաղում եյի մի մեծ փայտե կոճղի օգնությամբ, վորը հետո փոխարինեցի յերկաթե լծակով: Այդ լծակն եր, վոր արագացրեց ցցեր թաղելու ծանր աշխատանքը:

Սակայն ժամանակի կորուստի մասին յես չեյի ափսոսում: Դեռ իմ առջև շատ ժամանակ կար: Ի՞նչ պետք է անեմ, յերբ վերջացնեմ իմ բնակարանի կառուցման և ամրացման աշխատանքները: Մնում եր միայն, վոր կղզին վոտի տակ տամ, թափառեմ և ինձ համար ուտելիք ճարեմ:

Յես սկսեցի լուրջ մտածել իմ վիճակի մասին, թե ինչ եմ անելու ներկայումս և ապագայում: Յեվ սկսեցի

նկարագրել իմ կյանքը ո՛չ թե նրա համար, որ օգնած լինեմ այն մարդկանց, որոնք կարող էին իմ դրության մեջ ընկնել, այլ այն նպատակով, որպեսզի համոզվեմ և իրավունք ունենամ ինձ ասելու—չէ՞ որ կարող էր վատը լինել:

Ահա իմ դատողությունների գրանցումը.

ՎԱՏԸ	ԼԱՎԸ
Ես ընկած եմ մի անմարդաբնակ վայրի կղզի, որտեղից ոչ մի հույս չունեմ ազատվելու:	Բայց ես ողջ առողջ եմ: Ես չխեղդվեցի, ինչպես իմ բոլոր ուղեկիցները, իսկ կյանքը իր մեջ շատ լավ բաներ ունի:
Ես արտաքսված և բաժանված եմ ընդհանուր աշխարհից, ես դատապարտված եմ միայնակ կյանք վարելու:	Բայց ես չեմ մեռնում քաղցից այս անպտուղ, ապրելու համար բան չարտադրող կղզում:
Մարդկանց ցուցակից ջնջված եմ, ես ճգնավոր եմ: Ես հագուստ չունեմ, որ մերկությունս ծածկեմ:	Դրա փոխարեն ես գտնվում եմ տաք կլիմայում, որտեղ առանց հագուստի էլ կարելի է ապրել:
Ես համարյա անպաշտպան եմ և չար մարդկանց ու գիշատիչ գազանների հարձակումներին դիմադրելու հնարավորությունից զուրկ:	Ես ընկել եմ մի այնպիսի կղզի, որտեղ չեն երևում ոչ վայրենի մարդիկ և ոչ գիշատիչ գազաններ: Ինչ կլիներ իմ դրությունը, եթե ընկած լինեի գազանների որջը:
Ինձ մոտ ոչ մի մարդ չկա, որի հետ խոսեմ, մտքերս փոխանակեմ և որն ինձ մխիթարել կարողանա:	Դրա փոխարեն նավը այնքան շատ մոտեցավ ափին, որ ես առանց դժվարության կարողացա գոյությունս պահպանելու համար բոլոր անհրաժեշտ բաները ձեռք բերել:

Այս կերպով ես հաշտվեցի իմ դրության հետ: Եվ ավելորդ համարեցի կանգնել ծովի ափին և վիշտը սրտումս դեպի հորիզոնը նայել այն սպասումով, թե արդյոք չե՞մ տեսնելու փրկարար նավը: Ես սկսեցի միայն այն մասին մտածել, թե ինչ անեմ, որ կյանքս բարեկարգեմ կղզու վրա:

Ես արդեն նկարագրել եմ, որ իմ բնակարանս գտնըվում էր սարի ստորոտում և շրջապատված էր կրկնակի ամուր ցանկապատով: Հետագայում ես այդ ցանկապատը պատ դարձրի, նրա կողքի դարատափի վրա գերաններ քաշեցի, որոնց մյուս ծայրերը ամրացրի ժայռի մեջ: Գերանների վրա ծառի ճյուղեր ու ճմեր ածեցի՝ արևից, անձրևից պահպանելու համար: Մի խոսքով, ամեն բան արի, որ՝ այդ ծածկոցը պաշտպաներ իմ բնակարանը տարվա որոշ ժամանակներին պարբերաբար առատ տեղացող անձրևներից:

Ես արդեն ասել եմ, որ իմ ամբողջ կյանքն ու գույքը հավաքեցի բակը, քարայրը, նկուղի մեջ, վրանի յետևը: Սկզբում բոլոր իրերը խառն ի խուռն դրության մեջ էյին, իրար վրա ածած, այնպես որ յես ինքս չէյի կարողանում ազատ շարժվել իմ ամրոցում: Ես համոզվեցի, որ բնակարանն ինձ համար նեղ է, պետք է լայնացվի: Սկսեցի փորել, լայնացրի և խորացրի: Իմ բախտից սարն ավազոտ էր, բահով հեշտ էր քանդվում: Տեսնելով, որ քարայրը բավականաչափ խոր է, յես աջ կողմից ստորերկրյա անցք բաց արի, այնպես որ պարըսպից անկախ, աննկատելի դուրս ու ներս անելու մուտք ունեցա յետևի կողմից:

Հիմա յես ազատ, ընդարձակ տեղ ունեյի իմ բոլոր բարիքները պահելու համար:

Սրանից հետո սկսեցի կահկարասի պատրաստել ինձ համար: Ամեն բանից առաջ ինձ սեղան, աթոռ էր պետք: Առանց սեղանի և աթոռի ոչ կարող էյի գրել և ոչ էլ կանոնավոր ճաշել: Գետնի վրա չէյի ուզում նստել և ինչու ինձ զրկանքների յենթարկեյի, քանի որ այդ բոլորը հեշտությամբ կարելի յեր վերացնել:

Ճիշտ այդպես յես ատաղձագործ դարձա, թեև մինչև այդ ոչ մի գործիք ձեռքս չէյի առել: Իսկ հիմա

կարիքը և անհրաժեշտությունն ինձ սովորեցրին ամեն տեսակ գործիքներ բանեցնել: Եթե ձեռքիս տակ շատ գործիքներ ունենայի, վոչ մի բանի առաջ կանգ չեյի առնի: Այս էլ չմոռանամ ասել, վոր շատ իրեր առանց գործիքների եյի շինել: Իմ տրամադրության տակ միայն կացինն եր, դանակը և հարթիչը՝ (ռանդա): Նրանց ոգնությամբ այնպիսի բաներ շինեցի, վորոնց մասին առաջ մտածել անգամ չեյի կարող: Ուրիշ հարմար գործիքներ չունենալու յերեսից յես ամենահաստ ծառից մի տախտակ եյի ստանում և գի՞տեք, թե ինչքա՜ն եյի չարչարվում:

Նախ ծառը կացնով կտրում եյի, հետո յերկու կողմից այնքան եյի տաշում, մինչև վոր բարակեր, տախտակի ձև ստանար: Ապա տախտակացուն հարթիչով կոկում, շտկում եյի: Յես աշխատանքից չեյի վախենում, ժամանակին էլ առանձին արժեք չեյի տալիս: Յես բավականին համբերություն, ջանասիրություն և դիտակցություն ունեյի իմ աշխատանքներն արդյունավետ դարձնելու համար: Իսկ ժամանակը, առանց ինձ էլ հարցնելու, գնում եր, պարապ մնալն էլ հո չափազանց ավելի ծանր է, քան թե աշխատելը, աշխատելը և մի այն աշխատելը:

Նավից բերած տախտակից շինեցի սեղան ու աթոռ: Բացի այդ, նույն տախտակներից նկուղի պատերի մեջ մի քանի դարակ պատրաստեցի, վորոնց վրա տեղավորեցի գործիքները, մեխերը և յերկաթե իրերը: Յես ուզում եյի, վոր ամեն իր իր տեղն ունենա և յես ուզած ժամանակ կարողանամ նրան գտնել: Վերջն էլ պատին մեծ-մեծ մեխեր խփեցի ու պատից կախեցի իմ հրացանները:

Իմ տանն ամեն բան իր տեղն եր: Ամեն բանի մեջ օրինակելի կարգ ու կանոն կար: Նայում եյի ու հիանում:

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Վերջացրի իմ հերթական շտապ գործերը: Սկսեցի կանոնավոր հիշատակարան պահել՝ գրի առնելով ամե-

նորյա զբաղմունքներս: Ափսոս վոր թանաքի պակասությունը թույլ չտվեց հիշատակարանս մինչև վերջը հասցնել:

«1659 թվի սեպտեմբերի 30-ին: Յես՝ անբախտ Ռոբինզոն Կրուզոս, ծովային սարսափելի փոթորիկի ժամանակ նավաբեկության հանդիպեցի: Նավի ամբողջ կազմը կորավ, իսկ ինձ ալիքները կիսամեռ դրությամբ դուրս նետեցին այս անապատ կղզին, վորն անվանեցի «Հուսահատության կղզի» Այդ որվա մնացած մասը յես



Յես սկսեցի զբաղմունքներիս համար հիշատակարան պահել:

անցկացրի խորին վշտով: Սաստիկ կատաղել եյի իմ ճակատագրի դեմ, վորն ինձ հասցրել եր այսպիսի մի սարսափելի դրության: Յես չունեյի վոչ ուտելիք, վոչ հագնելիք, վոչ զենք և վոչ էլ ազատության հույս: Ինձ մահ եր սպասում: Ինձ վիճակված է կամ վայրենիների, կամ գիշատիչ կենդանիների ճանկն ընկնել, կամ թե վերջապես սովամահ լինել»:

Այսպես յես գրեցի հիշատակարանում բոլորը, բոլոր իմ ապրումները.

Հոկտեմբերի 6-ին գրեցի հետևյալը.—Առավոտյան

զբոսանքից հետո ես սկսեցի սեղանի վերջնական ձևակերպումով զբաղվել, որն ինձ դուր չի գալիս, բայց ես հույս ունեմ, որ նրա պակասները կուղղեմ:

Հոկտեմբերի 7-ին: Յերկնքից լույս ծագեց. սկըսվում է օրը: Հինգ օր շարունակ ես սեղան շինելով էյի զբաղված: Միայն ահագին աշխատանք տանելուց հետո ես կարողացա սեղանի ձև տալ: Ես համարյա տասն անգամ փոփոխության յենթարկեցի սեղանը, բայց դարձյալ դժգոհ մնացի իմ աշխատանքից: Մի առ ժամանակ թող այնպես մնա, ինչպես կա:

Հոկտեմբերի 18.19.20.21.22-ին: Անտառում թափառելիս ես մի ծառ տեսա, որ իր զարմանալի պնդության համար Բրազիլիայում յերկաթի ծառ է կոչվում: Սուր կացնով հարված հարվածի յետևից տալով և կաշուցս դուրս գալով, հազիվ կարողացա այդ ծառից մի ճյուղ կտրել: Նրա փայտը շատ ծանր էր, մեծ դժվարությամբ բերի իմ բնակարանի մոտ:

Ծառի ամրությունը և գործիքների պակասությունը շատ դժվարացրին նրա մշակելը: Բայց դարձյալ ինձ հաջողվեց բահի նման մի բան դուրս բերել: Իսկ կոթը պակաս տեղ չուներ. կարող եմ համարձակ ասել. անգլիացի իսկական վարպետի ձեռքի գործ: Բայց բահի բերանն ինձ շատ չարչարեց: Ես կարծում եմ, որ յերկար գործածելուց նա շուտով կփչանա. չէ՞ որ նա յերկաթ չի, այլ փայտ է:

Դեկտեմբերի 10-ին: Իմ քարայրը ես արդեն վերջացրած էյի համարում, յերբ հանկարծ վերևից հողը փուլ յեկավ: Այդ բանն ինձ սաստիկ վախեցրեց: Լավ է, որ փլվածքից հեռու էյի, յեթե ոչ՝ տակը կմնայի: Այդ փլվածքն ինձ շատ նեղություն պատճառեց: Նախ՝ թափված հողը պետք է դուրս կրեյի և ապա՝ քարայրի կամարի տակ ամուր նեցուկ տայի, որ հետագայում նման բան չպատահեր:

Դեկտեմբերի 11-ին: Յերկու հաստ սյուն նեցուկ տվի և յուրաքանչյուրի գլխին խաչաձև յերկու տախտակ դրի. այդ աշխատանքը վերջացրի հետևյալ օրը: Յերեք օր էլ ջոկ աշխատեցի: Բացի այդ գլխավոր սյուները, մի շարք սյուներ էլ տնկեցի քարայրիս յերկարությամբ, հատակից մինչև կամարը: Այդպիսով թե կամարի դրությունն ապահովեցի և թե քարայրս յերկու մասի բաժանեցի:

Դեկտեմբերի 20-ին: Շարունակում էյի տնտեսությունս սարքի-կարգի բերել: Տախտակներից մի փոքրիկ խոհանոցի սեղան շինեցի:

Դեկտեմբերի 24-ին: Ցերեկ և գիշեր անընդհատ անձրև էր գալիս, դուրս գնալու, զբոսանք կատարելու հնար չկար:

Դեկտեմբերի 25-ին: Կրկին ամբողջ օրն անձրև է գալիս:

Դեկտեմբերի 26-ին: Անձրևը դադարեց: Հողը թարմացավ. բուսականությունը ծլեց ու ծաղկեց: Դուրս

Քարայրս արդեն պատրաստ էր:

յեկա որսի, մի այծ սպանեցի, մյուսին էլ վիրավորեցի: Հետո բռնեցի նրան ու տուն բերի: Տուն բերի ու ոտը կապեցի:

Նկատողություն: Ես խնամում էյի հիվանդ այ-

ծին: Շուտով վոտը բոլորովին առողջացավ և այծն այնպես ընտելացավ, վոր պարիսպի առաջ խոտերի մեջ վազվզում եր և յերբեք տանից չեր հեռանում:

Այդ ժամանակ գլխումս մի միտք ծագեց: Լավ կլինի, վոր կենդանիներ բռնեմ, ընտելացնեմ ու պահեմ և նրանցով ապրեմ նաև այն ժամանակ, յերբ իմ ունեցած վառոդի ու գնդակի պաշարը կսպառվի:

Դեկտեմբերի 28,29 և 30-ին: Բոլորովին քամի չկա: Սոսկալի շոգ ե: Միայն յերեկոները կարողանում եմ վորսի գնալ: Ցերեկները վրանիս իրերն եմ կարգի բերում:

1660 թվի Հունվարի 1-ին: Սարսափելի շոգը շարունակվում ե: Վորսի յեմ գնում վաղ առավոտյան կամ ուշ յերեկոյան: Ցերեկները հանգստանում եմ: Յերեկոյան մտնելով կղզու խորքը, յես նկատեցի այծերի մի ամբողջ հոտ: Այդ այծերը շատ աշալուրջ, շատ զգայուն, շատ վայրենի յեն, դժվար ե նրանց մոտենալ: Վորոշեցի հետևյալ որը հարձակվել նրանց վրա շան ոգնությամբ:

Հունվարի 2-ին: Շանս հետ միասին յես գնացի այն հովիտը, վորտեղ արածում եյին այծերը: Շանս բաց թողի նրանց վրա: Բայց ափսոս...այծերը պատրաստվեցին վճռական հակահարված տալու, շրջան կազմեցին և պոզերով սպառնացին շանը, վորն այնքան խելացի գտնվեց, վոր մոտ չգնաց, այլ պոչն իրեն քաշած, յետ յեկավ ինձ մոտ:

Հունվարի 3-ին: Ուզում եյի մի պարիսպ քաշել տան շուրջը, ավելի շուտ մի բարձր պատ, վորովհետև միշտ յերկյուղ եյի կրում, չլինի թե վայրենիները և գազանները հարձակում գործեն:

Նկատողություն. Յես այդ պարսպի վրա աշխատեցի հունվարի 3-ից սկսած մինչև ապրիլի 14-ը:

Այդ իմ ծանր աշխատանքին արգելք եյին լինում ամբողջ որերով և մինչև անգամ շաբաթներով անընդհատ տեղացող անձրևները: Սակայն այն միտքը, թե յես բոլորովին ապահով կլինեմ միայն այն ժամանակ, յերբ պատը շարեմ և բարձրացնեմ, ինձ քաջալերում եր, ուժ ու յեռանդ եր ներշնչում, թև ու թիկունք եր տա-

լիս: Յես շտապում եյի, վորքան կարելի յե շուտ գլուխ բերել սկսածս գործը, վորքան կարելի յե շուտ ապահովել իմ բնակարանը:

Յերբ մի լավ դիտեցի իմ ունեցվածքը, յես տեսա, վոր ինձ դեռ շատ բան ե պակասում, այնպիսի անհրաժեշտ բաներ, վորոնց շինելն իմ ձեռքից չեր գալիս: Հենց վերցնենք տակառը: Չեյի կարողանում շինել հատակը: Չեյի կարողանում վոչ սնդացնել և վոչ ել կողքի տախտակներն այնպես միացնել, վոր տակառը ջուր պահեր: Յերկու շաբաթից ավելի աշխատեցի այդ տակառի վրա: Տեսա, վոր բան չի դուրս գալիս, ձեռք քաշեցի այդ գործից:

Մեծ անհարմարություն եյի զգում լուսավորության բացակայության պատճառով: Հենց վոր արևը մայր եր մտնում, այսինքն ժամի յոթին յես ուզենայի-չուզենայի, ստիպված եյի անկողին մտնելու:

Յես կավից մի փոքրիկ պնակի պես բան ծեփեցի, արևի տակ չորացրի, այդ դարձավ ինձ համար ճրագ: Նրա մեջ այծի հալած ճարպ եյի ածում, կանեփից պատրաստած պատրույգը մեջը կախում և վառում: Այդ ճրագը լամպի տեղ եր ծառայում, բայց այնքան աղոտ եր վառվում, վոր նրա լույսի տակ համարյա վոչինչ չեր կարելի անել:

ՄԻ ՏՈՊՐԱԿ ՍԵՐՄԱՑՈՒ

Մի անգամ իրերիս մեջ, այն ել պատահմամբ, մի տոպրակ գտա, վորտեղ զանազան տեսակ հատիկներ կային՝ նավի թռչուններին կերակրելու համար:

Մկները կերել եյին հատիկները, տոպրակում մնացել եր միայն աղտ ու կեղտ և թփուկը: Տոպրակն ինձ պետք յեկավ (այդ այն ժամանակն եր, յերբ յես փոթորիկից վախեցած՝ վառոդը մաս մաս եյի անում և ածում տոպրակներն ու տուփերը՝ պայթելուց ազատելու համար): Վերցրի տոպրակը և թափ տվի պարսպի առաջ՝ ժայռի ստորոտից մի քանի քայլ հեռու: Անձրևների շրջանը դեռ չեր սկսվել: Այնուհետև տոպրակի թափ տալը բոլորովին մոռացել եյի: Բայց վորքան յես զարմացա և ապշեցի, յերբ մի ամիս անցած, պարսպի

մոտ նկատեցի մի քանի ծիլեր և հասկացա, վոր այդ գարու ծիլեր են: Ընդամենը 10–12 հատ:

Սկզբում յես չեյի ուզում աչքերիս հավատալ: Միառժամանակից հետո ծիլերը ցողուն դարձան, ցողունները գլուխ բռնեցին, հասկավորվեցին:

Եվ չեյի կասկածում, վոր դա իսկական հիանալի գարի յե: Դժվար է պատմելը, թե յես վորչափ ուրախացա այդ հայտնությամբ:

Իմ զարմանքն ավելի սաստկացավ, յերբ ժայռի տակ նկատեցի մի քանի հատ ուրիշ բույսի ցողուններ: Դրանք բրնձի հասկեր եյին:

Հեշտ է պատկերացնել, թե ինչպիսի զգուշությամբ, ինչպիսի խնամքով յես հունիսի վերջին հավաքեցի ու պահեցի գարու հասած հատիկները: Վորոշեցի

Ընդամենը 10—12 ցողուն...

ամեն տարի ցանել այդ հատիկները, մեծ քանակությամբ պաշար ձեռք բերել և նրանից հաց թխել: Միայն չորս տարի հետո յես կարողացա իմ սերմացուից առաջին հացն ստանալ:

Բացի գարուց ու բրնձից, յես հավաքեցի մի յերկու տասնյակ հաճարի հասկեր: Վորոշեցի այդ հացաբույսն էլ մշակել և վորոշ փոփոխության յենթարկել իմ կերակուրները: Հաց թխել յես սովորեցի առանց ոջախի և միայն վերջը ոջախ շինեցի:

Ապրիլի 16–ին: Այդ որը յես վերջացրի սանդուխքը: Իմ բնակարանում ամեն ինչ կատարյալ եր թվում: Տեղերն ազատ, ընդարձակ, որինակելի կարգ ու սարք և դրսից վոչ վոք չեր կարող ներս գալ ինձ մոտ: Նայելով իմ բերդին, յես շատ եյի ուրախանում:

Սակայն բոլոր գործերը վերջացնելուց հենց յերկրորդ որը քիչ մնաց անհետ կորչեյին իմ կատարած բոլոր աշխատանքները, և յես էլ հազիվ կենդանի մնացի: Այսպես պատահեց: Վրանի յետևում քարայրի մուտքի առաջ, գործով զբաղված ժամանակ մեկ էլ հանկարծ քարայրի կամարի հողը թափվեց և մի զարհուրելի աղմուկ հանելով, սարից ներքև գլորվեց: Կամարի տակ առածս հաստ սյուները սոսկալի ճայթյունով ճաքեցին: Յես սաստիկ ցնցվեցի, մտածելով, թե կամարի մի մասը դարձյալ փուլ յեկավ: Այդ բանը մի անգամ էլ եր պատահել: Յերկյուղ կրելով, վոր կարող է սարը փուլ գալ և ինձ տակովն անել, յես ամրոցից դուրս թռա սանդուխքով: Պարսպից դուրս նոր հասկացա, վոր պատահածը յերկրաշարժ է: Գետինը յերեք անգամ գնաց, յեկավ վոտներիս տակ, մոտ ինն րոպեյի ընթացքում այդ տատանումներն այնքան սաստիկ եյին, վոր ամենաամուր շենքն էլ կխորտակվեր: Ծովի մակերևույթից դեպի վեր բարձրացող սարի գագաթից մի ժայռ պոկվեց և խլացուցիչ դղրդոցով գլորվեց, ընկավ ջուրը: Յերբեք այդպիսի աղմուկ չեյի լսել: Ովկիանոսն ահեղ կերպով դողում եր: Յես այնպես եմ կարծում, վոր յերկրաշարժը ջրի տակ ավելի սաստիկ եր, քան թե կղզու վրա: Գետնի տատանումների ժամանակ սիրտս սաստիկ խառնում եր, ինչպես այդ լինում է ծովային հիվանդություն ստանալիս՝ նավի վրա: Բայց յերբ յերրորդ և ամենասաստիկ ստորյերկրյա հարվածից հետո ամեն ինչ մի քանի րոպե

խաղաղվեց, յես ուշքի յեկա, բայց դարձյալ սիրտ չեյի անում մտնել իմ բերդը:

ՆՈՐԻՑ ՆԱՎԻ ՎՐԱ

Հետո յերկինքը ծածկվեց խիտ ամպերով: Սաստիկ քամի բարձրացավ, վորը գնալով, փոթորիկի փոխվեց: Ծովն ալեկոծվեց, փրփրեց: Ալիքները կատաղի շառաչյունով սկսեցին դեպի ափը վազել: Քամին արմատից հանում եր ծառերը և առաջն արած, ոդի միջով քշում եր դես ու դեն: Փոթորիկը տևեց յերեք ժամ, հետո քիչ-քիչ թուլացավ և վերջապես դադարեց: Անցավ ելի յերկու ժամ: Հորդ անձրև յեկավ:

Յես յերկար ժամանակ պառկած եյի գետնի վրա, բաց յերկնքի տակ լուռ և հուսահատ: Վերջապես ուշքի յեկա: Յես հասկացա, վոր յերկրաշարժը վերջացել ե, վոր քամին ու անձրևը յերկրաշարժի հետևանք եյին: Վերադարձա տուն: Ուզում եյի նստել վրանում, բայց քամին դեռ այնքան սաստիկ եր, վոր կարող եր նրան քշել և յես այդ պատճառով մտա այրը, թեև կամարի թափվելուց շատ եյի վախում: Սաստիկ հեղեղն ինձ դրդեց բնակությանս չուրջը մի առու փորել, հեղեղ յեղած ժամանակ ջրին ճանապարհ բանալու համար, վոր չլցվի և չհեղեղի այնքան չարչարանքով և այնքան դժվարությամբ ձեռք բերածս:

Ամբողջ գիշերը և մյուս որվա մեծ մասը անձրև եր, այն ել ի՞նչ անձրև: Յես վոչ մի տեղ չգնացի: Դուրս գալու հնարավորություն չկար: Հանգստացած, սկսեցի մտածել, թե ինչպես կազմակերպել հետագա կյանքս: Յես յեկա այն յեզրակացության, թե քանի վոր կղզին յենթակա յե յերկրաշարժի, լավ կլինի ել քարայրում չապրեմ, վտանգավոր սարից հեռու մի արձակ տեղ գտնեմ նոր բնակարանի համար: Մի ընդարձակ տեղի վրա տուն կառուցեմ և նրա չուրջը պարիսպ քաշեմ: Վորոշեցի առայժմ միայն վրանս տեղափոխել մի ուրիշ տեղ, հեռանալ սարից, վորի հարևանությունը ինձ չափազանց վտանգավոր եր թվում:

Հետևյալ յերկու որը, այսինքն, ապրիլի 19-ին և

20-ին յես արդեն բնակության համար տեղ եյի վորոնում:

Ապրիլի 22-ին: Ամբողջ որը առավոտից մինչև յերեկո յես մտածում եյի իմ տեղափոխության մասին և գտա, վոր այդ բանի համար չկան հարկավոր գործիքներ և փոխադրական միջոցներ: Այն կարծր ու վոստոտ ծառի վրա բանեցրած բոլոր գործիքներս բթացել եյին, բերան ու ատամ թափել: Ճիշտ ե, սրելու քար ունեյի, բայց միաժամանակ չեյի կարող քարը պտտեցնել և վրան յերկաթ ու պողպատ սրել: Յերկար գլուխ ջարդեցի և վերջապես հարցը լուծեցի: Մի անիվ շինեցի և վրան մի թոկ հագցրի, վորի ոգնությամբ անիվը շարժվում եր: Անիվը վոտքով շարժելիս, սրոցաքարն ել հետն եր շարժվում, այնպես վոր ձեռքերս ազատ եյին մնում:

Նկատողություն: Յես յերբեք տեսած չեյի նման հարմար բան: Յեթե տեսել ել եյի, ուշադրություն չեյի դարձրել վրան: Իմ ունեցած քարն ել շատ մեծ եր ու ծանր: Մի ամբողջ շաբաթ հարկավորվեց, մինչև վոր յես նրան կարգի բերի և սարքի գցեցի:

Ապրիլի 28-ին և 29-ին: Այդ յերկու որը գործիքներս սրեցի: Իմ հնարած չարխը շատ լավ եր բանում, պակասություն չուներ:

Մայիսի 1-ին: Առավոտյան զբոսանքը կատարելիս տեղատվության ժամանակ տեսա ավազի վրա, ափին մոտ, ինչ վոր բան: Վորը հեռվից տակառի յեր նմանվում: Մոտեցա, աչքովս տեսնելուց հետո համոզվեցի, վոր այդ իսկական տակառ ե յեղել: Տակառի մոտ ընկած կային նավի զանազան կտորտանք, վորոնք դուրս եյին ընկել վերջին փոթորկից յերկրաշարժի ժամանակ: Յերբ նայեցի դեպի այն կողմը, վորտեղ նավն եր կանգնած, ինձ այնպես թվաց, վոր նավն ավելի յե բարձրացել ջրից, քան առաջ եր: Դիտելով տակառը, յես տեսա, վոր նրա մեջ վառոդ կա: Ափսոս, վոր վառոդը թրջվել եր, մի զանգված դարձել ու քարի պես պնդացել: Տակառը գլորելով, ափից մի մղոն հեռացրի, վոր մակընթացության ժամանակ ջուրը չընկնի: Հետո ավազի վրայով գնացի ստուգելու, թե տեսածս արդյոք

նավն է: Այո, իսկապես այն էր: Նավի առաջին մասը, վոր մինչև այդ ծածկված էր ջրով ու ավազով, այժմ բարձրացած էր ջրից վեց ոտնաչափից ավելի, իսկ յետևի մասը պոկվել էր նավից ու ցաք ու ցրիվ ընկել կողքի վրա: Նավի կմախքի չուրջն այնքան ավազ էր կիտվել, վոր յես տեղափոխության ժամանակ կարող



Յերկինքը ծածկվեց խիտ ամպերով:

եյի ազատ կերպով մոտենալ նրան, փոխանակ առաջվա նման լողալով գնալու: Այդ հանգամանքն ինձ սկզբում շատ զարմացրեց, բայց հետո հասկացա, վոր այդ տարօրինակ յերևույթի պատճառը յերկրաշարժն էր: Ստորյերկրյա տատանումները նավը ջրի յերեսն եյին հանել ու ջարդ ու փշուր արել, այնպես վոր քամին ու

ալիքները շարունակ ափ եյին հանում նավից պոկված մասերը: Իմ ջերմ ցանկությունն էր միանգամ էլ լինել նավում, բայց տեսնում եյի, վոր դա անհնար էր, քանի վոր ամբողջ նավը ծածկված էր ավազով: Սակայն վերջին փորձերն ինձ սովորեցրել եյին չվհատվել, ձեռքերը ծալած չկանգնել դժվարությունների առաջ, այլ հենց դրա համար յես վորոշեցի, ինչ էլ լինի, թափանցել նավի ներսը և դուրս բերել այն, ինչ վոր հնարավոր էր: Իմ դրության մեջ ընկնողի համար ամեն մի իր նշանակություն ուներ: Այդ նոր զբաղմունքը թույլ չէր տալիս, վոր իմ տեղափոխվելու գործը գլուխ բերեմ:

Մայսի 3-*ին: Սղոցեցի նավի կողը և սկսեցի ավազը դուրս թափել նավից, բայց մակընթացությունն ինձ շատ խանգարեց, ստիպեց ափ վերադառնալ:*

Մայսի 4-*ին: Գնացել եյի ձուկ վորսալու: Բայց յերկար ժամանակ մի այնպիսի ձուկ չբռնվեց, վոր ուտելու համար պետք գար: Յես ուզում եյի թողնել այդ անհաջող զբաղմունքը, բայց վերջին անգամ կարթս դուրս բերեց մի փոքրիկ դելֆին: Իմ կարթը թելի ծայրին կեռ չուներ, սակայն դա չէր խանգարում, վոր բավական շատ ձուկ վորսայի: Վորսածս ձուկը չորացնում եյի արևի տակ, ապա նոր գործածում կերակրի համար:*

Մայիսի 5-*ին: Աշխատում եյի նավի վրա. յերկրորդ կողն էլ սղոցեցի. տախտակամածից յերեք տախտակ պոկեցի. իրար կապելով լաստի նման մի բան շինեցի ու վրան նստած, մակընթացության ժամանակ ափ դուրս յեկա:*

Մայիսի 6-*ին: Նորից այցելեցի նավը, բայց աշխատելու տրամադրություն չունեյի, միայն կանգնած նայում եյի, թե ինչ է կատարվում այնտեղ: Նավի կմախքն իր սեփական ծանրությունից թաղվել էր ավազի մեջ մինչև այնտեղ, վորտեղ կողերն եյին սղոցված: Նավից ելի մի քանի տախտակ էր պոկվել: Ներքնահարկը բոլորովին բացվել էր և յես վերևից տեսնում եյի, վոր նա ամբողջովին ավազով և ջրով է լցված:*

Մայիսի 8-*ին: Յերկաթե նիգը վերցրած, ելի գնա-*

ցի դեպի նավը։ Միտքս այն էր, որ պոկեմ ջրից դուրս ցցված տախտակամածը, որը բոլորովին ազատ էր մնացել ջրից և ավազից։ Լինգը թողի նավի վրա, որ մյուս օրը գամ աշխատելու։ Տախտակները ջրին տալով բերի, ափ հանեցի։

Մայիսի 10, 11, 12, 13, 14 և 15-ին։ Ամեն օր գնում էի նավի կմախքը խուզարկելու և ամեն անգամ մի բան բերելու։ Պոկեցի, բերի մեծ քանակությամբ տախտակ և երկաթե իրեր։

Մայիսի 16-ին։ Ամբողջ գիշերը փչում էր սաստիկ քամի, որը շատ մեծ վնաս էր հասցրել նավի կմախքին։ Նավ գնալս չհաջողվեց, որովհետև երկար ժամանակ անտառում աղավնի որսալով էի զբաղված. հետո էլ մակընթացությունը խանգարեց։

Մայիսի 24-ին։ Այս վերջին օրերը ես աշխատում էի նավի կմախքի վրա՝ ծանր լինգը ձեռքիս։ Լինգի օգնությամբ նրա կազմվածքը բոլորովին տեղահան արի։ Ջուրը թափվեցին զանազան տեսակ հաստ ու բարակ, կարճ ու երկար տախտակներ, և երեք նավաստիական սնդուկ։ Քամին աննպաստ էր։ Մակընթացությունը ցամաք հանեց միայն մի քանի տախտակ և մի տակառ բրազիլիական խոզապուխտ։

Մինչև հունիսի 15-ը աշխատում էի նավի վրա, չհաշվելով այն ժամանակը, որ գնում էր կերակուր ճարելու համար։ Ես տեղատվության ժամանակ էի որսի գնում, որպեսզի մակընթացության ժամանակ միշտ ազատ լինեմ։

Այնքան փայտ, տախտակ, տաշած գերան, երկար ու կարճ ձողեր, կոճղեր էի հավաքել, այնքան երկաթեղեն էի դարսել, որ կարող էի այդ չափ նյութից մի փոքրիկ նավակ կառուցել,—ի հարկե եթե գործը հասկանայի։ Բացի այդ բոլորից, ես ափ բերի հարյուր գրվանքից ավելի թերթավոր արճիճ՝ զանազան մեծության կտորներով։

ԻՄ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆԸ

Հունիսի 16-ին։ Ափին մի մեծ կրիա գտա։ Այդ մի պատահականություն էր։ Առաջին անգամ էր, որ իմ կղզում կրիա էի տեսնում։ Հարկավոր էր միայն հանդիպական ափը գնալ և կարելի էր հարյուրներով կրիա որսալ։

Հունիսի 17-ին։ Կրիայից կերակուր եփելիս ես նրա փորից տասնվեց հատ ձու հանեցի։ Մինչև այդ այծերի ու թռչունների միսից կերած կերակուրները, որոնցով ես սնվում էի կղզին գալուցս ի վեր, այնպես համով չէին, ինչպես կրիայինը։ Կրիայի միսը շատ նուրբ էր ու համեղ։

Հունիսի 18-ին։ Ամբողջ օրն անձրևում էր, և ես վրանից դուրս չէի գալիս։ Սաստիկ ցուրտ էի զգում։ Այդ բանն ինձ տարորինակ էր թվում։

Հունիսի 19-ին։ Ինձ վատ էի զգում։ Այնպես սաստիկ դողացնում եմ, որ ատամ-ատամի չի առնում։

Հունիսի 20-ին։ Ամբողջ գիշերը չեմ քնել։ Տենդ ունեմ, հետն էլ սաստիկ գլխացավ։

Հունիսի 21-ին։ Դրությունս շատ վատ է։ Սարսափում եմ այն մտքից, որ եթե լուրջ հիվանդանամ ու պառկեմ, ինչ կլինի իմ դրությունը, ով ինձ օգնություն կհասնի այս վայրի անապատում։

Հունիսի 22-ին։ Ես ինձ քիչ լավ եմ զգում։ Բայց տարակուսանքի մեջ էի, չլինի թե հիվանդությունս ծանրանա։

Հունիսի 23-ին։ Դարձյալ վատ եմ զգում։ Տենդս ու գլխացավս սաստկացել են։

Հունիսի 24-ին։ Դրությունս լավ է. լավ։

Հունիսի 25-ին։ Սաստիկ դողէրոցք։ Յոթ ժամ տաքության և սառնության մեջ եմ։ Տաքն ու ցուրտը հաջորդում են իրար։ Վերջը սաստիկ քրտինքը խիստ թուլացրեց ինձ։

Հունիսի 26-ին։ Նորից լավ եմ։ Ուտելու բան չունեմ։ Միսը վերջացել է։

Չնայած թուլությանս, հրացանն առած գնացի որսի։ Մի այծ սպանեցի և մեծ նեղությամբ տուն հաս-

ցրի: Մի քանի կտոր միս խորովեցի ու մեծ ախորժակով կերա: Սիրտս բուլյոն (մսաջուր) եր ուզում, բայց կաթսա, առհասարակ հարմար աման չկար:

Հունիսի 27-ին: Տենդն այնպիսի թափով կրկնվեց, վոր յես ստիպված եյի ամբողջ որը պառկել: Բերանս բան չեյի առնում, վոչ ուտում եյի, վոչ խմում: Ծարավս ինձ տանջում եր, բայց յես սաստիկ թույլ եյի, ծնկներումս այնքան ուժ չկար, վոր վեր կենայի ջուր խմելու:

Հունիսի 28-ին: Քիչ հանգստացա: Քունս թարմացրեց ինձ: Զգացի, վոր տենդս քիչ նվազել ե: Վեր կացա ու առաջին հերթին ջրի պաշար տեսա: Վախենում եյի, վոր վաղը կարող ե դողս ավելի սաստկանալ և ինձ դարձյալ անկողին գցել: Գնացի մի մեծ չիչ ջուր բերի, դրի անկողնիս մոտ, սեղանի վրա: Այծի խորոված մսով ընթրեցի ու փորձեցի զբոսանքի գնալ՝ ուսս գցած կարճափող հրացանը: Սակայն այնքան թույլ եյի, վոր հրացան բռնել դժվարանում եյի: Տեսա, վոր վոտներս առաջ չեն գնում, շուտով ինձ տուն գցեցի: Ներս մտնելով վրանս, իսկույն անկողին մտա: Հույս ունեյի, վոր շուտով կքնեմ: Յեվ իրոք, այդպես ել յեղավ: Պառկելուն պես քունս տարավ: Քունս այնքան խորն եր, վոր յերբ զարթնեցի, արևին նայելով հասկացա, վոր որվա ժամի յերեքն եր: Յես յենթադրում եմ, վոր որ ու կես քնած եյի մնացել, հաշված և գիշերը: Այսինքն՝ զարթնել եյի վոչ թե հետևյալ, այլ յերրորդ որը:

Զարթնելով, ինձ կատարյալ առողջ զգացի, տրամադրությունս տեղը, հանգիստ և ուրախ: Յես ամուր կանգնում եյի վոտներիս վրա: Ստամոքսս կանոնավորվել եր և ախորժակս ել կարգին բացվել: Մի խոսքով՝ հիվանդությունս անցնում եր, յես առողջանում եյի: Այդ փոփոխությունը տեղի ունեցավ, իմ հաշվով, հունիսի 29-ին:

Հունիսի 30-ին: Ինձ համար լավ որերից մեկն եր: Տենդ չկար: Հրացանն առած, դուրս յեկա, բայց հեռու չգնացի: Յերկու ծովային թռչուն սպանեցի, վորոնք նման եյին վայրի սագերին: Հետս տուն բերի, բայց նրանց միսը չկերա, այլ բավականացա կրիայի մի քանի ձու-

ուտելով: Հետևյալ որը, հուլիսի 1-ին, ինձ այնպես լավ զգացի, ինչպես նախորդ որը: Վրաս թեթև դող եր գալիս, թուլություն եյի զգում, բայց ընդհանրապես տանելի յեր:

Հուլիսի 4-ին: Առողջությունս և ուժերս վերականգնում եյին: Տենդը բոլորովին անցավ: Յես շարունակ աշխատում եյի ձեռք բերել, պաշար տեսնել կյանքի համար բոլոր անհրաժեշտ պարագաների: Սկսեցի հնարավորության չափ կանոնավորել իմ կյանքի ձևն ու յեղանակը, ձեռք բերելով լավ սովորություններ:

Հուլիսի 5–14-ին: Ամեն որ հրացանս վերցրած՝ յես զբոսանք եյի կատարում: Առայժմ այդ եր իմ գլխավոր

Զարթնելիս յես ինձ բոլորովին առողջ զգացի...

զբաղմունքը: Չե վոր ծանր հիվանդությունից յես նոր եյի աչք բաց անում, նոր եյի կազդուրվում, այդ պատճառով ել հեռու չեյի գնում: Ճիշտն ասած, ուժերս սաստիկ թուլացել եյին:

Հիվանդությունս, գլխիս յեկած այդ փորձանքն ինձ այն յեզրակացության բերեց, վոր առողջության համար վտանգավոր ե անձրևների ժամանակ դուրս գալը, նամանավանդ այն ժամանակ, յերբ անձրևներն

ուղեկցում են քամին ու սաստիկ փոթորիկը: Այստեղ անձրևները գալիս են տարվա տաք և չոր յեղանակներին, այդ պատճառով էլ նրանք ավելի վնասակար են դառնում առողջության համար: Սեպտեմբերի և հոկտեմբերի մեջ անձրևներն ավելի քիչ են վնասակար:

Արդեն մոտ տասն ամիս եր, ինչ իմ չարաբաստիկ կղզումն եյի: Բոլորովին հույս չունեյի, թե այնտեղից կհեռանամ: Յես լիովին հավատացած եյի, վոր մինչև իմ այնտեղ ընկնելը, վոչ մի մարդկային եյակ վոտք չեր դրել այդ ափը:

ԽԱՂՈՂԱՔԱՂ

Հուլիսի 15-ին: Սկսեցի ավելի մոտ ծանոթանալ կղզուն և հետազոտել: Նախ և առաջ գնացի այն ծովածոցը, վորն ինձ համար նավահանգստի տեղ եր ծառայել՝ յերբ յես նավից բեռը դուրս եյի կրում: Այդ ծովածոցի ափերով գնացի մոտ յերկու մղոնաչափ վեր, վորից դենը ծովային մակընթացությունը չի բարձրանում, տեսա մի գեղեցիկ առվակ, վորի ջուրը պարզ եր և խմելու պետքական: Յես այդ առվակի ափերին գտա շքեղ, խիտ կանաչապատ մարգագետիններ: Այդ մարգագետինների վերևի մասում, վորը չեր յենթարկվում անձրևներից գոյացած հեղեղներին, գտա մեծ քանակությամբ կանաչ ծխախոտ՝ շատ բարձր ու ամուր կոթերով և մի քանի տեսակ ուրիշ բույսեր, ինձ բոլորովին անծանոթ: Վոչ նրանց անունները գիտեյի և վոչ էլ հատկությունները: Տեսա նաև շաքարեղեգ, վայրի դրության մեջ, վատ տեսակի: Այս անգամ բավականացած իմ գյուտերով, վերադարձա տուն: Մտածում եյի, թե ինչպես, ի՞նչ միջոցով իմանամ գտած բույսերի ու պտուղների հատկությունները: Մտածեցի, բայց վորոշ յեզրակացության չեկա:

Հուլիսի 16-ին: Գնում եյի յերեկվա ճանապարհով: Նկատեցի, վոր մարգագետինների մյուս կողմը մի տեղ կա, վորի բուսականությունը բոլորովին ուրիշ տեսակ է, ուրիշ բնույթ ունի: Գնացի այնտեղ և տեսա, վոր գետինը ծածկված է սեխի թփերով: Ծառերի վրա վոլոր-

վում են խաղողի բազմաթիվ վորթերն՝ իրենց գեղեցիկ, հասուն ու հյութալի ճիթերը կախած: Կային և ուրիշ շատ տեսակ-տեսակ պտուղներ: Այդ անսպասելի հայտնությունը չափազանց զարմացրեց և ուրախացրեց ինձ: Գլխումս մի միտք ծագեց: Վորոշեցի, վոր արևի տակ չորացնեմ խաղողը, նրան չամիչ դարձնեմ և տարվա մեջ միրգ չեղած ժամանակն այդ առողջարար և հաճելի քաղցրավենիքն անուշ անեմ: Այդպես էլ արի:

Մինչև իրիկուն յես այնտեղ մնացի և վորոշեցի այնտեղ էլ գիշերել: Առաջին անգամ եր, վոր այդ կղզում ապրելով, տանը չեյի գիշերում: Դարձյալ ծառի վրա քնեցի, ինչպես առաջին գիշերը. և քնեցի, պետք է խոստովանել, շատ հիանալի: Հետևյալ առավոտյան դարձյալ շարունակեցի սկսած հետազոտությունը: Գնում եյի հյուսիսային ուղղությամբ: Լեռնաշղթան մնաց արևելյան և արևմտյան կողմը:

Վերջապես մտա մի շքեղ հովիտ, հազիվ նկատելի թեքումով: Արևելյան կողմի բլուրի տակից մի փոքրիկ առվակ եր վազում: Գի՜տեք ինչպիսի ջուր ուներ այդ առվակը: Զարմանալի պարզ, հստակ և սառը: Շրջապատը ծածկել եր մի շքեղ բուսականություն, ամբողջովին կանաչ, ծփծփուն ծիլ ու ծաղիկ: Այդ հովիտն այնքան գրավիչ եր, վոր համարձակ կարելի յեր նրան մարդու ձեռքով ստեղծած ծաղկյալ այգու տեղ ընդունել: Առհասարակ ամբողջ հովիտը ծաղկի փնջի նման հոտ եր բուրում և ինձ կյանք ներշնչում: Սքանչելի ձորի լանջով մի քիչ էլ առաջ գնացի ու կանգ առա: Վորքան բազմատեսակ ծառեր կային այս զարմանալի անկյունում:

Էլ նարինջի, էլ կիտրոնի: Շատ կային ուրիշ պտղատու ծառեր էլ, վորոնք արդեն պտուղ եյին տվել: Հետագայում յես այդ պտուղների հյութը քամում եյի, ջրի հետ խառնում և ստանում մի առողջ թարմացնող խմիչք, շատ էլ համով, հոտով:

Այդպիսով մի աշխատանք էլ ավելացավ: Յես վորոշեցի այժմյանից, վորքան կարելի յե, շատ նարինջի, կիտրոնի և խաղողի պաշար տեսնել, վոր անձրևներն սկսվելու ժամանակամիջոցին զուրկ չմնամ այդ պտուղ-

ներից: Անձրևային շրջանը, իմ հաշվով, շուտով սկսվելու յեր: Այո, այդ աշխատանքն ինձ համար նոր եր և բավականին հոգնեցուցիչ:

Յես յերեք տեղ ջոկ-ջոկ կիտեցի խաղողի ճիթերը, նարինջներն ու կիտրոնները և ամեն կույտից քիչ վերցնելով, տուն վերադարձա, վոր տոպրակ բերեմ և մնացածները տանեմ:

Ճանապարհին հետս վերցրած խաղողը բոլորովին ճխլվել եր, հյութը քամվել: Մնացել եր միայն չեչը:

Ծովի ափին մի մեծ փայտե սյուն կանգնեցրի.

Յես փչացած խաղողը դեն շպրտեցի: Բայց նարինջներն ու կիտրոնները լավ եյին մնացել, չեյին տրորվել: Նրանցից քիչ եյի վերցրել:

Հուլիսի 19-ին: Յերկու տոպրակ վերցրի ու տարա մնացած պտուղները բերելու: Տեղ հասնելիս զարմացա,

վոր խաղողի մեծ մասը կերել են, մնացածն ել ցրիվ տվել: Յես դրանից յեզրակացրի, վոր շրջակայքում վայրի կենդանիներ կան խաղողի ճաշակն իմացող: Մի քիչ մտածեցի, խաղողը պահպանելու միջոցը գտա: Քաղածս ճիթերը կախեցի թփերից ու ծառերից այն հույսով, վոր նրանց դիպչող չի լինի և արևի տակն ել լավ կչորանան, չամիչ կդառնան: Միևնույն է, թե վոր խաղողը բերեյի, ճանապարհին տոպրակի մեջ պիտի ջարդվեր: Միայն նարինջ ու կիտրոն ածեցի տոպրակներն ու տուն բերի:

Վերադարձիս չեյի կշտանում այն շքեղ, այնքան պտղավետ ու գեղեցիկ հովտին նայելուց, վորին արևմտյան կողմից փչող քամիներից պաշտպանում եյին բլուրները, սարերը և անտառները: Հովտի դիրքն համեմատելով այն տեղի հետ, վորտեղ իմ բնակարանն եյի հիմնել, յեկա այն յեզրակացության, վոր յես կղզու ամենավատ տեղն եմ ընտրել բնակության համար: Բնակարանս փոխելու միտքն իմ մեջ ամրապնդվեց: Յեթե հնարավոր լիներ, յես իսկույն իմ վրանը, իմ ամբողջ կարողությունը կփոխադրեյի այդ միանգամայն հրաշալի հովիտը: Այո, այդ հովիտն իր գեղեցկությամբ, հարստությամբ, և բնական ամրությամբ ինձ վրա զորեղ տպավորություն եր գործել: Բայց հետո յես հասկացա, վոր յեթե տեղափոխվեմ կղզու խորքը, կհեռանամ ծովից: Այլևս ազատարար նավը տեսնելու հույս չպետք է ունենամ, յեթե նա մի որ գալու լինի: Ահա այդ անհարմարությունը կար, վորի առաջ յես կանգ առա:

Յես այնպես եյի սիրահարված այդ գեղեցիկ հովտի վրա, վոր ամբողջ հուլիսն այնտեղ անցկացրի: Մի փոքրիկ հյուղ շինեցի և շրջապատեցի կրկնակի ցանկապատով: Ցանկապատի արանքները ցախ ածեցի և վրան ծառի ճյուղեր քաշեցի: Այդպիսով յես յերկու բնակարան ունեցա, մեկը ծովի յեզերքին, իսկ մյուսն ինձ գերող հովտում: Յերբեմն այդ նոր բնակարանում յես քնում եյի մի քանի գիշեր իրար յետևից:

Օգոստոս: Հազիվ եյի վերջացրել նոր բնակարանիս կառուցումը, մեկ ել անձրևները վրա հասան և ստիպեցին ինձ փախչել հին տունը, վորին քամիներից սարն

էր պաշտպանում: Յես էլ քարայրն էյի մտնում, յերբ սաստիկ անձրևներից վրանս սկսում էր կաթել:

Օգոստոսի 3-ին: Կախած խաղողը շատ լավ չորացավ և տվեց հրաշալի չամիչ: Թփերի և ծառերի վրայից հավաքեցի չամիչը և լավ էլ արի, քանի վոր անձրևները կարող էյին փչացնել: Չորացած խաղողը յերկու հարյուր ճութ էր: Քիշմիշը քարայր կրելուց և տեղավորելուց հետո՝ սկսվեց անձրևների տարափը և փոքրիկ ընդմիջումներով տևեց մինչև հոկտեմբերի կեսը: Յերբեմն այնպես սաստիկ էր անձրևում, վոր ամբողջ օրերով փակված մնում էյի քարայրում:

Օգոստոսի 14–26: Անձրևները չեյին դադարում: Յես ստիպված էյի տանը նստել: Սննդի պակաս զգալով, միայն յերկու անգամ վորսի դուրս յեկա: Առաջին անգամ մի այծ սպանեցի, իսկ յերկրորդ անգամ պատահեց մի շատ մեծ կրիա, վորի միսը բերանիս համ տվեց, մեծ ախորժակով կերա: Յես հետևյալ կարգը սահմանեցի. Նախաճաշում էյի չորացած մի ճութ խաղողով, ճաշին ուտում էյի մի կտոր խորոված այծի միս կամ կրիայի լյարդ, վորովհետև կերակուր յեփելու աման չունեյի. իսկ ընթրիքին կերածս մի քանի կրիայի ձու յեր, նույնպես խորոված:

Քանի վոր անձրևներն ինձ կալանքի տակ էյին դրել, յես օրական յերկու-յերեք ժամ աշխատում էյի քարայրս լայնացնելու, ընդարձակելու վրա: Այդպես աշխատելով, քրտինք թափելով, ձեռքիս յերկաթնիզով ժայռի մեջ բաց արի մի մուտք, վորը հասնում էր մինչև իմ ամրոցի յետևը: Այդ մուտքով յես աննկատելի կերպով կարող էյի ամրոց մտնել և այնտեղից դուրս գալ. բայց շատ քիչ անգամ էյի օգտվում այդ մուտքից: Վախենում էյի, չլինի թե մարդ կամ գազան նկատի այդ մուտքը:

Թե ինչու համար էյի յերկյուղ կրում, այդ յես էլ չգիտեյի: Մինչև հիմա կղզում յես չեյի հանդիպել վոչ մի կենդանի էյակի, վորից հարկավոր էր վախենալ: Կղզում տեսածս ամենախոշոր և ուժեղ կենդանին այծն էր:

Սեպտեմբերի 30-ին: Այսօր ուղիղ մի տարի յե-

վոր յես ընկել եմ այս կղզին: Յերբ հաշվեցի սյան վրա արածս գծերը, գտա, վոր արդեն յերեք հարյուր վաթսուն հինգերորդ օրն է:

ԻՄ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Յես նկատեցի, վոր իմ թանաքն սպառվելու վրա յե: Սկսեցի խնայողությամբ բանեցնել: Վորոշեցի արձանագրել միայն կյանքիս գլխավոր դեպքերը: Մի կողմ թողի առօրյա պարապմունքներիս մանրամասն նկարագրությունը:

Յես հասկացա, թե յերբ է սկսվում պարբերական անձրևների և յերաշտի ժամանակամիջոցը, վորքան է տևում և յերբ է վերջանում: Այդ բոլորը յես անձնական փորձով գիտեյի և ժամանակի համամեատ պատրաստվում էյի նրանց դիմավորելու: Բայց այդ փորձն ինձ վրա շատ թանդ նստեց: Առաջուց յես արդեն ասել եմ, վոր մոտս մի-մի փունջ գարի ու բրինձ կային, վորոնք պատահմամբ էյին բուսել: Ունեցածս ինչ էր. յերեսուն գարու հասկ, քսան էլ՝ բրնձի: Յերբ անձրևներն անցան, յերկինքը պարզեց, յերբ արևն իր պայծառ դեմքը ցույց տվեց, հողը վորոշ չափով չորացավ, յես յենթադրեցի, վոր արդեն ցանքսի ժամանակը հասել է: Հատկացրի մի հողամաս, յերկու բաժին արի և սկսեցի թիակով փորել, հետո սերմը հողը գցել: Հանկարծ գլխումս մի միտք ծագեց, վոր ամբողջ սերմը միանգամից չցանեմ: Չլինի թե ժամանակի նկատմամբ սխալված լինեմ: Ցանեցի սերմերի յերկու յերրորդ մասը. մնացածն էլ թողի պաշարի համար: Հետագայում յես շատ ուրախացա, այդպես վարվելուս համար: Ցանածս հատիկներից և վոչ մեկը ծիլ չտվեց. վորովհետև հետագա ամիսները շատ չոր էյին: Սաստիկ յերաշտն ագահությամբ ծծեց հողի խոնավությունը, ցամաքեցրեց այն, անպտուղ դարձրեց: Միայն անձրևներն սկսելիս՝ հատիկները նոր ծլեցին ու ցողուն արձակեցին, բայց հասկերը չլցրեցին:

Յես տեսա և հասկացա, վոր ցանքսիս անհաջողության պատճառը միայն յերաշտն էր: Յես ցանքսից

Библиотека Института Востоковедения Академии Наук СССР

ձեռք քաշողը չէր։ Իմ նոր բնակարանի մոտ մի կտոր հող մշակեցի, գարի և բրինձ ցանեցի։ Դա փետրվարի մեջ էր։ Մարտն ու ապրիլը շատ անձրևային էին։ Ցանքսը հրաշալի կերպով ծլեց, կանաչեց, ցողուններ արձակեց։ Հասկերը լիքն էին։ Առատ հունձ ստացա։ Բայց ափսոս, որ այս երկրորդ անգամն էլ ունեցածս սերմի կեսն էի ցանել։ Ստացածս ընդամենը մի փոքրիկ տոպրակ գարի ու բրինձ էր։

Փորձը շատ դառն էր, բայց նա ինձ դարձրեց մի փորձառու հողագործ։ Ես փորձով ճիշտ իմացա ցանքսի ժամանակը, հասկացա, որ այդտեղ, այդ կղզում կարելի է տարեկան երկու անգամ հունձ ստանալ։

Այդ ժամանակ ես մի փոքրիկ գյուտ էլ արի, որը հետագայում ինձ շատ օգուտ տվեց։ Երբ անձրևների երկրորդ շրջանը վերջացավ, որը պարզեց, եղանակը լավացավ, ես այդ ժամանակ, նոյեմբերի սկզբին, գնացի իմ նոր տունը՝ հովտի վրա։ Թեև մի քանի ամիս էր այնտեղից բացակայելս, բայց դարձյալ ամեն ինչ իր տեղումն էր, ամեն բան կարգին, այն դրությամբ, ինչպես թողել էի։ Դիտելով ցանկապատը, նկատեցի, որ նրա ձողերը կանաչել են և ճյուղեր արձակել, այնպես լավ ծաղկել էին, ինչպես մեր ուռենու ոստերը։ Ծառերի անունները, որոնց ոստերը կտրել էի ցանկապատի ձողերի համար, ես դժբախտաբար չգիտեի։ Ես չէի սպասում, մտքովս անգամ չէր անցնում, որ ցանկապատի ցցերը կարող են կանաչել և ճյուղեր արձակել։ Զարմանքից ուրախացած այդ երևույթի վրա, ես այդ նորատունկ ծառերը կարգի բերի, մանր-մունր ոստերը կտրեցի, ճյուղերը հավասարեցրի, որ ծառերը շուտ և ուղիղ աճեն։ Երեք տարվա մեջ իմ ցանկապատը մի կանաչ շրջան կազմեց։ Նրա ծառերն ստեղծեցին մի խիտ ծածկոց, կլոր դահլիճի նման մի բան։ Նրա կամարի պատերի միջով արևի ճառագայթները ներս չէին թափանցում։ Շոգից ապաստանելու համար շատ լավ ստվերախիտ տեղ էր։

Այդ բանն ինձ գլխի գցեց, որ ծառերի ճյուղերից նման կիսաշրջան ցանկապատ քաշեմ իմ հին ամրոցի շուրջը։ Այդպես էլ արի։ Նոր ցանկապատի բոլոր ձողերը

շատ շուտով կանաչեցին և ոստեր արձակեցին։ Կազմեցին մի լավ ծածկույթ և միաժամանակ մի ամուր պատնեշ՝ հարձակումների դեմ։

Իմ դիտողությունները ցույց տվին, որ այս երկրում տարվա եղանակները չի կարելի այնպես բաժանել, ինչպես Եվրոպայում, ասել՝ ձմեռ և ամառ, այլ չորային շրջան և անձրևների շրջան, որոնք հաջորդում են իրար հետևյալ կարգով։

Փետրվարի երկրորդ կեսը, ամբողջ մարտը և ապրիլի առաջին կեսը—անձրևային շրջան։

Ապրիլի երկրորդ կեսը, մայիսը, հունիսը, հուլիսը և օգոստոսի առաջին կեսը—չորային։

Օգոստոսի երկրորդ կեսը, սեպտեմբերը և հոկտեմբերի առաջին կեսը նորից անձրևներ։

Հոկտեմբերի երկրորդ կեսը, նոյեմբերը, դեկտեմբերը, հունվարը և փետրվարի առաջին կեսը—նորից չորային։

Անձրևային շրջանը երբեմն սովորականից ավելի երկար էր տևում, երբեմն էլ կարճ։ Այդ կախված էր քամու ուժից և ուղղությունից։ Ես փորձով համոզվեցի, որ անձրևները, առհասարակ խոնավությունը, առողջության վրա շատ վատ են ազդում։ Աշխատում էի որ առաջ ուտելու պաշար բերել, որ անձրևներին տանից դուրս չգայի։ Հեղեղների ժամանակ քարայրից գլուխս դուրս չէի հանում։ Բացառիկ հանգամանքներն էին ինձ այնտեղից դուրս բերում։

ԻՄ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

Իմ կալանքի ժամանակ ես քարայրում պարապ չէի նստում, այլ շարունակ աշխատում էի, որովհետև բազմաթիվ իրերի կարիք էի զգում։ Նրանց հնարելու, ստեղծելու վրա ես շատ աշխատանք պիտի գործադրեի, շատ ժամանակ պիտի կորցնեի։ Օրինակ՝ ես փորձում էի մի զամբյուղ հյուսել, բայց իմ ձեռքի տակ եղած ճիպոտիկները ճկուն չէին, ծռելիս կոտրատվում էին և ես չգիտեի, թե ինչ անեմ։ Դեռ լավ էր, որ ես մանկուց սիրում էի կանգնել զամբյուղագործի արհես-

տանողի առաջ և նայել, թե նա ինչպես ե զամբյուղ գործում: Յես շատ հետաքրքրվող և դիտող յերեխա եյի: Շատ անգամ ել մտնում եյի արհեստանոց և մասնակցում գործին: Այդպիսով յես լավ ծանոթացա զամբյուղագործության արհեստին: Այդ իր տեղը: Հիմա յես զամբյուղ գործելու նյութ չունեյի: Կղզում շատ եյի փորձել, բայց զամբյուղագործության համար նյութեր չեյի գտել: Յես հիշեցի, վոր ցանկապատի համար ծառից կտրած ցցերն իրենց վրա շատ դալար, ճկուն ոստեր ունեյին, ինչպես ուռենին: Վորոշեցի այդ ճյուղերն ոգտագործել զամբյուղի համար:

Մյուս որը յես ուղղևորվեցի դեպի իմ, այսպես կոչված «ամարանոցը» (յերկրորդ բնակարանիս այդ անունն եյի տվել), և ցանկապատից միքանի ճյուղ կտրեցի: Տեսնելով նրանց ճկունությունը, յես հենց այնտեղ համոզվեցի, վոր նրանք պիտանի յեն զամբյուղի համար: Նորից մի մեծ գիրկ ճյուղեր կտրեցի, բերի տուն և փռեցի արևի տակ չորանալու: Անձրևային շրջանն սկսվելիս յես տանը նստած այդ ճյուղերով զամբյուղներ եյի գործում՝ թե հող կրելու և թե պաշար պահելու համար: Չի կարելի ասել, վոր զամբյուղները հատկապես նուրբ ու գեղեցիկ եյին, բայց ինձ համար շատ պետքական եյին: Ել ես զամբյուղների կարիք չեյի զգում: Յես միքանի լայն ու խոր զամբյուղ գործեցի՝ հունձ հավաքելու համար: Առաջ տոպրակ եյի բանեցնում:

Հեղուկ պահելու համար յերկու կիսատակառ ունեյի, յերկուսն ել ռոմով լիքը, մի քանի ապակե շիշեր՝ միջակ մեծության և չորս հատ համեմատաբար փոքր շշեր, վորոնց մեջ վոգելից խմիչքներ կային: Սակայն վոչ մի աման չունեյի, վորի մեջ կերակուր յեփեյի: Ծխախոտ ծխելու ծխամորճ ել չունեյի:

Այդքանը բավական չեր, դրանց վրա մի բան ել ավելացավ, վորն ինձանից շատ ժամանակ խլեց:

Յես արդեն ասել եմ, վոր ցանկանում եյի հետազոտել ամբողջ կղզին, բայց մինչև հիմա հասել եմ այն հովիտը, վորտեղ իմ նոր խուղն եմ հիմնել: Սրանից հետո դժվար չեր կղզու հակառակ կողմը և ծովափը գնալ

և տեսնել, թե այնտեղ ինչ կա: Յես հետս վերցրի հրացան, կացին, սովորականից ավելի վառոդ, տոպրակով պաքսիմաթ, մի ճութ խաղող, շանս ուղեկցությամբ ճանապարհ ընկա: Անցնելով այն հովիտը, վորտեղ իմ հովարանն եր, արևմտյան կողմում նկատեցի ծովը, իսկ ծովից այն կողմի ոդի զարմանալի պարզության ու թափանցիկության շնորհիվ նկատեցի մի ցամաք: Տեսածս կղզի՞ յեր, թե մայր ցամաք, յես չգիտեյի, բայց աչքիս յերևացողը մի բավական նշանավոր բարձրություն եր, տարածված հեռուն, դեպի հարավ-արևմուտք: Նա իմ կղզուց հեռու կլիներ մոտ քսան-քսանհինգ անգլիական մղոն: Այդ յերկիրը վո՞ր աշխարհամասին կարող եր պատկանել: Յես այնպես եյի գտնում, վոր նա Ամերիկայի մի մասն ե, իսպանական կալվածք, բնակված վայրենիներով: Յեթե յես նավաբեկությունից հետո ընկած լինեյի այդտեղ, ասում եյի ինքս ինձ, չափազանց ավելի ծանր վիճակ կունենայի, քան թե այստեղ, ներկայումս:

Մյուս կողմից յես այսպես եյի դատում, յեթե իրոք այդ յերկիրն Իսպանական ե, ապա, անկասկած, յերբ ել լինի, յես այս կամ այն կողմը նավ կտեսնեմ: Իսկ յեթե այսքան յերկար ժամանակամիջոցում նավ չի յերևում, այդ ցույց ե տալիս, վոր աչքերիս առաջ փռված յերկիրը գտնվում ե իսպանական կալվածքների և Բրազիլիայի մեջտեղ, ուր յերբեք նավ չի մոտենում: Յես լսել եյի, վոր այնտեղ ապրում են կատաղի մարդակերներ, վորոնք ձեռք ընկած ոտարականին մորթում են և լափում:

Այդպես մտածելով, յես առանց շտապելու, քայլ առ քայլ առաջ եյի գնում: Կղզու այս ափը վորչա՜փ լավ եր այն ափից, վորտեղ յես բնակություն եյի հաստատել: Այստեղ կային փարթամ, շքեղ մարգագետիններ, խոտառատ և ծաղկաշատ, իսկ հեռուն տարածվում եյին խիտ անտառները: Յես տեսա բազմաթիվ թութակներ և սաստիկ ուզում եյի մեկին բռնել, յեթե հնարավոր եր, ընտելացնել և խոսեցնել տալ: Շատ չարչարվեցի և աշխատանքս իզուր չանցավ: Ձեռնափայտիս հարվածով ծառից վայր գցեցի մի թութակի ձագ, ծածկեցի գլխար-

կովս և տուն բերի: Շատ օրեր և տարիներ անցան, մինչև վոր յես կարողացա սովորեցնել Թութակին անունս արտասանել:

Այդ ճանապարհորդությունն ինձ մեծ բավականություն պատճառեց: Հովիտներում և դաշտերում յես հանդիպում եյի զանազան կենդանիների, վորոնց աղվեսների ու նապաստակների տեղ եյի ընդունում, բայց նրանք քիչ տարբերվում եյին Յեվրոպայում տեսածներից: Այդ կենդանիներից մի քանիսին սպանեցի, բայց նրանց միսը չկերա: Առանց այդ ել ուտելու մեծ պաշար ունեյի. ել այծ, ել աղավնի, ել կրիա. դրան պետք ե ավելացնել և չամիչը: Բայց ափսոս, վոր ինձ հետ սեղան նստող ընկերներ չունեյի:

Եքսկուրսիա գնալիս յես որական յերկու մղոնից ավելի չեյի անցնում: Հաճախ, վորև ե մի նոր գյուտ անելու նպատակով, յես յետ եյի դառնում, շրջան եյի կազմում, զանազան շեղումներ անում և այդ պատճառով գիշերը միշտ հոգնություն եյի զգում:

Յերբ ուզում եյի քնել, կամ բարձրանում եյի ծառը, կամ թե ծառերի արանքում յերկու շարք ձողեր եյի տնկում, վոր քնած ժամանակ գազաններն ինձ չմոտենան: Վորքան ավելի եյի ծանոթանում այդ ափին, այնքան ավելի եյի համոզվում, վոր իմ բնակված ափը կղզու ամենավատ անկյունն ե: Այս ափը կրիաներով լիքն ե, իսկ բնակությանս ափին յերբեք միաժամանակ յերկու-յերեք կրիա չեյի տեսել: Այստեղ յես հանդիպեցի բազմաթիվ ու բազմատեսակ թռչունների: Նրանցից մի քանիսն ուտելու շատ համով միս ունեյին:

Չնայած կղզու այս ափի հրապուրանքին ու գեղեցկությանը, յես չուզեցի տեղափոխվել այստեղ: Յես ընտելացել եյի իմ սարին, վորը դարձել եր իմ ոջախը: Դա շատ հարմարություններ ուներ, նամանավանդ անձրևների ժամանակ: Յերբ լինում եյի կղզու մյուս մասում, ինձ զգում եյի «հայրենիքից» հեռու:

Նոր ափի յերկարությամբ դեպի արևելք գնալով, յես տասներկու մղոն ճանապարհ կտրեցի: Այստեղ նշանի համար մի մեծ ձող տնկեցի ու հետ դարձա:

Հետևյալ ճանապարհորդությունս յես սկսեցի իմ

գլխավոր բնակարանից դեպի հակառակ կողմը: Նույն ուղղությամբ գնալով, հասա տնկածս ձողին: Այդ կերպով յես ամբողջ կղզին վոտի տակ տվի:

Վերադարձիս համար յես մի նոր ճանապարհ ընտրեցի, կարծելով, թե առանց դժվարության տան ճանապարհը կգտնեմ: Բայց սաստիկ սխալված եյի: Յերկու թե յերեք մղոն ափից հեռանալով, մտա մի շատ ընդարձակ հովիտ, շրջապատված բարձր բլուրներով: Նրանք այնպիսի խիտ բուսականություն ունեյին, վորի միջով դենը վոչ մի բան չեր յերևում:

Թութակին սովորեցրի անունս տալ:

Ուր գնալս չեյի իմանում: Մոլորված մնացել եյի: Մնում եր, վոր արևն ինձ առաջնորդ ընտրեմ, բայց յես միայն մոտավորապես գիտեյի, թե արևը որվա այս կամ այն ժամին ինչ դիրք ե ընդունում յերկնքում:

Հովտի միջով գնալիս, հակառակի պես, յեղանակը փոխվեց, յերկինքը ծածկվեց ամպերով, մեգ-մշուշը տարածվեց յերկրի վրա, արևն այլևս չեր յերևում: Խիտ մառախուղն ինձ մի քանի որ պահեց հովտում: Առանց արևի շարունակ թափառում եյի այս ու այն կողմ, մինչև վոր գտա իմ տնկած ձողը, հետևապես իմ հին ճանապարհը: Այդ ճանապարհով տուն եյի վերադառնում,

բայց շոգն այնքան սաստիկ էր, վոր շնչելս դժվարանում էր: Հրացանս, կացինս, տոպրակս և առհասարակ հագիս բոլոր շորերն արևից այնպես էյին տաքացել, վոր մարմինս այրվում էր և ինձ ցավ պատճառում:

Ճանապարհին շունս մի ուլիկ բռնեց: Յես վրա հասա և ուլիկին ազատեցի շան ճանկերից, չթողի, վոր պատառոտի: Յես շատ էյի ցանկանում ուլիկին տուն հասցնել: Վաղուցվա ցանկությունս էր մի զույգ այծ ունենալ, նրանց ընտելացնել, բազմացնել և մի փոքրիկ հոտ ստեղծել: Այդ հոտը ապագայում, վառոդի ու գնդակի պաշարն սպառվելուց հետո, պետք է ինձ սնունդ, կաթ ու միս մատակարարեր:

Մի բույսի ամուր և փափուկ տերևներից ուլի համար վզկապ հյուսեցի և գցեցի վիզը: Տոպրակիցս թոկը հանեցի, կապեցի ուլի ողակից և քաշելով ուզում էյի ուլին տուն բերել: Բայց դժվար էր ապագա հերացու ուլին տուն հասցնելը: Նա հուսահատ ուզում էր պոկ գալ իր կապից: Յես նրան յետևից քարշ տալով, մի կերպ հասցրի իմ ամարանոցը: Այնտեղ նրան փակեցի ցանկապատի ներսում և ինքս շտապեցի դեպի տուն, վորտեղից մոտ մի ամիս բացակայել էյի և շատ էլ կարոտել:

Ո՜, ինձ համար ինչ մեծ բավականություն էր, յերբ նորից մտա իմ տունը և ձգվեցի անկողնիս վրա: Ճանապարհին կրածս զրկանքներն ինձ այն աստիճան հոգնեցրել էյին, վոր իմ տունը աչքիս մի չքեղ պալատ թվաց իր բոլոր հարմարություններով: Յես վորոշեցի յերբեք այդքան յերկար ժամանակով չհեռանալ և այդքան հեռու չգնալ տանից:

Յերկար ճանապարհորդությունից հետո մի շաբաթ տանը լավ հանգստացա: Բայց դարձյալ անգործ չմնացի: Իմ թութակի (վորին Պոլ էյի կանչում) համար վանդակ էյի շինում: Պոլն արդեն ընտելացել էր և իմ ընտանիքի իրավահավասար անդամը դարձել:

Այդ օրից մի շաբաթ անց, յես ուղղևորվեցի այցելելու ուլիկիս, վորին փակել էյի հովարանում և մոռացել, թե այնտեղ այծ կա: Յես նրան գտա նույն տեղում, վորովհետև այնտեղից փախչել չէր կարող: Բայց

յես նրա համար ուտելիք ու խմելիք չէյի թողել, այնպես վոր նա մեռնում էր քաղցից ու ծարավից: Իհարկե, արածս լավ բան չէր: Իսկույն կանաչ տերև քաղեցի, աղբյուրից էլ թարմ ջուր բերի, տվի ուլին: Յերբ կենդանին բավականաչափ հագեցրեց իր քաղցն ու ծարավը, յես կրկին թոկով դուրս տարա նրան: Խեղճ այծն այնքան տանջված ու թուլացած էր, վոր բոլորովին խելոքացել էր, իր ազատ կամքով հետևում էր ինձ: Ինձ այնպես էր թվում, վոր նա առանց թոկի յել կգար, վիզը թոկ դցելն ավելորդ էր: Տանը լավ խնամում ու փաղաքշում էյի նրան: Նա այնքան ընտելացավ և սովորեց ինձ, վոր

Այծը սերտ կապվեց ինձ հետ

ուր գնում էյի, յետևից գալիս էր: Նա այնքան սերտ կապվեց ինձ հետ, վոր վերջը դարձավ հավատարիմ և անձնվեր ընկերս:

Աշնան աձրևային շրջանն սկսվեց: Սեպտեմբերի 30-ին յես հանդիսավոր կերպով տոնեցի կղզին գալուս յերկրորդ տարեդարձը:

Կղզին գալուս յերրորդ տարվա մեջ յես աշխատանք-

ներս կանոնավոր բաժանել էի օրվա ժամերի։ Յերաշտի շրջանն այնքան սաստիկ շոգ էր լինում, վոր յես ակամայից չէի աշխատում։ Յեթե աշխատում էլ էի, այն էլ յերեկոները, մի չորս ժամի չափ։ Յերբեմն էլ առավոտն էի աշխատում, ճաշից հետո քնում, իրիկունն էլ գնում վորսի, կամ, ավելի ճիշտ, հրացանս առած զբոսանք էի կատարում։

Աշխատանքի համար ժամանակ էր մնում։ Տան համար կահկարասի չինելն էլ այնքան հեշտ չէր։ Այդ գործն ինձանից պահանջում էր գործիքներ, գիտություն, արհեստի հմտություն, ձեռքի վարժություն, վերջապես ոգնական։ Յես այդ բոլորից զուրկ էի։ Այ, որինակի համար, յես քառասուն և յերկու որ գործադրեցի քարայրի համար մի դարակ պատրաստելու վրա, այն ինչ հյուսնը, զինված անհրաժեշտ գործիքներով, մի որում կարող էր կես դուժին այդպիսի դարակ պատրաստել։

Այ թե ինչ կերպով էի չինում դարակը։ Տախտակը ձեռք բերելու համար յես նախ մի ծառ կտրեցի։ Այդ ծառը կտրելու, նրա ճյուղերը կտրատելու և կեղևը հանելու վրա հինգ որ գնաց։ Հետո սկսեցի տաշել և հարթել ծառի մի յերեսը, այնուհետև մյուս յերեսը, վերջն էլ՝ մնացած յերկու կողմը։ Գերանն այնքան տաշեցի, տաշեցի, վոր ուզածս չափի տախտակն ստացա։ Դժվար է յերևակայելը, թե այդ ինչ ծանր աշխատանք էր, վոր յես կատարեցի։ Գիտե՞ք ձեռներս ինչ քաշեցին։ Մատ ու յեղունգից ընկան։ Բայց համբերությունն ու աշխատանքն ամեն բանի հաղթահարում են։ Վերջապես յես ուզածիս հասա։

Կարիքն ինձ, առանց գործիքների, առանց տեխնիկական հարմարությունների, վարպետ դարձրեց և յես չունեցածս բոլոր անհրաժեշտ իրերը ձեռք բերի։

ՊԱՅՔԱՐ ՀՆՁԻ ՀԱՄԱՐ

Նոյեմբերը գնաց։ յեկավ դեկտեմբերը։ Յես հնձին էի սպասում։ Թիակով մշակածս մի կտոր հողը շատ մեծ չէր, վորովհետև ցանելու համար շատ քիչ գարի ու բրինձ էր մնացել առաջին անհաջող ցանքսից հետո։ Այս

տարի, յերբ յես լավ հունձ էի սպասում, հանկարծ հայտնվեցին անակնկալ թշնամիներ, վորոնք սպառնում էին զրկել ինձ ամբողջ հնձից։ Այդ վնասատուների դեմ կռվելը շատ դժվար էր։ Հատկապես ցանքսը չէին խնայում այծերը և նապաստականման կենդանիները։ Յերևի նրանց բերաններին համ էին տվել հացաբույսերը։ Նրանք մտնում էին իմ փոքրիկ դաշտը, կըրծում և ուտում բարձրացած ցողունները։

Ցանքսն ազատելու համար մնում էր, վոր արտը ցանկապատեյի։ Այդ հարվածային աշխատանքը կատարում էի լարված ուժերով։ Ուզում էի շատ շուտով վերջացնել, վորովհետև գարշելի վնասատուները յեռանդով շարունակում էին իրենց ավերածությունը։ Յերեք շաբաթվա մեջ ամբողջ ցանքսադաշտը ցանկապատվեց։ Այդ ժամանակից սկսած ցերեկները յես էի խրտնեցնում այդ կենդանիներին հրացանի տրաքոցներով, իսկ գիշերներն՝ իր հաջոցով շունս, վորին կապել էի ցանկապատի սյունից։ Ահա այսպիսի միջոցներով վնասատուներին փախցրինք և արտն ազատեցինք ավերածությունից, այն ժամանակ հացաբույսերն սկսեցին հրաշալի աճել, հասկավորվել և հասկերը լցնել արևի բարերար ճառագայթների տակ։

Հիմա յել, ինչպես ասում են, մրից յելանք, մրջուրն ընկանք։ Կենդանիների տեղը թռչունները բռնեցին։ Թռչուններն ահագին խմբերով վրա էին տալիս ցանածս դաշտին ու կտցահարում էին հասկերը։ Մի անգամ իմ ներկայությամբ, բազմատեսակ թռչունների մի ամբողջ յերամ իջավ հասկերի վրա։ Յես հրացանս արձակեցի և թռցրի նրանց։ Բայց ահա արտի միջից վեր բարձրացավ մի ուրիշ բազմություն։ Այդ տեսարանն ուղղակի ինձ ապշեցրեց։ Յես հասկացա, վոր անիրավ թռչուններն իմ բոլոր հույսերը կխորտակեն, մի քանի որվա մեջ յեղած չեղածը կուտեն, կվերջացնեն։ Կորչելու յե իմ հացը, վորի մասին այնքան յերազում էի։ Յես չէի իմանում, թե ինչով կարող եմ այդ դժբախտության առաջն առնել։ Համարյա թե գլուխս կորցրել էի։ Բայց դարձյալ վճռեցի, ինչ գնով էլ լինի, հացս ազատել։ Յես վորոշեցի գիշեր ցերեկ հսկել հասած արտս արթուն պահա-

պանի պես, հրացանը ձեռքիս և աչալուրջ շունը կողքիս: Նախ և առաջ յես ուշադրությամբ դիտեցի ամբողջ արտը և տեսա, վոր թռչունները բավական վնաս են հասցրել հասկերին:



Սպանված թռչունները կախեցի սյունից:

Դուրս յեկա արտից, հրացանս լցրի և նայեցի դիմացի ծառերին: Ի՞նչ տեսնեմ: Փոքրիկ, թևավոր գողերը ահագին բազմությամբ բռնել եյին շրջակա բոլոր ծառերը: Պարզ է, թե ինչու համար: Նրանք սպասում եյին իմ հեռանալուն, վոր դրոհ տալով խուժեյին իմ արտը:

Իսկապես այդպես ել յեղավ: Հենց վոր յես մի քանի քայլ հեռացա և թաքնվեցի, ծառերի վրայից բոլոր թռչունները նորից գրոհեցին հասկերի վրա: Այդ տխուր յերևույթն ինձ կատաղեցրեց: Յես իսկույն յետ դարձա ու կրակեցի թռչունների վրա: Յերեք թռչուն գետին գլորվեցին: Առայժմ այդքանն ել բավական եր: Սպանված թռչուններին կախեցի ցանկապատի բարձր սյունից, վոր կենդանի գող թռչունները տեսնեն և զգուշանան:

Իմ հնարագիտությունը փայլուն հետևանք տվեց: Թռչունները վոչ միայն ել չվերադարձան, այլ բոլորովին հեռացան կղզու այս մասից մյուս մասը: Յես շրջակայքում այլևս չեյի տեսնում նրանց, քանի դեռ կախված եյին սպանված թռչունների խրտվիլակները:

Խոսք չկա, վոր ինձ չափազանց ուրախացրեց իմ գործադրած հաջող միջոցը: Ել վոչ մի վնաս նրանից հետո չհասավ իմ հացին: Դեկտեմբերի վերջին յես իմ աշխատանքի պտուղը քաղեցի:

Արտ հնձելն ել հեշտ բան չեր, վորովհետև վոչ մանգաղ ունեյի և վոչ գերանդի: Նավից վերցրած զենքերի հետ յես բերել եյի և մի սուր, սրանից գերանդի շինեցի ու արտը հնձեցի: Արդեն ասել եմ, վոր արտս մեծ չեր, շատ ել չչարչարվեցի հնձելու վրա: Միայն հասկերն եյի կտրում ու ածում զամբյուղը, վորն այդ նպատակի համար եյի գործել: Հասկերը զամբյուղով կրում եյի քարայրը և այնտեղ նրանց ուղղակի ձեռքով տրորում, վորպեսզի հատիկը հանեմ: Ցանածիս համեմատ բերքը վատ չեր: Յես ցանել եյի մոտավորապես մի-մի գարնց գարի և բրինձ, բայց ստացա յերկուս ու կես չետվերիկ գարի ու յերկու չետվերիկ բրինձ: Ասում եմ մոտավորապես» վորովհետև ընդեղենների համար իսկական չափ չունեյի:

Դրանով ել չվերջացան իմ չարչարանքները: Յես չգիտեյի ինչպես մաքրեմ հացահատիկը, ի՞նչպես աղամ, ալյուր դարձնեմ և ինչո՞վ մաղեմ: Յես չգիտեյի ինչպես ալյուրից խմոր հունցեմ և ինչպես այդ խմորից հաց թխեմ: Ահա այդպիսի դժվարություններ յեկան իմ առաջ: Դրա համար վորոշեցի, վոր այս տարվա ստացած բերքին ձեռք չտամ, մյուս ցանքսի համար սերմացու ա-

նեմ: Հույս ունեի, վոր մինչև նոր բերքի հավաքը յես հաց պատրաստելու հնարքը և միջոցը գտած կլինեմ:

Ճակատագիրն ինձ դրել եր նախապատմական մարդու պայմանների մեջ, ամեն բան յես ինքս պիտի անեի: Յերբեմն ինձ վրա հուսահատություն եր գալիս, չեյի իմանում այս գործն սկսե՞մ, թե՞ այն գործը, և ինչպե՞ս սկսեմ:

Իսկ ինչքան դժվար ե հաց ստանալը, յերբ հացահատիկն աղալու ջրաղաց չկա, ալյուր մաղելու մաղ չկա, խմոր հունցելու թթխմոր ու աղ չկա, վերջապես հաց թխելու վառարան չկա: Ինձ մնում եր մի այնպիսի միջոց գտնել, վորով առանց այդ պակաս բաների հաց ստանալը հնարավոր լիներ, յեթե վոչ, պետք ե ինքս պատրաստեյի այդ բոլոր պակաս բաները: Բայց ինձ չափազանց ուրախացնում եր այն, վոր հաց ստանալու ամենաեյական նյութը—հացահատիկն—արդեն ունեի: Ի հարկե յես դեռ ծանր աշխատանքներ ունեի կատարելու, բայց ինչքան ել աշխատանքը ծանր լիներ, յես նրանից վախեցողը չեյի:

Մինչև հետևյալ հունձը վեց ամիս եր մնում, այդքան ժամանակամիջոցը անհրաժեշտ պակաս բաները ձեռք բերելու համար դեռ շատ եր ու քիչ չեր:

Ամենից առաջ ինձ պետք եր ցանքսի դաշտը լայնացնել: Յես արդեն այնքան սերմ ունեի, վոր կարող եյի կես հեկտար տեղ ցանել: Հողը փորելու համար մի շատ կարծր ծառից, վորը Բրազիլյայում կոչվում ե «յերկաթե», մի բահ շինեցի, աշխատելով մի ամբողջ շաբաթ: Բայց այնպես ծանր դուրս յեկավ, վոր այդ բահով աշխատելը չափազանց դժվար եր: Բայց յես բահով ծանրությանը նշանակություն չտվի: Այդ գործիքով բահեցի ու ցանեցի մի մեծ հողամաս, վոչ հեռու իմ բնակարանից և նրա շուրջը ցցերով ցանկապատեցի: Ցցերն այնպիսի ծառերից կտրեցի, վորոնք լավ են բռնում ու շուտ բուսնում: Մի տարուց հետո այդ ցցերից պետք ե ստանայի մի կենդանի ցանկապատ: Ցանկապատի կառուցման վրա յերեք ամիս աշխատեցի: Պատճառն այն եր, վոր այդ ժամանակ սկսվեց անձրևային շրջանը և յես շատ անգամ տանից դուրս չեյի գալիս:

Իմ հարկադրված բանտարկության ժամանակ յես զբաղված եյի մի վոչ աննշան գործով. խոսել եյի սովորեցնում իմ թութակին: «Պոլ» բառը առաջինն եր, վոր յես լսեցի կղզում, միայն վոչ իմ բերանից: Թութակի հետ արած խոսակցությունն ինձ մեծ զվարճություն եր պատճառում և մասամբ ել թեթևացնում եր իմ ծանր աշխատանքը:

ԿԱՐԻՔԸ ՍՈՎՈՐԵՑՆՈՒՄ Ե

Ինչպես արդեն ասել եմ, ինձ վաղուց զբաղեցնում եր կավե ամաններ պատրաստելու միտքը: Նրանց կարիքը շատ մեծ եր, բայց մինչև հիմա չեյի կարողանում հնարը գտնել, չգիտեյի, թե գործին ինչպես մոտենամ: Ի նկատի առնելով իմ կղզու տաք կլիման, յես յեկա այն յեզրակացության, վոր յեթե հարկավոր կավը գտնեմ, անշուշտ նպատակիս հասած կլինեմ, ամանեղենի տեր կդառնամ:

Հենց առաջին ծեփածս ամանը կչորացնեմ արևի տակ այն աստիճան, վոր նա շատ պնդանա ու պիտանի կդառնա մեջը չոր մթերքներ ածելու և պահելու համար, ինչպես որինակ՝ գարի, բրինձ, ալյուր: Յես վորոշեցի շինել մի քանի հատ մեծ, խոր ու ծանծաղ ամաններ և մի խմորի տաշտակ, քանի վոր մտածում եյի շուտով ալյուր պատրաստել:

Ինչ տեսակ անհարմար ծիծաղելի միջոցների եյի դիմում՝ կավը հունցելու համար: Ամանները ծեփելիս ձեռքիս տակ ինչ տարորինակ, տգեղ, ծիծաղ շարժող ձևեր եյի ընդունում: Քանիսը փչացավ: Մեկը ներսից եր ճաքում, մյուսը դրսից, լոկ այն պատճառով, վոր կավը լավ տափակած ու կպչուն չլինելով, չեր կարողանում ինքն իր ծանրությանը դիմանալ: Վորն ել արևի սաստիկ տաքությունը չտանելուց ճաքճաքեց, վորովհետև ժամանակից առաջ եյի դուրս դրել, արևի տակ չորանալու: Մի քանիսն ել յես փշրեցի՝ տեղից տեղ փոխադրելիս, չորանալու ժամանակ, կամ նրանից հետո: Այդպես յես ինձ մատնել եյի մի ծանր աշխատանքի, վորի գլուխ գալը դեռ շատ ժամանակ եր խլելու: Ար-

դեն յերեք ամբողջ ամիս եր, վո րաշխատում եյի: Նախ կավատեղ վորոնելով, կավը տուն կրելով, կավը մանր քարերից ու ավազից մաքրելով–զտելով, ապա կավը հունցելով, ձեռների, վոտների տակ տրորելով: Վերջապես, մի շարք յերկար և անհաջող փորձերից հետո կարողացա կարասի նմանությամբ յերկու ահագին անճոռնի, անկերպարան կավե աման ծեփել, վորոնք խմորի ամանի հեռավոր նմանություն անգամ չունեյին:

Այդ կարասները յես նշանակեցի գարի, բրինձ կամ թե ալյուր պահելու համար:

Յեթե չկարողացա, ինչպես հարկն եր մեծ ամաններ ծեփել, դրա փոխարեն հաջողությամբ շինեցի մի

Իմ առաջին կրակին դիմացկուն ամանը:

շարք մանր անոթներ: Որինակ՝ կժեր, սափորներ, կճուճներ, մանր տափակ ափսեներ, կլոր պուտուկներ, գավաթներ: Այդ բոլորը յես ձեռքով ծեփում եյի և չորացնում արևի տակ: Այս ամենը շատ լավ, բայց դարձյալ գլխավոր նպատակիս չհասա: Ինձ հարկավոր եր կրակին դիմացկուն աման, վորի մեջ կերակուր յեփեյի, կամ ջուր տաքացնեյի: Չնայած իմ բոլոր գոր-

ծադրած ջանքերին, յես չկարողացա մի այդպիսի աման պատրաստել: Մինչև հիմա շինածս ամաններից և վոչ մեկը կրակին չեր դիմանում, հենց վոր կրակի վրա յեր դրվում, տաքանալուն պես տրաքվում եյին ու թափվում:

Բայց մի անգամ տապակած միսը կրակի վրայից վերցնելիս՝ ոջախի ածուխների մեջ նկատեցի մի կտոր թրծված կավ, քարի պես կարծր, աղյուսի պես կարմիր: Այդ գյուտը սկզբում ինձ շատ ապշեցրեց և հետո ինքս ինձ ասացի, թե վոր կրակում այսպես լավ թրծվում են կավե անոթի կտորտանքը, ապա դժվար չի լինի ամբողջ անոթը թրծել:

Այդ հայտնությունից հետո սկսեցի հաշվի առնել, թե ինչպես պատրաստեմ, ինչպես սարքեմ, ինչպես դասավորեմ կրակը՝ պուտուկները թրծելու համար: Յես բոլորովին գաղափար չունեյի բրուտական վառարանների մասին:

Վերջապես, յերկար մտածելով, ձևը գտա: Գոնե փորձի համար բերի ու շիկացած մի մեծ մոխրակույտի վրա դրի յերեք մեծ գավաթ և յերեք պուտուկ իրար վրա, սյունաձև:

Սյան շուրջը խարույկ վառեցի, այն հաշվով, վոր կրակի բոցը կարողանա համաչափ կերպով ամեն կողմից, թե վարից, թե վերից ընդգրկել ամբողջ ամանեղենը: Յես կրակը թեժ պահեցի մինչև այն ժամանակ, յերբ ամանները կարմրել սկսեցին առանց ճեղք տալու: Հինգ, թե վեց ժամ անց, յես նկատեցի, վոր պուտուկներից մեկի վրա մի ինչ վոր հալոց է սկսվել և հոսում է: Յես հասկացա, վոր այդ կավի հետ խառնված ավազն է, վոր կրակի ջերմությունից հալվել է և ամենաբարձր աստիճան ջերմության տակ կարող է ապակի դառնալ:

Սկսեցի աստիճանաբար թուլացնել կրակը, մինչև ամանների սպիտակելը: Ամբողջ գիշերը յես վառ պահեցի թույլ կրակը. իսկ առավոտյան ստացա յերեք գավաթ և յերեք պուտուկ, յեթե վոչ առանձնապես գեղեցիկ, բայց թե գործածելու համար շատ պետքական: Բոլոր ամանները կրակից անվնաս դուրս յեկան: Այնպես լավ եյին թրծված, այնպես պնդացած, վոր ավե-

յին ցանկանալ չեր կարելի: Մի պուտուկը մինչև անգամ ներկվել, փայլ եր ստացել հալված ավազից:

Պարզ է, վոր այդ փորձից հետո յես այլևս կավե ամանների կողմից պակասություն չունեյի:

Ամանների ձևի վրա յես հատուկ ուշադրություն չեյի դարձնում: Ամանները ձևի, նրբության ու գեղեցկության կողմից աչքի չեյին ընկնում, վորովհետև յես յերեխայաբար եյի ծեփում:

Կրակի բովից անփորձ դուրս յեկած և դեռ կարգին չսառած պուտուկներից մեկի մեջ ջուր ածեցի, միս գցեցի և դրի կրակին, վոր սուպ պատրաստեմ:

Մի դերազանց կերակուր ստացվեց: Մսաջուրը մեծ ախորժակով վայելեցի:

Հիմա իմ հոգսը մի քարե սանդ շինելն եր, վորտեղ հացահատիկը ծեծեյի և ալյուր դարձնեյի: Ջրաղացի կառուցման մասին մտածել անգամ չեյի համարձակվում: Չեյի իմանում թե սանդը ինչպես շինեմ, քանի վոր արհեստներից ինձ քիչ դուր յեկողը քարտաշությունը, արձանագործությունն եր: Այդ ել մի կողմ մնա: Գլխավորն այն եր, վոր յես անհրաժեշտ գործիքներ չունեյի: Մի քանի որ իրար յետևից հարմար մեծության քար եյի փնտրում, վոր նրա մեջը փորեմ և սանդ դարձնեմ, բայց այդպիսի քար չեյի գտնում: Կղզու բոլոր ժայռերը բաղկացած եյին փխրուն ավազաքարից: Այդպիսի քարից պատրաստած սանդը կամ հավանգը բանի պետք չեյին, այ թե ինչու: Նրանք չեյին կարող դիմադրել թակի և հավանգի կոթի հարվածներին, այնպես վոր ծեծվող հացահատիկին ավազ կխառնվեր և ստացված ալյուրն ել չեր ուտվի, վոր ի հարկե, բոլորովին ցանկալի բան չեր: Այն ժամանակ յես վորոշեցի քարի փոխարեն փայտ վերցնել: Վորոնեցի և գտա մի մեծ կոճղ, տաշելով ձևի բերի, ահագին դժվարությամբ միջուկն այրեցի և ձագարաձև փոս շինեցի այն յեղանակով, ինչպես վոր հնդիկներն են մակույկ շինում: Հետո մի ծանր թակ պատրաստեցի՝ այսպես կոչված «յերկաթե» փայտից: Այդպիսով պատրաստ եր իմ սանդը կամ փայտե հավանգը, վորը ծառայելու եր իմ ջրաղացի տեղ:

Յերբ սանդը շինեցի, վերջացրի, սկսեցի մաղ շինելու մասին մտածել, վոր անհրաժեշտ եր ալյուրը թեփից մաքրելու համար: Առանց մաղի հաց թխել չեր կարելի:

Ինչպես կարող եյի մաղ շինել: Չե՞ վոր մաղ պատրաստելու նյութեղեն չկար: Հարկավոր եր մի նոսր, թափանցիկ կտոր, վոր ալյուրը իրենից անցկացներ: Յես ուղղակի ինչ անելս չգիտեյի: Նախկին սպիտակեղենը ճոթ ու պատառ եր յեղել: Բայց հանկարծ յես հիշեցի, վոր նավաստիների իրերի մեջ մի քանի հատ կոլենկորի ու կիսեյի փողկապներ կային, վորոնք այժմ կարող եյին պետք գալ: Ահա այդ փողկապներից յերեք մաղ շինեցի, վորոնք մի քանի տարի ծառայեցին ինձ. մինչև վոր նորերն ունեցա:

Մի գործ չվերջացրած, մյուսն եր առաջ գալիս: Հիմա յել հարց եր ծագել՝ յեթե ալյուր ունենամ, ինչպես հաց թխեմ: Նախ, վոր թթխմոր չունեյի, ինչով կարելի յեր նրան փոխարինել: Բայց միթե առանց թթխմորի հաց թխել չի՞ կարելի: Փորձենք, տեսնենք: Իսկ վառարան չեղած տեղն ինչ անենք: Վառարանի խնդրումն ել շատ դժվարություններ հայտնվեցին: Այդ դժվարին խնդիրները լուծելու համար յես շատ մտածեցի և վերջը հետևյալ հնարը գտա: Կավից շինեցի մի քանի ծանծաղ, յերկարուն, թիթեղյա թերթերի նման շատ լայն, բայց փոքրիկ ամաններ և կրակում թրծեցի: Այդ ամանները խուփերի տեղ պիտի ծառայեյին: Յերբ բանը հասավ հաց թխելուն, յես կրակ վառեցի, ոջախում: Ոջախը կառուցել եյի իմ ձեռագործ աղյուսներից: Ափսոս, վոր նրանք զանազան մեծություն և անկանոն ձև ունեյին: Կրակից թափված ածուխն ոջախով մեկ փռեցի, վոր աղյուսները տաքությունից շիկանան, կարմրեն: Հետո յես քաշեցի փռած ածուխը, փոշին մի կողմի վրա կիտեցի և մաքուր աղյուսների վրա շարեցի խմորի գնդերը: Այդ գնդերը վերևից ծածկեցի կավե խուփերով, վորոնց վրա փռեցի մոխրի հետ խառը պեծացած, կրակ դարձած ածուխի կտորները, վորպեսզի ներսի տաքությունը չպակասի: Հետևանքն այն յեղավ, վոր հրաշալի հաց ստացա: Թե բրուտ եյի, հիմա յել

Համեմատաբար կարճ ժամանակամիջոցում դարձա մի վարպետ հացթուխ և սկսեցի մինչև անգամ բրնձի պուդինգներ ու հրուշակներ պատրաստել: Յես կարող էյի նաև կարկանդակներ պատրաստել, յեթե միայն ուրիշ նյութեր ու համեմունք ունենայի նրանց հետ խառնելու: Այծի և թռչունի միս ուտելուց ձանձրացել էյի:

Այդ մանր-մունր աշխատանքները և նրանց հետ կապված կարևոր գյուտերն ինձանից շատ ժամանակ խլեցին, համարյա յերրորդ տարվա մեծ մասը: Բացի այդ աշխատանքներից, յես միաժամանակ պարապում էյի յերկրագործությամբ և տնտեսական գործերով: Մի՞թե քիչ ժամանակ էր հարկավոր արտը հնձելու, հասկերն զգուշությամբ կրելու, հետո ձեռքերով նրանց փշրտելու, հատահան անելու համար, քանի վոր յես հասկերը ծեծելու վոչ կալ ունեյի, վոչ կամ ունեյի, և վոչ էլ կալափայտ:

Տարեցտարի իմ հացի բերքն ու քանակն աճում, ավելանում էր: Յեթե լրջորեն չմտածեյի նկուղս նորից ընդարձակելու մասին, հացահատիկ պահելու տեղ չեյի ունենա: Մանավանդ վոր ամեն մի հնձից ստանում էյի մոտ քառասուն տոպրակ գարի ու բրինձ. այնպես վոր վորքան ուզենայի, կարող էյի հաց գործածել: Նախատեսնում էյի, վոր միշտ էլ ուտելու հաց կունենամ: Տեղն է ասել, վոր այդ ժամանակ նավից բերածս պաքսիմաթի պաշարն ամբողջովին սպառվել էր:

ՆԱՎԱԿԸ

Հերթական աշխատանքներով զբաղված, կենսական հոգսերի տակ ընկած, յես հաճախակի մտքով թռչում էյի այն ցամաքը, վոր յերևում էր կղզուս հակադիր ափից: Այնտեղ գնալուս ձգտումը շատ մեծ էր: Յես մտածում էյի, թե ինչ էլ լինի այն յերկիրը՝ անապատ, մարդաբնակ, թե անմարդաբնակ, գուցե այնտեղից կարելի լինի ճանապարհ գտնել ու գնալով դուրս գալ մի ապահով տեղ և ձեռք բերել ցանկալի ազատություն:

Յես չեյի մտածում այն վտանգների մասին, վորոնք կարող էյին պատահել այդ ճանապարհորդության

ժամանակ: Ամենից առաջ յես կարող էյի վայրենիների ձեռքն ընկնել, վորոնք շատ ավելի կատաղի, անգութ և արյունարբու յեն, քան թե Աֆրիկայի առյուծներն ու վագրերը: Նրանք ինձ բաց չեյին թողնի, կտոր-կտոր կանեյին և հում-հում կուտեյին:

Բայց յես միայն մի բանի մասին էյի մտածում. ինչպե՞ս հասնեյի այն յերկիրը, վորն ինձ այնքան սաստիկ հրապուրում էր: Յես հիշեցի մեր խորտակված մակույկը, վորը փոթորկից ափ էր դուրս յեկել: Նա

Շինածս նավակը վատ չէր:

ընկած էր յերկարուն ավազոտ ծանծաղուտի վրա, յերեսն ավազում, հատակը վերև: Շուրջը ջուր չկար:

Յեթե կարելի լիներ այդ համարյա ջարդված մակույկը կարգի բերել, սարքավորել ու նորից ջուրը գցել, նրանով գուցե նույնիսկ Բրազիլիա գնայի (յես այդպես էյի պատկերացնում): Բայց թե վոր մեն-մե-

նակ կարողանայի մակույկն իր տեղից շարժել, հեշտությամբ կշարժեյի և ամբողջ կգցին: Այդ էլ ինձ չվհատեցրեց: Գնացի անտառ, մի քանի գերան, մի քանի ձող կտրեցի, կրեցի նավակի մոտ և ամեն միջոց գործ դրի, ճիգ ու ջանք թափեցի՝ մակույկը շրջելու: Ես դեռ այն մտքին եյի, վոր կարող եմ մակույկը կարկատել, կարգի բերել և մտնել ծովը:

Ես շատ չարչարվեցի, շատ ժամանակ կորցրի այդ ապարդյուն փորձի վրա: Երեք թե չորս շաբաթ տանջվելուց հետո համոզվեցի, վոր այս անգամ ուժերիցս վեր բան եմ բռնել: Մի քանի որ հանգստացա: Հետո սկսեցի մակույկի տակից ավազը փորել, լայն փոս բանալ:Ներքևից գերաններ դնելով, ուզեցի մակույկի ընկնելուն այնպիսի ընթացք տալ, վոր նա շուռ գա իր հատակի վրա:

Բայց այդ իմ բոլոր ջանքերն էլ զուր անցան: Ինչքան էլ չեյի չարչարվում, դարձյալ չկարողացա վոչ մակույկը շուռ տալ, վոչ նրա տակը մտնել, վոչ էլ նրան քաշել, ջուրը գցել: Կամա, ակամա ձեռք պիտի քաշեյի այդ ապարդյուն աշխատանքից: Իմ բռնած գործը մի դժվարին ձեռնարկություն էր, մի մարդու բան չէր: Նոր յերկիր գնալու միտքը գնալով լայն ծավալ էր ստանում իմ մեջ, իշխում էր ինձ վրա:

Իմ յերազն ու ցնորքներն իրականացնելու համար զանազան տեսակ ծրագրեր կազմելով, վերջապես, վորոշեցի մի նոր մակույկ շինել՝ առանց անհրաժեշտ գործիքների, առանց մեկի ոգնության: Այդպիսի մակույկ տեսել եյի վայրենիների մոտ: Ինձ թվում էր, վոր յես կարող եմ մակույկ շինել, վորովհետև իմ ձեռքի տակ ավելի շատ միջոցներ կային, քան թե վայրենիների մոտ: Մի գլխավոր բան էլ կար: Այդ այն էր, վոր յես ինձ հույս ու հավատ եյի ներշնչում, թե կարող եմ մակույկ շինել, թե դա ինձ համար բոլորովին դըժվար բան չի լինի:

Ես լավ չեյի քննում յերկրորդական հանգամանքները: Դրանով ինձ դնում եյի դժվար կացության մեջ: Չէ վոր յես ոգնական չունեյի մակույկը ջուրը գցելու համար:

Դժվար է հավատալ, վոր մակույկի վրա աշխատելիս գոնե մի անգամ յես ինձ այս հարցը չտվի. «յերբ մակույկը պատրաստ լինի, ո՞ւմ ոգնությամբ ես նրան ջուրը գցելու»: Բայց դա փաստ է: Այս կղզուց դուրս գալու ջերմ ցանկությունն ինձ ամբողջովին կլանել էր: Այդ էր պատճառը, վոր յես վերոհիշյալ կարևոր հանգամանքը նկատի չեյի առել:

Համարձակ գործի անցա:Ընտրեցի մի գեղեցիկ յեղևնի և սկսեցի կտրել այդ ծառը: Անչափ աշխատանք գործ դրի ծառը տապալելու վրա: Արմատից կտրելը յերեք շաբաթ տևեց, տասնչորս որ շարունակ աննկարագրելի դժվարություններով հազիվ կարողացա ծառն իր բազմաթիվ հաստ ու բարակ ճյուղերից մաքրել, ծառի բարակ կատարը կտրել: Մի ամսում ամբողջ ծառը տաշեցի, չափ ու ձև արի, չափսերը վորոշեցի. ձևակերպեցի նավակի մեջքը և այնպես ձև տվի, վոր նավակը ջրի յերեսին լավ պահվի: Նավակի մեջը փորելու, միջուկը հանելու համար հարկավորվեց յերեք ամիս ժամանակ: Այդ աշխատանքը կատարեցի միմիայն կացնի և դուրի ոգնությամբ, առանց միջուկն այրելու: Վերջապես հաջողությամբ գլուխ բերի նավակառուցման գործը: Շինեցի մի գեղեցիկ նավակ, վորտեղ քսան հոգի կտեղավորվեյին, բայց քանի վոր այդ քանակությամբ մարդ չկար, ուրեմն յես կտեղավորվեյի իմ ամբողջ գույքի հետ միասին:

Երբ վերջացրի այս հսկայական գործը, անասելի և անսահման ուրախությունից ուղղակի ցնծում եյի: Այդ շատ հասկանալի յեր: Առաջ յես յերբեք չեյի տեսած մի այնպիսի մեծ նավակ, վոր կառուցված լիներ միայն մի ամբողջական փայտից, ինչպիսին իմ նավակն էր: Ո՜, վորքան և ինչպիսի ծանր աշխատանք եյի թափել նրա վրա:

Հիմա մնում էր, ըստ յերևույթին, մի փոքր գործ՝ նավակը ջուր գցելը: Եթե այդ էլ հաջողվել էր, յես այն ժամանակ կկատարեյի մի համարձակ-վտանգավոր ճանապարհորդություն:

Ինչքան աշխատեցի, չկարողացա նավակը ջրի մոտ

քաշել: Բոլոր գործադրած միջոցներս անհաջողության հանդիպեցին, չնայած, վոր ջուրը հեռու չեր:

Առաջին արգելքը նավակի ու ծովածոցի մեջ ընկած բարձրավանդակն եր: Սակայն առանց վհատվելու սկսեցի գետինը փորել, վորպեսզի բարձրավանդակից դեպի ծովածոցը մի ուղի տանեմ նավակի համար:

Միթե՞ կափսոսաս քեզ, կափսոսաս քո թափած քրտինքը, յերբ գիտես, վոր այդ ամենն ազատության համար ե:

Հերոսաբար վերացնելով մեջտեղից այդ առաջին արգելքը, յես դեմ առ դեմ կանգնեցի մի ուրիշ արգելքի, վորը բացե ի բաց անհաղթահարելի թվաց: Յես չեյի կարող նավակը տեղից շարժել, ինչպես դրանից առաջ նավի մակույկը: Համոզվելով, վոր գետնի վրայով չեմ կարողանալու նավակը տանել, յես մի հնար մտածեցի, այն ե, մի առու փորել մինչև ծովածոցը և բաց թողնել ջուրը, վոր առուն ջրանցք դառնա: Յեթե չեր կարելի նավակը ծովին մոտեցնել, պետք ե ծովը նավակին մոտեցվեր: Յես այդ ել հանձն առա: Բայց յերբ հաշվեցի ջրանցքի համար անհրաժեշտ յերկարությունն ու խորությունը և իմացա այն հողի քանակը, վոր հարկավոր եր փորել ու կրել, յես գտա, վոր միայն իմ սեփական ձեռներով այդ աշխատանքը կվերջացնեմ առնվազը մի տաս-տասներկու տարում: Ափը շատ բարձր եր: Պետք ե քսաներկու ֆուտ խորությամբ փորվեր, վոր ջրին ճանապարհ տար: Յես ստիպված եյի վշտով հրաժարվել ծրագրիս իրագործելուց: Յես այդտեղ միայն հասկացա, վոր իմ կողմից կատարյալ անմտություն եր մի այնպիսի դժվարին գործ սկսելը՝ նախապես առանց հաշվի առնելու ուժերս, գործի բնույթը և պահանջվելիք աշխատանքի պայմանները:

Այդ ձեռնարկությունների ժամանակ լրացավ կղզի գալուս չորրորդ տարին:

ՆՈՐԻՑ ՎՏԱՆԳԻ ԱՌԱՋ

Նավից բերված իրերից շատերը յերկար գործածելուց սկսեցին հետզհետե կամ փչանալ, կամ սաստիկ մաշվել:

Ինչպես արդեն ասել եմ, թանաքս համարյա պրծել եր: Սպառվել եր նաև պաքսիմաթի պաշարը: Չնայած վոր օրական մի պաքսիմաթ եյի ուտում, դարձյալ մի ամբողջ տարի անհաց մնացի, մինչև վոր կարողացա իմ սեփական հացահատիկից ալյուր ստանալ և հաց թխել:

Հագուստս նույնպես սկսվեց մաշվել, քրքրվել: Սպիտակեղեն վաղուց արդեն չկար, բացի մի քանի բարակ քաթանե շապիկներից, վորոնք գտնվել եյին նավաստիների սնդուկներում: Յես դա մեծ խնամքով եյի պահում. տաք կլիմայում նրանք ավելի պետք են, քան թե մյուս շորերը: Թեև այնքան շոգ եր, վոր թվում եր, թե կարելի յե վոչ մի շոր չհագնել, բայց արևի ճառագայթները սաստիկ այրում եյին մերկ մարմինը: Մի անգամ յես այդպես մի սխալ գործեցի: Բոլորովին մերկ դուրս յեկա արևի տակ: Մարմինս տեղ-տեղ արևից այնպես այրվեց, վոր քիչ եր մնում վերքեր բացվեյին: Շոգին գլխաբաց ել չեյի կարողանում դուրս գալ, իսկույն սաստիկ գլխացավ եյի ստանում:

Հարկավոր եր կարկատել, կարգի բերել նաև այն սակավաթիվ ծվեն-ծվեն վողորմելի ցնցոտիները, վոր յես հագուստ եյի անվանում: Յես վորոշեցի դերձակություն անել: Մեծ դժվարությամբ ձեռքիս տակ յեղած կոշտ-կոպիտ նավաստիական վերարկուներից յերեք բաճկոն ձևեցի-կարեցի, ի հարկե, շատ նախնական ձևով, բայց շատ պինդ եյին, կարող եյին յերկար դիմանալ: Հետո մի անդրավարտիք ել կարեցի, վոր բաճկոնների նման վողորմելի ձև ուներ:

Սպանածս բոլոր չորքոտանի կենդանիներին մաշկում եյի ու մորթիները պահում: Մի քանիսը արևի տակ այնպես չորացել, կուչ եյին յեկել, վոր բոլորովին անպետքացել եյին: Մյուսները շատ լավ եյին մնացել և շատ ել օգտակար յեղան: Բոլորից առաջ յես մորթուց մի փափախ կարեցի, բուրդը դեպի դուրս դարձած, իհարկե արևից պաշտպանվելու համար: Այդ փափախն այնքան հաջող դուրս յեկավ և այնքան գուրեկան, վոր բոլոր շորերս սկսեցի մորթուց կարել և հագնել: Դերձակության մեջ մի քիչ վարժության ձեռք բերելուց հետո այծի մորթուց մի կուրտիկ և մի

կարճ, մինչև ծնկներս հասնող անդրավարտիկ կարեցի:
Այդ հագուստն ինձ պաշտպանեց արեգակի կիզիչ ճառագայթներից և, որ գլխավորն է, հորդ անձրևներից, որոնց գալու ժամանակ առաջ չեյի համարձակվում գլուխս դուրս հանել քարայրից, յերկյուղ կրելով տենդիս կրկնվելուց:

Հետո բավական աշխատեցի հովանոց շինելու վրա, որ ինձ շատ անհրաժեշտ եր: Դա պիտի պաշտպաներ

Յես վորոշեցի դերձակություն սովորել:

ինձ անձրևներից և արևի անողորմ ճառագայթներից, որոնք յերբեմն ամբողջ ժամերով ինձ պահում եյին տնակում: Մինչև որ յերկու-յերեք մորթի չփչացրի, չկարողացա ինձ համար մի տանելի հովանոց պատրաստել: Հովանոց շինելը մի ծանր խնդիր եր: Այդ խնդրի իսկական դժվար մասն այն եր, որ հովանոցը հեշտությամբ բացվեր, հաշտությամբ ծածկվեր, յեթե վոչ, յես պիտի միշտ գլխիս բաց բռնած տանեյի նրան, իսկ միշտ այդպես բաց անհարմար կլիներ: Վերջապես յես շինեցի մի անպիսի հովանոց, ինչպիսին ինձ հարկավոր եր: Հովանոցը նույնպես մորթուց կարեցի, բուրդը դուրս: Անձրև ժամանակ ջուրը թափվում եր նրա ծայրերից, իսկ արև ժամանակ նա ինձ այնպես լավ եր պաշտպանում, որ սաստիկ շոգերին նրա տակ յես ինձ ավելի լավ եյի զգում, քան թե սովորական յեղանակին առանց հովանոցի: Շոգ ու անձրև յեղած ժամանակ հովանոցը ծալած դնում եյի կռնատակիս:

Անցավ հինգ տարի, բայց այդքան ժամանակում աչքի ընկնող մի այնպիսի բան չպատահեց, որ հատուկ ուշադրության առարկա դառնար: Կյանքս ընթանում եր սովորականի պես, դրությունս նույնն եր, ինչպես առաջ: Իմ գլխավոր զբաղմունքը, բացի պաշտային աշխատանքներից՝ հացաբույսերի մշակույթը, խաղող հավաքելը, վորսորդությունը, մի նոր նավակի կառուցումն եր. մեծ չարչարանքով կարողացա նավակը ծովածոց հասցնել: Դրա համար մի ջրանցք փորեցի, խորությունը վեց ֆուտ, լայնությունը չորս ֆուտ: Դառն փորձից խրատված՝ յերկրորդ նավակի կառուցումն սկսելիս՝ ավելի շրջահայաց եյի, ամեն բան մանրամասնորեն նախապես քննության առա և ապա անցա գործի: Յեկա այն համոզման, վոր այս յերկրորդ, նոր կառուցվելիք նավակը քանի փոքր ու թեթև լինի, այնքան հեշտ կլինի նրան ջուրը գցելը: Ծովածոցի մոտ հարմար ծառ չգտնելով, մի ուրիշով բավականացա, ջրից կես մղոն հեռու: Հաշվելով, վոր հնարավոր է այդ ծառից նավակ շինել ու նրան ջուրը գցել, գործը չընդհատեցի յերկու տարի շարունակ, շատ քրտինք թափեցի, մինչև կառուցումը գլուխ բերի: Նամանավանդ, վոր ինձ քաջալերում եր այն հույսը, թե շուտով նորից բաց ծով եմ դուրս գալու:

Սակայն այս յերկրորդ նավակը, ինչպես յես շուտով համոզվեցի, ինձ դեպի ցանկալի ցամաքը հասցնելու համար մեծ չեր, այլ ուղղակի, կարելի յեր ասել, փոքր եր: Շատ ցավեցի, վոր նավակս այդպես փոքր դուրս յեկավ:

Այդքան փոքրածավալ նավակը չպիտի կարողանար նոր ցամաքի այնքան յերկար ճանապարհը կտրել և ինձ իմ գույքով հաջողությամբ ափ հանել: Նոր ցամաքի մասին մտածելս թողի, աշխատում էյի մոռացության տալ: Վճռեցի միայն նավակով շրջել կղզու չորս կողմը: Ինչպես ասել եմ, վոտով անցել էյի կղզու համարյա բոլոր մասերը: Հիմա կղզին դիտել էյի ուզում ծովի վրայից: Պակաս բան չթողնելու և բոլոր նախազգուշությունները ձեռք առնելու համար նավակի վրա մի փոքրիկ կայմ կանգնեցրի և նավից բերածս առագաստի մի կտոր քաթանից նոր առագաստ պատրաստեցի: Յերբ կայմն ու առագաստը կազմ, պատրաստ էյին, սկսեցի նավակը փորձել ջրում: Գտա, վոր նա շատ թեթև է և շատ հարմար լողալու համար: Նավակի ծայրերին շինեցի արկղներ, փոքրիկ պահարանների ձևով, վառոդ, մանրագնդակ, ուտելեղեն և ուրիշ զանազան մթերքներ պահելու համար: Նավակի յետին մասում հովանոցս տեղավորեցի, վոր արևի ճառագայթներից ինձ պահեր մեծ ամպհովանու նման:

Յերբ նավակի ամեն պակաս բաները լրացրի, հետս վերցրի տասներկու հատ գարի լավաշ, մի մեծ պուտուկ բրինձ, մի փոքրիկ շիշ ռոմ, կես այծի տապակած միս, վորսի համար վառոդ և մանր ու խոշոր գնդակ, նույնպես յերկու հատ մեծ վերարկու, մեկը տակս գցելու, մյուսը վրաս՝ վերմակի տեղ:

Նոյեմբերի ութին կղզին տիրապետելուս, ավելի ճիշտը, ստրկության վեցերորդ տարին, սկսեցի ծովային ճանապարհորդությունը:

Թեև կղզին շատ մեծ չէր, բայց յես հակառակ սպասածիս, ստիպված էյի յերկար ճանապարհ անցնել, վորովհետև կղզու արևելյան կողմից յես հանդիպեցի բազմաթիվ ժայռերի, վորոնք մասամբ ջրի տակ էյին թաղնված, մասամբ էլ ջրից դուրս ցցված: Այդ ժայռաշարքը վերջանում էր մի մեծ ավազուտով, վոր մոտ կես մղոն յերկարություն ուներ: Ուրեմն այդ հրվանդանի շուրջը պտույտ տալու համար յես ակամայից պիտի ընկնեյի ովկիանոսի լայն գիրկը: Յես ուզում էյի ձեռք քաշել իմ այդ ձեռնարկությունից և յետ դառ-

նալ: Բայց ցավն այն էր, վոր կորցրել էյի տան ճանապարհը: Մյուս կողմից էլ չէյի կարող առաջ գնալ, վորովհետև ծովային ճանապարհն ինձ համար անհայտ ու անորոշ էր: Ինչ անելս, ուր գնալս չէյի իմանում: Միակ յելքն այն էր, վոր խարիսխ գցեյի, նավակս կանգնեցնեյի ու ինքս դուրս գայի ափ: Այդպես էլ արի:

Հրացանս վերցրած դուրս յեկա ափ և բարձրացա բլուրի գագաթը, վորտեղից տեսա մի կատաղի հոսանք

Յես գնացի ջրով ճանապարհորդելու:

վոր գոտևորել էր ամբողջ հրվանդանը և հորձանք էր տալիս դեպի արևելք: Յերկյուղը սիրտս՝ հետևում էյի այդ հոսանքի ուղղությանը, վորովհետև նրանից լավ բան չէյի սպասում: Յեթե նավակն ընկներ այդ կատաղի հոսանքի բերանը, արագությամբ կտարվեր ծովի խորքը և յես չէյի կարողանա կղզի վերադառնալ: Նույնպիսի մի հոսանք էլ կղզու մյուս կողմում կար, թեև ափից բավականին հեռու: Մի ավազուտ էլ ափի մոտ կար: Մի յերրորդ ուժգին հոսանք էլ ափին տակով

ափի ժայռերի կուրծքն էր ծեծում ու կատաղի աղմուկ բարձրացնում:

Հոսանքին հակառակ փչում էր հարավ-արևելյան քամին, որ հրվանդանի մոտ մի սարսափելի ջրապտույտ էր կազմում: Այդ սաստիկ քամու և ջրապտույտի պատճառով ես երկու օր մնացի այդ տեղ: Երրորդ օրը, երբ քամին կտրվեց և ծովը հանդարտվեց, ես նոր ճանապարհ ընկա: Ինձ քաշում էին առաջ, դեպի առաջ: Դեռ ափից չհեռացած, նավակս ընկավ մի անասելի արագությամբ առաջ մղվող հոսանքի մեջ: Նավակը ետ պահելու ոչ մի հնար չկար: Իմ գործադրած բոլոր ջանքերը զուր անցան: Շարունակ հեռանում էի ափագուտից: Ես ինձ կորած էի համարում: Ես լավ էի հասկանում, որ կղզին շրջապատող, նրան կալ մեջ առնող այդ հոսանքները մի որև է կետում պիտի իրար հետ միանան և այդ կետից ոչ մի նավակ անպատիժ չէր կարող անց կենալ: Թեկուզ իմ նավակը շուռ չգար ու անվնաս մնար, դարձյալ ես փրկված չէի լինիլ: Ջրի հոսանքն ինձ կքշեր ափերից շատ հեռու, դեպի ովկիանոսի խորքը: Ես սովից պիտի մեռնեի: Այ թե ինչ էր ինձ սպասում: Ես մեծ վտանգի առաջ էի կանգնած: Իմ ունեցած ուտելու պաշարը շատ-շատ մի քանի օր դիմանար: Նրանից հետո ինչ՞ անեի, ի՞նչպես շարունակեի ճանապարհը:

Դժվար է նկարագրել իմ հոգեկան զարհուրելի դրությունը, երբ տեսա, որ հեռանում եմ իմ սիրելի կղզուց (իսկապես «սիրելի» էր այդ րոպեին): Արագությամբ հեռանում էի ափերից դեպի ծովի խորքը և ես հազիվ էի նկատում կղզու գծագրությունը: Դարձյալ հույսս չէի կտրել: Ուժերս հավաքած՝ ուժգին թիավարում էի, որ նավակիս ընթացքը դեպի հյուսիս ուղղեմ, դեպի ջրապտույտի կողմը: Բայց իզուր վատնեցի ուժերս. հոսանքն անպարտելի էր:

Մեկ էլ ահա կեսօրին մի թեթև քամի փչեց հարավ-արևելյան կողմից: Այդ ինձ մի քիչ սիրտ տվեց, քաջալերեց, որովհետև նպաստավոր քամի էր: Կես ժամից հետո քամին սաստկացավ և ինձ է՛լ ավելի ուրախացրեց: Ես կայմը կանգնեցրի նավակի վրա, առագաստը

պարզեցի և նավակը դեպի հյուսիս ուղղելով՝ աշխատեցի հոսանքից դուրս բերել բարենպաստ քամու օգնությամբ: Լավ էր, որ երկինքը պարզ էր, կարողանում էի երկրի կողմերը որոշել: Հետս կողմնացույց չէի վերցրել:

Շուտով նշմարեցի, որ պղտոր հոսանքը պարզվում, թափանցիկ է դառնում: Այդ նշան էր, որ հոսանքի թափն ընկնում է, ընթացքը դանդաղում: Եվ իսկապես, այդպես էլ եղավ: Մի քանի րոպեից հետո նավակը չափազանց դանդաղ գնաց: Շուտով ինձանից մի կես մղոն հեռավորության վրա մի քանի նոր ժայռեր տեսա, որոնց շուրջը եփում-եռում էր ծովը: Հոսանքն այդ ժայռից երկու մասի էր բաժանվում: Մեծ հոսանքը սլանում էր դեպի արևելք, թողնելով ժայռերը հյուսիս-արևելյան կողմում, իսկ մյուս՝ համեմատաբար փոքր հոսանքը մի զարհուրելի ջրապտույտ կազմած՝ աներևակայելի արագությամբ, կարծես թևավորված, թռչում էր դեպի հյուսիս-արևմուտք:

Թե ինչ հոգեկան ապրումներ ունեցա, ինչ զգացի ես այն րոպեին, այդ միայն նրանք կհասկանան, որոնց ծանոթ է կախաղանի վրա անակնկալ ներում ստացած մարդու, կամ ավազակների դանակի տակից ազատվողի զգացմունքները:

Սիրտս մի անսահման, աննկարագրելի ուրախությամբ լցվեց, երբ տեսա դեպի հյուսիս սլացող այս հոսանքը: Նպաստավոր քամու և այդ հոսանքի շնորհիվ նավակս ետ գնաց դեպի կղզին: Վերջապես, ես կրկին տեսա իմ կղզու ափերը, երբ հավատացած էի, որ ընդմիշտ կզրկվեմ իմ ձեռակերտ ապաստանից:

Շուտով ես ափ հասա: Վոտք դնելով ցամաքի վրա՝ ուժերս վերականգնեցի մոտս եղած պաշարով, հետո նավակը թողնելով փոքրիկ ջրածոցում, ափի ծառերի տակ խորը քնեցի:

ԽԵՂՃ ՌՈԲԻՆԶՈՆ, Վ՞ՈՐՏԵՂ ԵՍ ԴՈՒ

Քնիցս զարթնելով, ուղևորվեցի դեպի արևմուտք, նավակիս համար տեղ փնտրելու, թողի նրան այնտեղ,

Ինքս գնացի դեպի իմ յերկրորդ բնակարանը, վորին «ամարանոց» եյի անվանում: Ամարանոց հասա արևը մտնելուց առաջ, յերեկոյան դեմ: Թեև հոգնած եյի, բայց ուրախ սրտով եյի գնում: Իմ հովարանում ամեն ինչ իր տեղն եր, վոչ մի բան վնասված չեր: Մտա ծածկույթի տակ, պառկեցի ծառերի ստվերում և մի լավ քնից: Կարելի յե յերևակայել, թե յես ինչքան զարմացա, յերբ զարթնեցի այն ձայնից, վորը զանազան յեղանակներով շարունակ կանչում եր ինձ. «Ռոբինզոն, Ռոբին, Ռոբին,—Կրուզո: Խեղճ Ռոբին Կրուզո, վո՞րտեղ ես դու: Ո՞ւր գնացիր, ո՞ւր մնացիր, Ռոբին—Կրուզո»: Շատ հոգնած եյի, չեյի կարող միանգամից սթափվել, զարթնել, թեև լսում եյի քնիս միջից ինձ կանչող ձայնը: Վախեցած և շփոթված խորհրդավոր ձայնից, վոր անդադար կրկնում եր. «Ռոբին-Կրուզո, Ռոբին-Կրուզո, խեղճ Ռոբին-Կրուզո, վո՞ր տեղ ես դու», վերջապես աչքերս բացի: Արդեն լույս եր: Ցանկապատի վրա նստած եր իմ թութակը—Պոլը և նայում եր ինձ վրա իր մեծ կլոր աչքերով:

Յես պառկած տեղիցս վերկացա, մոտեցա ցանկապատին, գուրգուրանքով անունը տվի և ձեռքս մեկնեցի: Խելացի թռչունն յեկավ, իր սովորության համեմատ նստեց մեծ մատիս վրա, գլուխը դրեց այտիս և աչքերիս մեջ նայելով, շարունակեց. «Խեղճ Ռոբինզոն Կրուզո, վո՞րտեղ եյիր դու, ինչպե՞ս ընկար այստեղ»: Նկատելի յեր, վոր Պոլն ինձ կարոտել եր և տեսնել եր ուզում: Այդ բառերը նա ինձանից եր լսել շատ, շատ անգամ: Այդպես եյի արտահայտվում յես հուսահատության ժամանակ:

Ծովային ճանապարհորդությունս այնքան անհաջող գնաց, վոր այն վերսկսելու սիրտ չմնաց: Յես թութակիս հետ վերադարձա իմ «գլխավոր տունը» և նոր յեռանդով կպա գործի: Յես ինձ նվիրեցի ավելի շուտ տնտեսական զբաղմունքների:

Համարյա թե մի տարի յել անցավ: Յես շարունակում եյի իմ աշխատանքները: Զնայած, վոր բազմաթիվ գործիքներ պակասում եյին, բայց յես լավ հյուսն, լավ բրուտ դարձա: Այնքան հմուտ բրուտ եյի, վոր անսպա—

սելի կերպով մի անիվ հնարեցի, վորի ոգնությամբ իմ ձևած ամաններին կլոր ու բավական համաչափ, կանոնավոր ձև եյի տալիս:

Գյուտերիցս վոչ մեկն ինձ այնքան չեր ուրախացրել, վորքան ուրախացրեց ծխամորճի գյուտը: Յես այդ գյուտով շատ եյի պարծենում, համարելով «գլուխ

Ցերեկում եր, վոր իմ Պոլն ինձ կարոտել եր

գործոց»: Մի շարք անհաջող փորձեր կատարելուց հետո յես կարողացա մի ծխամորճ շինել: Բոլոր ամանների նման ծխամորճն ել կավից եր: Գեղեցիկ չեր, կոպիտ, անձոռնի ձև ուներ, բայց շատ ամուր եր և ծխելու համար միանգամայն պետքական:

Սարսափն ինձ բռնեց, յերբ տեսա, վոր վառոդս պակասելու յե: Ի՞նչով եյի փոխարինելու այդ կորուստը: Այդ խնդիրն ինձ լուրջ մտածմունքի մեջ գցեց. ինչպե՞ս վորս անեյի, յերբ ռազմամթերքը վերջանար... Ունեյի միայն մի հատիկ այծ, վորին դեռ փոքրուց, ուլիկ ժամանակն եյի բռնել, կերակրել, մեծաց—

ցել և ընտանի դարձրել: Բայց նրա համար ընկեր չկարողացա բռնել: Նա հիվանդացավ և աչքերն ընդմիշտ փակեց:

Կղզի գալուս տասներորդ տարվա ընթացքում ինձ հաջողվեց յերկու ջահել եզ, մի արու այծ բռնել: Յես նրանց մեկ-մեկ հանեցի այն փոսից, վորտեղ թակարդ եյի դրել: Վզերը թոկ դրի և մի կերպ մեծ դժվարությամբ, տուն բերի: Սկզբում փոքրիկ կենդանիները կեր չեյին ուզում ընդունել, բայց հետո տվածս հացահատիկներով այնքան հրապուրվեցին, վոր սկսեցին ախորժակով ուտել և հետզհետե ընտելանալ, ընտանի դառնալ: Այս կարևոր հանգամանքն ինձ հուսադրեց. վոր մսեղենի պակասություն չեմ ունենա նույնիսկ այն դեպքում, յերբ վառոդն ու արճիճը բոլորովին սպառվեն, վորովհետև կկարողանայի մի ամբողջ այծի հոտ առաջացնել, այն ել ընտանի:

Բայց այստեղ մի ուրիշ կարևոր հանգամանք ել կար: Ինձ այնպես եր թվում, վոր յեթե ընտելացրած այծերին վայրենիներից չանջատեմ, ապա առաջինները նորից կվայրենանան և տանից կփախչեն: Այդ բանից խուսափելու համար յես միջոց պիտի գտնեյի. պիտի մի հարմար տեղ ընտրեյի, այդ տեղը ցանկապատեյի և այնպես անեյի, վոր վոչ իմ այծերը կարողանային ցանկապատից դուրս գնալ, վոչ ել վայրենի այծերը ներս գալ:

Յես մի լավ հողամաս գտա, վորտեղ մի հիանալի արոտատեղ կար, ջուրը մաքուր, ծառերը շատ, վորոնք ստվեր, հով ու զով եյին տալիս: Յես վորոշեցի ցանկապատել մի այնպիսի տարածություն, վորի յերկարությունը լինի հարյուր հիսուն վոտնաչափ, իսկ լայնությունը՝ հարյուր: Այդքանն առայժմ լիովին բավական եր, իսկ հետագայում, յեթե կարիք լիներ, կլայնացնեյի ցանկապատը:

Առաջին ցանկապատը յես շինեցի յերեք ամսվա ընթացքում: Ցանկապատի վրա աշխատելիս այծերը շուրջս արածում եյին: Նրանց վոտներից թոկ եյի կապում, վոր ինձնից չհեռանան, մինչև վոր ընտելանան:

Իմ ձեռքով եյի կերակրում նրանց, հրամցնելով

գարու և բրնձի հասկեր: Փոքրիկ կենդանիներն այնպես շուտով սովորեցին ինձ, վոր ել կարիք չկար նրանց վոտներից թոկ կապել: Նրանք ամեն տեղ վազում եյին յետևիցս և մկմկալով կեր խնդրում:

Աշխատանքներս ապարդյուն չանցան: Տարի ու կեսից հետո իմ հոտի մեջ արդեն տասներկու այծ ունեյի: Ելի ևս յերկու տարի, նրանց թիվը հասավ քառասուն յերեքի՝ չհաշված արդեն մորթածներս:

Յես նորից ցանկապատեցի հինգ փոքրիկ հողամաս: Բոլորն ել ջոկ-ջոկ դուռ ունեյին մի արոտից մյուսն անցնելու համար:

Այդ այն նպատակով եյի արել, վոր կարողանամ հոտս մի արոտից մյուս արոտը տանել: Այծերս չվայրենանալու համար՝ յես նրանց մի վորոշ սահմանափակ տարածության վրա եյի պահում:

Ամեն մի այծ որական մեկից մինչև յերկու աման կաթ եր տալիս: Առաջ յես յերբեք վոչ կով եյի կթել, վոչ վոչխար և այծ և չեյի տեսել, թե պանիրն ու յուղն ինչպես են շինում: Բայց կարիքն ինձ ստիպեց այս ել, այն ել սովորել և կաթնատնտեսություն ստեղծել: Ճիշտ ե, սկզբում իզուր տեղը շատ կաթ փչացրի, բայց հետո կարգին յուղ եյի պատրաստում և համով պանիր:

ՌՈԲԻՆԶՈՆՆ ԻՐ ԸՆՏԱՆԵԿԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ

Ամենալուրջ և խստադեմ մարդն անգամ կծիծաղեր, տեսնելով այն պատկերը, վոր ներկայացնում եյի յես իմ ընտանիքի հետ միասին ճաշելիս: Հավատարիմ շունս նստում եր աթոռին, իմ աջ կողմը: Նա արդեն ծերացել եր ու թուլացել: Իմ առջև սեղանի ծայրերին տեղավորվում եյին յերկու կատուն, դնչերը մեկնած իմ ձեռքից ուտելիք սպասում. Նրանք նավից բերածս ազնվացեղ կատուների ժառանգն եյին: Ինձ հետ խոսողը միայն իմ Պոլն եր, իմ սիրելին:

Յեթե մեկն Անգլիայում ինձ պես հագնված մարդու պատահեր, համոզված եմ, վոր նախ կսարսափեր, ինչպես ասում են, սիրտը փորը կընկներ, իսկ հետո այնքան կծիծաղեր, վոր ծիծաղից կթուլանար, դե-

ռին կրնկներ: Ես էլ հայելու կամ թափանցիկ ջրի մեջ նայելիս՝ ծիծաղս չէյի կարողանում պահել:

Գլխիս մի ահագին, բարձր փափախ կար, այծի մորթուց: Ետևի կողմից փափախին կարել էյի մի յերկար, լայն շերտ մորթի, վորը հասնում եր մինչև ոձիքս, պաշտպանում վիզս արևից ու անձրևից: Հագիս կար նույնպես այծի մորթուց կարած մի կարճ կուրտիկ և մի անդրավարտիկ, վոր հասնում եր մինչև ծնկներս, իսկ նրա մազերը ծածկում եյին սրունքներս: Թե կուրտիկի, թե անդրավարտիկի բուրդը դրսի կողմն եր: Այդ

Ես իմ փոքրիկ ընտանիքիս հետ ճաշի ժամանակ:

մազոտ, բրդոտ շորերով շատ նման եյի փրչոտ արջի: Գուլպա ու կոշիկ չունեյի: Կոշիկների փոխարեն մի ինչ վոր բան եյի հագնում, վորին չգիտեմ ինչ անուն տամ: Այդ վոտնաման կոչվածները նմանում եյին հնադարյան կիսակոշիկների, անճոռի, անձև: Բայց պետք ե ասեմ, վոր շատ պինդ եյին և ման գալու համար շատ հարմար:

Կոշիկ կարելու թել չունեյի, վոտնամաններս բարակ թոկերով եյի կարում: Գոտիս նույնպես այծի մորթուց եր: Գոտուս յերկու ծայրին մի մի կաշվե բարակ փոկ եյի արել կոճակների փոխարեն: Գոտիս եյի խրում կացինն ու սղոցը, ուսիցս կախում եյի մի պինդ կաշվե փոկ, յերկու տոպրակով: Մի տոպրակում վառոդ, մյուսում գնդակ և մանրագնդակ: Բացի այդ, մեջքիս կրում եյի մի կողով և հրացանս, ձեռքիս այծի մորթուց մազը դուրս հովանոցս:

Սկզբում յես մորուք թողի, բայց հետո խուզեցի: Բեղերիս ձեռք չտվի, թողի վոր յերկարեն, բայց ծայրերն ամեն որ խնամքով սրում եյի: Վերջը բեղերս

Բարձր փափախը զարդարում եր գլուխս:

այնքան յերկարեցին ու խտացան, վոր յեթե անգլիացի յերեխաները տեսնեյին, սարսափից սրտաճաք կլինեյին:

Իմ նավակն ամբողջ ժամանակ տանից հեռու մնաց: Ես սիրտ չեյի անում տուն բերելու այն, վորովհետև նոր ճանապարհորդություն պիտի կատարեյի հոսանքին հակառակ: Վերջապես, յես վորոշեցի հակառակ ափը հետազոտել և պարզել, թե արդյոք չի՞ կարելի հասնել մյուս ափը՝ չյենթարկելով ինձ նոր վտանգների:

Մի անգամ էլ վերադառնում եմ բնակարանիս կարճ նկարագրին:

Կրկնում, ինչպես արդեն ասել եմ, յես ունեյի յերկու կալվածք: Առաջինը մի փոքրիկ ամրոց եր, մի վրան՝ ապառաժի ստորոտում կառուցված: Վրանի յետևում կար քարայր, յերկու մասի բաժանված: Քարայրից մի նեղ անցք եր գնում, վորը շատ հեռու չեր ծովից:

Բնակարանիս շուրջը դտնված ցանկապատի ձողերն աճել ու դարձել եյին մեծ ծառեր, վորոնք այնքան բազմաճյուղ ու խիտ եյին, վոր բնակարանը բոլորովին ծածկում եյին աչքից:

Ցանկապատից քիչ հեռու, տափարակի վրա ունեյի յերկու արտ, վոր շատ մշակում եյի ու առատ հունձ ստանում: Հարկավորված ժամանակ յես կարող եյի արտերն ընդարձակել, վորովհետև շուրջն ուրիշ լայն դաշտեր կային:

Բացի այդ գլխավոր կալվածքից, կղզու խորքում ունեյի պլանտացիայի տնկարանի նման մի բան, մի փայտաշեն դաստակերտ, վորտեղ կար գեղեցիկ ագարակ և հովարան, նույնպես ցանկապատված: Այդ հովարանին «ամարանոց» անուն եյի տալիս: Այնտեղ տարվա շոգերի ժամանակ կարելի յեր ապրել: Ամարանոցս շատ պատշաճ դրության մեջ եյի պահում: Դուրս գալիս յերբեք չեյի մոռանում սանդուղքը վերցնել, ցանկապատի ներսը դնել: Այդտեղի ծառերն էլ լայնքին ու յերկանքին եյին տվել, շարունակ աճում եյին: Յես ծառերի ճյուղերը կտրատում, ջնջում եյի, վոր չլինի թե խիտ անտառ դառնան և բնակարանս բոլորովին ծածկեն: Տախտակաշեն հովարանումս դտնվում եր մի շարժական անկողին այծերի մորթուց և ուրիշ փափուկ նյութերից: Ներքնակի վրա փռել եյի նավից բերված տավանը, վորի վրայից վերմակ եյի գցում:

Ամարանոցիս կից եյին այծերի ցանկապատ դոմերը: Վորքա՞ն աշխատանք եյի գործադրել այդ ցանկապատերի կառուցման վրա, միայն յես գիտեմ: Վորպեսզի այծերը չկարողանան ցանկապատը պատռել ու դուրս գալ, յես ձողերն իրար շատ մոտ եյի տնկել, այնպես վոր

արանքներից ձեռք չեր անցնում: Առաջին անձրևներից հետո այդ ծառաձողերը խոր արմատ գցեցին և սկսեցին այնպես աճել, վոր շատ ժամանակ չանցած՝ այծերի դոմերի շուրջը կազմվեց մի միապաղաղ, կանաչ, կենդանի պարիսպ: Յես ծույլ չեյի, տնտեսությունս կարգավորելու համար աշխատանք չեյի խնայում:

Այստեղ եյին և իմ խաղողի այգիները: Այդ այգիներից եյի ստանում ամբողջ ձմեռվա քիշմիշի պաշարը, մի համեղ, սննդարար և առողջարար ուտելիք:

Յերբ իմ գլխավոր բնակարանից գնում եյի դեպի նավակս, կես ճանապարհին կանգ եյի առնում ամարանոցումս հանգստանալու համար: Հետո նոր գնում եյի նավակիս կանգնած տեղը: Յես միշտ սարքի եյի պահում նավակս և հաճախ զբոսնում եյի ծովում, միայն թե շատ չեյի հեռանում: Յես վախում եյի, վո՞յ թե անդունդ հոսանքն ու խելառ քամին քշեն, տանեն ինձ ափերից հեռու, ովկիանոսի խորքը:

ՀԵՏՔԸ

Այստեղ հարկավոր է նկարագրել այն դեպքը, վոր ինձ վրա շատ խիստ տպավորություն թողեց:

Մի անգամ, կեսօրից հետո, մոտենալով նավակիս, ավազի վրա դրոշմված տեսա պարզ, վորոշակի բոբիկ մարդու վոտների հետք: Սարսափս ու զարմանքս պատմել չի լինում: Կայծակնահարի նման տեղս մեխվեցի, կանգ առա, ու սկսեցի ականջ դնել, դիտել շուրջս: Սպասում եյի, թե ուր է, ուր չէ, կերևա այն մարդը, վորը հեռու չպիտի լինի այստեղից: Հետո ուշքի գալով, բարձրացա բլուրի գագաթը, դիտեցի չորս կողմս, նորից իջա դեպի ծովափը, բայց մարդկային վոչ մի ձայն, վոչ մի ծպտուն, վոչ վոք չկար: Նորից մոտեցա այնտեղ, վորտեղ հետք եյի տեսել: Նորից մանրամասն դիտեցի հետքը, ստուգելու համար՝ արդյոք չեմ սխալված: Մի գուցե գազանի հետքը մարդու հետքի տեղ ընդունած լինեմ: Բայց վոչ, կասկած չկար, վոր իմ տեսածը մարդու վոտքի հետքեր եյին: Պարզ յերևում եր, վոր բոլորը— թաթը, կրունկը, մատները մարդու յեն: Բայց վորտե-

ղից եր հետքը դրոշմվել ավազի վրա, յես այդ չեյի ըմբռնում:

Հազարավոր մտքեր անցան գլխովս: Քիչ եր մնում բանականությունս կորցնեմ: Կատարյալ շփոթված՝ յես թողի-փախա դեպի ամրոց: Համարյա ամեն մի քայլափոխում կանգնում ու յետ եյի նայում: Ամեն մի քար, թե ծառի կոճղ մարդու տեղ եյի ընդունում և նրանցից սարսափում: Ամեն տեղ աչքիս յերևում եյին մարդկային կերպարանքներ, վորոնց իմ վառված յերևակայությունն եր ստեղծել:

Ամբողջ գիշերն աչք չփակեցի: Այնպես եյի զգում, թե մի խումբ թշնամիներ յետևիցս ընկած, ինձ հալածում են, թե ամեն մի րոպե ինձ մահ ե սպառնում: Ամբողջ յերեք որ փակված մնացի, քարայրից դուրս չեկա: Միայն չորրորդ օրը ցանկապատից դուրս ծլկատեցի և ամենից առաջ ինձ տանջող քաղցը հագեցրի: Հետո այծերիս հիշեցի, վորոնց յերեսը յերեք որ եր, չեյի տեսել, թեև դրանից առաջ ամեն իրիկուն կթում եյի նրանց: Իմ այս անկարգապահությունը շատ վատ ազդեց այծերիս վրա: Ծառերը հիվանդացան և կաթն ել քաշվեց:

Այցելեցի այծանոցս և վորոշեցի ուղևորվել այն տեղը, վորտեղ ինձ վախեցնող վոտքի հետքն եյի տեսել, վորպեսզի համեմատեմ իմ վոտքի հետ: Առաջ շարժվեցի մեծ զգուշությամբ՝ դիտելով, ունկնդրելով, ամեն մի թուփ: Տեղ հասնելով՝ յես իսկույն չափեցի հետքը և համեմատեցի իմ վոտքի հետ: Գտա, վոր ավազի վրայինը շատ նեղ ե: Աննկարագրելի սարսափը նորից տիրեց ինձ, մտքերս իրար խառնվեցին, յես սաստիկ հուզվեցի: Կախս բռնեց, յես դնդըր-դնդըր դողացի: Ճարս կտրած՝ յես տուն վերադարձա, այն համոզմունքով, վոր մարդիկ են յեկել այդ ափը, կամ թե կղզում դեռ ինձ համար անհայտ մարդաբնակ մի անկյուն կա: Ինձ վախեցնում եր այն միտքը, թե ամեն րոպե յես կարող եմ հարձակման յենթարկվել, թե ինձ հանկարծակի կարող են բռնել:

Քնեցի միայն առավոտյան դեմ, բոլորովին ջարդված, բայց յերբ զարթնեցի, ավելի լավ զգացի ինձ:

Այժմ յես սկսեցի ավելի հանգիստ, ավելի սառնասիրտ կերպով քննության առնել իմ դրության լրջությունը և մտածեցի, թե ինչ միջոցների ձեռնարկեմ պաշտպանության համար: Իմ այսքան գեղեցիկ, այսքան պտղավետ

Յես ավազի վրա մարդու վոտքի հետք տեսա պարզ դրոշմած:

կղզին պիտի վոր հեռու չլիներ հավանորեն մարդաբնակ յերկրից:

Ուրեմն այստեղ զարմանալի բան չկա, յեթե հարևանները յերբեմն այցելեն այս կղզին: Վայրենիները գալիս են այստեղ ինչ-ինչ նպատակներով, յերբեմն ել փոթորիկն ե նրանց այստեղ գցում: Թեպետ տասնհինգ տարվա ընթացքում վոչ մի մարդ եակ այս կղզին վոտք չեր դրել: Յես սկսեցի ինքնապաշտպանության նոր մի-

ИНСТИТУТ ВОСТОКОВЕДЕНИЯ Академии Наук СССР

ջոցներ ձեռք առնել: Շատ ափսոսացի, վոր քարայրն այնքան խորն եմ փորել և միջովն անցք բացել դաշտ դուրս գալու համար: Ապագա կյանքս ապահովելու խնդիրն եր դրված:

Ուրիշ միջոց չկար: Ցես վորոշեցի առաջին ցանկապատի շուրջը քաշել յերկրորդը, ճիշտ այնտեղ, վորտեղ տասներկու տարի առաջ տնկել եյի յերկու շարք ծառեր, վորոնք այնքան խիտ աճել եյին: Այդ ծառերն իրար շատ մոտ եյին: Ցեթե նրանց արանքներում մի շարք սյուներ թաղեյի, պատնեշը պատրաստ կլիներ: Ցես գործն սկսեցի ու շուտով գլուխ բերի: Ձողերը տաշեցի ու գետնի մեջ տնկեցի: Հետո նոր պատնեշն ամրացրի գերաններով, հին հաստ պարաններով և վերջապես, ինչով վոր կարելի յեր: Նրա հաստությունը հասցրի մինչև տասը վոտնաչափ: Քարայրը փորում եյի ու հողը ներսի կողմից պատնեշին տալիս և պնդացնում վոտով: Այդ պարսպի մեջ թողի յոթը հատ փոքրիկ անցք: Յուրաքանչյուրի մեջ դրի մի-մի հրացան, վորոնք կարող եյին միանգամից կրակ թափել, ինչպես թնդանոթը: Այդ աշխատանքը մի քանի ամիս տևեց: Միայն այն ժամանակ հանգստացա, յերբ այդ ամրության կառուցումը բոլորովին ավարտեցի: Ամբողջ ամրությունը ծածկելու համար յես այդ պարսպի մոտ տնկիներ շարեցի, քսան հազարի հասավ շարածս տնկիների թիվը: Մի քանի տարուց հետո մի այնպիսի խիտ ու խոր անտառ գոյացավ, վոր նրա միջով անցնելը շատ դժվար եր: Վոչվոք մտքից չեր անցկացնի, թե այդ խիտ անտառի յետևում մի բնակարան գոյություն ունի: Մի յերկրորդ սանդուխք ել կառուցեցի դրսի աշխարհի հետ հաղորդակցություն պահպանելու համար: Առաջին սանդուխքներով բարձրանում եյի մինչև ժայռի ցածի մասը, իսկ յերկրորդից անցնում եյի պարիսպը: Հետո յերկու սանդուխքն ել վերցնելով, ներս եյի տանում: Այդպիսով իմ բնակարանը բոլորովին անմատչելի յեր դարձել, ներս մտնելն անկարելի յեր:

Այդ աշխատանքների մեջ յես բոլորովին չեյի մոռանում իմ մյուս կարևոր գործերը, մանավանդ իմ կաթնատու այծերին: Ցես շատ եյի մտածում, հետո ել վա-

խում, թե չլինի ներս մտնեն ու թալանեն, տանեն իմ այծերի հոտը: Փորձից գիտեյի, թե ինչքան դժվար կլինի նորից մի այդպիսի հոտ ունենալ:

Հոտս ապագան ապահովելու համար վճռեցի փոքրիկ գոմեր շինել, մեկը մյուսից մի վորոշ հեռավորության վրա և յուրաքանչյուրի մեջ պահել հինգ թե վեց այծ: Հանկարծակի հարձակման և թալանի ժամանակ մի յերկու գոմ կարող եյին ազատվել ավազակներից:

Մի քանի օր շարունակ շրջեցի այս ու այն կողմ, վերջը գտա մի առանձնացած, անմատչելի տեղ, վորից լավը չեր լինի: Ամեն կողմից տեղն ինձ շատ հարմար թվաց: Այս մի զով հովիտ եր, չորս կողմից շրջապատված խիտ ծառերով, կարծես թե բնությունը դիտմամբ ցանկապատել եր այդ հովիտը: Անմիջապես սկսեցի տեղ պատրաստել այդ հովտում և մի ամսից հետո արդեն այնտեղ եյի պահում տասը կթան և յերկու արու այծ: Ժամանակի ընթացքում յերկու գոմ ել շինեցի:

Անցքերի մեջ դրի յոթ հրացան:

Այդ բոլոր չարչարանքներիս և քաշած նեղությունների բուն, իսկական պատճառն այն վոտքի հետքն եր, վոր տեսել եյի ավազի վրա և վորից այնքան սարսափում եյի:

ՍԱՐՍԱՓԵԼԻ ԳՅՈՒՏ

Բայց ահա մի անգամ յես մի նոր գյուտ արի: Իմ կղզին շրջելիս յես գնացի շատ հեռու, դեպի արևելյան կողմը: Այստեղ, ափին նստած, նայում եյի դեպի ծովը: Հանկարծ ինձ այնպես թվաց, թե հեռվում նավակ է յերևում: Թեև յես նավից յերկու յերեք հեռադիտակ եյի բերել, բայց հիմա վոչ մեկը մոտս չեր: Վորքան ել տեսողությունս լարեցի, դարձյալ չկարողացա վորոշել, թե ինչ եր ծովում յերևացողը, նավա՞կ, թե՞ մի ուրիշ բան: Ինձ հետաքրքրող առարկան շուտով աչքից կորավ:

Հետո գնալով, հասնելով կղզու ծայրը, վորտեղ առաջին անգամն եր վոտ դնելս, յես միանգամայն ապշած մնացի: Յես տեսա, վոր մարդու վոտքի հետքերն այստեղ այնքան ել հազվագյուտ չեն: Շուտով յես իմացա, վոր վայրենիները հեռվից յերևացող յերկրից գալիս են այդ ափը, հանդես, խրախճանք սարքում և ուտում հետները բերած պատերազմական գերիներին:

Աչքիս առաջ պատկերացավ մի ապշեցուցիչ, ինձ համար բոլորովին անսպասելի տեսարան: Ամբողջ ափը ծածկված եր մարդկային գանգերով, կմախքներով, ձեռների, վոտների վոսկորներով: Գետնի մեջ մի շրջան եր փորած: Այդ շրջանի կենտրոնում յերևում եյին խարույկի մնացորդներ, իսկ խարույկի շուրջը բարձրանում եյին ճմբերից և հողից պատրաստած թմբեր՝ նստարանների համար: Այս հողե նստարանների վրա յերևի բազմում եյին մարդակերներն իրենց զարհուրելի հացկերույթի ժամանակ: Յես արդեն վաղուց լսել եյի մարդակերների գոյության մասին, բայց այն, ինչ վոր յես տեսա, կայծակի պես խփեց ինձ, չշմեցրեց–թողեց: Մի սառն դող անցավ ամբողջ մարմնովս, մազերս բիզբիզ կանգնեցին: Ուշքի գալով, յես շտապ թողի հեռացա այդ զարհուրելի տեղից և քայլերս ուղղեցի դեպի տուն:

Նորից ինձ համար սկսվեց վախի, սարսափի շրջանը, վոր թույլ չեր տալիս ինձ հանգիստ ապրելու և աշխատելու: Բայց ժամանակը հետզհետե ցրեց իմ մռայլ մտքերը և կրկին հասեց նախկին հանգիստ և հաշտ

կյանքը: Սակայն այժմ տնից դուրս գալիս ավելի նախազգուշական միջոցներ եյի ձեռք առնում: Այլևս հրացան չեյի արձակում, վորպեսզի վայրենիների ուշադրությունը գրաված չլինեմ: Բնականաբար հրաձգու-

Յես ապշեցի անսպասելի տեսարանից:

թյան այնքան ել կարիք չկար: Յես այծերի հոտն ունեյի, մսի պակասություն վոր չեյի զգում: Վայրենի այծեր յես վորսում եյի դարանների ու թակարդների օգնությամբ: Յերկու տարվա ընթացքում մի անգամ ել հրացան չարձակեցի, բայց վոչ մի անգամ առանց

հրացանի տնից դուրս չեյի գալիս: Հրացանից բացի, յես ինձ վրա կրում եյի նավից բերածս յերկու ատրճանակը, սրած մեծ դանակ և անպատյան թուր, վոր կախում եյի կողքիցս: Իմ փրչոտ հագուստով, մինչև ատամներս զինված, յես մի ահռելի պատկեր եյի, ուղղակի տեսիլք:

Պետք է ճիշտ ասել, յեթե չլիներ վայրենիների ձեռքն ընկնելու յերկյուղը և մշտական անհանգստության ճնշումի տակ վարածս կյանքը, յես չեյի կրճատի աշխատանքներիս մեծ մասը, այլև կաշխատեյի դրությունս ավելի բարվոքել: Հիմա յես մտածում եյի վոչ թե կյանքի նոր հարմարությունների մասին, այլ հենց այդ կյանքի պաշտպանության մասին: Վայրենիների ուշադրությունը չգրավելու համար յես վոչ թե միայն սիրտ չեյի անում մի մեխ խփելու, այլև ծառ չեյի կտրում, հրացան չեյի արձակում: Կրակ անելիս յես յերկյուղ եյի կրում, չլինի թե բարձրացող ծուխը, վոր ցերեկը հեռվից լավ է տեսնվում, մատնի վայրենիներին իմ ներկայությունը: Այդ պատճառով գլխավոր բնակատեղում խարույկ չեյի վառում: Կավե ամանները թրծում եյի յերկրորդ բնակարանումս, անտառի մեջ: Այնտեղ, միառժամանակ անց, նոր գյուտ արի, վորը չափազանց ուրախացրեց ինձ: Յես մի բնական այր գտա և հավատացած եյի, վոր վոչ մի վայրենի, պատահմամբ տեսնելով այդ այրը, յերբեք չի համարձակվի այնտեղ մտնել:

ՔԱՐԱՅՐԸ

Քարայրի անցքը գտնվում եր մի ահագին ժայռի ստորոտում: Յես այստեղ կտրտում եյի ծառերի հաստ ճյուղերը՝ ածուխ պատրաստելու համար: Ածուխ պատրաստելը դարձյալ վայրենիների վախից եր: Յես ասել եմ, վոր բնակարանումս կրակ չեյի վառում, վախենում եյի, վոր ծուխն ինձ չմատնի: Սակայն չեյի կարող ապրել առանց հաց թխելու, առանց միս յեփելու կամ տապակելու, խորովելու: Յեվ ահա վորոշեցի փայտերն այրել անտառում խամ հողի տակ, ինչպես այդ անում են Անգլիայում, և յերբ նրանք լավ կվառ-

վեն և կածխանան, հանգցնել ու ածուխը պահել: Այդ կերպ ստացածս ածուխը կրում եյի տուն և նրա կրակով ինչ ուզում եյի, այն էլ պատրաստում եյի: Իսկ ածուխի կրակը ծուխ չի բարձրացնում: Յեվ այդպես, մի գեղեցիկ որ, յես յերբ անտառում ճյուղեր եյի կտրատում, հանկարծ ժայռի մեջ մի փոս նկատեցի: Վորոշեցի պարզել, թե այդ ինչ բան է: Մոտեցա, տեսնեմ, վոր քարայրի մուտքն է, ծածկված փշերով և մացառներով: Մեծ դժվարությամբ խիտ մացառուտի միջով մտա քարայրը և տեսա, վոր նա շատ լայն է, ինձ նման յերկու մարդ կարող եյին այնտեղ ազատ տեղավորվել: Պետք է խոստովանվեմ, վոր յես քարայրից շատ ավելի արագ դուրս յեկա, քան թե ներս մտնելիս եր, վորովհետև քարայրի խորքն ուշադրությամբ դիտելիս՝ յես զարհուրանքով նկատեցի մի զույգ խոշոր ու փայլուն աչքեր:

Այդ աչքերն ումն եյին, մա՞րդու, թե անասունի: Նրանք շիկացած ածուխների նման պսպղում եյին: Մի րոպե մտքով տարվեցի, բայց հետո ուշքի գալով, հանգստացա և յես ինձ հիմար անվանեցի, թե այստեղ ինչ կա վախենալու: Քսան տարի անմարդաբնակ կղզում մեն-մենակ ապրող մարդուն ինչը կարող է վախեցնել: Այդպես ինձ սիրտ տալով, քաջալերելով, ձեռքս առա մի վառ ածխակոթ և նորից ներս մտա քարայրը: Բայց մի յերեք քայլ անցնելուց հետո ավելի սարսափեցի, քան թե առաջին անգամ: Յես սկզբում լսեցի մի խոր հառաչանք, վոր կարծես թե մի ծանր հիվանդի սրտից եր գալիս, ապա անվորոշ, անհասկանալի հնչյուններ ու փնթփնթոց, կրկին հառաչանք ու հառաչանք: Զարհուրած՝ կանգնած տեղիցս վեր թռա, սառն քրտինքը յերեսովս տվեց, մազերս բիզ-բիզ կանգնեցին: Այդ րոպեյին յեթե գլխիս մեծ մորթե փափախի տեղ մի ուրիշ թեթև, սովորական գլխարկ լիներ, նա իր տեղում չեր մնալ, այլ գլխիցս կընկներ: Բայց դարձյալ յես ինձ հավաքելով, սիրտ տալով, գիտակցությանս դիմելով՝ ձեռքիս վառ ածխակոթը լապտերի պես բարձր բռնած ներս գնացի և տեսա իմ առաջ ընկած մի ահագին, մեծ այծ: Նա գետնին փռված՝ կռվում եր մահի դեմ: Յես

վոտքով հրեցի նրան, վոր դուրս գնա: Վորձ այծը փորձեց տեղից վեր կենալ, բայց նորից վայր ընկավ: Ինչպես յերևում եր, ծերությունից եր նա այդչափ թուլացել և ընկել գետնին: Յես էլ չանհանգստացրի ծեր

Մի ահագին ծեր այծ ընկած եր գետնին:

այծին: Հաշվեցի, վոր այդտեղ մնալն ավելի լավ է: Քանի դեռ կենդանի յէ, նա կարող է վայրենիներին էլ ինձ նման վախեցնել, յեթե նրանք պատահմամբ ներս մտնելու լինեն այս քարայրը:

Վերջապես յես ինձ հանգստացրի և սկսեցի ուշադրությամբ շուրջս դիտել: Առաջին հայացքից յերևաց, վոր քարայրը մարդու ձեռքով չի շինված, այլ բնության գործն է: Քարայրի խորքում նկատեցի

մի առանձին անցք, այնքան փոքր, վոր յես միայն չորեքթաթ ծնկաչոք կարող եյի այնտեղ մտնել: Վորտեղ եր վերջանում այդ անցքը և ինչպես, ինձ անհայտ եր առայժմս: Յեվ վորովհետև ձեռքիս ածխակոթի կրակը վերջանալու վրա յեր, յես քարայրի հետազոտությունը թողի հետևյալ որվան:

Հետևյալ որը վեց մոմ առած՝ յեկա քարայրը: Մոմերն իմ սեփական արհեստանոցից եյին: Այդ ժամանակ յես արդեն սովորել եյի այծի ճարպից մոմ թափել, իսկ պատրույգը պատրաստում եյի թելերից, հնոտիքից, կամ թե յեղինջանման բույսի մազի պես բարակ, նուրբ յերակներից: Այրի նեղ անցքը հասնելու համար հարկավոր եր մոտ տասը քայլ սողալ, թեև այդ շատ վտանգավոր եր, քանի վոր յես չգիտեյի, թե ուր է տանում անցքը և վորտեղ է վերջանում քարայրը: Չնայած դրան, յես համարձակ առաջ շարժվեցի, հաջողությամբ ա ցա ծակը և հայտնվեցի մի կամարի տակ, վոր քսան վոտնաչափ բարձրություն ուներ: Համարձակ կարող եմ ասել, վոր ամբողջ կղզում չկար մի այնպիսի սքանչելի տեսարան, վորպիսին բացվեց իմ ապշած աչքերի առաջ: Իմ ամեն մի ձեռքին յերկուսական վառված մոմ կար: Այդ մոմերի կրակը առաստաղի ու պատերի վրա արտացոլվեց բյուրավոր կայծերով: Ամբողջ քարայրը փայլում եր ու պեծին տալիս, ասես թե նրա կամարներն ու պատերը զանազան տեսակ գույնզգույն թանգագին քարերով զարդարված լինեյին: Անվիճելի փաստ եր, վոր այդ քարայրն իր գեղեցկությամբ առաջինն եր ամբողջ աշխարհում:

Կամարների ու առաստաղի յերեսը հղկած եր, իսկ հատակը ծածկված եր մանր, փափուկ ավազով: Վոչ մի խոնավություն. ամեն ինչ չոր եր ու գեղեցիկ: Չկային վոչ թունավոր միջատներ և վոչ թունավոր սողուններ, վորոնք առհասարակ մութ այրերի բնակիչներն են: Նրանց հետքն անգամ չեր նկատվում: Այդ այրի միակ վատ բանը մուտքի անհարմարությունն եր, բայց այդ ինձ համար առավելություն եր, լավ թագստի տեղ կարող եր ծառայել: Յես հիացած եյի իմ գյուտով, վորոշեցի անհապաղ տեղափոխել այդ թագստարանն

այն բոլոր բաները, վորոնց թաքցնելու կարիք կար: Որինակ՝ վառոդը, պահեստի զենքը, յերկու վորսորդական հրացան և յերեք մուշկետ: Ընդամենն ունեյին ութ հատ մուշկետ, վորոնց հինգը թողի ամրոցում, ցանկապատի վրա շարված, թշնամիներից պաշտպանվելու համար, ինչպես արդեն ասել եմ յես:

Վառոդը տեղափոխելիս՝ յես բաց արի և այն կիսատակառը, վորի մեջ վառոդը թրջվել եր: Ջուրը հասել եր վառոդին միայն յերկու–յերեք մատնաչափ, ու թրջված վառոդը չորանալով, մի տեսակ կեղև եր կազմել, վորի մեջ անվնաս պահված եր վառոդը, քանակով վաթսուն ֆունտից վոչ պակաս: Այդ ել ինձ համար մի շատ հաճելի գյուտ եր: Յես իմ գլխավոր ամրոցում միայն յերեք ֆունտ վառոդ թողի, մնացածը տեղափոխեցի այն նոր քարայրը: Ունեցածս արճիճն ել տարա այնտեղ և սկսեցի գնդակ հալել–ձուլել:

Յես այնպես եյի համոզված, այնպես եյի հավատացած, վոր այստեղ թաքնվելով, կարող եյի ազատ մնալ վայրենիների հալածանքից, թեկուզ նրանք մի քանի հարյուր հոգով միասին ընկնեյին իմ յետևից: Մենակ ինքս քաջությամբ կպաշտպանեյի քարայրիս նեղ մուտքը:

Քարայրը մտնելուս հենց հետևյալ որը ծերության ցավով բռնված այն հիվանդ այծը մահացավ քարայրի մուտքի մոտ: Յես նրան գերեզմանի արժանացրի: Նրա դիակը դուրս քաշեցի, տարա բացատ և այնտեղ մի խոր փոսի մեջ թաղեցի: Մտածում եյի՝ մեռնելիս ո՞վ ե ինձ հողին հանձնելու:

Անցնում եր իմ կղզիարնակ դառնալու քսանյերեքերորդ տարին, և յես այնպես սովորել, այնպես եյի ընտելացել այդտեղի իմ անապատական կյանքի ձև ու յեղանակին, վոր յեթե վայրենիների վախը չլիներ, յեթե հավատացած լինեյի, վոր նրանք մի որ հարձակում չեն գործի ու քարուքանդ չեն անի ունեցածս, յես սիրով ու հոժարությամբ կստորագրեյի ամբողջ կյանքս այստեղ անցկացնելու պայմանագիրը, կմնայի այստեղ մինչև կյանքիս այն րոպեն, յերբ մահը կհասներ ինձ այս քարայրում, ինչպես վրա հասավ այն ծերացած այծին:

Իմ հավատարիմ ընկեր և բարեկամ շունը տասնվեց տարի ինձ հետ անցրեց: Նրա մահվան պատճառը դարձյալ ծերությունն եր: Յես շատ ափսոսացի, բայց ինչ կարող եյի անել: Նրան ել հողին հանձնեցի:

Իմ բակում ապրում եյին յերեք ձեռնասուն այծիկ: Ձեռքով եյի նրանց կեր տալիս, այնքան վոր սիրում եյի: Բացի Պոլից, յերկու թութակ ել ունեյի, վորոնք թեև սովորել եյին անունս տալը, բայց վոչ այնպես պարզ ու վորոշ, ինչպես Պոլը, վորովհետև նրանց հետ շատ չեյի զբաղվում: Ձեռնասուն ծովային թռչուններ ել ունեյի, միայն անունները չգիտեյի: Յես ծովափին բռնեցի նրանց, թևերը քաշեցի ու պահում եյի ինձ մոտ:

Պատի յետևում թաղած ջահել տնկիներն աճել, բարձր ծառեր եյին դարձել և կազմել մի սովերախիտ անտառ, վորտեղ բնակվում եյին բազմատեսակ և բազմաթիվ մանր թռչուններ: Նրանք ինձ մեծ բավականություն եյին պատճառում իրենց փետուրների բազմապիսի գույներով և իրենց ուրախ յերգով:

Յեթե վայրենիները չլինեյին, դարձյալ կրկնում եմ, յես լիովին գոհ կմնայի կղզում անցկացրածս կյանքից: Յես այնպես եյի մտածում, վոր ընդմիշտ մնալու յեմ կղզում, բայց ճակատագիրն այլ կերպ եր տնորինել:

ՋԱՐԴՎԱԾ ՆԱՎԱԿԸ

Մայիսի 16–ին, ըստ իմ փայտե որացույցի, ամբողջ որը սարսափելի փոթորիկ եր, անընդհատ վորոտի ու կայծակի ուղեկցությամբ: Ավելի ու ավելի սաստկացող փոթորիկը շարունակվում եր և գիշերը: Յես չեյի կարողանում քնել, իմ դրության մասին եյի խորհում: Հանկարծ ծովի կողմից մեծ զարմանքով մի պայթյուն լսեցի, թնդանոթի ձայնի նման: Այդ անսպասելի ձայնն ի հարկե շատ ապշեցրեց, բայց միևնույն ժամանակ ել ուրախացրեց: Տեղիցս թռչելով, վազեցի դեպի սանդուխքը, դեմ արի ժայռին և վեր բարձրացա: Դարձյալ յերկու անգամ սանդուխքը վեր քաշելով, բարձրացա մինչև ժայռի գագաթը. Նույն րոպեյին լույս յերևաց ծովի վրա և իսկույն մի վայրկյան անց լսվեց թնդանոթի

պայթունը: Ձայնի ուղղությունից գուշակեցի, որ պայթյունը տեղի ունեցավ օվկիանոսի այն կողմում, որտեղ մի ժամանակ հոսանքը դուրս գցեց իմ նավակը: Հավանական է, որ այնտեղից յերկու նավ եյին անցնում: Մեկը վտանգի մեջ թնդանոթ արձակելով օգնություն է պահանջում մյուսից, որը կամ առաջ է ընկել, կամ յետ: Յես մտածեցի, յեթե հնար չունեմ նավին օգնություն հասցնելու, գուցե նա իր կողմից ինձ օգնություն կհասնի: Այդ մտքին, յես շտապ հավաքեցի չորացած ճյուղեր, մի մեծ խարույկ կազմեցի և տակից կրակ տվի: Չնայած փոթորիկի կատաղությանը, խարույկն իսկույն բոցավառեց, որովհետև ճյուղերը չո՜ր եյին: Յես կատարելապես համոզված եյի, որ յեթե իրոք ծովի վրա նավ կա, պետք է որ նկատի իմ խարույկը: Այդպես էլ յեղավ: Հենց որ խարույկը բորբոքվեց, թեժացավ, յես լսեցի յերրորդ պայթյունը, որին հետևեց չորրորդը, հինգերորդը և այդպես շարունակ: Ամբողջ գիշերը մինչև լույս կրակը վառ պահեցի, և յերբ բոլորովին լուսացավ, կղզու արևմտյան կողմում ինչ որ մութ զանգված տեսա: Նույնիսկ հեռադիտակով չկարողացա որոշել, թե արդյոք յերևացողն ամբողջ նա՞վ է, թե նավի կտորտանք, որովհետև տարածությունը չափազանց մեծ էր և յեղանակն էլ մառայլ, մշուշապատ:

Ամբողջ օրը դիտում եյի: Անհայտ առարկան տեղից չեր շարժվում: Դրանից յես յեզրակացրի, որ դա խարիսխ գցած նավ է: Այդ բանը ճշտելու համար անհամբերությունից վառված՝ վերցրի հրացանը և շտապեցի դեպի կղզու հարավային կողմը, դեպի այն ժայռը, որին հանդիպեցի իմ անհաջող ծովային զբոսանքի ժամանակ: Բարձրանալով այդ ժայռի գագաթը, յես այնտեղից տեսա, թե ինչ բան է ծովում կանգնած, որը նավի տեղ եյի ընդունել: Յեվ որովհետև յեղանակն էլ պարզ եր, յես կարողացա պարզ և որոշակի նկատել, որ ավազակույտի վրա ընկած նավի կմախք է: Այդ ջրամիջի ժայռերին յես հանդիպել եյի նավակով ճանապարհորդելիս: Նրանք ընկած եյին կատաղի հոսանքի ճանապարհին և ջրապտույտ եյին առաջացնում: Հենց

այստեղ յես ազատվեցի վերահաս, անխուսափելի մահից: Բայց հանգամանք կա, որ յեթե մեկի համար փրկության միջոց է, մյուսի համար դառնում է կորստյան պատճառ: Հավանական է, որ նավը գիշերով բերված լինի այստեղ՝ արևելքից փչող սաստիկ քամուց: Այն հանգամանքը, որ խարույկը վառելուց հետո լսվեց հրաձգություն, այդ հանգամանքը ցույց է տալիս, որ նավորդները նկատել եյին իմ կրակը:

Հետո ինչ կարող եր պատահել նավորդներին: Գուցե նավորդները խարույկի կրակը հեռավոր փարոսի տեղ ընդունելով, նավակ եյին նստել ափ դուրս գալու, բայց լեռնացած ալիքները յետ եյին մղել նրանց: Կարող եր այսպես էլ յեղած լիներ, որ նավը շատ առաջուց զրկվել եր իր մակույկներից. յերբեմն այդպես պատահում է փոթորիկների ժամանակ: Հաճախ այնպես էլ է պատահում, որ սարսափելի ալեկոծության ժամանակ իրենք նավաստիներն են ստիպված լինում իրենց սեփական ձեռքերով փչացնել ու ծովը գցել իրենց փրկության վերջին միջոցները—մակույկները, իբրև ավելորդ ծանրություն: Գուցե մի ուրիշ նավ լսելով թնդանոթի ձայնը՝ ժամանակին օգնության է հասել ու ընդունել է խորտակված նավի մարդկանց իր վրա: Վերջապես, այս էլ կարող եր պատահել, որ ամբողջ նավախումբը, նավաստիները նստել են իրենց մակույկներն ու թիավարելով, խորտակված նավից հեռացել ու ընկել այն հոսանքի մեջ, որտեղ դժբախտներին փորձանք և կորուստ է սպասում: Հետևապես հիմա նրանք առաջ են գնում անսահման օվկիանոսի յերեսով: Նրանք դատապարտված են մահվան, յեթե մինչև հիմա կենդանի յեն:

Այսպես թե այնպես՝ նավից ոչ մի մարդ ափ դուրս չեր յեկել: Ի՞նչ յեղան, ո՞ւր գնացին այն մարդիկ: Մտածելով նրանց մասին, յես սաստիկ տանջվում եյի:

Յես չեմ կարող բառերով արտահայտել հույզերն ու բուռն տենչանքը, որ զարթեցրեց իմ մեջ այդ դժբախտ պատահարը:

— Ո՜, —կրկնում եյի յես, —յերանի թե այն ամբողջ

նավից գոնե յերկու մարդ, կամ թեկուզ մի մարդ կեն-
դանի մնացած լիներ և կարողանար ափ դուրս գալ:
Ցես ընկեր կունենայի, կապրեյի նրա հետ, կխոսեյի,
մտքերս կհաղորդեյի: Մենք միասին կաշխատեյինք և
միասին կուտեյինք, մենք միասին բնության դեմ
կկռվեյինք և մեզ համար նոր կյանք կստեղծեյինք: Իմ
մենավոր կյանքի ընթացքում յերբեք սիրտս այնպես
չեր վառվել մարդ տեսնելու ցանկությամբ: Ուղղակի
տանջվում եյի, վոր անջատված եմ մարդկային հասա-
րակությունից:

Ցես այնպիսի բուռն ցանկություն ունեյի գոնե մի
մարդ տեսնելու, վոր հազար անգամ կրկնում եյի միև-
նույն բանը՝ ինչպես լինում է զառանցելիս:

— Գոնե մեկն ազատված լիներ, գոնե մեկը,—
կրկնում եյի յես շարունակ և սաստիկ հուզված ճմլում

Ալիքները պատանու դիակն ափ եյին հանել նավից քիչ հեռու:

եյի ձեռքերս և սեղմում ատամներս, այնպես վոր հետո
դժվարությամբ եյի կարողանում մատներս ու բերանս
բանալ:

Բայց պարզ է, բախտը չեր ուզում, վոր մեկն ազատ-
վեր ու գար ինձ մոտ: Միայն նավաբեկությունից մի
քանի օր հետո յես դժբախտության ունեցա տեսնելու
մի պատանու դիակ, վոր ալիքներն ափ եյին հանել նա-
վից քիչ հեռու:

Թշվառ պատանին հագել էր նավաստու մի կարճ
կուրտիկ, կապույտ շապիկ և շալվար՝ մինչև ծնկները:
Ինչ ազգության պատկանելը յես չկարողացա վորոշել,
վորովհետև տվյալներ չկային:

Ցես նրա գրպաններում գտա յերկու պիաստր և
թութուն քաշելու ծխամորճ, վորն ինձ համար ամեն
տեսակ փողերից ավելի թանգ էր:

Ծովը հանդստացավ: Իմ մեջ բուռն ցանկություն
զարթնեց նավակ նստել, գնալ—տեսնել ինչ կա ջարդ-
ված նավում: Կասկած չկա, վոր նավի վրա կգտնեյի
բազմաթիվ անհրաժեշտ և օգտավետ իրեր: Բայց նավն
այցելելուս գլխավոր դրդիչ պատճառն այդ չեր, այլ
նավի վրա մարդ գտնելու հույսն եր, վոր ինձ առաջ եր
մղում դեպի ջարդված նավը: Նավի վրա մարդ տես-
նելու միտքն այնպես տիրապետեց ինձ, վոր գիշեր ու
ցերեկ հանգստություն չունեյի, մինչև վոր, վերջա-
պես, վորոշեցի կատարել այդ հանդուգն ճանապարհոր-
դությունը:

Ցեվ ահա սկսեցի նավակով էքսկուրսիա գնալու
պատրաստություն տեսնել: Վերցրի բավականաչափ
հաց, մի մեծ կուժ ջուր, մի շիշ ռոմ, մի զամբյուղ
քիշմիշ, կողմնացույց և գնացի դեպի նավակս: Նավակի
միջի ջուրը դուրս թափեցի և հետս բերած մթերքները
տեղավորեցի: Հետո նորից վերադարձա տուն, բան վերց-
նելու: Այս անգամ բերի մի տոպրակ բրինձ, հովա-
նոցս՝ արևից պաշտպանվելու համար, դարձյալ մի
աման ջուր, յերկու դյուժին լավաշ հաց, մի շիշ այծի
կաթ և մի կտոր պանիր: Այդ բոլորը յես մեծ դժվա-
րությամբ, բայց միանգամից հասցրի նավակի վրա:
Ապա նստելով՝ սկսեցի թիավարել և հաջողակ հասա
կղզու հյուսիս-արևելյան հեռավոր ծայրը, իսկ մակըն-
թացության հոսանքը դեպի հյուսիսային ծայրն էր
գնում: Ցես դրանից յեզրակացրի, վոր պետք է հյու-
սիսային ուղղությամբ գնամ, վորպեսզի տուն վերա-
դառնամ: Ցեթե վոչ, կընկնեյի այդ հոսանքներից մեկի
մեջ և նավակիս հետ միասին ընդմիշտ կկորչեյի:

Իմ դիտողություններից խրախուսված, յես վորո-
շեցի դեպի նավ գնալ առավոտը, առաջին մակընթա-

ցության ժամանակ: Գիշերն անցկացրի նավակում, վրան գցելով մի լայնարձակ վերարկու: Մյուս օրը ժամանակին սկսեցի ափից հեռանալ, նաև թիավարելով դեպի հյուսիս, մինչև վոր հասա դեպի արևելք սլացող հոսանքին: Այդ սրընթաց հոսանքը քշեց տարավ նավակս, բայց ուղղությունը չփոխեց. յես կարողանում եյի վարել նավակն իմ ուզածի պես: Նավակի ղեկավարությունն իմ իրավասության տակ առած՝ յես յերկու ժամվա մեջ հասա խորտակված նավին:

Ինչ տխուր տեսարան բացվեց իմ առաջ: Նավի շինվածքից յեզրակացրի, վոր նա իսպանական եր: Մնացել եր յերկու ջրաժայռի մեջ սեղմված: Նավի յետևի մասը և այնտեղի բոլոր պարագաները ջարդ ու փշուր եյին յեղած: Գլխավոր կայմերը կոտրատվել եյին, իսկ առջևի մասը մնացել եր տեղը, թեև շատ եր վնասվել: Հենց վոր յես նավին մոտեցա, նրա տախտակամածի վրա մի շուն հայտնվեց: Նա ինձ տեսնելուն պես սկսեց վնգստալ ու հաչել: Հենց վոր յես նրան կանչեցի, ցատկեց, ընկավ ջուրը և լողալով մոտեցավ ինձ: Յես վերցրի նրան նավակս: Տեսա, վոր շունը քաղցից սատկում ե, առաջը լավաշ հաց բրթեցի: Նա բրթոշներն ագահությամբ կլանեց, նման այն գայլի, վորը յերկու շաբաթ ձյան մեջ սոված եր մնացել: Իսկ յերբ խեղճ անասունին խմելու պարզ ջուր տվի, նա այնքան խմեց, վոր յեթե ջրամանը յետ չքաշեյի, նա խմելուց կտրաքվեր:

Շունն ուտելուց և խմելուց հետո՝ բարձրացա նավի վրա: Խոհանոցում ամենից առաջ տեսա յերկու մեռած նավաստի, մեկը մյուսի ձեռքից բռնած: Այդ բանից յեզրակացրի, վոր նավը սարսափելի ալեկոծության ժամանակ կպել ե ժայռին և վոր ալիքները վեր բարձրանալիս ու ցած թափվելիս, նավը տակով են արել: Դրանից ել նավաստիները շնչասպառ են յեղել: Այդ յերկու դժբախտ նավաստիներից ջոկ վոչ մի կենդանի արարած չկար այնտեղ, բոլորը, ինչ վոր դիտում, տրնտղում եյի, ջուրը փչացրել եր: Յերբ տեղատվությունն սկսվեց, յես նավի ներքևի մասում նկատեցի մի քանի տակառ գինի. տակառներն այնքան ծանր եյին, վոր

տեղերից շարժել չեր լինիլ: Գտա մի քանի սնդուկ, յերկուսը տարա նավակս, առանց իմանալու թե նրանց մեջ ինչ կա: Յեթե նավի յետևը փշրված չլիներ, յես մեծ օգուտ կքաղեյի:

Սնդուկներից ջոկ, գտա գինի՝ փոքրիկ կիսատակառով, վորը դժվարությամբ իջեցրի նավակի վրա: Տակառիկի մեջ կլիներ մոտ քսան չիչ գինի: Նավասենյակում գտա մի քանի մուշկետ, (կարճափող հրացան) և մի պող, միջին մոտ չորս գրվանքա վառոդ: Մուշկետները չվերցրի, վորովհետև այդպիսի հրացան շատ ունեյի, այլ վերցրի վառոդը՝ հետն ել մի կրակխառնիչ թիակ, մի ունելիք, յերկու փոքրիկ պղնձե կաթսա, շոկոլադի պղնձե աման և կասկարան: Այդ բոլոր անհրաժեշտ բաներով նավակս բեռնեցի, շանն ել հետս վերցնելով, մակընթացությունն սկսվելուն պես ճանապարհ ընկա դեպի յետ: Գիշերվա ժամի չորսին հաջողակ կերպով ափ դուրս յեկա, բայց շատ հոգնած, տանջված ու ջարդված եյի: Այդ գիշերը նույնպես նավակում անցկացրի, առավոտյան վորոշեցի բոլոր իրերը նավակի վրայից կրել իմ նոր գտած քարայրը: Հետո դատարկեցի նավակը, բաց արի սնդուկները և մանրամասն զննեցի: Սնդուկներում գտա բազմաթիվ պիտանի, անհրաժեշտ իրեր: Մեկում գտա մի գեղեցիկ արկղ, լիքն անուշահոտ և կազդուրիչ ուրիշ խմիչքներով, ի հարկե շշերի մեջ լցրած: Շշերը պնդացրած եյին արծաթապատ խցաններով: Գտա նաև յերկու աման մուրաբա՝ շատ լավ մնացած, այն ինչ մյուս յերկու ամանը ծովային ջուր եր ծծել և միջի մուրաբան փչացել: Մի սնդուկում գտա մի քանի կտավե շապիկ և դյուժին ու կես սպիտակ թաշկինակ: Շապիկների և թաշկինակների գյուտն ինձ չափազանց ուրախացրեց, վորովհետև չեյի իմանում՝ շոգերին ի՞նչ հագնեմ և ինչով քրտինքս սրբեմ: Նույն սնդուկից դուրս յեկան յերեք քսակ դրամ՝ հաշվով 1000 հատ: Քսակներից մեկում կար թղթում փաթաթած վեց հատ վոսկեդրամ և մի քանի կտոր վոսկի, բոլոր կտորները միասին մի ֆունտ ծանրությամբ: Մի ուրիշ սնդուկում գտնվեց մի քանի զույգ եժանագին հագուստ, յերևի նավի թնդանոթաձիգ նավաստունն եր, վորով-

հետև նույն սնդուկից վառոդ էլ դուրս յեկավ, թեև քիչ, միայն յերկու ֆունտի չափ, սովորական հասարակ վառոդ, յերեք շշի մեջ ածած։

Հաշվի առնելով իմ ձեռք բերած բոլոր բաները՝ յես յեկա այն յեզրակացության, վոր հանձն առած ճանապարհորդությունն այնքան էլ արդյունավետ չի յեղել։ Ինչ վերաբերում է դրամին, նրանք ինձ համար բոլորովին անպետք եյին, յես արհամարհանքով եյի նայում փողի վրա, ինչպես վոտի տակի կեղտի վրա։ Այդ բոլոր փողերը յես ուրախությամբ կտայի յերեք թե չորս զույգ անգլիական յերկարավիզ գուլպայի։ Յերկար տարիներ գուլպա ու մաշիկ հագնելուց զուրկ եյի։ Ինձ համար

Մի քանի ձեռք շոր գտնվեց

մխիթարություն էր, վոր սնդուկներից մեկում մի զույգ մաշիկ եյի գտել և յերկու զույգ էլ հանել եյի մեռած նավաստիների վոտներից։

Թեև յես շատ գոհ եյի այդ գյուտից, բայց այդ իսպանական մաշիկները վորակի կողմից չեր կարելի համեմատել անգլիական վոտնամանների հետ։

Յերրորդ սնդուկում ելի հիսուն պիաստր գտա։

Պարզ է, վոր այդ սնդուկի տերն այնքան հարուստ չեր, ինչպես առաջին սնդուկինը։

Չնայած այն բանին, վոր փողն ինձ համար վոչ մի արժեք չուներ, յես այնուամենայնիվ յեղած դրամը հետս բերի քարայրը և դրի մեր նավից բերածս փողերի վրա։

Բոլոր իրերը քարայր կրելով և դարսելով մի հուսալի տեղ՝ նավակս տարա այն ծոցը, վորտեղ նա առաջ կանգնած եր։ Յես տուն յեկա և վորոշեցի այլևս չգնալ նավի մոտ։ Տունն այնպես գտա, ինչպես թողել եյի, ամեն բան իր տեղում։ Սկսեցի իմ սովորական կյանքը, այսինքն՝ զբաղվեցի տնային գործերով։ Միաժամանակ յես բավական հանգիստ եյի, ի հարկե, կրկնապատկելով զգուշությունս և աչալրջությունս։ Տանից քիչ եյի դուրս գալիս։ Յեթե, յերբեմն ամրոցից հեռանում եյի՝ այն էլ կղզու արևելյան կողմն եյի գնում՝ հավատացած լինելով, վոր այստեղ վայրենիների չեմ պատահի, վորովհետև յերբեք այնտեղ վայրենի չեյի տեսել։

ՎԵՐՋ ՄԵՆՈՒԹՅԱՆ

Նորից շատ ժամանակ անցավ։ Կղզում պանդխտության քսաներեք տարին լրացավ։ Դեկտեմբերի մեջ, հնձի ժամանակ, յես միանգամ առավոտյան դեմ սաստիկ վախեցա։ Տեսա, վոր ինձանից մոտ յերեք մղոն հեռավորության վրա վառվում է խարույկի կրակը, բայց վոչ արևելյան ափին, ուր դուրս եյին գալիս վայրենիները, այլ այն ափին, վորտեղ յես եյի ապրում։ Այդ անսպասելի տեսարանից յես սաստիկ անհանգստացա և շշմեցի՝ չիմանալով անելիքս։ Յես մտածում եյի, վոր նրանք կգտնեն իմ դաշտերը, գլխի կընկնեն, վոր կղզում մարդ է ապրում և կսկսեն իրենց վորոնումները։ Գուցե և ինձ գտնեն։ Յես վերադարձա իմ գլխավոր ամրությունը և յերկու սանդուխքն էլ վերցրի, վոր ներս մտնող չլինի։

Հետո յես զինվեցի, պատրաստվեցի պաշտպանվելու հարձակման դեպքում։ Լցրի իմ բոլոր «թնդանոթները», բոլոր ատրճանակները, բոլոր վորսորդական հրացանները և վորոշեցի դիմադրել մինչև վերջին շունչս։

Ինձ շատ հետաքրքրում եր այն, թե ինչ են անում

այդ ժամանակ վայրենիները: Համբերությունս հատավ, անհայտության մեջ այլևս չեյի կարող մնալ: Սանդուխքներիս ոգնությամբ յես բարձրացա սարի գլուխը, այն սարի, վորի տակ ապրում եյի: Պառկելով գետնին, յես սկսեցի հեռադիտակով նայել: Խարույկի շուրջը շարվել եյին մոտ տասը մարդ, բոլորովին մերկ վայրենիներ: Շատ շոգ եր: Հասկանալի յեր, վոր վայրենիները տաքանալու համար կրակ չեն վառել: Յերևի ուտում եյին իրենց հետ բերած գերիներին: Նրանց զոհերին տեսնել չկարողացա: Ափի մոտ յերկու նավակ եր կանգնած: Հենց վոր մակընթացությունն սկսվեց, վայրենիները նստեցին իրենց նավակներն ու արագ հեռացան կղզուց: Բայց նախ քան գնալը՝ նրանք կատարեցին իրենց վայրենի հանդիսավոր պարը:

Մի տարի և յերեք ամիս անցնելուց հետո, յես կրկին տեսա վայրենիներին: Այդ ամբողջ ժամանակը յես շատ անհանգիստ եյի: Խիստ ցանկանում եյի թողնել կղզին և գնալ, վորոնել մի մարդաբնակ յերկիր: Միտքս այն եր, վոր մի վայրենու պատահեմ, ինչ կերպով ել լինի, կապեմ ինձ հետ, նրան ոգնական դարձնեմ և նրա ոգնությամբ դուրս գամ մի մարդաբնակ տեղ: Հիմա խնդիրն այն եր, թե ինչ ձևով իրագործեմ մտադրությունս: Յես բազմատեսակ ծրագրեր եյի կազմում, բայց նրանք հենց ինձ համար անիրագործելի եյին թվում: Վերջապես յես վորոշեցի սպասել, թե վայրենիների նավակները յե՞րբ կըմոտենան կղզուն և գործել՝ նայած պարագաներին:

Այդ ժամանակվանից յես արդեն վայրենիներին հանդիպելուց չեյի խուսափում, ընդհակառակը, վորոնում եյի այդ հանդիպումը:

Բայց վայրենիները, կարծես թե դիտավորյալ, չեյին գալիս: Վերջապես մի անգամ վաղ առավոտյան յես ամրոցից դուրս յեկա և զարմանքով նկատեցի հինգ նավակ, վորոնք մոտեցել եյին այն ափին, վորտեղ յես եյի ապրում: Վայրենիները նավակներից ափ դուրս յեկան, մոտ քսան-յերեսուն մարդ: Յես մենակ ինչպե՞ս կարող եյի հարձակում գործել այդքան մեծաքանակ վայրենիների վրա: Վերադարձա իմ ամրոցը և փոխանակ հարձակման պատրաստվելու, պաշտպանության միջոցներ ձեռք ա-

ռա: Հետո ուզեցի իմանալ, թե ինչ են անում վայրենիները: Զգուշությամբ բարձրացա սարը և այնպես թաքնվեցի, վոր ցածից չտեսնվեմ: Հեռադիտակով տեսա մոտ յերեսուն հոգուց բաղկացած վայրենիների խումբը տեղավորվեց խարույկի շուրջը: Կրակի վրա մի ինչ վոր բան եյին տապակում, բայց թե ի՞նչ, յես այն չտեսա: Շուտով նրանք տեղերից վեր թռան, ձեռք ձեռքի բռնած սկսեցին պարել կրակի շուրջը՝ կատարելով զանազան անմիտ շարժումներ և ծամածռություններ:

Պարից հետո նրանք նավակից քաշ տալով բերին յերկու կապած մարդ: Մի րոպեյից հետո թրով խփեցին գերիներից մեկին և վայր գցեցին: Գերու ընկնելուն պես, յերկու վայրենի սկսեցին մաս մաս կտրատել թշվառ զոհի մարմինը: Յերկրորդ զոհը, վորին արձակել եյին կապանքներից, կանգնած եր խարույկի մոտ և սպասում եր մորթելու հերթին: Բայց հանկարծ, յերբ վայրենիները սպանվածի միսն եյին խորովում, գերին պոկ յեկավ տեղից ու սկսեց մի չտեսնված արագությամբ փախչել: Նա վազում եր ափի յերկարությամբ, ուղիղ դեպի իմ ամրոցը:

Ճիշտն ասած յես սաստիկ վախեցա, տեսնելով, վոր այն մարդը դեպի ինձ է վազում: Յես վախենալու փոխարեն մինչև անգամ կուրախանայի, յեթե նա այդքան շատ թշնամի չունենար: Փախստականը բնազդորեն ապաստան եր փնտրում իմ ամրոցը շրջապատող ծառաստանի պուրակում: Յես հանգստացա, տեսնելով վոր փախչողին հալածողները միայն յերեք հոգի յեն: Փախչող գերին այնքան առաջ եր անցել, վոր հազիվ թե հալածող վայրենիները նրա հետևից հասնեյին: Այդ բանն ինձ քաջալերում եր: Յես մեծ հույս ունեյի, վոր փախստականը մի տեղ կթաքնվի և հալածողներն էլ, չգտնելով նրան, հույսերը կտրած՝ յետ կդառնան:

Յես հեռադիտակով ագահորեն հետևում եյի փախստական գերուն: Հանկարծ նրա ճանապարհը կտրեց այն փոքրիկ ծովածոցը, վորի մասին արդեն խոսել եմ: Լողալով միայն կարելի յեր անցնել այդ ծոցը: Արդյոք մինչև մյուս ափ հասնելը, հալածողները չեյի՞ն բռնի նրան: Յեվ ահա գերին ամբողջ թափով իրեն ջուրը նե-

տեց: Ջանցած յերկու— յերեք րոպե, նա դուրս թռավ ափ և նորից սկսեց առաջ սլանալ:

Հալածողները նույնպես մինչև ծոցը վազեցին: Նրանցից յերկուսը նետվեցին ջուրը: Իսկ յերրորդը, վորն ինչպես յերևում է, լողալ չգիտեր, (թեև այն հազվադյուտ բան եր վայրենիների շրջանում), նրանց յետևից նայեց, նայեց ու դանդաղ քայլելով յետ գնաց:

Վայրենիները հմուտ լողորդ չեյին: Փախստականը նրանցից շատ առաջ եր գտնվում: Յես թշվառին ազատելու անդիմադրելի ցանկություն ունեյի: Շտապ իջա սարից, հրացանս առա և վազելով դուրս յեկա փախստականի դեմ: Ինձ տեսնելիս, նա սաստիկ վախեցավ, կարծելով, թե յես նոր թշնամի յեմ: Բայց նրան նշաններով հանգստացրի և հարձակվեցի նրա հալածողների վրա:

Առաջին պատահողին յես գետին գլորեցի, խփելով գլխին հրացանիս կոթով: Յես չեյի կամենում հրացան արձակել, վոր ուրիշները չլսեյին: Յերկրորդ վայրենին վախեցած կանգ առավ: Յես ուզում եյի նրա վրա հարձակվել, բայց հենց ժամանակին նկատեցի, վոր նա իր նետը դեպի ինձ է ուղղել: Իսկույն բարձրացրի հրացանս և արձակեցի: Գնդակը նրան գետին գլորեց: Յես դարձա դեպի փախստական գերին: Նա այնքան եր վախեցել հրացանի կրակից ու ձայնից, վոր տեղն ու տեղը քարացել, մնացել եր Յերեսից յերևում եր, վոր ուզում է փախչել, բայց յես նշաններով կանչեցի նրան ինձ մոտ: Յես շուտով յեկա նրա մոտ և անուշ լեզվով աշխատեցի սիրտ տալ նրան, խրախուսել, հասկացնել, վոր յես նրա լավն եմ ցանկանում: Վերջապես այդ նա հասկացավ, իմ առաջ ծունկ չոքեց և նշաններով շնորհակալություն հայտնեց ինձ իր ազատության համար: Յես նրան բարձրացրի գետնից, հանգստացրի, ձեռքերս բարեկամաբար խփելով ուսին: Սակայն թշնամիների հետ մեր գործը դեռ վերջացած չեր: Առաջին վայրենին, վորին յես վոտից գցել եյի հրացանի կոթով, սաստիկ հարվածից միայն ուշաթափվել եր, չեր մեռել: Ինչպես տեսա, նա սկսել եր ուշքի գալ: Մատով ցույց տվի և հասկացրի իմ նոր բարեկամին, վոր գետին ընկած վայրենին կենդանի յե: Նա միայն մի

քանի անհասկանալի բառեր արտասանեց: Բայց ինչ ել լիներ, յես ուրախությամբ լսում եյի նրա ձայնի ամեն մի հնչյունը: Չե՞ վոր ամբողջ քսանհինգ տարվա մեջ յես վոչ մի անգամ մարդու ձայն չեյի լսել: Իմ նոր ընկերը սարսափով եր նայում գետնի վրայից բարձրացող

Վայրենիները սկսեցին պարել խարույկի շուրջը:

թշնամուն: Յես նորից վեր տնկեցի հրացանս և ուզում եյի արձակել, բայց իմ ազատած գերին նշաններով հասկացրեց և խնդրեց վոր իրեն տամ կողքիս կախած թուրը: Յես կատարեցի նրա խնդիրը: Ձեռքիցս առնելով թուրը, նա հարձակվեց թշնամու վրա և մի հարվածով թռցրեց նրա գլուխը: Թշնամու հետ հաշիվը վերջացնելուց հետո, նա զարմացած դիտում եր իմ հրացանը:

Նրան զարմացնողն այն եր, թե ինչպես կարողացա յես գետին գլորել մյուս վայրենուն, առանց նրան մոտենալու: Նա ինձ խնդրում եր թույլ տալ սպանվածին մոտենալու: Յես չմերժեցի: Մոտենալով դիակին, այդ վայրենին զարմացած դիտում եր նրան:

Վայրենուն սաստիկ զարմացրեց թշնամու կրծքի ծակը,

վոր բացել եր գնդակը: Վերքը փոքրիկ, հոսած արյունը քիչ, բայց մարդը մեռած եր: Այդ բանը շատ անբնական եր թվում վայրենուն: Վերջապես վերցրեց սպանված թշնամու նետն ու սլաքները և յետ յեկավ ինձ մոտ: Նշաններով բացատրեցի նրան, վոր այստեղ յերկար մնալը վտանգավոր ե, վորովհետև կարող են վայրենիները գալ ընկերներին վորոնելու և հրամայեցի, վոր գա իմ յետևից:

Այն ժամանակ ազատածս գերին ել նույնպես նշաններով բացատրեց ինձ, վոր դիակները պետք ե հողում թաղել, վորպեսզի հետք չմնա:

Յես հոժարացա: Այն ժամանակ մի զարմանալի ճարպիկությամբ ու արագաշարժությամբ ձեռներով մի խոր փոս փորեց: Քառորդ ժամվա մեջ յերկու սպանվածին ել թաղեց նույն փոսում:

Հետո յես նրան տարա հետս վոչ թե ամրոց, այլ այն քարայրը, վոր ամրոցից բավական հեռու եր: Այնտեղ տվի նրան հաց ու ջուր և մի ճութ չորացած խաղող: Նա շատ սիրով կերավ ու խմեց: Հետո յես նրան նշաններով բացատրեցի և ցույց տվի, վոր նա պառկի սավանով ծածկած բրնձի ծղոտների վրա, վորտեղ յես ինքս հաճախ քնում եյի: Թշվառ գերին նշաններով շնորհակալություն հայտնեց ինձ և պառկելուն պես խոր քուն մտավ, վորովհետև այնքան հուզմունքներից հետո սաստիկ հոգնել եր:

Իմ ազատած վայրենին մի գեղեցիկ, բարեկազմ, բարձրահասակ, ճկուն յերիտասարդ եր, մոտ քսանվեց տարեկան: Քաջ տղամարդու տեսք ուներ: Յերկար ու սև մազերով, փափուկ ու քնքուշ, վոչ կոպիտ, ինչպես վայրենիներինը, ճակատը բավականին լայն: Աչքերն արտահայտում եյին խելք ու քաջություն: Կլորիկ, բավականին լիք յերեսը, միջակ մեծության քիթը, բարակ շրթունքներով բերանը, հարթ ու շատ սպիտակ ատամները, այս բոլորը տալիս եյին նրան գեղեցիկ տղամարդու տեսք:

Մի կես ժամ քնելուց հետո նա վեր կացավ, քարայրից դուրս գնաց: Յես արոտատեղում այծերն եյի կթում: Ինձ նկատելով, վազեց ինձ մոտ, չոքեց առաջս

և շարժումներով արտահայտեց իր խորին շնորհակալությունը և հավատարմությունը: Յես հասկացա այն բոլորը, ինչ վոր նա ուզում եր ինձ ասել: Յես ել իմ կողմից նշաններով հասկացրի նրան, վոր յես չափազանց գոհ եմ իրենից և վոչ մի անգամ նրան չեմ վիրավորի, միայն թե հավատարիմ ընկեր դառնա:

ՈՒՐԲԱԹԸ

Նախ և առաջ վայրենին պիտի հասկանար իմ լեզուն, վոր հետս խոսեր: Յես հասկացրի, վոր նրա անունը Ուրբաթ եմ դրել, վորովհետև ուրբաթ որը նա ազատվեց վայրենիների ձեռքից: Հետո սովորեցրի անունս տալ ու «այո», «վոչ» ասել: Յերբ նա այս ամենը յուրացրեց, յես տվի նրան մի պուտուկ կաթ և որինակով ցույց տվի, թե ինչպես պետք ե հացը թաթախել կաթի մեջ և ուտել: Նա այդ բանը փորձեց և նշաններով արտահայտեց, վոր կաթը շատ դուր ե գալիս:

Ամբողջ գիշերը մենք միասին քարայրում անցկացրինք: Առավոտը հասկացրի նրան, վոր պիտի միասին գնանք իմ բնակարանը, վոր հագուստ տամ: Յերբ նա հասկացավ բանի եյությունը, շատ ուրախացավ, վորովհետև կատարյալ մերկ եր: Յերբ մենք մոտեցանք այն տեղին, վորտեղ թաղված եյին վայրենիները, նա նշաններով հասկացրեց, վոր ինքն ուզում ե դիակները հողից հանել և ուտել: Յես արտահայտեցի իմ զարհուրանքը, հասկացրի, վոր նույնիսկ այդ բանի անունը լսելուց սիրտս խառնում ե: Յես հրամայեցի իսկույն հեռանալ դիակների մոտից և նա հնազանդվեց ու հետևեց ինձ: Մենք միասին գնացինք բլուրը, վոր իմանանք, թե արդյոք գնացե՞լ են վայրենիները: Վոչ վայրենիները կային և վոչ նավակները: Հավանական ե, վոր վայրենիները հույսերը կտրել եյին իրենց կորած ընկերներից և հեռացել: Յես այսքանով չբավականացա, այլ ուզեցի անձամբ գնալ ափի այն կետը, վորտեղ վայրենիները դուրս եյին յեկել, աչքով տեսնելու, թե ինչ կա այնտեղ: Ուրբաթի ձեռքը մի սուր տվի, մեջքից կախեցի նետ ու աղեղը, վորոնց բանեցնելը նա շատ լավ գիտեր, մյուս

ձեռքը տվի հրացաններից մեկը, ինքս էլ վերցրի մի ուրիշ հրացան և յերկուսով միասին ճանապարհ ընկանք: Յերբ տեղ հասանք, իմ աչքերի առաջ մի այնպիսի զարհուրելի տեսարան բացվեց, վոր քիչ մնաց ուշաթափվեյի: Բայց Ուրբաթի վրա վոչ մի տպավորություն չթողեց: Ուրբաթը հանգիստ նայում եր: Գետինը ծածկված եր արյունով և վոսկորներով: Դես, դեն թափված եյին կրակի վրա խորոված կիսատ-պռատ կերված մարդկային մարմնի մասերը. յերևում եյին նաև վայրենիների կատարած հանդիսավոր խնջույքի հետքերը: Յես տեսա յերեք գանգ, հինգ ձեռք, վոտների և ազդրների վոսկորներ և մարմնի ուրիշ շատ մասեր: Ուրբաթը նշաններով հասկացրեց, վոր վայրենիները չորս գերի եյին բերել մորթելու. նրանցից միայն ինքն ե ազատվել: Ուրբաթի ասելով, կռիվ եր տեղի ունեցել վայրենիների և այն ցեղի միջև, վորին ինքն եր պատկանում, և հաղթողներն իրենց գերիներին բերել եյին այստեղ՝ ուտելու:

Իմ հրամանով Ուրբաթը հավաքեց բոլոր վոսկորները և ինչ վոր մնացորդ կար ու տվեց կրակին: Ուրբաթը միս ուտելու սաստիկ ախորժակ ուներ, ուզում եր հանգամանքից ոգտվել և միսը ճաշակել, բայց յես նրան հասկացրի, վոր յեթե յերբևիցե փորձի մարդու միս ուտել, տեղն ու տեղը կսպանեմ իրեն:

Յերբ ամեն բան վերջացավ, մենք ամրոց գնացինք ավելի կարճ ճանապարհով: Ուրբաթին տվի մի քաթանե վարտիկ, վոր գտել եյին ջարդված նավից բերած սնդուկներից մեկում. միայն թե նախապես այնպես բարեփոխեցի, վոր Ուրբաթի վրա շատ լավ նստեց: Ապա նրա համար մի կուրտիկ կարեցի այծի կաշուց և մի փափախ, նապաստակի մորթուց: Այդ բոլորը վատ չեյի կարել, վորովհետև մինչև այդ կարգին դերձակ եյի դարձել: Ուրբաթը շատ ուրախացավ, յերբ տեսավ իրեն ինձ պես հագնված: Ճիշտ ասած, Ուրբաթն իրեն լավ չեր զգում այդ շորերի մեջ, վորովհետև անսովոր եր շոր հագնելու:

Հետևյալ որը մտածեցի, թե վորտեղ տեղավորեմ Ուրբաթին և վորոշեցի նրա համար շինել մի վրան՝ յեր-

կու պարսպի արանքում, քարայրի արտաքին մուտքի մոտ: Այդ մուտքը դուռ ուներ, վոր ներսից կողպում եյի: Սանդուխքները ներս եյի բերում: Այնպես վոր Ուրբաթը գիշերները չեր կարող իմ բնակարանը մտնել առանց աղմուկ հանելու, վորից անշուշտ յես կզարթնեյի: Ամրոցիս առաջին պատը մի ծածկույթ ուներ, վորի ձողերի ծայրերը հենվում եյին սարին: Յես այդ ձողերը ծառի ճյուղերով հյուսել եյի և բացի դրանից կտուրը ծածկել եյի բրինձի ծղոտով: Այդ պատի մեջ մի անցք կար՝ սանդուխքով վեր ու վար անելու համար:

Նույն անցքում յես մի թակարդ եյի դրել, վորին մի թեթև ծանրություն կպչելիս, իսկույն դղրդոցով ցած կիջներ: Բոլոր զենքերը գիշերով ինձ մոտ եյի հավաքում: Բայց այդ բոլոր նախազգուշությունները բոլորովին ավելորդ եյին, վորովհետև վոչ ոք յերբեք այնպիսի մի անկեղծ, հավատարիմ և անձնվեր ընկեր չի ունեցել, ինչպիսին եր ինձ համար Ուրբաթը: Նա ինձ հետ այնպես եր կապված, ինչպես փոքրիկ մանուկն իր մորը: Նա միշտ պատրաստ եր ինձ համար զոհվելու: Յես այդ բանում արդեն համոզված լինելով, ել վոչ մի նախազգուշություններ ձեռք չեյի առնում Ուրբաթի դեմ:

Յես սովորեցնում եյի Ուրբաթին ամեն բան, ինչը կարող եր ոգտակար լինել, ինչից կարող եր խելահաս և ճարպիկ դառնալ: Մանավանդ աշխատում եյի, վոր նա իմ լեզուն հասկանա, անգլերեն սովորի: Նա շատ լավ աշակերտ եր: Այնպես ուրախանում եր, յերբ կարողանում եր հասկացնել ինձ, վոր ինձ ել ուրախություն եր պատճառում: Նրա հետ զրուցելիս յես մեծ բավականություն եյի ստանում:

Իմ խորին ցանկությունն եր ազատել Ուրբաթին մարդակերության հակումներից: Յես ուզում եյի, վոր նա միայն կենդանիների միս ուտել սովորի: Մի առավոտ մենք միասին գնացինք անտառ: Հանկարծ ծառերից մեկի ստվերում տեսա մի այծ իր ուլերով: Իսկույն բռնեցի Ուրբաթի ձեռքից ու ասացի.

«Կանգնիր տեղդ, չշարժվես»:

Նա կանգ առավ մեխվածի պես: Նույն րոպեյին հրացանով նշան բռնեցի ու կրակեցի: Մի ուլն ընկավ՝

արյան մեջ կորած։ Ուրբաթը սարսափեց և սկսեց դողալ։ Վախից ծնկները ծալվեցին։ Նա չէր նայում այն կողմը, դեպի ուր սուրաց գնդակը, այլ իսկույն դեն շպրտեց իր կուրտիկը և սկսեց մարմնի վրա վերք փորոնել։ Նա կարծում էր, թե յես վորոշել եմ իրեն սպանել,

Այս անգամ պայթյունը խիստ ազդեց Ուրբաթ՜վրա։

այդ պատճառով ծունկ չոքեց, վոտներս գրկեց և հուսահատված սկսեց աղերսել իր լեզվովը, վոր իրեն չսպանեմ։

Նրա անտեղի կասկածանքները ցրելու, իրեն էլ հանգըստացնելու համար, ժպտալով բռնեցի ձեռքից, վեր բարձրացրի և մատնացույց անելով սպանված ուլի վրա, հրամայեցի, վոր գնա ու բերի։

Մինչդեռ Ուրբաթը զարմացած դիտում էր ուլի

վերքը, յես նորից հրացանս լցրի։ Այդ րոպեյին մի մեծ թռչուն յեկավ ու ծառին նստեց։ Յես մոտ կանչեցի Ուրբաթին, մատնացույց արի նախ հրացանը, ապա թռչունը և ծառի արմատը. դրանով ուզում եյի հասկացնել, թե յերբ կրակ տամ, թռչունը կընկնի ծառի տակ։ Հրացանն արձակեցի և Ուրբաթը տեսավ, թե ինչպես գնդակահար թռչունը գլորվեց գետին։ Ուրբաթն այս անգամ էլ վախեցավ և չփոթվեց հրացանի պայթյունից։

Յես այնպես եմ յենթադրում, վոր նա կարող էր չվախենալ, յեթե տեսներ, թե ինչով եյի լցրել հրացանս։ Նա կարծում էր, թե հրացանը մի կախարդական բան է՝ մարդկանց, գազաններին և թռչուններին բնաջինջ անելու համար։ Ուրբաթի զարմանքն այնքան սաստիկ էր, վոր նա յերկար ժամանակ ուշքի չէր գալիս։ Այս դեպքից հետո մի քանի օր շարունակ նա մինչև անգամ մոտ չէր կպցնում հրացանին և նրա մոտով անցնելիս իր լեզվով բան էր ասում, կարծես թե աղերսում էր, վոր իր կյանքը խնայի։

Ուլը յես տուն բերի, մաշկեցի, մսից մի կտոր կտրեցի և սուպ պատրաստեցի։ Ուրբաթը տեսնելով, վոր յես ախորժակով ուտում եմ միսը, ինքն էլ փորձեց և շատ համեղ գտավ, միայն զարմանում էր, յերբ յես միսն աղում եյի։ Նա նշաններով ցույց տվեց, վոր աղ ուտելը լավ բան չի։ Այդպես էլ նա յերբեք աղ չկերեց, թեև յերբեմն գործածում էր, բայց շատ քիչ քանակությամբ։

Այդպես, յես նրան թե միս և թե մսաջուր տվի և վորոշեցի մյուս օրը պատվել նրան այծի խորովածով։ Մի կտոր միս կախ տալով կրակի վրա, շարունակ շուռ ու մուռ եյի տալիս, վոր տեղ–տեղ հում չմնա, ամեն կողմից համաչափ խորովվի։ Հրաշալի խորոված դուրս յեկավ։ Ուրբաթը մեծ բավականությամբ էր ուտում խորովածը։ Խորովածով կշտանալուց հետո նա նշաններով ցույց էր տալիս, վոր էլ յերբեք մարդու միս ուտելու չի։

Մյուս օրը յես Ուրբաթին սովորեցրի սանդում գարի ծեծել, ալյուր դարձնել, ալյուրը մաղել, այնպես, ինչպես յես եյի անում։ Նա այդ բոլորը շատ շուտով սովորեց և սկսեց ինձնից վոչ պակաս լավ գործ կատարել։

Հետո սովորեցրի խմոր հունցել և վառարանում հաց թխել:

Քանի վոր հիմա արդեն յերկու ուտող եյինք, ուրեմն պիտի մտածեյի ցանքս ընդարձակելու մասին: Յես մի ընդարձակ հարմար հողամաս ընտրեցի և մյուս դաշտերի նման ցանկապատեցի նրան, բայց արդեն Ուրբաթի օգնությամբ, վորը շատ սիրով, աշխույժ և ուրախ աշխատում եր:

Այս կղզու վրա յես յերբեք ինձ այնքան թեթև և բախտավոր չեյի զգացել, ինչպես այս տարի: Ուրբաթն արդեն սկսել եր կարգին խոսել. Նա շուտով ըմբռնեց և յուրացրեց մեզ շրջապատող առարկաների անունները: Մի ամիս ել դեռ չեր անցել, յերբ նա սկսեց ինձ շատ լավ հասկանալ և ինքն ել իր կողմից բացատրվում եր ինձ համար հասկանալի ձևերով: Շատախոսել նա շատ եր սիրում և յես ել այդ շատախոսության շնորհիվ յետ բերի խոսելու ընդունակությունս, վոր վաղուց կորցրել եյի: Յես որ օրի վրա ավելի սերտ եյի կապվում Ուրբաթի հետ:

ԶՐՈՒՅՑՆԵՐ

Մի անգամ ուզեցի իմանալ, թե Ուրբաթն արդյոք հայրենիք վերադառնալու ցանկություն չո՞ւնի և խոսք բացի այդ մասին: Նա Անգլիերեն արդեն այնքան գիտեր, վոր կարող եր պատասխանել իմ բոլոր հարցերին, թեև ի հարկե, չեր ջոկում բայերի ժամանակները, իրար եր խառնում գոյական անունների սեռը, բոլորովին անտեսում եր նախդիրները: Այդ պատճառով մեր ունեցած զրույցները շատ ինքնատիպ եյին: Յես հարցրի նրան, թե իր հայրենակիցներն ուրիշ ցեղերի հետ ընդհարվելիս հաղթո՞ւմ են, թե՞ հաղթվում.

—Դե՛հ, ինձ ասա, Ուրբաթ,— հարցրի յես մի անգամ,— քո ցեղն ինչպես է վարվում այն մարդկանց հետ, վորոնց գերի յե վերցնում:

Գերիներին ու՞տում է:

—Այո, իմ ցեղն ել մարդ ուտել, բոլոր ուտել...

—Ո՞ւր են տանում նրանց, վորոնց ուտել են ուզում:

—Այնտեղ տանել, ուր ուզել:

—Իսկ քո ցեղն այստեղ գալի՞ս է:

—Այո, այո, այստեղ գալիս է, ուրիշ տեղ գալիս է:

—Իսկ դու քո ցեղակիցների հետ այստեղ յեղել ե՞ս:

—Այո, այո, այստեղ յեղել ես, յեղել ես: Այդ խոսքի վրա Ուրբաթը մատով ցույց տվեց կղզու հյուսիս-արևմտյան կողմը:

Այդ խոսակցությունից յես հասկացա, վոր Ուրբաթը պատկանում է այն վայրենիների թվին, վորոնք յերբեմն գալիս եյին կղզին՝ իրենց հետները բերած գերիներին ուտելու, թեև, պարզ է, վոր նրանցից ջոկ, յերբեմն ուրիշներն ել եյին գալիս:

Ուրեմն իմ Ուրբաթն այն վայրենիներից եր, վորոնք սովորաբար ափ եյին դուրս գալիս կղզու ամենահեռավոր մասերում ու լափում իրենց հետ բերած գերիների միսը:

Յերբ միառժամանակ անց յես Ուրբաթի հետ գնացի այն ափը, նա իսկույն ճանաչեց իրենց խնջույքի տեղը և հայտնեց, վոր ինքը մի անգամ յեկել է այստեղ իր հայրենակիցների հետ: Ասաց, վոր այդ օրը կերել եյին քսան տղամարդ, յերկու կին ու մի յերեխա: Չկարողանալով անգլիերեն քսանի անունը տալ, նա իմ առաջ գետնին շարեց քսան փոքրիկ քար:

Յես այս ամբողջ խոսակցությունը հաղորդում եմ նրա համար, վոր նա ներածություն ծառայի հետևյալին:

Գտնվելով ծովափին, խոսակցության ժամանակ յես հարցրի Ուրբաթին, թե իրենց մայր ցամաքը շատ հեռու յե՞ մեր կղզուց և վտանգավոր չի՞ նավակներով այնտեղ գնալը, ու այնտեղից ել այստեղ գալը: Նա պատասխանեց, վոր ճանապարհը կատարյալ ապահով է և անվտանգ: Վոչ մի անգամ դեպք չի յեղել, վոր նրա հայրենակիցների նավակներն այդ ճանապարհորդության ժամանակ ծովում կորչեն կամ խորտակվեն: Հետագա հարց ու փորձից իմացա, վոր կղզուց քիչ հեռու գոյություն ունի մշտական հոսանք և մշտապես փչում է քամին: Այդ հոսանքն ու քամին մի ուղղություն ունեն առավոտները, իսկ կեսօրից հետո մի ուրիշ ուղղություն առաջինին հակառակ: Յես այն ժամանակ յենթադրում

եյի, վոր նրա խոսքը սովորական մակընթացության և տեղատվության մասին է, բայց հետագայում իմացա, վոր այդ յերևույթը կախում ունի Որինոկո գետից, վորի բերանին մոտ տեղավորված եր մեր կղզին, նույնպես իմացա, վոր վայրենիներով բնակված այդ յերկիրն ուրիշ բան չի, յեթե վոչ այն ընդարձակ կղզին, վոր հայտնի յեր «Յերրորդության» կղզի անունով: Նա ընկնում է գետաբերանից դեպի հյուսիս: Յես բազմաթիվ հարցեր

Ուրբաթը գետնին շարեց տասնըյոթ մանր քարեր

տվի Ուրբաթին՝ իրենց յերկրի, նրա բնակիչների, ափերի, ծովի և հարևան ցեղերի մասին: Ուրբաթը պատմեց բոլորը, իր գիտեցածի չափ: Իմ այն հարցին, թե ինչ ցեղեր են բնակվում այն յերկրում, նա միայն մի բառով պատասխանեց «կարիբ»: Յես դրանից յեզրակացրի, վոր այդ ցեղերը կարայիբներն են, վորոնց կղզիները մեր աշխարհագրական քարտեզների վրա նշանակված են Որինոկո գետի բերանից մինչև Գվիանա և Սանտա-Մարթա: Ուրբաթը բացատրեց, վոր հեռվում, լուսնի յետևը, վորտեղ լուսինն եր մայր մտնում, այսինքն իրենց յերկրից դեպի արևմուտք, ապրում են սպիտակ մարդիկ, յերկար ել բեղեր ունեն:

— Այդ բեղավոր մարդ շատ սպանել մեր մարդ,— ավելացրեց Ուրբաթը:

Հասկանալը դժվար չեր, խոսքն իսպանացիներին

եր վերաբերվում, վորոնց անդթությունները հայտնի եյին վոչ միայն ամբողջ Ամերիկայում, այլև նրա ամենահեռավոր անկյուններում: Շարունակելով խոսակցությունն ինձ շատ զբաղեցնող խնդիրների նկատմամբ, այս հարցը տվի.

— Ուրբաթ, դու կարո՞ղ ես բացատրել, թե ինչ ճանապարհով կարելի յե գնալ մեր կղզուց այն յերկիրը, վորտեղ մեծ բեղերով սպիտակ մարդիկ են ապրում.

— Այո, այս, պատասխանեց նա,—յես կարող է հասնի այնտեղ... յերկու նավակ:

Սկզբում յես չհասկացա, թե ինչ է ուզում ասել Ուրբաթը, բայց հետո գլխի ընկա, վոր խոսքը մի այնպիսի նավակի մասին է, վորը յերկու անգամ սովորական նավակից մեծ լիներ: Այս խոսակցությունն ինձ մեծ հույս ներշնչեց: Յես մտածում եյի՝ կգա մի որ, վոր յես իմ հավատարիմ և անձնվեր ընկերոջս—Ուրբաթի ոգնությամբ կազատվեմ այս կղզուց:

Քանի գնաց, յես այնքան ավելի մոտ ծանոթացա Ուրբաթի հետ: Ասածս շատ լավ հասկանում եր: Իր մտքերն ել կարգին արտահայտում եր, թեև կոտրտված անգլերենով: Յես այն ժամանակ պատմեցի նրան իմ գըլխից անցածը, վորպեսզի բացատրեմ, թե ինչպես յեղավ, վոր յես այս կղզին ընկա. պատմեցի այն, թե մինչև նրան պատահելը ինչպես եմ յես այստեղ գլուխ պահել: Յես մանրամասնորեն պատմեցի նավաբեկության մասին, նկարագրեցի նավը և ցույց տվի այն ծանծաղուտը, վորտեղ նստեց նավը և վերջապես ջարդվեց քամուց և ալիքներից: Յես ցույց տվի Ուրբաթին այն մեծ մակույկի կմախքը, վորը մի ժամանակ չկարողացա տեղից շարժել: Հիմա այդ մակույկը համարյա թե փչացած եր: Մակույկը տեսնելով, Ուրբաթը մտածմունքի մեջ ընկավ և վոչ մի խոսք չասաց: Յես հարցրի, թե ինչի մասին է մտածում: Յերկար լռությունից հետո նա պատասխանեց.

—Յես տեսել այդպես մակույկ. նա յեկել այնտեղ, ուր իմ ազգ:

Յես չեյի հասկանում, թե ինչ է ուզում ասել Ուրբաթը, բայց վերջապես ըմբռնեցի, վոր այդպիսի մի

մակույկ մոտեցած է յեզել նրա հայրենիքի ափերին։ Ինձ այնպես եր թվում, վոր յեվրոպական մի վորևէ նավ խորտակվել է ծովում և քամին նավի մակույկը ափ է հանել այն յերկիրը, վորտեղ Ուրբաթի ցեղն է ապրում։ Բայց միտքս չեկավ, թե արդյոք մակույկում մարդ կա՞ր, միայն մակույկի ձևի մասին եյի հարցնում։ Ուրբաթը մանրամասնորեն նկարագրեց մակույկը և վերջն էլ զգացմունքով ավելացրեց.

—Իմ ազգ ազատել սպիտակ մարդ ... և մարդ չխեղդվեն ․։

- Ուրբաթ, ուրեմն այնտեղ սպիտակ մարդի՞կ կային, հարց տվի յես։

—Այո, պատասխանեց Ուրբաթը, -լիքը նավակ սպիտակ մարդ։

Իմ այն հարցին, թե քանի մարդ կլինեյին, նա գետնի վրա տասնյոթը մանր քար շարեց։ Այն ժամանակ նորից հարց տվի, թե ինչ յեղան այդ մարդիկ։

—Ապրում է հետ իմ ազգ,-պատասխանեց Ուրբաթը։

Այդ լուրն իմ մեջ մի շարք նոր մտքեր ծնեցրեց։ Ինձ թվում եր, նավակով ազատվողները կարող եյին միայն այն մարդիկ լինել, վորոնց նավը խորտակվել եր իմ կղզու մոտ։

Յես մանրամասն հարց ու փորձ արի, թե ինչ յեղան սպիտակներն ափ դուրս գալուց հետո։ Ուրբաթը պատմեց, վոր նրանք բոլոր ժամանակ խաղաղ ու հաշտ ապրում են իր հայրենակիցների շրջանում, վորոնք պահպանում ու կերակրում են նրանց։

—Ինչպե՞ս բան է, վոր մինչև հիմա վայրենիները չեն մորթել-կերել նրանց,-դիմեցի յես Ուրբաթին։

—Վոչ, -պատասխանեց նա, -յեղբայր դարձավ։ Իմ ազգ մարդ ուտել ...կռիվ կա։

Դրանով ուզում եր ասել, վոր իր ցեղն ուտում է միայն մարդկանց, վորոնց պատերազմի ժամանակ գերի յե վերցնում։

Այդ խոսակցությունից յերկար ժամանակ հետո մի անգամ յես և Ուրբաթը պատահմամբ գտնվում եյինք կղզու արևելյան կողմում։ Յեղանակը պարզ եր, մենք կանգնած եյինք բլուրի վրա։ Ուրբաթն աչքերը հառած

նայում եր դեպի յերևացող մայր ցամաքի կողմը։ Հետո հանկարծ սաստիկ հուզվեց ու սկսեց ցատկոտել, թռչկոտել, վազվզել և պարել։ Յես խիստ զարմացած հարցրի, թե ի՞նչ է նշանակում։

—Ո՜, ուրախություն, —ճչաց նա,— ուրախություն։ Այնտեղ տեսնել իմ յերկիր, տեսնել իմ ազգ...

Նրա դեմքը հրճվանքից փայլում եր, աչքերը վառվում եյին ցնծության ու վոգևորության կրակից, նրա ամբողջ եյությունը բախտավորություն եր շնչում։ Դեպի հայրենիքն ունեցած բուռն ձգտումը լիովին կլանել եր նրան։ Այդ յերևույթն անհանգստացրեց ինձ։ Ուրբաթի վրա ունեցածս վստահությունն այդ օրից սկսած պակասեց։ Յես մտածում եյի, վոր յեթե Ուրբաթը մի կերպով հայրենիք վերադառնա, իմ կղզու գաղտնիքը բաց կանի, իր հայրենակիցներից մի յերկու հարյուր մարդ առած կգա այստեղ, վոր ինձ և իմ ունեցածին տիրանա։ Ինձ կմորթեն, կրակի վրա կխորովեն և կուտեն։ Յերևի, խնձույքին կմասնակցի և Ուրբաթը։

Հետզհետե իմ կասկածն ու անվստահությունն ավելանում եր։ Յերեք շաբաթ շարունակ ուզում եյի խոսակցության մեջ նրա միտքն իմանալ, թե նա ի՞նչ է մտածում։ Բայց նրա խոսքերի ու գործերի մեջ այնքան անկեղծություն ու շիտակություն կար, վոր իմ կասկածանքն ու անվստահությունը նրա նկատմամբ բոլորովին անհիմն եր։

Մի անգամ զարձյալ նրա հետ զբոսնելու գնացինք ու բարձրացանք բլուրը։ Օրը մռայլ եր, ամպամած։ Քամին ծովից եր փչում։ Հարևան ցամաքը չեր յերևում։ Յես հարցրի Ուրբաթին.

— Ասա, Ուրբաթ, կո՞ւզեյիր վերադառնալ հայրենիք, հարազատներիդ մոտ։

—Այո,—ուրախացած պատասխանեց նա,—Ուրբաթ ուրախ իր ազգ լինել։

—Ի՞նչ կանեյիր դու այնտեղ, մի՞թե դու կուզենայիր նորից բարբարոս դառնալ, մարդու միս ուտել, առաջվա նման վայրենի լինել։

Նա տխուր նայեց ինձ վրա, գլուխը շարժելով ասաց.

—Ոչ, ոչ: Ուրբաթ պատմել նրանց ապրել լավ ցանել գարի, ուտել այծի միս, չուտել մարդ միս:

—Ե, որ այդպես ե, նրանք քեզ կսպանեն,—ասացի յես:

Նա մի քիչ մտածեց հետո առարկեց:

—Ոչ, չսպանել ինձ, նրանք սովորել, սիրել:

Նա, յերևի ուզում եր ասել, որ իր ազգակիցները դրա համար իրեն չեն սպանի, որովհետև նրանք ել են ուզում բան սովորել: Մի քիչ հետո ել ավելացրեց, որ նրանք, իր ազգակիցները շատ բան են սովորել նավակով

Ո՜, ուրախ գոչեց Ուրբաթը՝ այնտեղ տեսնել իմ յերկիր:

յեկած սպիտակ մարդկանցից: Յես նորից հարցրի, թե չի՞ ուզում հայրենիք գնալ: Ուրբաթը ժպտաց ու ասաց. որ այդքան յերկար լողալ չի կարող: Այն ժամանակ յես հանկարծ նրան հարցրի, որ պատրաստ եմ նրա համար մի նավակ շինելու: Նա կրկին ժպտաց և պատասխանեց, որ նա սիրով կգնա, միայն ինձ հետ:

—Յես չեմ կարող քեզ հետ գալ, որովհետև ձերոնք ինձ կուտեն:

—Ոչ, ոչ,—բացականչեց նա,—յես այնպես անել, քեզ չուտել, յես անել, նրանք քեզ սիրել:

Հետո նորից կրկնեց իր պատմությունն այն մասին, թե ինչպես սիրով եյին վարվում իր հայրենակիցներն ափը դուրս յեկած սպիտակ մարդկանց հետ, որոնց ալիքն եր շպրտել փոթորիկը:

Ն Ա Վ Ա Շ Ի Ն Ա Ր Ա Ն

Հիմա նորից բռնեց ծով դուրս գալու ցանկությունս: Նպատակս այն սպիտակ մարդկանց հետ միանալն եր, որոնց մասին խոսում եր Ուրբաթը: Ընդհանուր ջանքերով մեզ հեշտ կլիներ այստեղերից դուրս գալ և ընկնել մի քաղաքակիրթ յերկիր:

Մի քանի որից հետո յես Ուրբաթին ասացի, որ յեթե հայրենիք վերադառնալու ցանկություն ունի, յես նրան նավակ կտամ: Սուտ ասած չլինելու համար յես նրան տարա իմ այն նավակի մոտ, որը մինչև այդ ցույց չեյի տվել: Յես ծածկած եյի պահում նավակը, որ վոչոք չնկատի նրան: Նավակը կարգի— սարքի բերինք, հրավիրեցի Ուրբաթին, որ միասին մտնենք նավակ և նորից հարցրի.

— Ե, ի՞նչ կասես, Ուրբաթ, չգնա՞նք ձեր յերկիրը:

Ուրբաթը զարմացած հայտնեց, որ այդպիսի փոքրիկ նավակով չի կարելի այնքան հեռու գնալ: Յես նրան բացատրեցի, որ յես մի ուրիշ նավակ ել ունեմ, դրանից չափազանց մեծ:

Հետևյալ որը Ուրբաթին տարա այնտեղ, որտեղ իմ ձեռագործ նավակն եր կանգնած: Մի ժամանակ շատ չաչարվեցի, որ դա ջուրն իջեցնեմ, բայց դուրս չեկավ, չհաջողվեց: Ուրբաթը գտավ, որ այդպիսի մեծ նավակով կարելի յե բոլորովին անվտանգ հասնել իրենց յերկիրը: Բայց արի տես, որ նավակը քսանյերկու տարի արևի տակ կանգնած մնալուց արդեն չորացել, ճաքճքել եր և տեղ— տեղ ել քանդվել: Ուրբաթը ափսոսանքով գլուխը շարժեց ու փնթփնթաց, որ այդ նավակով կարելի յեր շատ հաց ու միս տանել:

Հարևան յերկիրը գնալու ցանկությունս այնքան մեծ եր, որ յես Ուրբաթին հայտնեցի, թե յես նրա

համար մի նոր նավակ կշինեմ, թող այդ նավակով վերադառնա հայրենիք: Յերբ մի քանի անգամ կրկնեցի այդ առաջարկը, նա տխուր կախեց գլուխը և խղճալի հարցրեց.

— Ինչու ճերմակ բարկանացնի Ուրբաթ: Ուրբաթ ի՞նչ արել ճերմակ:

Յես հարց տվի, թե նա ինչից յեզրակացրեց, որ յես բարկացած եմ նրա վրա:

— Ինչպես բարկանալ չի,—առարկեց նա,—էլ ինչո՞ւ Ուրբաթ իր ազգ ուղարկել:

— Միթե՞ դու չեյիր ասում, որ ուրախությամբ կգնաս, հարցրի յես:

— Այո, այո, յես կամենում ես յերկուսով այնտեղ:

Այդ նշանակում եր, որ Ուրբաթն առանց ինձ չեր ուզում մենակ գնալ:

— Ինչո՞ւ գամ յես այնտեղ, Ուրբաթ,—հարցրի յես,—քանի որ այնտեղ անելու գործ չունեմ:

Նա ինձ վրա մի կրակոտ հայացք գցեց և պատասխանեց.

— Սպիտակ այնտեղ շատ գործ անել, սովորեցնել վայրենի մարդ:

Մենք Ուրբաթի հետ միասին սկսեցինք մի այնպիսի մեծ ծառ փորել, որից շինվելիք մակույկը պիտանի լիներ ծովային ճանապարհորդության համար: Պետք է ասել, որ կղզում այդպիսի մեծ ծառեր շատ կային, այնպես որ նրանցից կարելի յեր մի մեծ նավատորմիղ պատրաստել իր նավերով և նավակներով:

Մտքերս այն եր, որ մեր փնտռած ծառը ջրին շատ մոտ լիներ, որ նավակը պատրաստելուց հետո կարողանայինք նրան հեշտությամբ ջուրը գցել: Յերկար փորփրելուց հետո, Ուրբաթը վերջապես, մի ծառի մոտ կանգ առավ: Նա ավելի լավ գիտեր, թե նավակը շինելու համար ինչ տեսակ ծառ է հարկավոր:

Յես մինչև հիմա յել չգիտեմ, թե այն ինչ ծառ եր: Միայն այսքանը կարող եմ ասել ծառի մասին, որ նրանից հոտ եր բուրում և գույնն էլ կարմիր եր: Այդպիսի ծառեր պատահում են Նիկարագուայում:

Ուրբաթն առաջարկում եր ծառի միջուկն այրել,

ինչպես անում են վայրենիները: Իսկ յես համար դառնցի յերկաթե գործիքներով փորել ծառի մեջը և այդ գործը փորձով սովորեցրի Ուրբաթին: Նա միանգամից ըմբռնեց գործի եյությունը և սկսեց շատ հիանալի աշխատել՝ դուրի ոգնությամբ փորելով ծառի միջուկը:

Մեր անդուլ և համառ աշխատանքները մի ամսվա մեջ գլուխ բերին նավակի կառուցումը: Դրսից, ներսից տաշտշեցինք, հարթեցինք և մի գեղեցիկ մակույկ դուրս բերինք: Այդ նոր մակույկը շատ մեծ եր: Նրան ջրի մոտ քաշելու համար յերկու շաբաթ ժամանակ հարկավորվեց, այն էլ պտուտակների ոգնությամբ: Առանց այդ գլորող պտուտակների չպիտի կարողանայինք նավակը տեղից շարժել: Նավակը քսան մարդու տեղ կաներ: Յերբ մենք նրան ծովն իջեցրինք, ուրախությանս արդեն չափ չկար, որովհետև տեսա, թե Ուրբաթն ինչ հմտությամբ և ինչ ճարպկությամբ է վարվում նավակի հետ:

Բայց Ուրբաթը դեռ չգիտեր, թե յես ինչ եմ մտածում նավակի մասին: Յես ուզում եյի, որ նավակը կայմ, առագաստ և խարիսխ ունենար: Կայմ շինելը մի դժվար բան չեր: Ափից քիչ հեռու մի ջահել յեղևնի գտա, կտրեցի և հետո ցույց տվի Ուրբաթին,—ծառն ինչպես կայմ դարձնել: Հիմա առագաստ պիտի շինվեր: Յես առագաստացույի համար նավից բերած շատ քաթան ունեյի: Այդ կտրված փալաս-փուլուսը քսան տարուց ավելի թափված մնացել եր նկուղում: Յես քաթանի մասին բոլորովին մոռացել եյի և համոզված եյի, որ այլևս բանի պետք չի գա: Յեվ իսկապես, քաթանի մեծ մասը ցեց եր ընկել և դեն գցելու բան դարձել: Միայն յերկու կտոր քաթան գտնվեց, որից կարելի յեր մի քան կարել: Այդ կտորները միացրի և նրանցից մակույկի համար առագաստ պատրաստեցի, այն էլ մեծ դըժվարությամբ, որովհետև մի կարգին խակական ասեղ էլ չունեյի, որ կտորները միմյանց հետ կարեյի:

Յերկու ամիս ժամանակ անցկացավ, մինչև որ պատրաստեցի նավակի կայմը, առագաստը և ղեկը:

Յերբ վերջապես ամեն բան պատրաստ եր և կարգի բերված, սկսեցի Ուրբաթին սովորեցնել նավավարության արվեստը, որ նա ղեկ բանեցնել էլ իմանար: Նա

շատ լավ թիավարել գիտեր, բայց ղեկի և առագաստա-
ձողին բոլորովին գաղափար չուներ, չգիտեր նրանցից
օգտվելու ձևը:

Տեսնելով, թե ինչպես առանց թիակների օգնու-
թյան, միայն ղեկի միջոցով վոր կողմն ուզում, այն
կողմ եմ դարձնում նավակը, կամ թե՝ ինչպես առագաս-
տը քամուց ուռչում է և ծածանվում օդի մեջ, Ուրբաթը,
չափազանց ուրախանում եր: Մի զարմանալի սուր ըմ-
բռնողություն տեր մարդ եր իմ յերիտասարդ Ուրբաթը:
Նա շատ շուտով սովորեց այդ գործի բոլոր նրբություն-
ները և դարձավ մի գերազանց ծովագնաց: Բայց միայն
կողմնացույցից մինչև վերջն ել բան չհասկացավ, վոչ

Մենք Ուրբաթի հետ նավակը քաշ տվինք ջրի մեջ:

նրա կազմությունից և վոչ ել գործադրությունից:
Աւենք, այդ տեղի համար կողմնացույց բոլորովին հար-
կավոր ել չեր, վորովհետև ցերեկով յեղանակը պարզ եր
լինում, ափը յերևում եր շատ հեռվից, իսկ գիշերով
փայլում եյին աստղերը:

Իսկ անձրևային շրջաններում, ի հարկե, այդպես
չեր, ո՞վ կհամարձակվեր ծովով ճանապարհորդել:

Հասավ իմ գերության քսանյոթ տարին, հաշված և
այն յերեք տարին, վոր անցկացրի Ուրբաթի հետ: Իսկա-
պես այդ յերեք տարին հաշվի մեջ չպիտի առնել, վորով-
հետև Ուրբաթի հետ անցկացրած կյանքս խիստ տար-

բերվում եր կղզու վրա մենության մեջ անցկացրած
կյանքից:

Յես ձեռք չեյի քաշում յերկրագործությունից և ա-
նասնապահ անտեսությունից: Առաջվա նման մշակում
եյի հողը, վարում, ցանում, տնկում, ցանկապատում,
հավաքում և չորացնում խաղողը, մի խոսքով՝ առաջ-
վա նման ամեն բան անում եյի և կարծես թե մոռքից
հանել եյի կղզուց հեռանալը:

Վրա հասավ անձրևային շրջանը: Մեր նոր նավակը
պատահականությունից զոհ չդառնալու համար, յես և
Ուրբաթը նավակը տարանք այն ծովախորշը, վորը մի
ժամանակ իմ լաստերի համար նավահանգստի տեղ եր
ծառայում: Ջրի բարձր դրությունից օգտվելով, մենք
նավակն ափ հանեցինք և նրա համար մի ավազան փո-
րեցինք, վորտեղ ջրի մեջ ազատ կարելի յեր թողնել
մակընթացության ժամանակ:

Վորպեսզի կրկնվող մակընթացությունից նավակը
դուրս չգա, մենք այդ փոկի մուտքի առաջ մի
դոկից դուրս չգա, մենք այդ գոկի մուտքի առաջ մի
ամուր ու բարձր պատվար կանգնեցրինք: Անձրևներից
պաշտպանվելու համար նավակի վրա մի հաստ ծերա-
ծառի ճյուղեր քաշեցինք: Յերբ այդ կերպով ամեն ինչ
կարգի բերինք, յես սկսեցի համեմատաբար հանգիստ ու
համբերատար սպասել նոյեմբեր և դեկտեմբեր ամիս-
ների գալուն, վոր սկսեյինք մեր ճանապարհորդու-
թյունը:

Հենց վոր յեղանակը վերականգնեց, մենք յերկու-
սով սկսեցինք պատրաստություն տեսնել և մինչև ան-
ցամ ճանապարհվելու օրը նշանակեցինք: Նախ և առաջ
պետք եր անհրաժեշտ մթերքների պաշար տեսնել և ապա
ավազանի պատվարը քանդել և նավակը ջուրը գցել:
Այդ աշխատանքը կատարելու համար հարկավորվեց
մոտ յերկու ամիս ժամանակ:

„ՅԵՍ ՅԵՎՐՈՊԱՑԻ ՅԵՄ“: ՈՒՐԲԱԹԻ ՀԱՅՐԸ

Մի առավոտ, վրանիս շուրջն աշխատելիս, Ուրբա-
թին ուղարկեցի ծովափ՝ կրիա վորսալու: Մոտ հարյուր
քայլ նոր եր արել, մեկ ել տեսնեմ վազելով յետ է գա-

լիս, բայց այնպես արագ, վոր կարծես վոտը գետնին չի առնում: Մի թափով թռավ անցավ տան արտաքին պարիսպը և գնաց.

— Տխրություն..... վատ բան...

— Ի՞նչ բան է, Ուրբաթ,—հարցրի յես:

— Եվ մի հարցնի: Այ, այնտեղ մեկ, յերկու, յերեք նավակ, մեկ, յերկու, յերեք,—հուզմունքից խեղդվելով պատասխանեց նա:

Նրա համրանքներից յես յեզրակացրի, վոր յեկածները վեց նավակ են, բայց յերբ հարցրի Ուրբաթին, դուրս յեկավ վոչ թե վեց, այլ յերեք նավակ:

— Ե, ի՞նչ կա վոր,—ասացի յես,—էլ դու ինչո՞ւ այդքան վախեցար, բան չկա, մի վախիր:

Յես սիրտ եյի տալիս Ուրբաթին, բայց նա չեր հանդարտվում: Այնպես էր կարծում, թե վայրենիները հատկապես յեկել են իրեն բռնելու և ուտելու: Խեղճ յերիտասարդը տերևի նման դողում եր. և յես չգիտեյի, թե ինչպես հանգստացնեմ նրան: Վերջապես մխիթարելու միջոցը գտա, ասելով, վոր յերկուսով էլ նույն վտանգի մեջ ենք, և յեթե նրան ուտելու յեղան, անշուշտ ինձ էլ կուտեն:

— Բայց,—ավելացրի յես,—նախ քան մեզ ուտելը, պետք է պաշտպանենք մեզ: Ուրբաթ, կա՞րող ես կռվել նրանց դեմ:

— Իմ կրակ տալ կարող է. միրուքավոր սովորել ինձ, բայց այնտեղ շատ վայրենի յեկել:

— Դատարկ բան է, այդ վոչինչ չի նշանակում,—պատասխանեցի յես,—մենք հրացաններով այնպես կվախեցնենք նրանց, վոր կփախչեն և չեն համարձակվի մեզ մոտ գալ:

Հետո Ուրբաթին մի բաժակ ռոմ խմացրի և հրամայեցի, վոր ինձ յերկու հրացան տա:

Յես իսկույն հրացանները լցրի գնդակներով: Ինքս վերցրի չորս մուշկետ, կոտորակներով ու գնդակներով լցրած և յերկու ատրճանակ. Թուրը կախեցի կողքիս, կացինն էլ տվի Ուրբաթի ձեռքը: Այդպես զինված, վերցրինք հեռադիտակը և գնացինք դեպի բլուրը, վորտեղից լավ դիտվում եր ծովը: Հեռադիտակով տեսա, վոր ծովի

մեջ յերեք նավ կար, իսկ ափ եյին դուրս յեկել քսան մեկ վայրենի և յերեք գերի: Պարզ եր, վոր վայրենիները յեկել եյին իրենց զզվելի խնջույքը կատարելու, թշնամիների վրա տարած հաղթությունը տոնելու: Նրանք իջևանել եյին ծովածոցի մոտ, վորտեղ ափը ցածր եր և խիտ անտառը տարածվում եր մինչև ծովափը:

Յես ներշնչեցի Ուրբաթին, վոր մի քայլ անգամ ինձանից յետ չմնա, չշարժվի տեղից և վոչ էլ կրակի, և առհասարակ առանց իմ հրամանին վոչինչ չպիտի անի և վոր գլխավորն է, անտառի կողմից մենք պիտի անցնեյինք ծովածոցը և այնքան մոտենայինք թշնամիներին, վոր հրացանից արձակած գնդակը հասներ նրանց և միևնույն ժամանակ նրանք մեզ չնկատեյին:

Դրա համար հարկավոր եր մոտ մի մղոն ճանապարհ կտրել: Այդ պտույտի ժամանակ իմ զայրույթն իջավ. մտքերս ուրիշ ընթացք ընդունեցին և յես ինձ հարց տվի. թե ինչո՞ւ, ի՞նչ պատճառով, ի՞նչ իրավունքով, ինչ անհրաժեշտությունից ստիպված ուզում եմ ձեռներս թաթախել այդ մարդկանց արյան մեջ, այն մարդկանց, վորոնք դեռ վոչ մի չարիք չեն հասցրել ինձ:

Հավանորեն, յերբեք միտք էլ չունեն ինձ վորև է վնաս հասցնելու, ինձ անհանգստացնելու:

Այդ մտքերն ինձ այնքան զգաստացրին, վոր յես սկսեցի շարունակել ճանապարհը՝ միայն հեռվից վայրենիների խնջույքը դիտելու համար: Յես այսպես եյի մտածում, թե յերբ հանգամանքները ստիպեն, յես նոր կդիմեմ ինքնապաշտպանության:

Այդպիսի տրամադրությամբ յես զգուշությամբ մտա անտառ: Ուրբաթը հետևում եր ինձ: Գնացինք մինչև անտառի այն ծայրը, վորտեղից քիչ հեռու, ծովափին տեղավորվել եյին վայրենիները, մեջքերը դեպի մեզ:

Մեզ վայրենիներից բաժանողը մի մացառուտ թփուտ եր: Յես հրամայեցի Ուրբաթին, վոր նա մի մեծ ծառի յետևից նայի և տեսնի, թե ինչ են անում վայրենիները: Ուրբաթը լսեց ինձ: Իսկույն յետ գալով, նա հայտնեց, վոր տեսել է բոլոր վայրենիներին: Նրանք նստած են խարույկի շուրջը, ուտում են մի մորթած գերու միսը, իսկ քիչ հեռու ընկած է մի ուրիշ գերի, վորին ի հարկե,

նույնպես հետո կմորթեն ու կուտեն: Ուրբաթն ավելաց-
րեց, որ այդ յերկրորդ գերին վայրենի չի, այլ այն սպիտակ մարդկանցից մեկը, վորոնց մասին արդեն ինձ պատմել եր: Յես առաջ գնացի, թաքնվեցի ծառի յետևը և հեռադիտակով նայեցի: Ծովափին խարույկից մի վորոշ տարածության վրա իսկապես մի սպիտակ մարդ եր ընկած՝ ձեռներն ու վոտները կապ: Դեմքից ու վրայի շորերից պարզ յերևում եր, որ նա յեվրոպացի յե:

Թփուտի յետևը, վայրենիներից քիչ հեռու, մի ուրիշ մեծ ծառ կար: Ինձ թվում եր, որ մի փոքր պտույտ տալով, վայրենիներից աննկատելի կհասնենք այդ ծառին, որի տակից հրացանի գնդակը հեշտությամբ տեղ կհասներ: Անտառի միջով պտույտ ավի և դուրս յեկա ծառի մոտ: Բարձրանալով մի փոքրիկ բլուրի վրա, տեսա, որ վայրենիներն իմ առաջն են, ինչպես ափի մեջ: Տեսա նրանց ամեն մի շարժումը և մինչև անգամ ձայներն էլ լսեցի:

Խարույկի շուրջը նստած վայրենիներից յերկուսը հանկարծ վեր կացան:

Պարզ է, թե ինչու համար. սպիտակ գերուն սպանելու և նրա միսը մաս-մաս կրակի վրա խորովելու և ուտելու: Իսկապես, նրանք վազեցին դեպի գերին և այն է, թեքվել եյին, որ կապանքները քանդեն, ձեռքերն ու վոտներն ազատեն, իրենց զզվելի գործը կատարելու նպատակով: Ջեր կարելի մի վայրկյան անգամ կորցնել: Յես դարձա դեպի Ուրբաթն ու ականջին փսփսացի.

— Լսիր, Ուրբաթ: Արա այն, ինչ վոր յես կանեմ: Հետևիր իմ ամեն մի շարժումին և նայիր, չլինի թե սխալվես:

Յես հրացաններից մեկը վայր դրի: Նույնն արավ և Ուրբաթը: Հետո մյուս հրացանով նշան բռնեցի վայրենիներին և հրամայեցի, վոր Ուրբաթն էլ հետևի ինձ:

— Պատրաստ ես,—հարցրի յես:

— Այո,—պատասխանեց Ուրբաթը:

— Կրակիր,—շշնջացի յես:

Այդ րոպեյին յես քաշեցի հրացանի շնիկը, Ուրբաթն էլ նույնպես: Նա յերկուսին տեղն ու տեղը սպանեց, յե-

րեքին էլ վիրավորեց, իսկ յես սպանեցի մեկին, յերկուսին էլ վիրավորեցի:

Կենդանի մնացած վայրենիները մի աննկարագրելի սարսափի մեջ ընկան: Կորցրին իրենց գլուխները, չգիտեյին ինչ անել, վոր կողմը փախչել, վորովհետև չեյին

Կրակիր, շշնջացի յես

խմանում, թե վորտեղից սկսվեց այդ անսպասելի հարձակումը:

Կրակելուց հետո, յես զեն դցեցի ձեռքիս մուշկետը և նրա տեղը վերցրի վորսորդական հրացանս: Նույնն արավ և Ուրբաթը: Յես նշան բռնեցի:

Ուրբաթը նույնությամբ կրկնեց իմ արածը:

— Պատրա՞ստ ես,— կամացուկ հարցրի յես:

— Այո,— նույնպես կամացուկ պատասխանեց նա:

— Կրակիր:

Մենք նորից յերկուսով կրակեցինք գլխակորույս վայրենիների վրա: Մեր հրացանները լցրած եյին մանրագնդակներով: Այս անգամ միայն յերկուսն սպանվեցին, իսկ շատերը վիրավորվելով, ախով-վախով, հառաչելով-բառաչելով իսկական խելագարների պես յետ ու առաջ վազեցին:

Նրանցից մի յերկու-յերեքը գայլի վռնոցով գետին գլորվեցին:

— Հիմա, Ուրբաթ,— ասացի,— յեկ յետևիցս:

Դատարկ հրացանը վայր դրի և վերցրի մուշկետը: Ուրբաթն էլ նույնն արավ: Դրանից հետո յես դուրս թռա իմ թաքստի տեղից և ուղիղ հարձակվեցի վայրենիների վրա: Ուրբաթը անվեհեր վազեց իմ յետևից: Յերբ յես նկատեցի, որ վայրենիներն ինձ տեսան, յես մի սարսափելի կերպով, ինչ ուժ ունեյի, գոռացի: Ուրբաթն ավելի սարսափելի գոռաց: Այդ գոռգոռոցից վայրենիները յետ փախան ու իրար խառնվեցին: Օգտվելով այդ հանգամանքից, յես շտապ վազեցի սպիտակ գերու մոտ:

Այն յերկու վայրենին, որ պատրաստվում եյին սպանելու գերուն, արդեն փախել եյին ծովը և նավակի մեջ թաքնվել: Նրանց միացան և յերեք վայրենի: Յես հրամայեցի, որ Ուրբաթը նրանց վրա կրակ բանա: Ուրբաթը մոտեցավ և հրացանն արձակեց: Յես կարծում եյի, թե նա բոլորին սպանեց, վորովհետև նրանք վայր թափվեցին նավակի հատակին, բայց յերկուսը շտապով վոտի կանգնեցին: Յերկուսը սպանվել եյին, իսկ մեկն էլ մահացու վիրավորվել: Մի քանի րոպեյից հետո նա էլ մեռավ:

Այդ ժամանակ յես զբաղված եյի խեղճ գերու կապերը քանդելով: Արձակելով ձեռքերն ու վոտները, վեր բարձրացրի գերու գլուխը և Պորտուգալերեն հարցրի, թե անունն ի՞նչ է:

—Յեվրոպացի,— շշնջաց նա, չգիտեմ ինչու լատիներեն լեզվով:

Այնպես թույլ, ուժասպառ եր նա, որ վոչ միայն չեր կարողանում վոտի կանգնել, այլ լեզուն շարժել դժվարանում եր: Յես նրան նորից գետնին նստեցրի, հանեցի գրպանիցս ռոմի շիշը և տվի նրան խմելու: Յերբ

Յես գերու կապերը քանդեցի:

ռոմը խմեց և հաց կերավ, յես հարցրի թշվառին թե ինչ ազգից է:

— Իսպանացի— ասաց նա,— ռոմից ուժ ստացած:

Փոքր ինչ ուշքի գալով, նա շնորհակալություն հայտնեց իր կյանքն ազատելու համար:

— Սինյոր, այդ մասին դեռ հետո, հիմա պետք կռվել: Յեթե դուք ուժ ունեք, վերցրեք այս ատրճանակը, այս թուրը,— ասացի յես:

Իսպանացին ուրախությամբ ընդունեց իմ առաջարկը և վոտի կանգնեց: Նա կրակ կտրած հարձակվեց իր դահիճների վրա: Դժվար չեր այդ վողորմելի եյակների հետ հաշիվ տեսնել: Նրանք մեր հրացանների պայթյունից և անակնկալ հարձակումից այնքան եյին շփոթվել-շշմել, այնքան եյին ընկճվել-թուլացել, վոր փախչելու ուժ չունեյին, ուր մնաց թե մեզ հակահարված տային:

Պատրաստ պահելով լցրած հրացանս, յես հրամայեցի Ուրբաթին, վոր վազելով գնա, բերի մեր դատարկ

հրացանները: Նա իսկույն կատարեց հրամանս: Ցես սկսեցի մեկը մյուսի յետևից լցնել Ուրբաթի բերած հրացանները և ասացի Ուրբաթին և իսպանացուն, վոր նրանք հարկավոր դեպքում վերցնեն իմ մոտից լցրած հրացանները:

Այդ միջոցին իսպանացին կռվի բռնվեց մի վայրենու հետ: Վայրենին ուշքի գալով, անխնա հարվածներ եր հասցնում իսպանացուն փայտե թրով, վորի բռնեցնելը շատ լավ գիտեր: Իսպանացին ել չնայած իր թուլությանը, քաջությամբ եր կռվում: Նա կարողացավ մի քանի վերք բանալ վայրենու գլխին: Սակայն վայրենին մի պնդակազմ յերիտասարդ եր: Բռնելով իր հակառակորդի ուսերից, նրան գետին գլորեց և աշխատում եր ձեռքից թուրն առնել: Իսպանացին թողեց թուրը, վոր իր գոտիկից ատրճանակը հանի: Հանեց և կրակեց իրեն խեղդող վայրենու վրա: Վայրենին սպանվեց տեղն ու տեղը:

Ուրբաթն ընկավ փախուստի դիմող մնացած վայրենիների յետևից: Քսանմեկ մարդակերներից միայն յերեք հոգի կարողացան ազատվել մեզանից և նավակ նստել:

Այդ փախստականները բոլոր ուժով թիավարում եյին իրենց նավակը, վորպեսզի շուտ ազատվեն մեր գնդակներից: Ուրբաթը պահանջում եր, վոր մենք ել նավակ նստենք և գնանք նրանց յետևից: Ճիշտն ասած, յես վախեցա, վոր այդ վայրենիները վտանգից դուրս գալով, կգնան, մի քանի հարյուր հայրենակիցներ հավաքած կգան մեզանից վրեժ առնելու: Այդ պատճառով յես վորոշեցի հետևել Ուրբաթի խորհրդին, հալածել փախստական վայրենիներին: Հրամայելով Ուրբաթին ինձ հետևելու, յես վազեցի դեպի նավակներից մեկը և թռա վրան: Բայց վորքան զարմացա, յերբ նավակի հատակին գտա մի վայրենի, ձեռներն ու վոտները պինդ կապկպած: Հավանորեն նա նույնպես մահվան եր դատապարտված մարդակերների կողմից: Նա սարսափահար ընկած եր նավակի հատակին և չեր հասկանում, թե ինչ է կատարվում ծովափին:

Նա այնքան պինդ եր կապկպված, այնքան յերկար

եր մնացել այդ դրության մեջ, վոր տեղից չեր կարողանում շարժվել, մեռածի պես ընկած եր հատակին:

Ցես կտրատեցի յեղեգից և յեղենու թփերից հյուսած պիրկ թելերը, ազատեցի գերու ձեռներն ու վոտները և

Դա նրա հայրն եր

ուզեցի նրան վոտի կանգնեցնել: Բայց վողորմելին այնքան ուժ չուներ, վոր վոտի կանգներ կամ խոսեր, միայն ցավալի հառաչում եր կարծելով, թե իրեն մորթելու յեն տանում:

Ցես խնդրեցի, վոր Ուրբաթը բացատրի վայրենուն, թե նրան վոչ մի վտանգ չի սպառնում, թող բոլորովին անհոգ մնա, և խմելու համար ռոմ տա նրան: Ուրբաթի բացատրությունը և մի կում ռոմն ունեցան իրենց բարերար ներգործությունը: Վայրենին կենդանացավ և պառկած տեղից նստեց: Բայց հենց վոր Ուրբաթը լսեց նրա ձայնը և լավ դիտեց դեմքը, մի այնպիսի տեսարան ներկայացավ, վոր ամենաքարասիրտ եյակից ել կարող եր արցունք քամել: Ուրբաթն ընկավ վայրենու վզով, սկսեց համբուրել, գրկել, սեղմել իր կրծքին: Ուրբաթը լալիս եր, ծիծաղում, աղաղակում եր, ցատկոտում, պա-

բում էր ու յերգում, ապա նորից լալիս էր, ձեռները ճըմ-
լում, տրորում, իր գլխին ու յերեսին խփում, կրկին
թռչկոտում, ելի յերգում խելագարի պես: Մինչև Ուր-
բաթի բերանից մի խոսք դուրս քաշելը, շատ ժամանակ
անցավ և ստիպվեցինք նրան ասելու, թե բանն ինչումն
է: Յերբ Ուրբաթը մի քիչ ուշքի յեկավ, բղավեց.

— Դա իմ հայրն է:

Ուրախությունից ինչեր չեր անում Ուրբաթը, տեսնելով հորը ստույգ մահից ազատված: Նա մեկ դուրս էր վազում նավակից, մեկ թռչկոտելով ընկնում, նըստում էր հոր կողքին, բաց անում իր կուրծքը և հոր գլուխը սրտին սեղմում, շփում էր ու տաքացնում իր ձեռներով և տաք շնչով ծերունու մարմնի քարացած անդամները, հետո ել ուրախալի արցունք էր թափում հորդ անձրևի պես:

Գլխավոր պատճառն այդ դեպքն էր, որ մենք չկարողացանք գնալ վայրենիների նավակի յետևից, բայց թե մի մեծ վտանգից ազատ մնացինք: Մոտ յերկու ժամից հետո, յերբ փախստական վայրենիները հազիվ եյին անցել իրենց ճանապարհի մի քառորդ մասը, մի սոսկալի քամի բարձրացավ, ալեկոծեց ծովը, և տևեց ամբողջ գիշերը մինչև առավոտ:

Քանի որ քամին փախստականների ընթացքին հակառակ էր փչում, յես այնպես եյի կարծում, որ նրանք այդպիսի կատաղի քամուց գլուխ հանողը չեն, ուրեմն անշուշտ զոհ եյին գնալու ապուսպ ալիքներին:

Յես Ուրբաթի ոգնությամբ ծառի հաստ ճյուղերից մի պատգարակ շինեցի, որի վրա պառկեցրինք խաղանացուն և Ուրբաթի հորն ու տարանք մեր ամրոցը: Ճիշտն ասած, մենք նրանց տարանք մինչև ամրոցի արտաքին պատի տակ: Այդտեղ մի նոր դժվարության հանդիպեցինք: Անհնարին էր հյուրերին փոխադրել պարսպի վրայով, իսկ պարիսպը քանդել յես չեյի ցանկանում, վորոշեցի տեղավորել նրանց պարսպից դուրս:

Ի հարկե հարցը բազմակողմանի քննելուց հետո, յես հարմար գտա մի վրան շինել ամրոցից և նրա շըրջապատող պուրակի կենտրոնում: Այդ շենքի համար շատ պետք յեկան հին առագաստի լաթերը, որ ուղում

եյի դուրս գցել: Ընտրեցի ավելի լավ մնացած ամուր
Ճկոտրները և այդ կտորներից մի քանի ժամվա մեջ Ուր-
բաթի հե տմիասին մի բավական գեղեցիկ ու ընդարձակ

Պատգարակով տարանք խաղանացուն և Ուրբաթի հորը:

վրան պատրաստեցինք: Հետո զարձանք վրանը վերից
ցախերով ու կանաչ ճյուղերով ծածկեցինք:
ցախերով ու կանաչ ճյուղերով ծածկեցինք:
Յերբ արդեն վրանը արտաքուստ պատրաստ էր.
մենք նրան կարգի բերինք և ներքուստ: Յերկու անկողին
սարքեցինք բրնձի ծղոտներից: Անկողինների վրա տա-
կից սավաններ, վրայից վերմակներ փռեցինք: Այդպի-
սով հյուրերիս տեղը պատրաստ էր:

ԿՂԶԻՍ ՄԱՐԴԱԲՆԱԿ

մարդաբնակ էր: Հիվանդներին տեղա-
Հիմա կղզին մտածեցինք նրանց ապրուստի
վորելուց հետո, պետք մտածեցինք նրանց ապրուստի
մասին, վոր նրանք սոված չմնային: Ուրբաթը գնաց
մեր հոտից մի տարեկան ուլ բերեց և մորթեց: Յես է
Ուրբաթը թարմ մսից մի շատ համեղ կերակուր պատ-
րաստեցինք և մաշրին ել բրինձ գցեցինք: Նոր վրանի
չուրջը մեր խոհանոցն էր դարձել, կերակուրն այնտեղ ե-

յինք յեփում: Ուրրաթն ամանեղենն այնտեղից եր կրում: Մենք մի քանի տախտակ տարանք վրանը և նրանցից սեղանի պես մի բան կազմեցինք և բոլորս էլ նրա շուրջը նստեցինք: Պետք է խղճով ասեմ, որ յես սիրալիր տանտեր եյի, շատ լավ կերակրում եյի իմ հյուրերին, ինչով որ կարող եյի: Բանից դուրս յեկավ, որ իսպանացին ավելի լավ եր խոսում վայրենիների լեզվով, քան յես իսպաներեն:

Այդ պատճառով Ուրրաթի միջոցով եյի խոսում նրա հոր և իսպանացու հետ:

Յերբ մենք ընթրեցինք, յես հրամայեցի Ուրրաթին, որ նավակ նստի և բերի մեր այն բոլոր զենքերը, որոնք մնացին կռվի տեղում: Նա շատ շուտով կատարեց այդ հրամանը: Հետևյալ օրն առավոտյան մենք հողին հանձնեցինք սպանվածների դիակները, որ արևի տակ նեխվելով, վարակ չտարածեն:

Իմ հրամանով Ուրրաթը հողում թաղեց նաև վայրենիների խնճույքի մնացորդը:

Յես խնդրեցի Ուրրաթին, որ իմանա հոր կարծիքը այն վայրենիների նկատմամբ, որոնք փախչելով ազատվեցին: Հիմք կա՞ կարծելու, որ նրանք կազմակերպված յետ գան:

Ուրրաթի հայրը կարծիք հայտնեց, որ փախստականների նավակը հավանորեն, սաստիկ ալեկոծումից խորտակված կլիներ կես ճանապարհին, կամ թե, սաստիկ փոթորիկը քշած-տարած կլինի նրան դեպի հարավ, դեպի ուրիշ յերկրի ափեր, որտեղ ապրում են ավելի վայրենի ցեղեր: Փախստականները կընկնեն նրանց ձեռքը, իսկ ինչ վերաբերվում է այն հարցին, թե նրանք ինչ միջոցներ ձեռք կառնեն, յեթե անվնաս հասնեն իրենց ափերը, այսինքն՝ մարդ կհավաքե՞ն ու կազմակերպված կգա՞ն մեր կղզին, նա այդ հարցին դրական պատասխան չկարողացավ տալ, բայց յենթադրեց, որ փախստականները շատ վախեցած եյին մեր անակնկալ հարձակումից, մեր հրացանների կրակից ու պայթյունից, այնպես որ յետ դառնալու մասին չեյին էլ կարող մտածել, թեկուզ շատ լինեյին: Նրա կարծիքով փախստականները կպատմեն

իրենց հայրենակիցներին, որ բոլոր նրանց ընկերներն սպանվեցին որոտից ու կայծակից, որ նետում եյին նրանց վրա ինչվոր չար ոգիներ, մեկն սպիտակ մարդու կերպարանքով, մյուսը գունավոր: Նա նրա համար եր այդպես մտածում, որ ինքն իր ականջով լսել եր, թե ինչպես վայրենիներից մեկը մյուսին ձայն եր տալիս.

— Միայն չար ոգիները կարող են որոտ ու կայծակ նետել և վոչ մարդիկ:

Ծերունին ճիշտ եր ասում: Հետագայում յես իմացա, որ վոչ միայն այդ վայրենիները, այլև նրանց հարևան ցեղերի վայրենիները սիրտ չեյին անում մոտենալ իմ կղզուն: Փախստականներն ազատվեցին և ինչպես լուր տարածեցին, որ կղզու վրա չար ոգիներ են հայտնվել և որոտով ու կայծակով սպանում են այն բոլոր մարդկանց, որոնք կհամարձակվեն մոտենալ այդ կղզուն: Բայց յերկար ժամանակ, քանի դեռ յես այդ բանը չեյի իմացել, վախ ու յերկյուղ մեջ եյի և չարունակ պատրաստ եյի պահում իմ «բանակը»:

Սակայն մի առժամանակ անցնելուց հետո յես սկսեցի հանգստանալ, տեսնելով, որ ինչպես վայրենիներն այլևս չեն յերևում:

Հարևան յերկիրը գնալու միտքը նորից պատեց ինձ: Ուրրաթի հոր ասելով, ինձ այնտեղ լավ ընդունելություն ցույց կտան, հենց այն լավության համար, որ յես արի նրա և վորդու համար:

Բայց յես այդ իմ մտադրությունը հետաձգեցի, յերբ իսպանացու հետ մի լուրջ խոսակցություն ունեցա:

Յես նրանից իմացա, որ այն յերկրում ինչպես իսպանացիներ և պորտուգալացիներ կան՝ խորտակված նավից ազատված նրա ընկերները: Նրանք թեև ապաստան գտան վայրենիների մոտ և բավական հաշտ են ապրում նրանց հետ, բայց ամեն բանի կարիք են զգում, մինչև անգամ ամենաանհրաժեշտ բաների: Յես խնդրեցի, որ պատմի իր ճանապարհորդության մանրամասնությունները, այդպիսի տխուր վախճան ունեցող ճանապարհորդության և նա ինձ հաղորդեց հետևյալը: Նա գնում եր իսպանական նավով Ռիո-դե-լա-Պլատայից դեպի Հավաննա, որտեղ թափելու յեր բեռը

բաղկացած գազանների մորթիներից ու արծաթից և փոխարենը վերցնելու յեր յեվրոպական ապրանք, ինչվոր պատահեր: Նավում կային հինգ պորտուգալական նավաստի, վորոնց նավը խորտակվել եր և նրանք ընդունվել եյին այս նավի վրա: Խորտակվելու ժամանակ, վորտեղ և Իսպանացին եր, հինգ հոգի խեղդվեցին, իսկ մնացածները, վորոնց թվում և Իսպանացին, ահագին դժվարությամբ հասան մինչև վայրենիների ափը:

Պատմելով այդ, Իսպանացին ավելացրեց, վոր ընկերների մոտ մնացած զենքերը բոլորովին անպետք եյին, վորովհետև ջուրն ամբողջովին թրջել եր իր վառոդը, միայն ընկերներից մեկի մոտ քիչ վառոդ եր մնացել, ջրից անվնաս: Նրանք այդ վառոդը գործադրեցին իրենց համար ապրուստ ճարելու:

Յես հարցրի, թե նա ինչ ե մտածում իր ընկերների ապագայի մասին, արդյոք նրանք այնտեղից փախչելու ծրագիր չե՞ն կազմել: Նա պատասխանեց, վոր նանք շատ եյին խորհրդակցում այդ բանի մասին, բայց յելք չեյին գտնում, վորովհետև վոչ նավ ունեյին և վոչ ել շինելը գիտեյին: Հենց այդ պատճառով նրանց բոլոր խորհրդակցությունները վերջանում եյին հուսահատությամբ և արցունքով:

— Բայց ինչպե՞ս կվերաբերվեյին նրանք,—հարցրի յես Իսպանացուն,—յեթե յես ինքս ծրագիր կազմեյի նրանց այնտեղից ազատելու և այս կղզին բերելու համար:

Իսպանացին պատասխանեց, վոր նրա ընկերները տարաբախտ դրության մեջ են, վոր նրանք կրախտավորվեյին, յեթե ընդունեյին այդ առաջարկը:

Այդտեղ յես վորոշեցի, թեկուզ ինչ ել լինի, օգնություն տալ Իսպանացու դժբախտ ընկերներին և ուղարկել Ուրբաթի հորը հենց այդ Իսպանացու հետ՝ բանակցություն վարելու: Յերբ իմ դեսպանների գնալու համար ամեն բան պատրաստ եր, Իսպանացին ինձ մի գործնական և խոհեմ առաջարկ արավ: Ընդունելով այդ առաջարկը, յես պիտի մի ամբողջ կես տարի հետաձգեյի իմ մտադրությունը:

Այ թե բանն ինչումն եր: Համարյա մի ամիս մեզ հետ ապրելով, Իսպանացին լավ իմացավ, թե յես և Ուրբաթն ինչ ճանապարհով ենք բավարարություն տալիս այս անապատում մեր առօրյա պահանջներին: Իսպանացին այն եր հասկացել, վոր իմ ունեցած գարու և բրինձի պաշարը լիովին բավական եր մի ավելորդ մարդու համար, բայց նրա բոլոր ընկերների համար մի կարճ ժամանակամիջոց ել չեր դիմանալ, ինչքան ել ուզենայինք խնայողություն անել: Իսպանացին շատ տեղին նկատեց, վոր այդքան հացապաշարով մենք վոչ մի մարդաբնակ յերկիր չենք հասնի, թեկուզ անգլիական գաղութներից մեկը, ուր յես եյի ուզում գնալ, այլ այդ պաշարը կուտենք—կվերջացնենք նոր նավ շինելու ժամանակ: Այդ պատճառով նա մի հիմնական խորհուրդ տվեց.—արտերի թիվն ավելացնել, լավ մշակել և շատ ցանել, վորպեսզի առատ հունձ ու բերք ստանանք: Դա դժվար գործ չեր, քանի, վոր մեր կղզում բանվորական ձեռքերն ավելացել եյին:

Ն Ա Խ Ա Տ Ե Ս Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Իսպանացու հեռատեսությունը և խելացի խորհուրդն ինձ այնպես դուր յեկավ, վոր յես առանց առարկելու համաձայնվեցի նրա հետ: Մի հարմար հողամաս ընտրեցինք ու սկսեցինք միասնական ուժերով մշակել, ի հարկե այն չափով, ինչ չափով թույլ եյին տալիս մեր անկատար փայտե գործիքները:

Մի ամիս չանցած, վարած հողամասը սերմելու համար պատրաստ եր:

Հենց այդ ժամանակ վրա հասավ ցանքսի ժամանակը: Մենք ցանեցինք քսաներկու չեավերիկ գարի և տասնվեց կոտ բրինձ: Դրանից ավելի բաժին յես չեյի կարող հանել իմ սուղ պաշարից: Յես այնքան գարի թողի, վորքան հարկավոր եր չորս մարդ կերակրելու համար մի քանի ամսվա ընթացքում:

Հիմա յերեք բարի ընկերոջ հասարակության մեջ ապրելով, յես այլևս չեյի վախենում վայրենիների հարձակումից. հավատացած եյի, վոր մենք նրանց

«Հախծից» կզայինք, յեթե միայն բազմաթիվ չլինեյին: Մենք բոլորովին անվախ շրջում եյինք ամբողջ կղզին, մտածելով միայն մեր ազատության մասին: Մեզանից ամեն մեկը մի նոր բան եր մտածում, վոր նպաստած լիներ ցնորքների իրագործմանը:

Բոլորովին համատացած ,վոր իսպանացու ընկերները մեծ ուրախությամբ կհամաձայնվեն իմ առաջարկին, յես արդեն նշել եյի մի քանի ծառ նավի կառուցման համար: Մենք կտրեցինք այդ կաղնի ծառերը և

Հողամասը վարեցինք:

նրանցից տախտակներ քաշեցինք: Ամեն մի տախտակն ուներ յերկու վոտնաչափ լայնություն, յերեսուն հինգ վոտնաչափ յերկարություն, հաստությունը մոտ յերկու մատնաչափ: Հարկավո՞ր է ասել, թե մենք առանց անհրաժեշտ գործիքների ինչքան չարչարվեցինք, ինչքան քրտինք թափեցինք, մինչև վոր գործը գլուխ բերինք:

Միևնույն ժամանակ յես աշխատում եյի իմ ընտանի այծերի հոտը մեծացնել: Այդ նպատակով յես և ընկերներս որ մեջ, հերթով գնում եյինք վորսի: Վորսն այս

ձևով եյինք անում: Յեթե պատահում եյինք այծի ուլիկների հետ, մորն սպանում եյինք, ուլիկներին քշում, բերում եյինք մեր հոտը, վորտեղ նրանք շուտով դառնում եյին ձեռնասուն ընտանի: Այդ ձևով մենք մինչև քսան հատ արու այծիկներ վորսացինք:

Հետո, յերբ խաղողաքաղն ընկավ, մենք այնքան խաղող հավաքեցինք ու չորացրինք, վոր կարելի յեր մի քանի տասնյակ տակառ լիքը լցնել: Այդ խաղողը հացի հետ միասին պիտի գլխավոր տեղը բռներ մեր սննդի մեջ. կարող եմ բոլորովին հավատացնել, միայն խաղողով ու հացով կարելի յեր շատ լավ գլուխ պահել, վորովհետև այդ ել, այն ել միասին շատ սննդարար են, ել չասենք թե վորքան համեղ են:

Վերջապես հունձն սկսվեց: Շատ առատ հունձ ստացանք, թեև կարելի յեր ավելի սպասել, քանի վոր հողն այստեղ զարմանալի շատ արգավանդ եր: Բայց մենք յեղածից ել գոհ եյինք, վորովհետև ստացված բերքը լիովին բավարարություն եր տալիս մեր պահանջներին: Քսաներկու չետվերիկ գարին ծեծվելուց հետո դարձավ մոտ յերկու հարյուր քսաներկու չետվերիկ: Այդքան ել բրինձ ստացվեց: Այդ քանակությամբ հացահատիկը մեզ ազատ կհասցներ մինչև ապագա հունձը, յեթե մինչև անգամ այն տասնվեց հոգին ավելանային: Համենայն դեպս մեր մտադրված ճանապարհորդության ժամանակ մենք ուտելու հաց կունենայինք:

Հացահատիկը ներս առանք, լցրինք նկուղը: Հետո սկսեցինք զամբյուղներ գործել, վոր նրանց մեջ հացահատիկ լցնենք, տանենք նավը բեռնենք: Իսպանացին այդ կողմից մեծ վարպետ դուրս յեկավ:

Յերբ բոլոր տեսակի պաշարեղենները պատրաստ եյին, յես իսպանացուն առաջարկեցի ուղևորվել դեպի հարևան ափը, բանակցել իր այնտեղի ընկերների հետ և գլուխ բերել մեր ծրագրած ճանապարհորդությունը:

Մանրամասն ցուցմունքներ ստանալուց հետո, իսպանացին և Ուրբաթի հայրը ճանապարհ ընկան այն նավակով, վորով վայրենիները նրանց յերկուսին եր

11 Ռոբինզոն Կրուզո

բերել եյին կղզու ափը, մորթելու և ուտելու: Յես նրանց տվի մի-մի մուշկետ, բավականաչափ վառոդ ու գնդակ և պատվիրեցի, վոր զինապաշարը խնայողությամբ բանեցնեն, այն ել միայն ծայրահեղ դեպքում:

Իմ դեսպանների գնալը սիրտս ուրախությամբ լցրեց, յես ուղղակի հրճվեցի, վորովհետև այդ առաջին նպատակահարմար գործն եր, վոր յես ձեռնարկել եյի իմ ազատության համար, ավելի քան քսանյոթ տարվա ընթացքում:

Բացի զենքից, յես դեսպանների հետ մի շաբաթվա հացի ու խաղողի ճամբապաշար դրի՝ հարևան յերկիրը գնալու և այնտեղից յետ գալու համար: Այդպես մատակարարելով դեսպաններիս կենսական բոլոր անհրաժեշտ բաները, յես բարի ցանկություններով ճանապարհեցի նրանց:

ՀՅՈՒՐԵՐԸ

Բարենպաստ քամին առաջ եր տանում ծովի ընդարձակ և կոկ յերեսով դեսպաններիս նավակը: Այդ ըմնը, իմ յենթադրությամբ, հոկտեմբերի մեջն եր: Ասում եմ «իմ յենթադրությամբ», վորովհետև միանգամ կորցնելով որերի հաշիվը, յես առաջվա նման որացույց չեյի պահում, չեյի կարողանում մինչև անգամ կղզում մնացածս տարիների թիվը վորոշել. գոնե, այդպես եյի կարծում, բայց հետագայում, ստուգման ժամանակ, պարզվեց, վոր իմ պահած հաշիվը կատարելապես ճիշտ եր, բացի միայն մի որից, վոր բաց եյի թողել հիվանդությանս ժամանակ, ինչպես առաջուց արդեն ասել եմ:

Դեսպաններիս գնալուց ութ որ հետո մի տարորինակ, անակնկալ դեպք պատահեց: Առավոտ եր: Յես դեռ անկողնումն եյի, վոր Ուրբաթը ներս պրծավ ու սարսափելի աղաղակեց.

— Գալիս, գալիս են...

Կարծելով, վոր դեսպաններս յեկան և վոչ մի վտանգ չնախատեսելով, յես վեր թռա անկողնիցս և համարյա

կիսամերկ վազեցի իմ ձեռակերտ անտառը, այս անգամ առանց զենքի:

Մեծ զարմանքով նկատեցի ծովի վրա, ափից մոտ հինգ մղոն հեռու մի մեծ մակույկ թեք առագաստի տակ: Այդ մակույկը իրեն հալածող բարենպաստ քամու ոգնությամբ սլանում եր դեպի մեր նավահանգիստը: Վորքան յես հասկացա, մակույկը գալիս եր կղզու հարավային ափի ուղղությամբ:

Մոտ կանչելով Ուրբաթին, պատվիրեցի նրան, վոր թագնվի և դիտի, թե ինչ մարդիկ են նստած մակույկում, իսկ ինքս վազեցի հեռադիտակը բերելու: Վրանից վերցրի հեռադիտակը և սանդուխքի ոգնությամբ բարձրացա սարի գագաթը, այնտեղից դիտելու, թե ծովում յերևացողն ինչ մակույկ ե:

Հիմա յես պարզ վորոշեցի, վոր ափից չորս մղոն հեռավորության վրա, դեպի հարավ-արևելք, խարիսխ գցած կանգնած ե մի նավ: Բոլոր նշաններից յերևում եր, վոր նավն անգլիական եր, այնպես ել և մակույկը:

Ճիշտն ասած, դա մակույկ ել չեր, ավելի շուտ բարկաս—մի բեռնակիր նավ:

Չեմ կարող նկարագրել այն ուրախությունը և միաժամանակ շփոթմունքը, վոր այդ րոպեյին տիրեց ինձ:

Տեսածս անգլիական նավ եր, ուրեմն յեկողներն ել իմ հայրենակիցները և իմ ծանոթները: Ասում եմ, վոր ուրախությանս հետ միասին իմ սրտում մի գաղտնի կասկած ծագեց: Ել չգիտեմ, թե այդ կասկածն ինչով եր պայմանավորված, յես վախենում եյի, չլինի թե վտանգ ե սպառնում: Դրա համար ինձ զգույշ և պատրաստ եյի պահում: Նախ՝ իմ մտքով անցավ, թե ինչի՞ց ստիպված անգլիական նավն յեկել ե այստեղ, այս հեռավոր յերկիրը, քանի վոր անգլիացիներն այստեղ վոչ մի առևտրական բազա չունեյին: Յես այն ել գիտեյի, վոր նույնիսկ փոթորիկը չեր կարող բերել այստեղ մի անգլիական նավ: Յենթադրում եյի, վոր նավը դիտմամբ ե յեկել այս կողմերը, բայց թե ի՞նչ նպատակով, դա ինձ համար պարզ չեր: Այդ դեպքում ավելի լավ կլիներ, վոր յես բոլորովին ցույց չտայի ինձ: Մի գուցե նավը գտնըվում ե ծովահենների տրամադրության տակ:

Շարունակելով իմ դիտողությունները, յես ժայռի գլխից տեսա, վոր մակույկը մոտենում ե ափին, կանգ առնելու համար տեղ ե վորոնում:

Զնկատելով իմ փոքրիկ ծովածոցը, մակույկ վարող նավաստիները մոտեցան յեզերքին, մակույկն ափ հանեցին՝ մոտ կես մղոն հեռու իմ բնակարանից: Յերբ բոլոր նստողները մակույկից ափ դուրս յեկան, յես համոզվեցի, վոր բոլորը, գուցե և մեծ մասը, անգլիացիներ են: Ինձ այնպես թվաց, վոր մի յերկուսը հոլլանդացիներ պիտի լինեյին, բայց հետո պարզվեց, վոր յես սխալված եմ յեղել: Բոլոր ափ դուրս յեկողները տասնմեկ հոգի եյին, յերեք հոգի մինչև անգամ շղթայված: Ափ դուրս յեկողներից չորս թե հինգ մարդ մակույկից դուրս քաշեցին այն յերեք կապվածներին: Ցես պարզ նկատեցի, թե ինչպես այդ թշվառներից մեկն ամբողջ մարմնով անընդհատ ցնցվում եր, արտահայտելով վիշտ, սարսափ և հուսահատություն: Մյուս յերկուսն ել կոտրատում եյին իրենց ձեռքերը, բայց կատաղության չեյին հասնում, ինչպես առաջին ընկերը: Ընդհանրապես նրանք ավելի հանգիստ եյին: Այդ տեսարանը ինձ չափազանց վրդովեց, յես չգիտեյի ինչ անեմ:

Ուրբաթը, վոր այդ ժամանակ թաքնված եր մի մեծ թփի տակ, ասաց ինձ.

— Այ, քո ազգն ել գերի ուտել, ինչպես իմ ազգ ուտել:

— Ինչ ես ասում, այ Ուրբաթ,—պատասխանեցի յես,—միթե՞ դու կարծում ես, վոր նրանք կապվածներին կուտեն:

— Ուզել, ուտել գերի, ափ բերել գերի:

— Վոչ, Ուրբաթ,—առարկեցի յես,—այդ մարդիկ իրենց գերիներին սպանել կարող են, բայց չեն ուտում:

Իսկապես յես չեյի հասկանում, թե ինչ ե կատարվում այնտեղ, ափին: Սարսափից դողում եյի, ամեն մի րոպե սպասելով, թե անգլիացիք կսպանեն գերիներին: Ցես տեսա նույնիսկ, թե ինչպես յեկվորներից մեկը բարձրացրեց սուրը մի գերու վրա, վորը հուսահատ կյանք եր աղերսում: Այդ ժամանակ յես անչափ ափսոսացի, վոր Ուրբաթի հայրն ու իսպանացին մեզ մոտ չեն:

Ցես սրանց ուզում եյի հանկարծակի հարձակվել մարդասպանների վրա և ազատել անբախտ գերիներին. մանավանդ, վոր ավազակների մոտ հրազեն չեր յերևում: Զենքի կողմից, ինչպես հայտնի յե, ընթերցողին, յես պակասություն չունեյի:

Այն ժամանակ, յերբ նավաստիներից մեկը ծաղրում եր գերիներին, նրա ընկերներն ափով դեպի վեր գնացին. յերևի մոտիկից կղզին դիտելու: Ընկերների հետևից ծաղրող նավաստին ել գնաց, ինչպես յերևում եր, տալով գերիներին լիակատար ազատություն՝ գնալու ուր ուզենան: Բայց գերիները տեղից չհեռացան: Խորին մտատանջության մեջ, գլուխները խոնարհած, նստեցին գետնին: Այստեղ յես իսկույն հիշեցի իմ կյանքի առաջին րոպեները, յերբ ալիքներն ինձ ափը նետեցին: Ցես հիչեցի, թե ինչպես յես այն ժամանակ չուրջս եյի դիտում, զգալով իմ դրության ամբողջ սարսափը, թե ինչպես ծառը բարձրացա, վոր գազանների բաժին չդառնամ:

Նավաստիները մակույկի միջից ափ դուրս յեկան այն ժամանակ, յերբ մակընթացույթունից ջուրը սաստիկ բարձրացել եր: Հիմա, յերբ նրանք գերիների՝ թողած, անհոգ թափառում եյին կղզում, տեղատվությունն սկսվեց, ջուրը ցածրացավ, նավակը նստեց ավազի վրա:

Մակույկի վրա մնացել եյին յերկու մարդ, վորոնք, ինչպես հետո պարզվեց, հարբել եյին ու խոր քնել: Վերջապես, նրանցից մեկը զարթնեց, տեսավ, վոր մակույկն այնպես ե խրվել ավազի մեջ, վոր մի մարդու բան չե հանելը, զարթնեցրեց իր ընկերոջը և սկսեց կանչել ցրված ընկերներին: Այդ ձայնի վրա բոլոր ընկերները յեկան-հավաքվեցին մակույկի չուրջը: Բոլորը միասին ինչքան ել աշխատեցին, չկարողացան մակույկը տեղից քաշել, ջուրը գցել: Ի՞նչ կարող եյին անել, քանի վոր մակույկը շատ ծանր եր և շատ ել խորն եր թաղվել կպչուն և ամուր ծանծաղուտի մեջ: Նավաստիները հայհոյանքի տարափը բաց արին, թքեցին, թողին մակույկն իր տեղում, իրենք դարձյալ գնացին զբոսնելու: Այն ժամանակ մի նավաստի ձայն տվեց մյուսին.

— Գնանք, Ջեկ: Ջուր է մենք մեզ տանջենք: Այդ ձվի կեղևն ինքն իրեն ջուրը կընկնի, յերբ կսկսի մակընթացությունը:

Խոսակցությունը մաքուր անգլիերեն եր. և յես ել համոզվեցի, վոր բոլոր յեկվորներն իմ հայրենակիցներն են:

Այդ բոլոր ժամանակը յես մնում եյի աննկատելի և չեյի հեռանում ամրոցիս մոտ գտնվող սարից, վորտեղից դիտում եյի ծովափը: Յերբեք այնքան նշանակություն չեյի տվել ամրոցիս, վորքան այժմ, այս րոպեյին: Նորից սկսեցի պատրաստվել կռվի համար, միայն ավելի հիմնավոր կերպով, վորովհետև լավ գիտեյի, թե այս անգամ ինչ տեսակ թշնամիների դեմ եմ կռվելու: Ուրբաթին հրամայեցի հրացանները լցնել. նա արդեն մի փորձառու հրացանաձիգ եր դարձել: Պահելով ինձ համար յերկու վորսորդական հրացան, Ուրբաթին տվի յերեք մուշկետ:

Հագած եյի այծի մորթուց կարած, բուրդը դուրս, մի զարհուրելի վերարկու, գլխիս մի ահագին մորթե փափախ, մերկ սուրը գոտիս խրած, յերկու ատրճանակ կողքիցս կախ և յերկու ուսիս ել մի-մի հրացան: Յես պիտի վոր սարսափ ազդող կերպարանք ունենայի:

Վորոշեցի սպասել մինչև մութն ընկնելը, լավ գիտենալով, վոր մակույկը յերկոյան ժամի տասից առաջ տեղից շարժվողը չի:

Ո՞Վ ԵՔ ԴՈՒՔ

Մինչև մութը յես չեյի ուզում մի վճռական քայլ անել, բայց կեսորվա ժամի յերկուսին մոտ, որվա ամենատաք ժամանակ յես նկատեցի, վոր բոլոր նավաստիները ցիր ու ցան յեղան անտառում, յերևի ծառերի ստվերներում հանգստանալու: Մնացին միայն յերեք գերին՝ ծառի տակ անշարժ արձանի պես նստած, խորին հուսահատության մեջ, գուցե և չզգալով անտանելի շոգը: Յես վորոշեցի ոգտվել նավաստիների բացակայությունից, մոտենալ նրանց, հետները ծանոթանալ

և մանրամասն հարց ու փորձ անել: Վոտից մինչև գլուխ լավ զինված իմ ոտարոտի, ել չասեմ զարհուրելի, հագուստով գնացի դեպի գերիները: Ուրբաթը հետևում եր ինձ կրնկակոխ:

Յես աննկատելի մոտեցա նրանց քիչ հեռվից ձայն տվի իսպաներեն.

— Դուք ով եք:

Անծանոթները սաստիկ շփոթված, տեղերից վեր թռան և դեպի իմ կողմը դարձան: Ինձ տեսնելիս՝ ուղղակի սարսափեցին և քարացան՝ մնացին տեղերում, իսկ հետո սթափվելով, ուզեցին փախչել, բայց յես նրանց յետ կանգնեցրի, խոսելով անգլերեն:

— Մի վախեք ինձնից, անծանոթ մարդիկ: Գուցե ձեզ մոտ կանգնած է մի բարեկամ, վորին դուք չեյիք սպասում և վորը կոգնի ձեզ: Ինձ այնպես է թվում, վոր դուք մեծ դժբախտության մեջ եք: Յես վկա յեղա ձեր ափ դուրս գալուն և լսեցի, թե դուք ինչպես փրկություն եյիք աղերսում ձեզ այստեղ բերողներից: Յես տեսա, ինչպես նրանցից մեկը բարձրացրեց մերկ սուրը ձեզ վրա չար դիտավորությամբ, մարդասպանություն գործելու համար, կամ յես սխալվում եմ և վերջապես տեսածս իրականությունից դուրս բան եր:

Այն գերին, վորին յես դիմեցի, խորապես ապշած նայեց ինձ վրա և դողդոջուն ձայնով հարցրեց.

— Ու՞մ հետ եմ խոսում, ո՞վ եք դուք, վո՞գի, թե իսկական մարդ:

— Մի վախեք, — հանգստացեք, սեր, — ասացի յես: Յես հասարակ մահկանացու յեմ և մինչև անգամ ձեր հայրենակիցը, յեթե դուք, ի հարկե, անգլիացի յեք: Թեև յես այստեղ վոչ վոք չունեմ, բացի ահա այս ընկերից, — ավելացրի յես ցույց տալով Ուրբաթին, բայց ինչպես տեսնում եք, մենք բավականաչափ զենք ու ռազմամթերքի պաշար ունենք: Ասացեք ինձ պարզապես, թե ձեզ ի՞նչ դժբախտություն է պատահել և մենք ի՞նչով կարող ենք ձեզ ոգնել:

— Ավաղ, սեր, — աղաղակեց անծանոթը, մեր թշվառության պատմությունն ավելի քան յերկար է:

Քանի վոր մեր թշնամիները մեզանից հեռու չեն, չեմ կարող մանրամասնորեն պատմել: Բայց կարճ կպատմեմ— հիմա հաղորդելով միայն ամենաէյականը: Յես նավապետն եմ: Բոլոր նավաստիներն ապստամբեցին, ուզում եյին նավը դարձնել ավազակային նավ այն նպատակով, վոր ուրիշ նավեր թալանեն, բռնած մարդկանց իբրև գերիներ ծախեն Ալժիրում և այլ նման յերկրներում: Յես չեյի կարող իմ համաձայնությունը տալ: Վճռեցին սպանել ինձ, և յես հազիվ համոզեցի, վոր մեր կյանքը խնայեն, դուրս բերեն այս հեռավոր կղզու ափը, թե ինձ և այս յերկու ընկերներիս: Սրանցից մեկն իմ նավավարն է, իսկ մյուսը մի ճանապարհորդ: Մենք այդպես եյինք հաշվում, թե այս կղզին անմարդաբնակ է, բայց հիմա ձեզ տեսնելով, չենք իմանում ինչ մտածենք:

— Վո՞րտեղ են ձեր թշնամիները: Չնկատեցիք ու՞ր գնացին:

— Նրանք այնտեղ են, սեր,—պատասխանեց նավապետը, ցույց տալով անտառը:—Յես սարսափելի վախենում եմ, վոր նրանք մեզ կտեսնեն կամ կլսեն: Այն ժամանակ մենք էլ ձեզ հետ կորած ենք:

— Նրանք հրացեն ո՞ւնեն,—շարունակեցի յես:

— Նրանք միայն յերկու հրացան ունեն, մեկը թողել են նավակի վրա:

— Շատ լավ, յես հիմա գլխավոր և հարկավոր բանն իմացա: Հիմա ամեն բանի մեջ վստահ յեղեք ինձ վրա:

Հեռադիտակս ուղղեցի դեպի անտառ և ավելացրի.

— Հիմա յես նրանց տեսնում եմ:

Նրանք վայր են թափվել անտառում. ծառերի տակ և քնել: Դժվար չեր լինի նրանց կոտորելը, բայց չեմ ուզում քնածներին ձեռք տալ:

Ավելի լավ է չսպանենք, այլ արթնացնենք նրանց և բոլորին կենդանի-կենդանի ձերբակալենք:

Նավապետը հայտնեց, վոր նավաստիներից յերկուսը շատ հանդուգն են, ամենից առաջ այդ յերկուսին

պիտի բռնել: Մնացածներն իրենք կգան և անձնատուր կլինեն:

Յես խնդրեցի նավապետին, վոր այդ նավաստիներին ինձ ցույց տա, բայց վորովհետև տարծությունը հեռու յեր, նա մինչև անգամ հեռադիտակով չկարողացավ նրանց ուրիշներից վորոշել:

Վերադարձնելով հեռադիտակը, նավապետը հայտնեց, վոր ինքը պատրաստ է իմ հրամանները կատարելու, ամեն բանի մեջ ինձ հնազանդելու: Ինձ միայն մնում եր ասել, թե նա ինչ անի:

— Շատ գեղեցիկ,—ասացի յես, —ամենից առաջ գնանք այստեղից, վորպեսզի թշնամիները չկարողանան մեզ տեսնել և լսել: Յես մի անվտանգ և ապահով տեղ կտանեմ ձեզ. այնտեղ մենք կվորոշենք մեր անելիքը:

Նավապետը և նրա ընկերներն իսկույն հետևեցին ինձ:

Յերբ մենք հասանք իմ ձեռատունկ պուրակը, յես կանգ առա ու ասացի նավապետին.

— Այ թե ինչ, սեր, հիմա ուղղակի և չիտակ պատասխանեցեք իմ հարցին. յեթե յես վտանգի յենթարկելով իմ անձնական կյանքը, ձեր փրկության համար ամեն բան անեմ, ինչվոր ինձանից կախված է, դուք կը՞նդունեք իմ հետևյալ պայմանը:

Խոսքս կտրելով, նավապետն շտապ պատասխանեց, վոր վոչ թե միայն ինքը, այլև իրեն հանձնարարած նավը, յեթե միայն նորից ձեռք բերվի, կմնան իմ լիակատար տրամադրության տակ: Բոլոր նավաստիներն անպայման կհնազանդեն ինձ: Իսկ յեթե նավը ձեռք չընկնի, ապա նա պատրաստ է ապրել ու մեռնել ինձ հետ միասին:

Ընկերները հանդիսավոր կերպով հաստատեցին նույնը:

— Շատ ուրախ եմ, ջանոյմեն ընկերներ,—ասացի յես: Ահա իմ պայմանը, յեթե ձեր նավը ձեզ վերադարձվի, այն ժամանակ դուք պարտավոր եք Անգլիա տանելու ինձ և իմ ընկերոջն՝ առանց վարձ պահանջելու:

Նավապետը յերդումով հավատացրեց, վոր ամբողջությամբ կկատարի այդ պայմանը:

— Լավ,—պատասխանեցի յես,—վոր այդպես է, ահա ամենքիդ մի մի մուշկետ, բավականաչափ վառոդ ու գնդակ: Հիմա ասացեք, դուք ի՞նչ եք կարծում, ինչից սկսենք, ի՞նչ գործի անցնենք:

Տեսնելով իր վրա ունեցածս վստահությունը, նավապետը խորին շնորհակալություն հայտնեց ինձ, իսկ գործ սկսելը և ծրագրի իրագործումը թողեց իմ հայեցողությանը: Քիչ մտածելուց հետո, յես ասացի, վոր դուցե, ավելի լավ լինի քնած՝ խռովարարների վրա հարձակվելը: Գնդակներից ազատ մնացած նավաստիներն իրենք իրենց վոտով կգան հպատակվելու, փրկություն խնդրելու, մենք էլ նրանց կյանքը կխնայենք, չենք սպանի: Այդպես լավ կլինի: Հենց իրենք հանգամանքները կճնշեն խռովարարներին:

Այդ ժամանակ մեր ականջներին ձայներ հասան: Յես հեռադիտակն ուղղեցի դեպի այն կողմը, վորտեղ նավաստիներն եյին, և տեսա, վոր յերկուսն անտառից գալիս են: Հեռադիտակը տվի նավապետին, վոր նա յել դիտի և հետո հարցրի, թե դրանք այն յերկու նավաստիները չե՞ն, վորոնք ուզում են նավը թակարդ դարձնել, ուրիշ նավերից նավաստիներ և ճանապարհորդներ վորսան ու տանեն գերիների նման վաճառեն:

— Վոչ, պատասխանեց նավապետը:

— Յեթե այդպես է, թող անցնեն նրանք, —ասացի յես:

Նավապետը վերցրեց մուշկետն ու ատրճանակը և իր ընկերների ուղեկցությամբ առաջ գնաց: Ընկերներն էլ մի-մի հրացան ունեյին:

Ճամբին նավավարի հրացանի կոթը պատահաբար մի ծառի ճյուղի դեմ առավ և ջարդվեց: Այդ ձայնից զարթնեցին մնացած բոլոր նավաստիները: Նրանցից մեկը տեղից վեր թռավ ու ծառերի արանքներից դուրս նայեց: Մեզ տեսնելով (յես էլ, Ուրբաթն էլ գնում եյինք նավապետի և նրա ուղեկիցների հետ միասին), նավաստին սարսափից ճչաց և սկսեց բարձրաձայն կանչել իր

ընկերներին, վորոնք իրենից հեռու եյին գտնվում։ Բայց արդեն ուշ էր: Հազիվ նա կարողացավ մի յերկու բառ արտասանել, հանկարծ նավապետի ընկերները հրացանները տրաքցրին: Խռովարարներից մեկն սպանվեց, իսկ մյուսը ծանր վիրավորվեց: Չնայած ծանր վերքին, նա վոտքի կանգնեց և բարձրաձայն ոգնություն կանչեց: Բայց ո՞վ էր ոգնության հասնողը, ամեն մեկն իր գլուխն էր մոլորել, չէր իմանում ինչ անի:

Մնացածները հասկանալով, վոր իրենց կողմից դիմադրությունն անմիտ և ապարդյուն բան է, ծունկ չոգեցին և սկսեցին փրկություն խնդրել: Նավապետը հայտարարեց նավաստիներին, վոր ինքը պատրաստ է նրանց կյանքը շնորհել միայն այն դեպքում, յեթե նրանք գիտակցաբար կզղջան իրենց կատարած սխալը, կհրաժարվեն նավը ծովահենների նավ դարձնելու մտքից, մնացած նավաստիների ձեռքից յետ կխլեն նավը և նրան նորից յետ կտանեն Յամայկա կղզին, վորտեղից ծով եյին դուրս յեկել: Նավաստիները հենց այդտեղ հայտարարեցին, վոր նրանք թողնում են ծովահեններ դառնալու մտադրությունը և հանձն առան, վոր նավի վրա մնացած նավաստիների վրա յել կազդեն և նրանց խելքի կբերեն։ Լսելով հանցավորների անկեղծ զղջումը՝ նավապետն ասաց, վոր հավատում է և բաշխում է նրանց կյանքը։

Յես հակառակ չեյի նավապետի այդ վորոշմանը, բայց պահանջեցի, վոր ներվածների ձեռքերն ու վոտները կապած պահեն, քանի դեռ կղզումն են: Նավապետը դրան համաձայնեց առանց վորևէ հակաճառության։ Մի րոպեյի մեջ Ուրբաթին և նավապետին ուղարկեցի, վոր նավաստիների մակույկին տեր դառնան և այնտեղից վերցնեն առագաստն ու թիերը:

Այդ ժամանակ հայտնվեցին այն յերեք նավաստիները, վորոնք հեռացել եյին իրենց ընկերների մոտից, բայց հրացանի ձայն լսելով, վերադառնում եյին: Տեսնելով, վոր գերի նավապետը տիրող է դարձել, նրանք նույնպես ներողություն խնդրեցին և առանց դիմա-

գրության թույլ տվին, որ իրենց ձեռները կապեն: Այսպիսով մենք կատարյալ հաղթություն տարանք:

Ցես ու նավապետը կանաչների վրա նստած՝ սկսեցինք իրար պատմել մեր կյանքի արկածները: Ցես պատմեցի նավապետին, թե ինչպես եմ ապրում այստեղ: Նա սկանչ էր դնում լարված ուշադրությամբ և զարմանում էր, թե ինչպես եմ կարողացել հետզհետե ապահովել իմ անասնական դրությունը, ստեղծել բարեկեցիկ կյանք՝ աշխարհից կտրված այսպիսի հեռավոր և վայրենի անկյունում:

Մեր մեջ ունեցած այս բացվիրտ և սրտառուչ խոսակցություններից հետո ես տարա նավապետին իր յերկու ընկերոջ հետ իմ ամրոցը: Յերբ մենք անցանք յերկու պարիսպը և վերցրինք սանդուխքները, այն ժամանակ ես իմ նոր հյուրերին ճաշով պատվեցի: Ճաշից հետո ես նրանց ցույց տվի իմ բնակարանի արդ ու զարդը, կահկարասին, գործիքները, թե իմ ձեռքով շինած, թե նավից փոխադրած: Բոլոր ցույց տվածս իրերը և նստատեղը կացիս մասին հաղորդածս լսողի մեջ մեծ հիացմունք և ուրախություն զարթնեցրին: Առավելապես նավապետին հիացմունք պատճառողն իմ ամրոցն էր և իմ ձեռնատունկ արհեստական անտառը, որն ամբողջովին ծածկել էր բնակարանս:

Ցեվ իսկապես, ընդամենը մի քանի տարվա ընթացքում իմ տնկած ծառերից մի այնպիսի խիտ անտառ էր գոյացել, որ հիշեցնում էր ամերիկական խիտ ու կուսական անտառները: Այդ խիտ անտառի միջով ուրիշ կերպ չէր կարելի անցնել, յեթե ոչ իմ բացած նեղլիկ ու ոլորուն շավղով: Ցես բացատրեցի նավապետին, որ այդ ամրությունն իմ «բերդն է» և կատակով ավելացրի, որ քաղաքիս սահմաններից դուրս զտնվում է ամարանոցս: Տարվա սաստիկ շոգերին յես այնտեղ եմ փոխադրվում:

Խոստացա այդ պալատն էլ ցույց տալ, բայց մի ուրիշ ժամանակ, իսկ հիմա առաջարկեցի, որ նավի հարցով զբաղվենք, թե ի՞նչ կերպով յետ խլենք նավը գավաճաններից, թույլ չտանք, որ ավազականոց դառ-

նա: Նավապետը կտրականապես ասաց, որ ինքը չգիտի ինչ ձևով սկսել գործը, քանի որ նավի վրա շատ մարդ կա, քանվեց նավաստի, նրանք ընդհանուր ուժերով կդիմադրեն մեզ մինչև վերջը, որովհետև կվախենան, որ մենք, նրանց հաղթելուց հետո, դատի կտանք կամ մայր Անգլիայում կամ նրա գաղութներից մեկում:

Ցեկողներից մեկն տնակին սուրը պարզեց գերու գլխին:

Մենք շատ քիչ ենք, իսկ նրանք թե շատվոր են և թե շատ լավ զինված: Մենք նրանց վրա չենք կարող հարձակվել: Դա մեր կողմից մի վտանգավոր քայլ կլինի: Նավապետի դատողությունը յես շատ հիմնավոր դտա: Ինձ համար էլ պարզ էր, որ քիչ ուժով չէր կարելի բացար-

ձակ դուրս գալ ուժեղ թշնամու դեմ, պետք եր մի խորամանկ միջոցի դիմել, մի հնարով նավաստիներին ափ դուրս բերել և թակարդի մեջ գցել:

Յես հարց ու փորձ արի և նավապետից իմացա, վոր նավում մի մակույկ ել կա: Այդ տեղեկությունից յես կռահեցի, վոր նավում գտնված նավաստիները, հավանական ե, նավակ կնստեն և դուրս կգան իրենց կորած ընկերներին վորոնելու: Նավաստիների մի մասը, այս անգամ լավ զինված իրենց մակույկով, կգան մեր ափը, վորովհետև նավից տեսած կլինեյին, վոր իրենց ընկերներն այստեղ ափ դուրս յեկան: Նրանք դեպի մեր ափն ել կուղղեն իրենց յերկրորդ մակույկը: Յեկողներն այս անգամ ավելի շատ կլինեն, քան թե առաջին անգամ և մենք ել ուժ չենք ունենա նրանց դիմադրելու: Նավապետը լիովին համաձայնվեց ինձ հետ: Մենք վորոշեցինք ամենից առաջ մակույկը հեռացնել ափից, վոր թշնամին չկարողանա նորից յետ տանել: Բայց վորովհետև մակույկը տեղից շարժելն անկարելի յեղավ, այն ժամանակ ինչվոր կար մակույկի վրա, բոլորը վերցրինք և ապա նրա հատակը ծակեցինք և այդպիսով լողալու համար անպետք դարձրինք: Այ թե ինչ գտանք նավակում.—մի հրացան, մի շիշ ողի, մի շիշ ռոմ, մի քանի հատ պաքսիմաթ, մի վորսորդական յեղջյուր՝ լիքը վառոդով և մի ահագին կտոր շաքար՝ քաթանի մեջ փաթաթած: Թիերը, կայմը, առագաստը և ղեկն արդեն Ուրբաթն ու նավավարը վերցրել եյին իմ կարգադրությամբ: Ճիշտն ասած, յես չեյի կարծում, վոր կկարողանանք նավը յետ խլել, բայց նավակը մեզ պետք կգար: Մենք հավաքվեցինք ու ընդհանուր ուժերով նավակն այնքան հեռացրինք ծովի ափից, վոր մակընթացության ժամանակ ջուրը չտաներ նրան: Հետո դարձանք նավակի հատակը ծակեցինք: Բացված անցքն այնքան մեծ եր, վոր չեր կարելի շուտով վերաշինել:

ԱՄԵՆ ԲԱՆ ԱՎԵԼԻ ՔԱՆ ԼԱՎ Ե ԳՆՈՒՄ

Հենց վոր վերջացրինք այդ գործը և նստեցինք հանգստանալու, մին ել հանկարծ թնդանոթի պայթյուն

լսվեց: Միաժամանակ նկատեցինք, վոր նավից նշան են տալիս, վոր նավաստիները յետ գնան: Բայց վորովհետև նավակը տեղից չեր շարժվում, դրա համար ել թնդանոթի պայթյուններն ու ազդանշանները անընդհատ շարունակվում եյին: Վերջապես տեսնելով, վոր այդ ամենը հետևանքի չեն հասցնում, նրանք նավից մի նոր նավակ ծովն իջեցրին: Հեռադիտակով նկատեցինք, վոր այդ նավակը գալիս եր դեպի մեր ափը: Յերբ այդ նավակը բավականաչափ մոտեցավ, մենք պարզ վորոշեցինք, վոր մեջին նստած եյին հրացաններով զինված տասը նավաստի:

Նավը ափից հեռու չեր կանգնած մոտ վեց մղոն տարածության վրա: Այդ եր պատճառը, վոր մենք կարողացանք լավ դիտել և տեսնել նավաստիներին: Նավապետը բոլորին ել ճանաչեց և ինձ հայտնեց, վոր նավաստիներից յերեք հոգին շատ ազնիվ մարդիկ են և միայն վախից ստիպված մասնակցում են ապստամբությանը: Իսկ ինչ վերաբերվում ե նավակի դեկի մոտ նստած բոցմանին և մյուս նավաստիներին, հենց նրանք են գործի գլխավոր կազմակերպիչները, հենց նրանք մտածեցին մեր նավը թալանել ուրիշ նավերի նավաստիների համար, վոր հետո նրանց գերիների տեղ վաճառեն: Այդ համարձակները համառությամբ կդիմադրեն մեզ, ինչպես և նավի վրա մնացած նավաստները:

Խոսքը յեզրափակելիս, նա կասկած հայտնեց, վոր չենք կարող նավը յետ խլել, վորովհետև հակառակորդը շատ ուժեղ ե, քան թե մենք: Իսկ յես նրան պատասխանեցի, թե ինչ կա վոր, կփորձենք, գործն ինքը ցույց կտա:

Նավաստիների խումբը նավից գալով, ավելի մոտեցավ. պետք եր միջոցներ ձեռք առնել: Նախ և առաջ մենք գերիներին զատեցինք և իրարից հեռու թաքցրինք: Այն յերկուսին, վոր նավապետը շատ վտանգավոր եր համարում, Ուրբաթն ու բոցմանը, դարձյալ իմ կարգադրությամբ, տարան անտառի խորքում գտնված քարայրը: Այնտեղից վոչվոք չեր կարող լսել նրանց ձայնը, նրանք այդ քարայրից յերբեք չեյին կարող փախչել.

վորովհետև ճանապարհը չգիտեյին: Նրանց ձեռներն ու վոտները կապեցին, գցեցին քարայրի մեջ: Ուտելու պաշար տվին ու ասացին, թե վոր փախչելու փորձ չանեն, այն ժամանակ նրանց կազատեն մի կամ յերկու որից հետո, հակառակ դեպքում էլ ներման չեն արժանանա: Կալանավորները խոսք տվին, վոր հանգիստ կմնան: Ուրբաթից էլ շատ շնորհակալ յեղան, վոր նա հաց, ջուր և մի քանի մոմ տվեց և ստորյերկրյա քարայրի մռայլ խավարից ազատեց:

Մնացած գերիների հետ այլ կերպ վարվեցինք: Յերկու անվստահելի նավաստու նույնպես կապած պահեցինք իմ ամրոցում: Մյուս յերկուսին, վորոնց համար յերաշխավորեց նավապետը, ասելով թե նրանք միշտ էլ հակառակ են յեղել ծովային ավազակության, նավաստիներ և ճանապարհորդներ վաճառելուն և միայն իրենց վախից են միացել այն ավազակախմբին, յես վերցրի մեզ հետ, բոլորովին ազատ, իսկ նրանք յերդվեցին մեզ հետ ապրել, մեզ հետ մեռնել:

Այդպիսով մեր ջոկատն ուներ յոթը լավ զինված մարդ: Յես ամենևին չեյի կասկածում, վոր մենք կհաղթենք նորեկ նավաստիներին, քանի վոր նրանց բանը խախուտ էր, նավապետի ասելով նրանցից յերեքը կարող եյին անցնել մեր կողմը, չե՞ վոր սկզբունքով հակառակ են մյուսներին:

Ահա յեկավ այդ յերկրորդ մակույկը, վոր նավաստիներն ուղղեցին դեպի մեր ափը, իսկ հետո մակույկից դուրս գալով, քաշեցին մակույկը ցամաք: Այդ բանը չափազանց ուրախացրեց ինձ: Յես վախեցա, վոր նավաստիները խարիսխ կձգեն մակույկը և բոլորը ցամաք դուրս չեն գա: Յեթե այդպես լիներ, մենք յերբեք մակույկին տեր չեյինք դառնալ:

Ո՛, ինչքան զարմացան նավաստիները, յերբ նրանք մոտենալով նախկին մակույկին, տեսան այն քայքայած և հատակը ծակած: Նրանք սկսեցին բարձրաձայն կանչել ընկերներին, բայց արձագանք չկար: Պատասխան չըստանալով իրենցից առաջ այստեղ յեղած ընկերներից, նրանք շրջան կազմեցին և հրացաններով համազարկ

տվին, բայց բացի մեզանից և անտառային կենդանիներից ու թռչուններից, վոչվոք չլսեց համազարկի ձայնը: Այդ ձայնը չեր կարող հասնել մեր գերիների ականջներին՝ տեղի հեռավորության պատճառով, իսկ մեզ մոտ գտնված նավաստիները, ի հարկե, չեյին համարձակվիլ նորեկների կանչին արձագանքելու: Յեկվորներն այդ լռությունից այնպես եյին քարացել, վոր ինչպես հետո նրանք պատմեցին, արդեն ուզում եյին նորից իրենց մակույկը նստել և վերադառնալ իրենց նավը, պատմել, թե բոլոր ընկերները կորած են և նավակն էլ սաստիկ վնասված, հատակը ծակ: Էլ ուրիշ ճար չկար: Պիտի վերադառնային: Նավակն շատ ջուրը գցեցին, իրենք էլ թափվեցին մեջը: Նավապետը տխրեց: Նա հասկացավ, վոր նավաստիները հետ են գնում դեպի իրենց նավը, գիտեր, թե նրանք այնտեղ ինչ կասեն, ինչ կպատմեն, և յերկյուղ կրեց, վոր նավաստիներն իմանալով բանի եյությունը՝ իրենց ընկերների կորուստը, իսկույն կբարձրացնեյին նավի խարիսխը և կշարունակեյին իրենց ճանապարհը: Բայց շուտով սպասածից ավելի վատը դուրս յեկավ:

Մակույկն ափից հեռանալն ու նորից հետ գալը համարյա թե մեկ յեղավ: Հավանական է, գործունեյության նոր ծրագիր կազմելով՝ նավաստիներն իրենցից յերեքին թողին մակույկում, մնացած յոթ հոգով ափ դուրս յեկան և ցրվեցին անտառում, վորպեսզի վորոնեն կորած ընկերներին: Մենք մեր ինչ անելը չգիտեյինք: Յեթե ձերբակալեյինք այն յոթ նավաստուն, վորոնք ափ եյին դուրս յեկել, դրանից մի մեծ բան վաստակած չեյինք լինի: Մակույկում մնացած յերեք նավաստին կվերադառնային դեպի նավը, կպատմեյին պատահած դժբախտ դեպքը և խարիսխը բարձրացնելով, կգնային իրենց ճանապարհը: Մենք էլ այստեղ կղզու վրա կմնայինք մինչև մեր կյանքի վախճանը:

Նավակում մնացած յերեք նավաստին ափից մի փոքր տարածության վրա խարիսխ գցեցին և սպասեցին իրենց ցամաք դուրս յեկած ընկերների վերադարձին: Մինչ այդ, յոթ հոգին գնացին դեպի այն սարը.

Ձորի ստորոտին գտնվում եր ամրոցը: Նրանք թեև մեզ չեյին նկատում, բայց մենք ուշի ուշով դիտում եյինք նրանց բոլոր շարժումները: Հասնելով սարի լանջը՝ վոր տեղից յերևում եյին հովիտն ու անտառ հյուսիս-արևմտյան ուղղությամբ, նավաստիները նորից սկսեցին բարձրաձայն աղաղակել և կանչել իրենց անհետացած ընկերներին: Յերևում եր, վոր նրանք չեյին համարձակվում վոտ դնել կղզու խորքերը, կամ սիրտ չեյին անում, կամ վախենում եյին անտառներում մոլորվելուց և անհետ կորչելուց:

Կոկորդները պատռելու չափ գոռգոռալուց հետո, տեսան, վոր բան դուրս չի գալիս, նստեցին ծառի տակ և

Գերիներին տարան քարայրը՝

սկսեցին խորհրդակցել, ինչպես այդ յերևում եր նրանց շարժումներից: Հիմա մեր ցանկությունն այն պետք է լիներ, վոր նավաստիներն անձնատուր լինեյին քնին, ինչպես իրենց նախկին ընկերները, վորոնց նրանք այդքան բարձրաձայն, բայց իզուր կանչում եյին: Այն ժամանակ մեր ձեռքից չեյին ազատվի: Բայց, ինչպես

յերևում եր, նավաստիների աչքերին քունը մոտ չեր գալիս: Նավաստիներին սաստիկ վախեցրել եր ընկերների անհասկանալի անհետացումը: Կղզին նրանց համար մի կախարդական վայր եր թվում, նրանք լավ բան չեյին սպասում:

Նավապետը մի շատ հիմնավոր յենթադրություն արավ: Նա ասաց, վոր նավաստիները յերևի կրկին անդամ համազարկ կտան իրենց կորած ընկերների ուշադրությունը գրավելու համար, հետևապես մենք կարող ենք նրանց վրա հարձակում գործել ճիշտ այն րոպեյին, յերբ նրանց հրացանները դատարկված կլինեն: Հանկարծակի յեկած նավաստիներն անպայման անձնատուր կլինեն մեզ, և մենք կձերբակալենք նրանց առանց արյունահեղության:

Ինձ շատ դուր յեկավ այդ ծրագիրը, և յես ավելացրի, վոր մենք այդ դեպքում նրանց շատ մոտեցած պիտի լինենք, նրանց վրա հարձակվելիս ժամանակ չտանք, վոր իրենց հրացանները նորից լցնեն:

Բայց նավաստիները համազարկ չտվին և մենք չեյինք իմանում, թե ինչ ձեռնարկենք: Վերջապես յես առաջարկեցի սպասել մինչև մութն ընկնելը: Միայն այն ժամանակ կկտրենք նրանց ճանապարհը, յերբ վերադառնալու լինեն դեպի ծովը, իրենց նավակը նըստելու համար: Այդ ժամանակ գուցե և հնարավոր լինի նավակի մեջ գտնվածներին ել ափ դուրս բերել: Նավապետը հավանություն տվեց իմ առաջարկին: Մենք նստած՝ անհամբեր սպասում եյինք որվա մթնելուն:

Նավաստիները յերկար խորհրդակցելուց հետո վերջապես յեկան դեպի ափը: Այնպես եր յերևում, վոր նրանք ուզում եյին նավակ նստել, գնալ և պատմել նավում մնացածներին, վոր շատ վորոնեցին կորած ընկերներին, բայց չգտան: Յես և նավապետն արդեն հուսահատվել եյինք, չեյինք հավատում, վոր նավը մեր տրամադրության տակ կընկնի:

Հանկարծ գլխումս մի միտք ծագեց, թե ինչ հնարով նավաստիներին հետ դարձնեմ: Յես պատվիրեցի,

վոր Ուրբաթն ու նավավարը շտապ գնան դեպի ծովածոցի արևմտյան կողմը, բարձրանան բլուրը և այնտեղից սկսեն օգնություն կանչել: Յերբ նավաստիներն օգնության գնային, Ուրբաթն ու իր ուղեկիցը պիտի շարունակ ձայն տալով, վոլորապտույտ կածաններով հրապուրեյին նրանց դեպի անտառի խորքերը, իսկ իրենք աննկատելի վերադառնային մեզ մոտ: Այդ ծրագիրը հավանություն գտավ նավապետի կողմից: Ուրբաթն ու նավաստին գնացին մեր ծրագիրն իրագործելու:

ԱՆՁՆԱՏՈՒՐ ԼԻՆԵԼԸ

Նավաստիներն արդեն նավակ եյին նստում, յերբ հանկարծ լսեցին հուսահատ ձայներ «օգնությո՜ւն, օգնությո՜ւն»: Նրանք զարմանքից քարացան, իսկ հետո ուշքի գալով, խելագարի պես վազեցին դեպի այն կողմը, վորտեղից գալիս եր ձայնը: Իրենք ել իրենց կողմն եյին գոռում. «գալիս ենք, գալիս»: Բայց հանկարծ նրանց առաջը կտրեց ծովածոցը, վոր ափի բարձրության պատճառով աչքի չեր ընկնում: Ծովածոցի ջուրն այնքան բարձր եր, վոր վոտով անցնել չեր լինում: Նրանք մակույկ պահանջեցին, վոր ծովածոցն անցնեն: Նավաստիները մակույկը բերին: Ցամաք դուրս գալուց հետո մակույկը տարան ծովածոցի խորքը, կապեցին մի ծառից, մակույկի վրա թողին յերկու հոգի, իսկ մյուսները մտան անտառ: Ինձ ել հենց այդ եր հարկավոր:

Մենք պայմանավորվելով, շուտով անցանք նավահանգստի ափը և հարձակվեցինք նավակի պահապանների վրա, վորոնցից մեկը պառկած եր ափին, մյուսը՝ մակույկի մեջ: Առաջինն ուզում եր տեղից վեր թռչել, բայց նավապետը ժամանակ չտվեց, կայծակի արագությամբ վրա պրծավ և հրացանի կոթով մեռելների աշխարհը ուղարկեց նրան:

Նավակում քնած նավաստին ել զարթնեց: Նավապետը նրա վրա յել հարձակվելով ասաց.

— Անձնատուր յեղիր, յեթե վոչ կորած ես:

Ի՞նչ կարող եր անել մի նավաստի, վորի առաջ հինգ զինված թշնամի եյին կանգնած և ընկերն ել ըն-

կած եր գետնին: Այս նավաստին ապստամբության ակամա մասնակցողներից մեկն եր. նա վոչ միայն կամավոր անձնատուր յեղավ, այլև հետո դարձավ մեր հավատարիմ ընկերը: Սպանված նավաստու դիակը ծովը նետեցինք:

Այդ բոլոր ժամանակ լսվում եր Ուրբաթի և նավավարի ձայնը: Նրանք նավաստիներին գրավում եյին անտառի խորքը: Այդ խաղը յերկար շարունակվեց. մինչև վոր ուժասպառ նավաստիներն ընկան անտառի խորքերը, վորտեղից դուրս գալը հեշտ բան չեր: Ուրբաթն ու նավաստին նույնպես ուժից ընկած, վերադարձան մեզ մոտ:

Մեր միտքն այն եր, վոր գիշերով հարձակվենք նավաստիների վրա:

Արևն արդեն մայր մտավ, յերբ յես նկատեցի ցրված նավաստիների վերադարձը մակույկի մոտ: Մի կերպ գտան ճանապարհը: Մենք լսեցինք, թե ինչպես առաջ ընկածները ձայն տալով կանչում եյին մյուսներին:

— Շուտ հավաքվեցեք, վոր լուսով հասնենք նավը:

Ահա բոլոր նավաստիները հավաքվեցին իրենց մակույկի շուրջը: Դժվար եր պատմել, թե ինչպիսի զարմանքով նայում եյին իրենց դատարկ մակույկին և վորոնում պահապաններին: Մենք լսեցինք, թե ինչպիսի հուսահատ ձայներով կանչում եյին իրենց կորած ընկերներին, բայց ձայն-ծպտուն չկար: Մայր մտնող արևի շողերի միջոցով մենք նկատում եյինք, թե ինչպես գլուխները կորցրած՝ նավաստիները դես ու դեն են վազում, մերթ նավակ եյին նստում, մերթ ափ եյին դուրս գալիս և իրար ձայն տալիս, թե իրենք ընկել են մի կախարդված կղզի, վորտեղ չար վոգիներ են ապրում և վորոնց դեմ կռվելն անհնարին բան ե:

Նավապետն առաջարկում եր բացարձակ կռիվ դուրս գալ նավաստիների դեմ, բայց յես փուսափում եյի արյունահեղությունից և վոր գլխավորն ե, չեյի ցանկանում իմ ջոկատից զոհ տալ, քանի վոր նավաստիները լավ զինված եյին:

Մենք սպասում եյինք, վոր նրանք զանազան կողմ

ցրվեն, վոր մեկ-մեկ բռնենք: Յես պատվիրեցի, վոր Ուրբաթն ու նավավարը չորեքթաթ տալով կամ սողալով աննկատելի մոտենան հակառակորդներին և կրակեն միայն ծայրահեղ դեպքում:

Ապստամբության պարագլուխ բոցմանը և ուրիչ յերկու նավաստի ուղղակի գալիս էյին դեպի Ուրբաթի ու նավապետի կողմը: Նավապետը նրանց գալը տեսնելուն պես, թռավ տեղից ու հրացանը կրակեց: Ուրբաթը հետևեց նրա որինակին: Բոցմանն սպանվեց, մյուս նավաստին վիրավորված վայր ընկավ, իսկ յերրորդը սարսափից աղաղակ բարձրացնելով, թողեց փախավ: Այդ ժամանակ յես վրա հասա իմ ութ հոգուց բաղկացած խմբով: Յես ընդհանուր զորապետ էյի, Ուրբաթը զորապետի օգնականը, իսկ նավապետը նավավարը, ճանապարհորդը և յերեք գերին, վոր նավապետի յերաշխավորությամբ զենք էյին ստացել, կազմում էյին իմ ահռելի զորաբանակը: Արդեն մթնել էր: Թշնամին չէր կարող վորոշել մեր քանակը, թե մենք քանի հոգի յենք: Մենք մոտեցանք մակույկին, գերի վերցրինք պահակ նավաստուն, բայց չսպանեցինք, վորովհետև նա մեր կողմն անցավ: Յես հրամայեցի, վոր նա անունները ջոկ-ջոկ տալով, կանչի իր բոլոր ընկերներին և համոզի անձնատուր լինելու: Իմ ծրագիրը հաջողվեց: Նավաստիներն այն դրությանն էյին, վոր ուզենային-չուզենային, պիտի հպատակվեյին մեզ առանց դիմադրության:

Այժմ մեր ընկեր նավաստին սկսեց կանչել իր ընկերներին մեկը մյուսի յետևից:

— Հեյ, Թոմաս Սմիտ, Թոմաս Սմիտ:

— Այդ դո՞ւ յես, Կլարկ:

— Այո, յես եմ, աղաչում եմ անձնատուր յեղիր, վայր դիր զենքդ, յեթե վոչ կորած ենք:

— Բայց ո՞ւմ անձնատուր լինել, մարդ չկա, վորին անձնատուր լինեմ:

— Նավաստին: Նավապետն այս կղզում մի մեծ բանակի գլուխ անցած, վորոնում է ձեզ: Բոցմանն սպանված է, Ուիլ Ֆրեյը մահացու վիրավորված, իսկ

յես գերի յեմ ընկել: Յեթե դուք անձնատուր չլինեք. մենք բոլորս կորած ենք,—կոչում էր Կլարկը:

— Մեզ կխնա՞յեն, յեթե անձնատուր լինենք,— հարցրեց Թոմաս Սմիտը:

— Ի հարկե, կխնայեն—վստահ պատասխանեց Կլարկը, նայելով նավապետին:

— Սմիտ,—կոչեց նավապետը,—դու իմ ձայնը ճանաչում ես: Լսիր, թե քեզ ինչ եմ ասում: Դուք իսկույն վայր դրեք ձեր զենքերը և հրաժարվեք ծովային ավազակ դառնալու մտքից, այն ժամանակ յես բոլորիդ կներեմ, բացի Ուիլ Ատկինսից:

— Ո՛, խղճացեք, ինձ էլ, ներեցեք, նավապետ,— լսվեց Ուիլ Ատկինսի աղերսալի ձայնը: Միթե յես ուրիշներից ավելի մեղավոր եմ ձեր առաջ: Չե վոր բոլորս միևնույն մեղքն ենք գործել:

Նավապետը պատրաստ էր ներելու և Ուիլ Ատկինսին, միայն թե զենքը վայր դներ և կատարյալ հպատակություն ցույց տար նահանգապետին:

«Կղզու նահանգապետը» իբր թե յես էյի:

Բոլոր նավաստիները մի տեղ հավաքվեցին, զինաթափ յեղան ու սկսեցին ներողություն խնդրել: Իմ կարգադրությամբ Կլարկն ու նրա յերկու ընկերները կապեցին Ատկինսին և մյուս նավաստիներին, վորից հետո մեր բանակի քաջ զինվորները շրջապատեցին նրանց: Բայց յես «քաղաքական վորոշ նկատառումներով» չէյի յերևում:

Հիմա մեր հերթական գլխավոր հոգսն էր կարգի բերել փչացած մակույկը և պատրաստություն տեսնել՝ նավը գրոհով վերցնելու համար: Նավապետը յերկար խոսեց գերիների հետ, հավատացրեց, վոր նրանք սխալվել են, կարծելով, թե կղզին անբնակ է. ընդհակառակը, կղզում անգլիացի նահանգապետ կա:

Նավաստիները հավատացնում էյին, վոր իրենք զղջում են, թողնում են իրենց նախկին մտադրությունը: Նավապետը խոստացավ նրանց համար նահանգապետից փրկություն խնդրել:

— Կղզու նահանգապետը լիակատար իրավունք

ունի,—ասաց նա,—ձեզ բոլորին կախել այս կղզու օրենքների համաձայն, բայց վորովհետև նա խոստացել ե զենք վայր դնողների կյանքը խնայել, ուրեմն շատ հավանական ե, վոր ձեզ կուղարկեն Անգլիա, այնտեղ դատի տալու, բացի միայն Ատկինսից, վորը մահվան ե դատապարտված: Դատավճիռը կկատարվի հետևյալ որը, առավոտյան:

Նավապետի այս խոսքերը շատ ուժեղ տպավորություն գործեցին: Ատկինսը ծունկ չոքած՝ խնդրում եր նավապետին, վոր իր կյանքը ազատել տա, իսկ մյուսներն արտասվալից—աղաչում եյին իրենց Անգլիա չուղարկել և այնտեղի խիստ դատին չմատնել:

Այդ ժամանակ, յերբ յես մթին ծառերի տակ լսում եյի, զգացի վոր իմ ազատության որը հասել ե, վորովհետև այդ բոլոր մարդկանց հեշտությամբ կարելի յե համոզել, վոր նավը հետ խլելու գործում մեզ աջակցեն: Ուզեցի նավապետի հետ խոսել: Յես նրան այնպիսի ձայնով կանչեցի, իբր թե նրանից շատ հեռու յեմ գտնվում: Ինձ մոտ գտնվող նավաստիներից մեկը միտքս հասկանալով, ամբողջ ձայնով գոչեց:

—Նավապետ, նահանգապետը ձեզ կանչում ե:

—Գալիս եմ,—պատասխանեց նավապետը:

Այս փոքրիկ կատակերգությունը նրա համար եր, վոր Ատկինսին և նրա ընկերներին ստիպեյին հավատալու, թե իրենցից քիչ հեռու գտնվում ե կղզու նահանգապետն իր քաջ զորաբանակի հետ:

Յերբ նավապետը մոտեցավ ինձ, յես նրան հայտնեցի նավը հետ գրավելու նկատմամբ կազմածս ծրագիրը: Նա այդ ծրագիրը գտավ գերազանց և վոր անհրաժեշտ ե իրագործել հենց հետևյալ որը: Յես ավելացրի, վոր գործի հաջողության համար պիտի գերիներին բաժանել իրարից: Նավապետի հետ միասին վորոշեցինք Ատկինսին և նրա յերկու հանդուգն ընկերներին ուղարկել այն քարայրը, վորտեղ արդեն նստած եյին յերկու գերին: Ուրբաթը, նավապետը և ճանապարհորդը, գիշերով տարան այն յերեքին ստորյերկրյա բանտը: Մնացած գերիներին ուղարկեցինք իմ ամարանոցը, վորն, ինչպես

հայտնի յե ընթերցողներին, նույնպես լավ ամրացված եր:

Մյուս որն, առավոտյան վաղ, յես խնդրեցի նավապետին գնալ մեր գերիների մոտ, խոսել նրանց հետ, և իմանալ, կարե՞լի յե արդյոք վստահ լինել նրանց վրա այն դեպքում, յեթե մենք նրանց հետներս դեպի նավը տանենք:

Նավապետը գնաց և սկսեց բացատրել գերիներին, վոր նրանց բռնած գործը մի մեծ հանցանք ե ամբողջ աշխարհի ծովագնացների դեմ, ամենասև գույներով նկարեց պատկերը նրանց ապագայի, մի տխուր ապագա, վոր իրենց ձեռքով եյին պատրաստել: Հետո նա ասաց, վոր թեև նահանգապետը նրանց կյանքն այստեղ խնայեց, բայց միևնույն ե, Անգլիա գնալիս նրանք կախաղանից չեն ազատվի: Բայց յեթե անկեղծությամբ մասնակցեն նավը յետ գրավելու գործին, այն ժամանակ նահանգապետն ինքը նրանց համար ձեռք կբերի Անգլիայում լիակատար ազատություն:

Գերիներն ընդունեցին պայմանը, ծնկաչոք խոստացան և յերդվեցին հավատարիմ մնալ մինչև իրենց վերջին շունչը:

Առաջիկա եքսպեդիցիայի համար պատրաստի ունեյինք հետևյալ ուժերը. Նավապետն եր, շտուրմանը, ճանապարհորդը և ինը գերի, վորոնց զենք եր բաժանած նավապետի յերաշխավորությամբ: Ինը գերիների թվում գտնվում եյին և այն յերկուսը, վորոնք գիշերով պա-վում եյին իմ «քաղաքից դուրս գտնվող պալատում», և վորոնց յես ազատել եյի և ընդունել իմ ջոկատի մեջ՝ դարձյալ նավապետի խոսքով: Գերիներից հինգը մնացին քարայրում՝ իբրև պատանդներ: Յերկուսին էլ ինձ մոտ պահեցի. ով գիտի, ինչ կարող եր պատահել:

Յես և Ուրբաթը պիտի հսկեյինք պատանդների վրա: Ուրբաթն որական յերկու անգամ նրանց հաց ու ջուր եր տանում և առհասարակ անհրաժեշտ ծառայություն ցույց տալիս:

Կարկատելով ծակ մակույկը և, ինչպես պետքն եր, սարքավորելով, նավապետը ճանապարհ ընկավ: Առաջին

մակույկում նստած էր նավապետը, շտուրմանը և հինգ նավաստի, իսկ յերկրորդում՝ ճանապարհորդը և չորս նավաստի: Նավակի ղեկավարությունը հանձնված էր ճանապարհորդին: Կես գիշեր էր: Նավապետն այնպես էր կարծում, վոր այդ ամենահարմար ժամանակն է իր մտադրությունը կատարելու համար:

Ցերբ մակույկները մոտեցան նավին, նավապետը հրամայեց իր հետ նստած Կլարկին՝ ձայն տալ և ասել, թե իրենք հետ են բերում մակույկը և կորած ընկերներին, վորոնց շատ յերկար փնտրելուց հետո, գտան կղզում: Կլարկն այնպես վարպետորեն առաջ տարավ գործը, վոր մակույկներն աղմուկի տակ մոտեցան նավին: Նավապետն ու նավավարը զինված բարձրացան տախտակամածի վրա և հարձակվելով յերկրորդ շտուրմանի և հյուսնի վրա, հրացանի կոթով վայր գլորեցին նրանց: Նավի վրա բարձրացան նավապետի բոլոր ուղեկիցները, կապկպեցին դուրսը յեղած բոլոր նավաստիներին և սկսեցին փակել նավի մուտքերը, վորպեսզի ներքնահարկում գտնվողները չկարողանան վերև գալ:

Ցերկրորդ մակույկի մարդիկ մագլցելով առաջամասը՝ տիրեցին բակը (նավի առաջին մասը) և խոհանոց տանող դուռը:

Խոհանոցում յերեք նավաստու գերեցին:

Ցերբ տախտակամածը վերցրին, նավապետը հրամայեց իր ոգնականին, վոր յերեք նավաստի առած, մտնեն նավի յուտը (նավի հետևի մասը), վորտեղ թագնվել էր առաջնորդն այն նավաստիների, վորոնք ուզում էյին Ալժիրին գերիներ մատակարարել: Առաջնորդը փախել էր այնտեղ՝ յերկու զինված նավաստու և նավի փոքրավորի, սպասավորի տղայի հետ: Շտուրմանը ջարդեց նավապետի սենյակի դուռը: Ներսից նրան դիմավորեցին հրացանների համազարկով: Թեթև վերքեր ստացան թե շտուրմանը և թե նրա ոգնականը: Շտուրմանն «ոգնություն» կանչելով, ներս մտավ սենյակը և կրակեց ապստամբ պարագլուխի վրա ու գետին գլորեց: Վերջինիս ստացված վերքը մահացու յեր: Մնացած նավակազմը կամավոր անձնատուր յեղավ: Նավը գրավված էր:

Պայմանի համեմատ նավապետը հրամայեց յոթ անգամ թնդանոթ արձակել: Մեր ձեռնարկած գործի հաջողության ազդանշանն ինձ չափազանց ուրախացրեց: Արդեն գիշերվա ժամի յերկուսն էր: Ցես ուրախությունիցս վեր-վեր թռչելով, վերադարձա ամրոցս և անկողին մտա:

ՎԵՐԱԴԱՐՁ

Որվա հոգսերից ու հուզմունքներից այնպես էյի հոգնել, վոր անկողին մտնելու պես խորը քնեցի: Գուցե յես յերկար քնեյի, յեթե թնդանոթի մի նոր պայթուն չզարթնեցներ ինձ:

Ցես պարզ լսում էյի՝ դրսից մի ձայն բարձր կանչում էր.

— Զարթնեցեք, նավն սպասում է ձեզ:

Ցես իսկույն վեր թռա տեղիցս, չորերս հագա ու վազեցի բլուրի գլուխը, վորտեղից ձայններ էր լսվում: Իմացա, վոր ինձ կանչողը նավապետն է: Նա ցույց տալով դեպի նավի կողմը, ընկավ վզովս, գրկեց ինձ և հուզված աղաղակեց.

— Իմ բարեկամ և ազատարար, ահա ձեր նավը: Նա գլխովին ձեզ է պատկանում իր ամբողջ գույքով:

Ծովին նայելով, տեսա, վոր նավը կանգնած է ափից մոտ կես մղոն հեռու, ծովածոցի բերանում: Ոգտվելով մակընթացությունից, նավապետը մակույկով ափ էր դուրս յեկել, հենց այնտեղ, վորտեղ յես տարիներ առաջ իմ լաստերն էյին կանգնեցրել: Այդքան մոտ, վոր չտեսա նավը, սիրտս ուրախությունից այնպես բաբախեց, վոր քիչ էր մնում գիտակցությունս կորցնեյի: Իսկապես իմ ազատության ժամը հասել էր: Նավապետի ձեռնարկությունը պսակվել էր հաջողությամբ: Ահագին նավը սարքի-կարգի գցված՝ յեկել էր ինձ տանելու ուզածս տեղը: Ցես սաստիկ զգացվելով, գրկեցի նավապետին և պինդ սեղմեցի կրծքիս: Խորին շնորհակալություն հայտնեցի ինձ ազատելու համար: Նավապետը մի շիշ ռոմ էր բերել նավի վրայից, գիտենալով, վոր կարող է պետք գալ: Ցես այդ ռոմից մի քանի կաթիլ խմեցի և իսկույն

նստեցի ղեկին ու յերկար ժամանակ չէյի կարողանում մի բառ անգամ արտասանել: Նավապետը կողքիս նստած, քաղցր խոսքերով աշխատում եր ինձ հանգստացնել: Բայց յես ծով զգացմունքներիս բուռն հուզմունքից արցունք եյի թափում: Սիրտս դատարկելով, յես քիչ հանգըստացա: Կարգի բերի մտքերս և սկսեցի խոսել: Այդտեղ յես իմ հերթին շնորհակալություն հայտնեցի ազատությանս համար:

Յերբ հանգստացանք, նավապետը հաղորդեց, վոր նավից ինձ համար մի արկղ բան է ընծա բերել: Արկղից դուրս յեկան հետևյալ իրերը. մի ձեռք նոր զգեստ, նուրբ քաթանից նոր կարած կես դյուժին շապիկ, կես դյուժին ամենալավ տեսակի փողկապ, յերկու զույգ ձեռնոց, մի զույգ կոշիկ, մի քանի զույգ գուլպա, մի դյուժին թաշկինակ և մի լայնեզր գլխարկ: Այդ արկղն ինձ համար շատ թանգագին գյուտ եր: Նա ինձ վոտից-գլուխ նորոգեց: Շորերն իսկույն հագա և նորից դարձա մի յեվրոպացի: Բայց ճշմարտությունը չը թագցնելու համար ես պիտի ասեմ, վոր ամբողջ աշխարհում չէր գտնվի ինձ նման մի մարդ, վորի հագածն այնպես անհարմար ու վատ նստեր իր վրա:

Հետո նավապետի հետ խորհրդակցեցինք, թե ինչպես վարվենք գերիների հետ, ինչպես վորոշենք նրանց բախտը: Գերիներին նավի վրա վերցնելը շատ լուրջ հարց եր, պահանջում եր կանխամտածված, խելացի լուծում: Նավապետն այն յերկու նավաստու մասին բացեիբաց ասում եր, վոր նրանք անուղղելի հանցագործներ են: Նրանց առանց շղթայելու չի կարելի նավը տանել, այն ել նրա համար, վորպեսզի Անգլիայում դատի տրվեն:

Այն ժամանակ նավապետին ասացի, թե յես այնպես կանեմ, վոր նրանք իրենք կխնդրեն իբրև վողորմածություն մնալ այս կղզում:

-Յես չափազանց ուրախ կլինեմ, յեթե դուք այդ բանը գլուխ բերեք, -ասաց նավապետը, սեղմելով ձեռքս:

-Ահա դուք կտեսնեք,- ավելացրի յես,-իսկույն մարդ կուղարկեմ նրանց հետևից և ձեզ անունից կխոսեմ հետները:

Պետք է ասել, վոր նավապետի բացակայության ժամանակ յես վորոշել եյի ինձ մոտ պատանդ թողնել այն յերկու ազնիվ նավաստուն, վորոնք ազատ եյին, ինձանից միշտ անբաժան, իսկ այն հինգը, վորոնք նստած եյին քարայրում, շատ անհուսալի մարդիկ եյին, այդ պատճառով էլ միշտ փակված եյին պահում նրանց:

Նկատի առնելով, վոր նավապետին ուղեկցող նավաստիները պահեցին իրենց խոսքը, չդավաճանեցին նավապետին, իսկ մնացած նավաստիներն էլ իրենց արածը զղջացին, ուրեմն հիմա պատանդներ պետք չեյին, և յես ազատեցի նրանց իրենց վրա դրված պարտականությունից: Յես նրանց հրամայեցի գնալ անտառ ու բերել բոլոր կապկապած գերիներին «քաղաքից դուրս գտնվող ամրոցը»:

Միառժամանակից հետո, նոր շորերս հագած, յես գնացի իմ պալատը: Նավապետն ուղեկցում եր ինձ: Կալանավորներն ինձ սպասում եյին հովարանում: Նավապետին կողքիս նստեցնելով, յես մի ճառ արտասանեցի: Հայտնեցի գերիներին, վոր նրանց մտադրությունն ինձ շատ լավ հայտնի յե, վոր նրանք ուզում են նավն ավազակների բույն դարձնել: Յես թույլ տվի, վոր նրանք իրենց արդարացնելու համար ինչ ունեն, ասեն. դրա համեմատ յես կվորոշեյի յուրաքանչյուրի պատժի չափը:

Գերիներից մեկը բոլորի անունից ասաց, վոր նրանք իրենց արդարացնելու համար վոչինչ չունեն ասելու: Մնում է միայն հիշեցնել, վոր նրանք զենքերը վայր դրին նավապետի առաջ այն պայմանով, վոր նա իրենց կյանքը խնայի: Հիմա նրանք խնդրում են նահանգապետին՝ զանց չառնել նավապետի տված խոսքը և ինքն էլ իր կողմից ների նրանց:

Ի պատասխան այդ ճառի, յես ասացի, վոր վճռական խոսք չեմ կարող տալ, թե ինչպես վարվել նրանց հետ, քանի վոր յես անձամբ վորոշել եյի ընկերներիս հետ թողնել կղզին և վերադառնալ Անգլիա:

— Ինչ վերաբերվում է նավապետին,—շարունակեցի յես, նա կարող է ձեզ իր հետ վերցնել վոչ այլ կերպ,

յեթե վոչ շղթայված, վորպեսզի հետո դատի տա ձեր հանցանքի համար: Ձեզ կախաղան ե սպասում:

Ձեզ ազատելու համար յես միայն մի յելք եմ գտնում: Յեթե դուք գնահատում եք ձեր կյանքը և ազատությունը, դուք միշտ այս կղզում պիտի ապրեք: Հավատացած յեղեք, վոր յեթե դուք համաձայնեք այստեղ մնալ, այն ժամանակ յես վոչ թե արգելք կլինեմ, այլ ձեզ ապրելու հարմարություններ կտամ, հետո նոր կգնամ այստեղից:

Թվաց, վոր հանցավորները շատ գոհ մնացին իմ առաջարկից. նրանք շնորհակալությամբ ինձ հայտնեցին, վոր իրենք շատ ուրախ են այստեղ մնալ, քան թե Անգլիա գնալ և կախաղանի արժանանալ:

Յես հրամայեցի քանդել գերիների կապանքները և հայտարարեցի, վոր այս րոպեյից նրանք կղզու ազատ բնակիչներ են: Խորհուրդ տվի ապրել այն անտառում, վորտեղ իրենց բանտ-քարայրն ե: Ավելացրի, վոր նրանք ինձանից կստանան հրացեն, ռազմամթերք, գործիքներ և տնավորվելու համար բոլոր անհրաժեշտ բաները:

Հարցին այսպիսի լուծում տալով, հայտնեցի նավապետին, վոր մի գիշեր ել պիտի մնան կղզում, թող մյուս որը մակույկ ուղարկի իմ յետևից: Նրան խորհուրդ տվի վերադառնալ նավը, կարգ ու կանոն պահպանել:

Յերբ յես մենակ մնացի, նորից ինձ մոտ կանչեցի կղզու նոր բնակիչներին և խոսք բաց արի նրանց դրության մասին: Յես նրանց ասացի, վոր խելոք վարվեցին, համաձայնվելով կղզում մնալ:

Համոզվելով, վոր նրանք հոժարակամ են մնում այստեղ, յես համառոտ կերպով հաղորդեցի նրանց իմ պատմությունը, սկսած կղզի գալուս որից և ցույց տվի ապրուստ ճարելու միջոցները. ցույց տվի իմ կառուցած ամրությունները, ամրոցները, այծերի արոտներն իրենց ցանկապատներով, մանրամասն բացատրեցի ինչպես հավաքել և չորացնել խաղողը, ինչպես մշակել հողը վար ու ցանքսի համար, ինչպես հաց ստանալ, ինչպես կերակուր պատրաստել, մի խոսքով՝ նրանց ապագա կյանքը բարվոքելու համար շատ կարևոր ցուց-

մունքներ արի: Խոսքիս վերջն ել տեղեկություն տվի այն տասնվեց իսպանացիների մասին, վորոնք պիտի գային կղզին, նամակ թողի նրանց հանձնելու և խոսք առա, վոր հաշտ ապրեն իրենց ապագա ընկերների հետ:

Յես նորեկ գաղթականներին հանձնեցի հինգ մուշկետ, յերեք վորսորդական հրացան, յերեք սուր, մի տակառուկես վառոդ: Վերջին տարիները քիչ վառոդ

Վերջին հրաժեշտ

եյի ծախսում, վորովհետև իմ սեփական հոտն ինձ կաթ եր տալիս և միս, վորսի գնալու կարիքը շատ աննշան եր: Յես չմոռացա խոսել և անասնապահությունից: Ցույց տվի, թե ինչ ձևով են այծ պահելու, կթելու և կաթից յուղ, պանիր պատրաստելու: Ինչը վոր կարող եր նրանց վիճակը թեթևացնել, այն հաղորդում եյի նրանց: Բացի այդ, խոստացա խնդրել նավապետից

յերկու կիսատակառ վառոդ և բանջարանոցային սերմեր, վոր բերել եր նավով և խոստացել եր ինձ տալ:

— Ինչ մեծ ուրախություն կլիներ այդ ընծան ինձ համար,—ասացի յես նրանց,—յեթե մի քանի որ սրանից առաջ լիներ:

Այդ կերպ տեղավորվելով կղզու ապագա բնակիչներին, յես մնաս բարով ասացի նրանց ու պատրաստվեցի մյուս որը մեկնելու:

Հետևյալ որն առավոտյան նավապետի ուղարկած մակույկով հեռացա այն կղզուց, վորտեղ այնքան տարիներ ապրեցի, և մի քառորդ ժամից հետո արդեն նավի վրա եյի:

Մենք ուզում եյինք առագաստները պարզել և ճանապարհ ընկնել, սակայն այդ որը մինչև գիշեր մնացինք:

Յերբ մակընթացությունն սկսվեց, յես նավակով յետ գնացի, հետս տանելով գաղութավորների համար իմ խոստացած իրերը և նավապետի կողմից նվիրած պաշարեղենը: Յես խորհուրդ տվի նրանց, վոր ազնիվ աշխատավորներ և բախտավոր գաղութավորներ դառնան մի կտոր հողի վրա, վորի տերն հիմի իրենք են դարձել: Վերջնել խոստացա վոչ միայն նրանց վիճակը բարվոքելու մասին մտածել, այլ մինչև անգամ, յեթե հնար լինի, մի նավ ել նրանց յետևից ուղարկել հայրենիք վերադառնալու համար:

Սրտառուչ հրաժեշտ տալով ապագա գաղութավորներին, յես մակույկ նստեցի և վերադարձա նավը: Իմ բոլոր ունեցած իրերից յես ինձ հետ վերցրի այծի մորթուց փափախս, հովանոցս և փողերը, վորոնց մասին արդեն ասել եմ: Այդ դրամները յերկար ժամանակ չգործածելուց այն աստիճան բորբոսնել եյին ու ժանգոտել, վոր յուրաքանչյուր դրամի արժեքն իմանալու համար, հարկավոր եր նրանց մի լավ մաքրել:

Իմ բնտանիքի անդամներից միայն մի թութակ վերցրի հետս:

Նավի վրա յես հաշվեցի, վոր կղզում ապրել եմ քսանութ տարի, յերկու ամիս և տասնինն որ:

Այդ նույն որը, այսինքն 1686 թվի դեկտեմբերի 19-ին նավ նստեցինք և հետևյալ տարին, 1687 թվի հունիսի 11-ին հասանք Լոնդոն:

ՀՍՍՌ–Арм ССР

Գեղհրատի տպարան Սրբագրիչ Հ. Սաւիկյան

Պատվեր № 3278, Հրատ. № 2411 Գլավլիտ № 7979 (բ), Տիրաժ 3000

Հանձնված է արտադրության 31 հոկտեմբերի 1932 թ.

Ստորագրված է տպագրության 2 հունվարի 1933 թ.

ՀՀ Ազգային գրադարա
NL0387152

ԳԻՆԸ 3 Ռ. 50 ԿՈՊ.
ԿԱԶՄԸ 50 ԿՈՊ.

546

Библиотека
И
Академии Наук
СССР

Даниель Дефо

РОБИНЗОН КРУЗО

ГИЗ ССРА, Эривань, 1933 г.